





ԺՈՂՈՎԱԾՈՒ ԴԻՊԵՄՍԱՏԻՔԱԿԱՆ ԴՕԿՈՒՄԵՆՏՆԵՐԻ

9 (47.925)

Բ-34


# ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1912 թ. ՆՈՅԵՄԲԵՐ 12-ԻՑ ՄԻՒԶԵՒ 10 ՄԱՅԻՍԻ

1914 թ.

բարգմանեց ուռաներենից եւ Յուանուերենից  
ԽՄԱՀ. ՍԵԴՐԱԿ ԱԽԱԳԵԱՆ



Թ-Ե-Յ-Լ-Ւ-Յ

Ելեքտրաշարժ տպարան «ԷՊՕԽԱ» Մուղ. պեղ. № 8.

1915

ԹԱՐԳՄԱՆՉԻՑ

Աչքի առաջ ունենալով զբքիս լուրջ նշանակութիւնը հայկական հարցի համար, ևս աշխատեցի տալ կարելոյն չափ ճշգրիտ թարգմանութիւն, մեալով հաւատարիմ զբքի բնազրին և երբեմն դոհելով այդ նպատակին հայ ըերականութեան հրամայողական պահանջները ինչ վերաբերում է մի քանի ֆռանսիական բնագրերին, ևս նպատակի տեսակէտից բաւական համարեցի սահմանափակուել միմիայն նրանց թարգմանութեամբ՝ բացառութեամբ 1914 թ. յունվ. 26-ի վաւերազրի, որ կցուած է զբքիս վերջին:

## ԱՐԱՋԱՐԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ.

Այսօր, երբ համայն Ռուսաստանի հետ մի քուսն հայ ժողովուրդը կոիւ է մզում գերման պետութեան հաւատարիմ և արժանաւոր ընկերոջ՝ գազանաբնազդ Թուրքիայի դէմ, երբ Ռուսաստանի, Տաճկաստանի, Պարսկաստանի, Ռումանիայի, Բուլղարիայի, Եգիպտոսի, Հնդկաստանի և վերջապէս Ամերիկայի հայերը հարիւր ներով ու հազարներով պատերազմի դաշտ են սլանում և յանուն արդարութեան առատ արիւն են թափում, — այսօր հայ ազգին նորից նոր վիճակուած է զուրս գալ պատմական ասպարէց:

Իր չորսհազարամեայ գոյութեան ընթացքում հայը ենթարկուել է զանազան փորձանքների: Սասանական, արաբական, պարսկական և թաթարական հակակուսուր դարեցրջանները բազմիցս արեամբ ողողեցին Հեր և Զարեհանդը, Արտաշատն ու Կարինը, Տիգրանակերտն ու Սիվազը, Անին ու Դեմինը և ուրիշ շատ վայրեր, Զինգիդիանը, Լէնկթէմուլը, Արփալամնը, Մէլիք-Էլ-Էշրէֆ Շաբանը, Շահ-Աբբասը քանդեցին, կործանեցին, ամայի դարձրին հայաշատ երկիրներ, գրախատանման քաղաքներ, բազմաթիւ գիւղեր, հոյակապ տաճարներ և շատ ուրիշ հնադարեան յիշատակներ:

Սակայն, նոյնիսկ չորսհարիւրամեայ արաբական դժուարակիր լուծը չծանրացաւ հայութեանս վրայ այն չափով, ինչ չափով օսման բանապետութեան գերիշխանութիւնը, Կիլիկիայի նւաճումից յետոյ ամբողջ հինգ դար Տաճկանայաստանը հեծում է թուրք բռնակալութեան արհաւերքներից, Բագմամիլիօն հայութիւնը նւազեց, ստուարաբնակ Վասպուրականը, Տարօնը, Տուրուբերանը և ուրիշ շրջաններ զգալիօրէն գատարկուեցին. հայութեան մի մասը սրի և հրի ճարակ դարձաւ, միւս մասը բռնի մահմեդականութիւն ընդունեց: Հոյ գրականութիւնը, գեղարուեստը, ճարտարապետութիւնը և առհասարակ կուլտուրական կեանքը ու նրա զարգացումը կանգ առաւ, եւ ինչ կարող է անել սելջուկների յետնորդների բանապետութեան մէջ. նա ահ ու սարսափ է տարածում ամենուրեք, պահանջում է ամեն ինչ զոհ բերել իր քմանաճոյքին և կամտյականութեանը:

Հինգ երկար ու ձիգ դարեր հայութիւնը տանջւում, մաշւում  
է Սուլթանների բարբարոս վարչութիւնից: Թանի, քանի անզամ ա-  
րիւնով ներկուեց Վանը, Մոռշը և Կարինը, քանի, քանի հարիւր հա-  
զարաւոր հայեր սպանուեցին, մորթոտուեցին, այրուեցին արիւնար-  
բու քրղի ու մարդաջինջ տաճկի ձեռքով: Առևանգուեց հայ կինը  
և սատղաշ կոյսը, սրբալղդուեց և կործանուեց հայ հրաշագեղ ե-  
կեղեցին, բանդուեց ուսումնարանը, աւերուեց հայ օջախը, յափրշ-  
տակուեց եզն ու գութանը, լծկանն ու կթանը, գազանաբար խլուեց  
հայ գեղջուկի վերջին կտոր ցամաք հացը, արհամարանքի և ծաղրի  
ենթարկուեց հայ անունը, այն անունը, որ Մարկօ-Պօլոյի, Կալվիխօ-  
ֆոնզալէսի, Շառդէնի, Դէլլա-Վալէի, Քէր-Պօրտերի և շատ ուրիշ  
աշխարհաճռչակ եւրոպացիների յատուկ գովասանքին արժանացաւ...

XIX-րդ դարուայ վերջերում տաճկահայի հառաջանքը երկինք  
հասաւ... Սասնոյ կոտորածը 1894 թւին, Փոքր-Ասիայի համա-  
տարած սիստեմատիքական գարհուրելի հայկական ջարդը 1895-  
—1896 թ.թ., Աղանայի կոտորածը 1910 թ. և վերջապէս մեր  
օրերում պետութեան կազմակերպած ջարդերը այլևս ոչ մի կասկած  
չեն թողնում այն բանում, որ տաճկիը նոյն վայրենի արիւնուուշ  
գազանն է, որպիսին օ դար սրանից առաջ էր, երբ Միջին Ասիայի  
անապատներից չուեց դէպի արևմուտք, դէպի Փոքր Ասիա: 1856 թ.  
Փարիզի վեհաժողովի, 1878 թ. Սան-Ստեֆանոյի 16 րդ յօդ. և Բեր-  
լինի դաշնագրի 61-րդ յօդ. որոշումները բրիստոնեաների և մասնա-  
ւորապէս հայ ազգի բարենորոգումների վերաբերմաք մատնուե-  
ցին յաւիտենական մոռացութեան: Նոյնիսկ տաճկահայերին 1863  
թ. շնորհուած սահմանադրութիւնը գործնական կեանքում կիրառու-  
թիւն չգտաւ: Եւրոպական վիլայէթների դրութեան բարեփոխման  
համար կազմած 1880 թ. Եւրոպական Յանձնաժողովը, ինչպէս նաև  
Կրիտի և Լիբանանի համար ծրագրուած կանոնադրութիւնները իրօք  
դարձան ձայն բարբառոյ յանապատի: 1895 թ. երեք դեսպանների  
(Ռուսաստան, Անգլիա և Ֆրանսիա) յիշատակագիրը՝ ներկայացրած  
թ. Դուանը հայկական բարենորոգումների մասին, նոյն տարուայ հոկ-  
տեմբեր 20-ի Արգուլ Համիդի հրատարակած հրովարակը հայաբնակ  
վիլայէթների դրութեան բարեփոխման մասին մնացին առանց որևէ է  
հետեանքի, առանց որևէ է արդիւնքի: Ջարդերը շարունակում էին իրենց  
գործը, կրելով մերթ մասսայական, մերթ անհատական բնոյթ: 1908  
թ. տաճկական սահմանադրութիւնը, որից ընդամենը երկու տարի յետոյ  
սկսուեց Աղանայի հայկական ջարդը, Արարիայի, Սուրբիայի և Մա-  
կեդոնիայի շարժումները, ցոյց տուեց, որ Շվերածնուած, Թուրքիան  
լուրջ մատղրութիւն չունի բարենորոգուելու և ընդհակառակը ան-  
խուսափելիօրէն դիմում է կորստի: Իր բազմաթիւ տուած խոստում-

ների ոչ մէկը նա չկատարեց: Ոչ ոք այլ ևս չի կասկածում տաճ-  
կական խարերայութեան մէջ, որովհետև «experientia est optima  
rerum magistra».

Մինչ Հայաստանում իրագործում էր սկստեմատիկ հայաշինջ  
քաղաքականութիւնը դահիճ տաճկի ձեռքով, XIX-րդ տարուայ վեր-  
ջերում և XX-րդի սկզբում եւրոպական արդիւնաբերութիւնը լայն  
ծաւալ ունանալով, արմատապէս փոփոխութեան ենթարկեց քաղա-  
քագիտական աշխարհի հաւասարակշռութիւնը: Միջազգային ասպա-  
րէզում երևան եկան երկու միմեանց հակադիր ու համաշան կազ-  
մութիւններ՝ Երրեակ Համաձայնութիւն (Անգղիա, Ռուսաստան և  
Ֆրանսիա) և Երրեակ Դաշնագրութիւն (Գերմանիա, Աւստրիա և  
Իտալիա): Վերջին կարգի (որից Իտալիան արգէն գուրս է եկել) եռանդուն ոգեսրիչը Գերմանիան էր, որ չնորհիւ իր վերին աստիճանի  
զարգացած արդիւնաբերութեան ու միխտարիդմի խախտեց ամբողջ  
աշխարհի խաղաղութիւնը, առաջ բերելով համահւրոպական հրդեհ: Իր  
ներ շօվինիստական «Deutschland über alles» և շահասիրական  
սկզբունքների իրագործման համար նա ձգտում է ոտնատակ անել  
ամեն արդարութիւն և ամեն սրբութիւն:

Մասնաւորապէս ձեռք բերելով Փոքր Ասիայում մի շարք ար-  
տօնութիւններ, ի միջի այլոց Զաղդադի երկաթուղու կառուցման  
գիծը, Գերմանիան իր շահերի ամրագնդման և նոր շուկաների նը-  
ւաճման համար յայտարարել է իրեն Տաճկաստանի պաշտպան և  
հովանաւորող: Հաւատարիմ մնալով «Drang nach Osten» սկզբուն-  
քին և կուրացած իր նիւթապաշտութեամբ, նա անտարբեր մնաց գէ-  
պի ասձկահայի վիշտը, լաց ու կոծը, կոտորածը, նրա ընաշնջումը:  
Եւ առա Նարնջագոյն գիրը, տալով վերոյիշեալ կշռադատութիւն-  
ների և փաստերի պատկերը, ծանօթացնում է մեզ արդարութեան  
ու մարդասիրութեան իսկական բարեկամների ու թշնամիների հետ:  
Գրքին 5-րդ յաւելումը՝ Ենի-Քեօյի միջազգային յանձնաժողովի  
նիստերի արձանագրութիւնները պարզ ապացոյց են մեզ համար,  
թէ ինչպիսի բացասական, մասսամբ նոյնիսկ թշնամական վերաբեր-  
մունք ցոյց տւին գէպի հայկական հարցը Գերմանիան և Աւստրիան:  
Եւ իրօք միշտ է նկատել կ. Պօլսի ուսւաց Հաւատարմատար Գուլ-  
կէվիչը՝ ասելով. «Եթէ երբ և իցէ Ենի-Քեօյի Յանձնաժողովի ար-  
ձանագրութիւնները լոյս ընծայուէին, այն ժամանակ հայերը ակն-  
յայտնի կերպով կծանօթանային գերմանացիների իսկական  
զգացմունքների հետ, որոնք աշխատել են միաժամանակ գրաւել  
հայերին իրենց շողբորթոյ խոստումներով»—(Երես 106):

Միւս կողմից, մտքերի այն փոխանակութիւնը, որ տեղի է ու-  
նեցել Կայսերական Կառավարութեան Արտաքին գործոց Նախարա-

րութեան և կ. Պօլսի, Ակրլինի, Փարիզի, Վեննայի, Հոօմի և Լօն-  
դոնի Ռուսական Ներկայացուցիչների մէջ, մի աւելորդ անդամ ա-  
պացուցում է, որ Արևելքի քրիստոնեայ ժողովրդի միակ պաշտ-  
պան Մեծն Ռուսաստանը ազգիս անաշառ և վեն նովանաւորողն է:  
Մեծն Գետրոսի, Եկատերինա լլ, Նիկողայոս Ա ողորմած ուշադրու-  
թեանը արժանացած հայ ազգը, միմիայն մեր Պաշտելի Թագաւոր  
Կայսր Նիկողայոս լլ սրբադան կամօք կստանայ իր վերջնական  
փրկութիւնը:

Ե. անա այսօր, երբ Մեծն Ռուսաստանը, Ֆունսիան, Անդղիան  
և Իտալիան յանուն արդարութեան և ճնշուած ազգերի ազատու-  
թեան արիւն կիթափեն պատերազմի դաշտում, յաղթանակող անվե-  
հեր ուսւ զինուորը և անձնուորաց հայ կամաւորը Եփրատի և Ա.  
բաքսի ափերէն, Վանայ և Մշոյ դաշտերէն մեր փրկութիւն և նոր  
արշալոյս կաւետեն, որ Տիրոջ կամքը նորից վառի վառ, կթագաւորէ  
երկրին ոսկէդար...

Ս. ԱհԱԳԵԱՆ

№ 1. Թուսաց Դեսպանի Տաճկաստանում Արտարին գրծոց Նախարարին.  
Ե. Պոլի, 26 նոյեմբերի 1912 թ. Հ  
(Նամակ)

Զերդ Բարձր Գերազանցութիւնն արգէն իրազեկ է հայկական հարցի  
ներկայ գրութեամբ Տաճկաստանում, ինչպէս հօֆմէյստր Չարիկովի հաղոր-  
դագրութիւններից, նոյնպէս և իմ տեղիկութիւններից, Սկսած 1894—1896  
յիշատակալից թէերից, երբ հայերը Կ. Պօլում և Փոքր Ասիայում ենթար-  
կուեցին բարբարոսական կոտորածի, սոյն զրութիւնը ոչնչով չըրենփո-  
խուցց Սուլթան Արգուլ Համբդի 1895 թ. հոկտեմբեր 20-ի հրովարտակը,  
որ արուեց շնորհի Ռուսաստանի, Ֆռանսիայի և Անգլիայի ճնշման ազգե-  
ցութեան՝ վերաբերմամբ հայկական վիլայէթների բարենորոգման, դառաւ  
մեսած ասու Հողային հարցը օրըստօրէ սուր կերպարանը է ստանում. հո-  
գերի մեծամասնութիւնը զրաւած և զրաւում են քրդերը, իսկ Կառաւարու-  
թիւնը ոչ թէ միայն չի արգիլում, այլ նոյն իսկ հովանաւորում և աջակցում  
է այդ զրաւութերին: Մեր հիւսատունները միտհամուռ կերպով վկայում են  
բրդերի անընդհատ կոյսալունների և յափշտակութիւնների մասին, հայերի  
սպասութեան և հայ կանանց բնի կերպով մահմղականացման մասին, իսկ  
անկորդութիւնների հերոսները համարեան թէ երբէք պատասխանաւուութեան  
չին ենթարկուում Կ. Պօլու Հայոց Պատրիարքարանի Բ. Դուռն և Արդարա-  
գատութեան նախարարին ներկայացրած թաքրիրը տալիս է իսկական պատ-  
կերը այն ճնշումների և հալածանքների, որոնց ենթարկուում են Սուլթանի  
ճպատակ հայերը:

Վերոյիշեալ հանգամանքները ինքն ըստ ինքեան բաւականին չափով  
բացարում են հայկական մասսաների հետզհետէ աճող ձգտումը զէպի Ռու-  
սաստան և տալիս է մեզ լիակատար հիմք՝ հաւատ ընծայելու այդ  
ուղղութեան անկեղծութեանը: Համակրութիւնը զէպի Ռուսաստան թափան-  
ցել է հայ բուրժուազիայի և ինսեփիկինցիայի մէջ, որի խաւերում, ինչպէս  
ես արդէն առիթ ունեցայ նկատել, յեղափոխական կուսակցութիւնները  
սկսում են կորցնել իրենց հեղինակութիւնը և առաջ են զալիս նոր կուսակ-  
ցութիւններ պահպանողական ծրագրներու: Խմ հարցապնդութերիո Վանի,  
Բայազիլիսի, Բիթլիսի, Երզրումի և Տրավիդոնի մեր հիւսատունները սիածայն  
վկայում են, որ ներկայումն բոլոր հոյերը, տանց կուսակցութեան խարու-  
թեան, համակրում են Ռուսաստանին. օրինակ, Վանի փոխ—հիւսատուն  
սոյն 21 նոյեմբերին հեռազրում է, որ «բոլոր հայերը կողմանից են Ռու-  
սաստանին և անկեղծօքնեն ցանկանում են սուսական զօրքի գալուստը կամ  
բարենորոգութեան Ռուսաստանի վերահսկողութեան տակ»: Բայազիլի փոխ  
հիւսատունը իր 21 նոյեմբերի հեռազրով հաղորդում է. «բոլոր հայերը, ա-  
ռանց կուսակցութեան խարութեան, ներկայումն վերին աստիճանի թշնա-

մօրէն են տրամադրուած դէպի Տաճկաստանը և սաստիկ ցանկանում են Ռուսաստանի հովանաւորութիւնը ու Հայաստանի գրաւուրը<sup>1</sup>:

Ներկայումս ամենայն Հայոց կաթոլիզմուր դիմում է Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի միջոցով Ռուսաստանին, որպէս արքական քրիստոնեայ ժողովուրդների գարաւոր պաշտպանի և անուամբ Աստուծոյ աղաչում է վերցնել իր հովանաւորութեան տակ Տաճկահայաստանում ապրող բազմաչարչար հայ ժողովրդին<sup>2</sup>:

Աչքի առաջ ունենալով վերոյիշեալը, ես պէտքէ խոստովանեմ, որ Կաթոլիկոսի դիմումը միանգամայն ո՞չշտ է արտայայտում Տաճկաստանի հայերի ժամանակակից տրամադրութիւնը դէպի Ռուսաստանը: Այն հարցը, որ հայ ազգի Հոգևոր Գետը յարուցել է պաշտօնապէս, Ռուսաստանի համար ունի առաջնակարգ պետական նշանակութիւն: Նա պահանջում է բազմակողմանի մշակումն, որպէսին ես սկսելու հմ մօտակայ պապայում, հէնց որ մեր հիւպատուններից և Պատրիարքարանից կոտանամ պատասխան իմ առաջարկած հարցերին: Ինչպէս ինձ յայտնի է, տեղիս հայկական շըջաններում պատրաստում է մի զրաւոր դիմումն, որ պիտի ներկայացուի մեծ պետութիւններին առաջիկայ խաղաղ վեհաժողովում: Բայց դէպքերը կարող են ոսիփակել նրա հեղինակներին ներկայացնել այդ անուանագիրը նախ քան վիհանողվի գումարումը: Իսկ այդպիսով մենք բաց կթողնէինք մեր ձեռքից նաւիածենութիւնը:

Այդ պատճառով ես անհրաժեշտ եմ գտնում, որ հաւաստիացումներ տրուին ինչպէս Կաթոլիկոսին, նոյնպէս և Կ. Պօլսի Պատրիարքին այն մասին, որ Կայսերական Կառավարութիւնը ընդունում է հայ ժողովրդի ինպիրը և կարիք եղած դէպքում ցոյց կտայ նրան հնարաւոր հովանաւորութիւնն Այգիսի խոստութեան, ձեռակերպուած լինելով ընդհանուր մտքով, տաճկահայերին կնիքը ոգնութեան յոյս մեր կողմից ի դէպի նոր կողովուանների ու կոտորածների և կարգելէր նրանց անհապաղ դիմելու մեծ պետութիւններին: Տալով հայերին այդպիսի մի լնդհանուր խոստութեան, կհասկացնէինք նրանց, որ մենք ներկայ մօմենտը յարմար չենք գտնում ընդհանուր բնոյթ կրող շարժումների համար:

Իսկ թէ ինչ ձերով է արտայայտուելու մեր ենթազրուելիք հովանաւորութիւնը տաճկահայերի վերաբերմաքը, ես պիտի յայտնեմ, որ հայկական վիլայէթների գրաւումը մեր կողմից, որի մասին մտածում են շատ հայեր, ներկայ մօմենտում ինձ թւում է վաղաժամ, Իսկ կանգ առնելով բարենորոգումների հողի վրայ տաճկական տերրիտորիայում, չպէտքէ մոռանալ թէ ինչպիսի ցաւալի հետևանք ունեցաւ հայկական բարենորոգումների ատթիւ 1895 թ. հրատարակած օրէնքը և սահմանել հիմնար ապահովութիւն հայկական գաւառներում ենթազրուելիք բարեփոխումների համար, դնելով այդ բարեփոխութիւնները մեր կամ Եւրոպական պաշտօնեանների իսկական կօնստրուի տակ: Սոյն դէպքում պէտքէ, սակայն, ի նկատի ունենալ այն հանդամանքը, որ չնորմի ներկայումս Տաճկաստանում զոյւութիւն ունեցող անիշխանականութեան, բարենորոգումները չեն կարող տալ սպասուելիք հանգստութիւնը և գուցել կարիք լինի մտցնելու մեր զօրքերը յիշեալ շըջաններում:

(Ստորագր.) Գիրս.

Ա 2 Արտաքին գործոց Նախարարը կ. Պօլսի Դմոսվանին  
Ս. Գետերբուրգ, 30 նոյեմբերի 1912 թ.  
(Եամբկ.)

Ամենայն Հայոց Կաթողիկոսը զիմեց Կայսերական Կառավարութեան,  
բարեխօսելով հովանաւորել Տաճկաստանում բնակւող հայերին և թեթևաց-  
նել նրանց գրութիւնը:

Տեղիս տաճակաց Դեսպանի հետ իմ մտերմական խօսակցութեան ժամա-  
նակ ես յիշեցրի նրան, որ համաձայն մեր ստացած տեղեկութիւնների հա-  
յերի գրութիւնը Փոքր-Ասիայում վերջին ժամանակ բաւականին վատացել  
է և տեղի է տալիս նրանց արդարացի բողոքներին՝ քրգերի կողմից գործ  
զրոյացնութիւնի առթիւ, անհատի և զոյքի պատճենութեան բացակայու-  
թեան համար, որոնց պատճառը տեղական վարչութեան և նրա կազմի ան-  
բարեկարգ լինելն է:

Սրանից մի քանի ժամանակ առաջ արդէն ես մտերմարար հասկացը  
Տաճկաստանի ներկայացչին, որ Թուրքիան անհրաժեշտօրէն այժմ և եթիք  
սեփական նախաձեռնութեամբ պիտի լուրջ կերպով զրադուի Տաճկահայա-  
տանի բարենորոգման հարցով:

Հազորդելով Ձեզ վերոյիշեալի մասին, ինզրում եմ ըստ առաջի հաս-  
րաւորութեան մտերմարար խօսել նոյն մտքով Արտաքին գործոց Նախարա-  
րի հետ, հասկացնելով նրան, որ նրա ըրիստոնեայ հպատակների օրինական  
շահերի արհամարդումը արգէն երկար տարիների ընթացքում Թուրքիայի  
համար մշտական խորվութիւնների և բարգութիւնների աղքիւը է զանել  
երրորդական վիրայէթներում և վերջ ի վերջոյ պատճառ հանդիսացաւ Բալ-  
կաններում եղած դժբախտ պատերազմի հանգերձ սրա բոլոր հետևանքների:  
Թուրք է, որ այդ հանգամանքը Թուրքիայի համար ապագայում պիտի  
ծառայէք որպէս նախազգուշական միջոց: Մեր կաթէիրով, եթէ Տաճկահայաս-  
տանում իր ժամանակին լուրջ բարենորոգութեամբ չմտցնուեն, տաճկական  
կառավարութիւնը գործ կունենայ հայկական հարցի այն սուր բնաւորու-  
թեան հետ, որը պահանջնելու է երրորդական պետութիւնների միջամտութիւնը:

Բացի այդ, խոռվութիւնների ծագումը մեր սահմանակից շրջանում  
այնքան կարող է շոշափել մեր սեփական շահերը, որ անսպաս կլինէր մեր  
և Տաճկաստանի յարարերութիւնների համար, առաջ բերելով անցանկալի  
բարգութիւններ:

Ի նկատի ունենալով այն, որ պատերազմից յետոյ շատ հաւանական է  
տաճկիների հոսանքը երրորդայից զէպի Փոքր-Ասիայ, հայերի գրութիւնը  
այնունշանելի ես կզատթարանայ, եթէ միայն տաճկական կառավարութիւնը  
վատօրօք ձեռք չառնի համապատասխան միջոցներ ուղարկելու զաղթական-  
ներին այնպիսի տեղեր, որ հեռու են ըրիստոնէաբնակ վայրերից, օրինակ  
դէպի Միջադիտք, ուր կան շատ պատ հողեր, որոնք կարող են շահագոր-  
ծուել սոյն նպատակի համար:

Նախարար հաւերելով Տաճկաստանի ուշագրութիւնը այս կողմից նրան  
սպանացող վտանգի վրայ, մենք միայն բարեկամական ծառայութիւն ենք  
մտաւուցանում նրան, որպիսին, յօսով ենք, նա կզնահատի ըստ արժանա-  
ւորութեան, Դառնալով ներկայումս գլխաւորապէս փորբասիական մի պե-  
տութիւն, Տաճկաստանը առանձնապէս ամուր պիտ պահի մեզ հետ բարի

գրացիական յարաբերութիւններ, որի համար նախապայման է լինելու՝ խուսափել երկու կառավարութիւն մէջ այնպիսի շփումներ ծագելուց, ինչպիսին է հայկական հարցը:

(Ստորագը.) Սականով.

№ 3. Կ. Պօլսի Դեսպանը Արտաքին գործոց Նախարարին.  
Կ. Պօլս, 4 դեկտ. 1912 թ. (Հեռագիր).

Ես մասնակի կերպով յայտնեցի Արտաքին գործոց Նախարարին հայկան վիճակին վասնգալից դրութիւն և հայկական կոսորածների կրկնութիւն անթոյլատրեկիութիւն մասին: Ի խուսափումն նոր զժուարութիւնների, ես Գարքիէլ էֆփէնդիին խորհուրդ տուի չուղղել զէպի Հայաստան պատերազմի դաշտից եկող մահմեդական վախստականներին: Արտաքին գործոց Նախարարը լսեց ինձ ուշազրութիւնը և ինզերց թուլատրել համարելու իմ ասածը պաշտօնական, որպէս զի յինուել նրա վրայ Նախարարների Խորհրդում:

Ես համաձայնուեցի:

(Ստորագը.) Գիրու.

№ 4. Կ. Պօլսի Դեսպանը Արտաքին գործոց Նախարարին.  
Կ. Պօլս, 11/14 դեկտեմբերի 1912 թ. (Հեռագիր).

Բ. Դուռը, իմանալով անշուշտ, որ հայերը մտադիր են զիմելու եւրոպական օգնութեամու մշակել է Հայաստանի համար բարեհորոգութեամբ ծրագիր և մացընել յանձնածողով մլջ, որին մասնակցում են մի քանի հրահրուած հայեր: Սակայն կոսուավարութիւն ծրագիրը հայերը չեն գտնում համադատասիսն իրենց ամենահամեստ պահանջներին: Ի դէսպ ասած, մի քանի տաճկական լրացիներ հայերի հասցէին տպել են սպառնացող յօդուածներ: Փարցիք և կօնդօնի հայկական կօմիտէտները դիմել են տեղական կառավարութիւններին, որով համաձայն մեր վիրաբերմունքի դէպի հայկական հարցը, կամ ինզերելու են երեք պետութիւնների կօլէկտավի պաշտպանութիւնը, կամ այն, որ սոքա յանձնեն հայկական հարցը միայն Ռուսաստանին: Հայերը սկզբում են, որ կովկասում նաև կազմում է մի պատգամաւորութիւն եւրոպական ուղարկելու համար: Մոյս Նախարարութիւնը մեզ վերասպահելու համար, ես ցանկալի կդժմէի անյապաղ պատասխանելու հայերին մեզ արած զիմում մի առթիւ: Արդէն ես մտերմարար յայտնեցի նորանց՝ Տաճկաստանին արուած մեր խորհրդների և բուժէլիսկան վախստականներին Հայաստանում շընգունելու մասին: Բայց ինձ թւում է, որ սրանով նրանք չեն բաւականալայ: Համոզուած յինելով, որ խօսկան օգնութիւն կարող են գտնել միմիայն մեզանից, նրանք խուսափում են վարուել հակառակ մեր մտադրութիւնների և աշխատում են, որ իրենց յիշազայ շարժութերը, որոնցից հրաժարուելու չեն երբեք, առաջ ընթանան մեր զեկավարութիւնները: Ես ժամանակայացարմար եմ գտնում, որ այդ առջիւ երբեակ համաձայնութիւն պետութիւնների

էատ բացատրուէինք: Գուցէ հայերին կարողանանք յայտնել որ, չնրախուսելով նրանց որ և է յեղափոխական ձգառումը, մենք կոտորածի դէպօւմ նրանց չենք թողնի առանց մեր պաշտպանութեան:

(Ստորագը.) Դիբս.

№ 5. Արտաքին գործոց նախարարը Անդրիայի և Թումափայի ուստական ֆինանսներին:

Մ. Պետերոսիրք, 13 գեղեցիքերի 1912 թ. (Մտերժմական նամակ):

Վերջին ժամանակները կայսերական կառավարութիւնը ստանում է հայ ժողովրդի և հոգեորականութեան կողմից զանազան ինդիւներ պաշտպանելու Փոքր-Ասիայում ըստակող հայերին և նոյն իսկ գրաւելու այն ըլլ-ջանները, որ կենարօնացած է հայ ազգարնակութիւնը:

Այս հարցը գառնալով մեզ համար լուրջ մտահոգութեան առարկայ, սորիպի է կայսերական Նախարարութեանը մի քանի անգամ հրամակը թուրքական ուժազրութիւնը այնպիսի միջոցների ձեռնարկման անհրաժեշտութեան վրայ. որոնք անհնարին դարձնէին մօտակայ ապագայում նոր աշխինիքների բառականութիւնների առաջ զալը:

Մակայն, չի կարելի չընդունել, որ հայերի այդ պնդումը, որ Թուրքիան ինքը անընդունակ է մոցնելու նրանց զրութիւնը փոփոխող ըարենորոգումներ, տարարախտարար գտնում է Տաճկաստանի պատմութեան մէջ այնպիսի բաղդարանակ պերճախօս փաստեր, որ վերացնում է ամէն մի կասկած:

Հայերին արուած մեր ուստախանների մէջ մենք միշտ յայտնել ենք թուռաստանի անփոփոխ բարեացակամ վերաբերումնը զէս նրանց և խոստացել ենք զրադուելու տաճկանայերի հարցով: Մինոյն ժամանակ մենք մտանանշում ենք այն հանգամանքի վրայ, որ յարուցել հայկական հարցը ալժիս, երբ զեր բալկաննեան ճգնաժամը չի անցել, վաղաժամ է նոյն իսկ հայերի շահերի տեսակէտից, որովհետո միջազգային քննադատութեամբ հազիր թէ կարելի է յուսաւ, որ մնե պետութիւնները այդ հարցում լինեն միաձայն, այն ինչ ամեն մի տարածայնութիւնից կօգտուէր միմիայն Թուրքիան:

Գիտակցելով հայկական հարցի բարդ լինելը և բոլոր դժուարութիւնները, մենք գտնում ենք, սակայն, անհրաժեշտ էնց այժմհանից սկսել մորերի անյետաձերի փոխանակութիւնը Փարիզի և Լոնդոնի Կարինենների հետ սահմանելու ընդհանուր հայեցակու և համերաշխ գործունեութիւն:

Զիսուկով միջոցների մտսին, որոնց մշակումը մեր կարծիքով աւելի լաւ կիխներ յանձնել երեք մնե պետութիւններին Կ. Պօլսում, մենք ենթադրում ենք, որ հարկաւոր է այժմհանից ըննել՝ մրդեր հայկական հարցը, ենթարկուած լինելով Թուրքիայի անկախ նախաձեռնութեան համաձայն Բերլինի վեհաժողովի ՅՆ-ը յօդուածի, չի պահանջում սահմանել որոշ ապահովութիւն:

Բացի այդ, ի խուսափումն նոր բարդութիւնների, որ անկասկած կը ստեղծի մահմետականների առաջիկայ՝ մասսայական զաղթը Եւրոպական Տաճկաստանից դէպի Փոքր-Ասիայ, արգելք հնարաւոր չեր զանի կառավարութիւնը, որի մօտ Դուք ուղարկուած եք, պատուիքելու իր գեսպանին Կ. Պօլ-

սում պաշտպանելու մեր դեսպանի ցուցութիւնը գաղթականութեան ուղղման  
և բարեկարգման միջոցների առթիւ

Հաղորդելով վերոյիշեալը, ինչորում եմ Ձեզ մտերմաքար խօսել ցուց  
ցատրուած մաքով Արտաքին գործոց Նախարարի հետ և հետեւանքի մասին  
կարելոյն չափ շուտ տեղեկացնել Նախարարութեան:

(Ստորագը.) Սականով.

№ 6. Կ. Պօլսի ուսաց Դեսպանը Արտաքին գործոց Նախարարին.  
Կ. Պօլսի, 1<sup>5</sup>/1<sub>4</sub> դեկտեմբերի 1912 թ. (հետազիր).

Երկիւդ կրելով հայկական հարցի յարուցումից, Բ. Դուռը ինքն է ձեռ-  
նարկում բարենորոգութիւնը բննադատութիւնը Հայաստանում. Ըստ երևոյ-  
թին, նա ենթադրում է փեղ հայկական վիւայէխներից կազմել երկու վերա-  
տեսչութիւն, որից իւրաքանչիւրը իրեն գլուխ է ունենալու մի տաճիկ ընդ-  
հանուր վերատեսչ և յանձնաժողով բաղկացած երկու մահմեդականներից,  
երկու հայերից, երկու երոպացիներից նախագանութեամբ երրորդ երոպա-  
ցիի: Այդ ծրագիրը բնու չի բաւարարում հայերին, որոնք պահանջում են  
երոպական վերահսկողութիւն և ոչ թէ տաճկական պաշտօնեաներ եւ բոլա-  
ցիներից: Այդպիսի մի ծրագրի իրագործման դէպքում, ենթադրում եմ, որ  
ցանկալի կլինէր երոպացիների թւում տեսնել ուռւներ, կամ յամենոյն  
դէպս մեզ ոչ թշնամի անձնաւորութիւններ: Երկիւզալի է, մի զուցէ Տաճ-  
կաստանը, ցանկանալով խուսափի մեր միակ միջամտութիւնից հայկական  
հարցում, ներկայացնի իր ծրագիրը մեծ պետութիւններին ի զիտութիւն,  
որով և վերջանայ նրա գործունէութիւնը:

(Ստորագը.) Գիրս.

№ 7. Կ. Պօլսի ուսաց Դեսպանը Արտաքին գործոց Նախարարին.  
Կ. Պօլսի, 1<sup>4</sup> դեկտեմբերի 1912 թ. (նամակ).

Այս օրերս ես երկար խօսակցութիւն ունեցայ ինձ այցելոյ յայտնի  
հայկական գործիչ ուսաւհաստակ բժիշկ Զավթեկի հետ հայկական հարցի  
առթիւ, Բժիշկ Զավթեկի վը յայտնի է հայսերական Նախարարութեանը, որ-  
պէս գեկավար Բժշկական մարմին, որը կազմակերպուեց 1905 թ.ին Ռու-  
սաստանում Բժշկական օգնութիւն հասցնելու Տաճկանայաստանի բնակչու-  
թեանը և որպէս հեղինակ հայկական հարցին նուիրուած զեկուցագրի, որ-  
պիսին նա ներկայացրեց Նախարարութեան 1907 թիւն Նա Քաջնակցու-  
թեան կուսակցութեան անդամ է:

Բժիշկ Զավթեկի վը՝ հետո վերադառնալով այստեղ իր ճանապար-  
հարգութիւնից Տաճկանայաստանում, նկարագրում է իր ազգակիցների դրու-  
թիւնը վերին աստիճանի մուայլ գոյներով, Անհասի և գոյքի ապահովու-  
թեան բացակայութիւնը, հողային անթարեկարգութիւնը, տաճկական վար-  
չութեան և գատարանի կողմանական վերաբերմունքը դէպի քրդերը—ահա  
հայկական կեանքի գլխաւոր վերքերը Միմիայն Ռուսաստանը, Զավթեկի  
կարծիքով, կարող է բռնիւ այդ վերքերը կամ անմիջապէս, կամ ճնշում  
գործ դնելով Օսմաննեան կառավարութեան վրայի

Հստ Զավթիեվի, մօտիկ ապազյում հայկական մասսայական կոտորած չի սպասում Բայց նա նկատել է, որ հայերի առանձին սպանութիւնները քրդերի կողմից պատահում են հաճախ, իսկ անցեալ տարիների փորձը ցոյց է տեսել, որ այդպիսի հաճախակի սպանութիւններ, հետզհետէ ստանալով լայն ծաւալ, վերջ ի վերջոյ փոխում են կատարեալ կողոպուտների և կոտորածների Միւս կողմից հողային հարցը օրբստօրէ սուր կերպարանք է ստանում, մանաւանդ շնորհիւ այն հանգամանքի, որ տաճիկ իշխանութիւնը ամենապարզ ձևով խորախուում է հայերի հողերի գրաւումը քրդերի կողմից, ստիպելով հայերին երեամ ստորագրել այնպիսի գրութիւններ, որոնք հաստատում են հողերը յափշտակիչների անուան:

Պ. Զավթիեվը այն կարծիքն է յայտնում, որ կողոպուտների և կոտորածի նախազգուշացումը միանգամայն կախուած է տաճիկ կառավարութիւնից, իսկ եթէ Ռուսական Կառավարութիւնը իր կողմից ձեռք առնի եռանդուն նախազգուշական միջոցներ, այն ժամանակ կատաստրօֆան կիսափառին Բարիիսուելով այդպիսի պաշտպանութեան համար, ալ. Զավթիեվը միևնուն ժամանակ խորհուրդ է հարցնում ինձանից, թէ Ինչպէս պիտի վերաբերուին հայերը դէպի Տաճկաստանը և պէտք է մրգեաօ նրանք դիմումն անեն Ռուսաստանին և ուրիշ Երոպական պետութիւններին:

Ես պատասխանեցի իմ խօսակցին, որ Կայսերական Կառավարութիւնը ամենալայն չափով հետեւումէ Հայաստանի հարցին, Բայց և այնպէս հայերը չպէտքէ աշքաթող անեն ներկայ մօմենտի բացառիկ պայմանները և վատթարացնեն իրենց դրութիւնը անզգոյշ շարժումներով. Անհրաժեշտ է, որ համայն Եւրոպան հայերին համարէ տաճկական ըսնութեան գոհեր, այլ ոչ թէ քաղաքական յեղափոխականներ, որոնք, օգտուելով տաճկական պատերազմական անյաջողութիւններից, ցանկանում են իրագործել իրենց ազգայնական ձգութեանը. Այդ պատճառով հայերը չպիտի գրգռեն տաճկիներին, առաւել ևս խուսափեն ապատամբութիւններ առաջ բերելուց, Նմանապէս նրանր պիտի խոյս տան ներկայացնելու Երոպային որևէ քաղաքական պահանջ, Սակայն, միւս կողմից, ինչպէս մամուլի, նաև իրենց կոչիրի միջոցով, հայերը կարող են ընդհանուր ուշազրութիւնը հրաւիրել այն հաւածանքների վրայ, որոնց նրանք ենթարկելում են քրդերի և տաճիկ իշխանութեան կողմից:

Բժիշկ Զավթիեվը յայտնեց ինձ, որ իմ այս խօսքերը նա ուշազրութեան է առնում և կաշխատի նոյն մտքով ազգելու իր կուսակցական ընկերների և առհասարակ համախոհակիցների վրայ. Եղափակելով իր ասածները, նա յայտնեց Հայերի ընդհանուր միտքը, որ նրանց ճակատագիրը կախուած է Ռուսաստանից:—

Երեկ ես առիթ ունեցայ բացարուելու Արտաքին գործոց Նախարարի հետ ես մասնացրյա արի Գարրիէ Եփփէնդիին, առաջ մասնաւոր կերպով, Հայկական վիլայէթների վտանգաւոր դրութեան վրայ և այն մասին, որ Սասունի և Աղանայի կոտորածների կրկնութիւնը անթոյլատրելի են Նմանապէս ես յայտնեցի նրան, որ ի խուսափում նոր բարդութիւնների՝ ինչպէս հողային, նոյնպէս և կրօնական հարցերում, խորհուրդ եմ տալիս Եւրոպական Տաճկաստանից փախած մահմեղականներին չընակեցնել Հայաստանուամ:

Քարբիէլ Եփփէնդին համակրանքով ընդունեց իմ առաջարկութիւնը և

Նոյն իսկ յայտնեց, որ կգերադասէր լսել այդ մասին պաշտօնապէս Այս պատճառով և թոյլատրեցի ող. Նորագունդեանին զեկուցել իմ ասածները Նախարարների խորհրդին:

(Ստորագր.) Գիրս.

№ 8. Կ. Պօլիկ ոռուաց Դիսական Արտաքին գործոց Նախարարին.

Կ. Պօլիս, 17 գեկտեմբերի 1912 թ.

(Մտերժմական նամակ)

Հայկական հարցը շարունակում է սաստիկ զբաղել Թուրքիային ինչ-պէս ես արդէն պատի ունեցայ յայտնելու Ջերդ Բարձր Գերազանցութեան սոյն 15 գեկտեմբերի հետագով, կառավարութիւնը թեթևակի կերպով մշտեց հայկական վիլայէթների համար մի ծրագիր և ներկայացրեց նրան մի առանձին յանձնաժողովի քննութեան նախագահութեամբ Միհ Վ. Ղուրիքի և կազմուած Արտաքին գործոց, ժողովրդական լուսաւորութեան, ֆինանսների և ներքին գործոց Նախարարներից:

Կառավարութեան օրինագծի ընագիրը Պատրիարքարանին չի հակառակուած Ներքին գործոց Նախարարը միմիայն Ընդհանուր Կերպով ծանօթացրեց Նրա բովանդակութեան համ և առան Խոհնդրի երկու անդամներին: Միւս օր (գեկտեմբեր 8-ին) յանձնաժողովում հրաւիրուած էին մի քանի հայ զործիչներ, որոնք Պատրիարքարանում ոչ մի պաշտօնական զիբը չունեն:

Կառավարութեան օրինագծի ընագիրը, որի համաստ տեսութիւնը կցւում է այստեղ, յանձնաժողովում յայտնի է իր թերութեամբ ու զրութիւնների անդիակատարութեամբ և պիտի համարուի յետամեաց, համեմատելով նրան 1895 թ. Տոկտեմբերի 20-ի Ռուսաստանի, Ֆաննսիայի և Անգլիայի Նախաձեռնութեամբ մշակուած օրէնքի հետ Օրինագիրը սահմանում է, ինչպէս նաև 1895 թ. օրէնքը, հայկական վիլայէթների համար Ընդհանուր Վերատեսչի պաշտօնը, հնթարկելով վալիներին սրան Բայց եթէ 1895 թ. օրէնքի 32-րդ յօդուածը թ. Դուանը կից հիմում է մշտական վերասնկողութեան յանձնաժողով և ճանաչում է գեսակաների խիստ կարևոր իրաւունքը՝ պահպանել յարաբերութիւն այս հիմնարկութեան հետ, սերկայ օրինագիրը այդպիսի վերանսկիչ յանձնաժողովի մասին լուսում: Դրա փոխարէն նա հաստատում է Ընդհանուր Վերատեսչին կից մի առանձին յանձնաժողովի, բազ կացած Յ մահմեդականներից և երեք քրիստոնեաններից, Նախագահում է այդ յանձնաժողովում Ընդհանուր Վերատեսչի խորհրդականը, որը երրուացի է և գտնում է տաճկական ծառայութեան մէջ: Նոր օրէնքը նոյնական լուսում է քրիստոնեանների վարչութեան և ինքնավարութեան մէջ մասնակցութիւն ունենալու մասին, որը առանձնապէս շետում է 1895 թւի օրէնքը: Միւս հարցերի մասին խօսուում է միմիայն ամենաընդհանուր գծերով: Վերջապէս ծրագիրը տարածում է բարենորոգութեանը ոչ թէ որոր հայկական վիլայէթների վրայ, այլ միմիայն չորսի (Ոիվասը և Երզումը զուրս են ձըգուած):

Յանձնաժողով հրաւիրուած հայերը պարզեցին կառավարութեան օրինագծի իմակատար սնանկութիւնը: Նրանը մատնացոյց արին, որ անհրաժեշտ է տարածել բարենորոգութեանը բոլոր վեց վիլայէթների վրայ, ցան-

կալի է հրանիրել եւրոպացիներ դատավարական վերատեսուչների, ոստիկանութեան և ժանդարմերիայի պահների պաշաճների համար, զավարութեան ժամանակ հաւասարացնել հայ լեզուի գործածումը տաճկականի հետ Հայերը առաջարկեցին Դուան՝ բարենորդութեանի մշակման հարցում զեկաւարութեան 1895 թ. օրէնքով, Միւրցաթէպեան ծրագրով և 1880 թ. վիրայէթների օրէնքով Ընդումին նրանք յայտնեցին, որ անհրաժեշտ է ցրել հայերի ունվատանութիւնը զէպի տաճկական խոստութերը և վերջոյ հայերը աւելացրել են, որ իրենց պարականութիւնը յանձնաժողովում վերջացրած են համարում և խորհուրդ են տալիս Դուան զիմել Պատրիարքարանին:

Համաձայն իմ ստացած տեղեկութիւնների այս վերջին զեկուցումը նրանք արել են Պատրիարքարանի աղդեցութեամբ, որը խորապէս վիրաւորում է թէ ինչու Դուուր գիմում է ոչ լիտոգրատած անհամարին:

Յանձնաժողովի վերջին նիստից մի քանի որ անց, ուր մասնակցումէին հայ հայերը, անզական մամուլում տպուեցին յօդուածներ, որ կառավարութեան օրինագիծը փոփոխուելու է հայերին ցանկալի իմաստով Կառավարութիւնը, իր թէ համաձայնուեց վեց վիրայէթներից կազմել երկու վիրատեսչութիւն, որոնցից իւրաքանչիւրը ունենալու է իր Ընդհանուր Վեհատեսուց: Արանց կից կազմում է մի յանձնաժողով, բազկացած երկու հայերից, երկու տաճիկներից և երկու երրութեականներից: Յանձնաժողովիներում նախագահում են Ընդհանուր Վերատեսուչների խորհրդականները—եւրոպացիք:

Տաճկական կառավարութեան այս ակնյայտի նպատակը՝ Փոխարինել բարենորդութեանի եւրոպական կոնտրոլը տաճկական ծառայութեան մէջ հրաւիրուած եւրոպացիներով, բոլորովին չի բաւարում, համաձայն իմ տեղեկութիւնների, Պատրիարքարանին և նրա մերձակայ ըջաններին հայերի առաջն և ամենանշանաւոր պահանջն է ստանալ այս կամ այն ձևով ուսուակն կամ միջազգային ապահովացու յիշեալ վայրերի համար, իսկ այն հարցը, թէ ինչ բնոյթ և բովանդակութիւն են ունենալու ապահովուած բարենորդութեանը, երկորութական նշանակութիւն անի նրանց համար Ապահովութեան ամենաէկական միջոցը համարեւմ է ուսուական գրաւումը Այս յանկութեան իրագործման անհարաժեպութեան գէպրում ծրագրում է վեց վիրայէթների համար Վեհագոյն գործավարի պահունը նշանակմամբ Առլթանի և համաձայնութեամբ միծ պետութիւնների: Այդ Վեհագոյն գործավարը լինելու է անպատճառ օտարերկրացի:

Հայոց Պատրիարքարանի Խառն Խորհուրդը երեկ թնառում էր այն հարցը թէ ինչպէս վերաբերուել զէպի Դուան բանացի զեկուցումը բարենորդութեան առթիւ Խորհուրդը գնաց ուղարկել Դուան հետեւու թարբերը. Պատրիարքարանը գտնում է, որովհետեւ Դուուր բարենորդութեանի ծրագիրը յարանց ոչ թէ իրեն, այլ մասնաւոր անհամաններին, ուստի Պատրիարքարանը Հսարաւորութիւն յունի արտայայտուելու նրա բովանդակութեան մասին: Պատրիարքարանի համար նմանապէս մեռում է անյայտ, թէ ինչ ձևով է մտադիր Դուուր ապահովել նրանց գործադրումը Վերջին նախադասութեամբ Պատրիարքարանը մատնանշում է երրութական կօնտրօլի անհրաժեշտութեան վրայ Թաքրիրը ուղարկուած է Դուանը 15 զեկուններին Եթէ կառավարութիւնը օրինագիծի բնագիրը հազորդի Պատրիարքարանին, վերջինս չի հաժարուի իր կարծիքը յայտնեւուց:

(Ստորագր.) Գիրս.

(Թարգմանութիւն № 8-ի յաւելման).

Հայկական բարենորոգումների ծրագիր.

Ահաւասիկ ճիշտ բաղուածք այն օրինագծի դանապան յօդուածների, որ ունենալու է ժամանակաւոր նշանակութիւն, մինչև պարլամենտի հաստատումը:

Յօդ. 1.—Պաշտօնեաների յարաբերութիւնները որոշող օրէնքները, վարչական, ֆինանսական, իրաւարանական, պատերազմական և համայն պետութեան մէջ գործող Շէրիի օրէնքները մուռմ են իրենց ոյժի մէջ նաև յիշեալ չորս վիլայէթներում:

Յօդ. 2.—Ցիշեալ վիլայէթներում նշանակում են առանձին Յանձնաժողով և Ընդհանուր Վերատեսուչ:

Յօդ. 3.—Յանձնաժողովը բաղկացած է երեք մանձեղականներից, երկու հայերից և մէկ քաղղէացուց: Յանձնաժողովի անդամները ընտրուում են անհրաժեշտ յատկութիւն և ընդունակութիւն ունեցող վատահելի անհատներից: Յանձնաժողովում նախագահում է Ընդհանուր Վերատեսչի Խորհրդականը:

Յօդ. 4.—Խորհրդականը լինելու է եւրապացի՝ ծանօթ տեղական սուվորութիւնների ու վարչական գործերի հետ և անհրաժեշտ ընդունակութիւնների աէք Նա մտնում է Օսմաննեան Կայսրութեան ծառայութեան մէջ:

Յօդ. 5.—Ընդհանուր Վերատեսչին նշանակում է Կայսերական կառավարութիւնը վեց տարուայ ժամանակամիջոցով: Նրա պաշտօնը անփոփոխ է, բացառութեամբ այն գէպերի, որոնք առաջ են բերում պատասխանաւութիւն:

Յօդ. 6.—Յանձնաժողովի անդամները արձակում են պաշտօններից միմիայն իրենց նակասօրինական գործողութիւնների համար, երբ այդ առթիւ կայացել է նախագահի և Յանձնաժողովի մեծամասնութեան վճիրութ:

Յօդ. 7.—Ընդհանուր Վերատեսուչների բոլոր գործողութիւնները կատարուում են համաձայն Յանձնաժողովի վճիրների: Ընդհանուր Վերատեսուչը լիազօրուած է գործադրելու Յանձնաժողովի վճիրները և այդ առթիւ անհրաժեշտ հրահանգներ տալու վելիներին:

Յօդ. 8.—Ընդհանուր Վերատեսուչը լիազօրուած է փոխելու վիլայէթի բոլոր պաշտօնեաններին, բացառութեամբ կրօնական (Շարիաթի) հաստատութեան պաշտօնեանների, որոնց առթիւ նա դիմում է Շէլիուուլ Խոլամաթին և Բարձրագոյն Իրադէով նշանակուած անձանց, որոնց առթիւ նա դիմում է, համաձայն Յանձնաժողովի վճոփ, ներքին գործոց նախարարութեան:

Յօդ. 9.—Ընդհանուր Վերատեսուչները և Յանձնաժողովը կատարուում են վերահակողական ճանապարհորդութիւններ:

Յօդ. 10.—Վերատեսուչը անձամբ, նոյնպէս և Յանձնաժողովի իւրաքանչիւր անդամը կարող են անհրաժեշտ գէպերում, համաձայն Յանձնաժողովի վճոփ, կատարել վերահակողական ճանապարհորդութիւններ:

Յօդ. 11.—Յանձնաժողովի իւրաւասութեան առարկաններն են:

Հողային վէճերի վերացումն հայերի և քրդերի մէջ, համաձայն արդարադատութեան:

Առողջութիւնների վերացումն երկու տարրերի մէջ և լիակատար ներզաշնակութեան սահմանումն նրանց մէջ:

Ապահովացումն իրաւակարգի, լիակատար հաւասարութեան հաստատումն, ժանդարմերիայի բարեփոխումն, ուղիների և ճանապարհների կառուցումն, գիւղատնտեսութեան և արուեստի բարելաւումն, երկրի բնական հարստութիւնների շահաւետման միջոցների ձեռնարկումն և այլն:

Յօդ. 12.—Վալին, պատերազմական կօմէնդանութիւնը և ժանդարմերիան պէտք է կատարեն Ընդհանուր Վերատեսչի հրամանները:

Յօդ. 14.—Մեարիֆի և մենափ լրացուցիչ հարկերը, ինչպէս նաև վիւայէթի եկամուտները, յատկացումն ժողովրդական լուսաւորութեան, հասարակական աշխատանքների և վիւայէթի գիւղատնտեսութեան պիտոյքներին, համաձայն առանձին բիւգժեսի:

Յօդ. 16.—Երբ այս վիւայէթներում իրաւակարգը հաւասար աստիճանի վրայ կզտնուի միւնքների հետ համեմատած, այն ժամանակ ընդհանուր վարչական օրէնքների ոյժը տարածուելու է և այս չորս վիւայէթներում 5 տարով Ներանց նշանակումը կարող է վերանորոգուել սոյն ժամանակամիջոցը անցնելուց յիսուոյ Ընդհանուր Վերատեսչի ոսժիկն է 20.000 պիտառ, յանձնաժողովի անդամներինը—10.000 և խորհրդականի . . (բաց է թողուած):

(№ 9. Բայազիտի վոլի-Հիսլամումը Արտաքին գործոց նախարարին.

Բայազիտ, 20 դեկտեմբերի 1912 թ. (հեռագիր).

Քրդերի մէջ նկատում է խմբումն, որ ծագել է Հայոսատանուժ առաջիկայ մացնուելիք բարենորոգումների լրով Այսուեղ բնակուղ Զելալ աշիրէթի պիտ ոռուսուեց Շէյխ Իրրահիմը հրամայեց իր քրդերին պատրաստ լինել Հայերին կոտորելու և սկսել կոտորածը, հէց որ նա կարգադրութիւն կտայի Հայերը ահ ու գողի մէջ են:

(Ստորագր.) Ակիմովիչ.

(№ 10. Յունաիայի ոսաց Թիսլամը Արտաքին գործոց նախարարին.

Փարիզ, 24 դեկտեմբերի 1912 թ. (յունարի 1913 թ.) հեռագիր.

Պ. Պուանկարէն ասաց ինձ, որ հայկական հարցում նա լիովին միհանուժ է Զեր կշռադատութիւնների հետ և փոան սիական դեսպաններին թուսաստանում ու Տաճկատանում լիազորում է համապատասխան հրահանգներով:

(Ստորագր.) Իզգօւսկի.

(№ 11. Թեսլամը Տաճկատանում Արտաքին գործոց նախարարին.

Պ. Պոլիս, 27 դեկտեմբերի 1912 թ. (նամակ).

Սոյն դեկտեմբերի 21-ին կայացաւ Հայոց Ազգային ժողովի նշանա-

ւոր նիստը, որը պարզեց հայ կուսակցութիւնների լիտկառար համերաշխութիւնը բարենորոգութիւնների հարցում:

Հայերի գումարած Խառն ժողովի նպատակն էր արտայայտուելու «Կառավարութեան վերին աստիճանի անբաւարար ծրագրի» առթիւ և պարզեցու, թէ ինչ միջոցներ ձեռք պիտի անսէ Խորհուրդը, որպէսզի ապահովէ բարենորոգութիւնների ներմուծումը և անդորր ութիւն վերականգումը Հայաստանուն:

Պատասխաններով այդ հարցին, Խառն Խորհուրդը յիշեցրեց, որ հայկական բարենորոգութիւնների հարցը ձգձգում է արգելն կէօ դար, բազմից կազմուել ին բարենորոգութիւնների ծրագրիններ, որոնք միշտ զատապարուսուած են եղել անշարժութեան: Բայց այս անզամ Խորհուրդը չի բաւականանում ծրագրիններով և իր ամէն ճիգ ու ջանքը գործ է դնելու, որպէսզի բարենորոգութիւնների իրազործումը ապահովուած լինի անպայման և ընդմիշտ, այնպիսի մի՛ ձևով, որ այլին ոչ մի հայաբարութիւն, ոչ մի իշխանութիւն երբէք չկարողանան որևէ կերպով, նոյն իսկ ժամանակաւորապէս, կանգնացնի բարենորոգութիւնների գործադրումը: Այսու Խառն Խորհուրդը պահանջում է վոտահ վերաբեր մանր դէպի իր հոկու կէտից բաղկացած գործունէութեան ծրագիրը:

I) Պատրիարքութեանի Խառն Խորհուրդը շարանակելու է յարաբերութիւնները տաճկական կառավարութեան հետ, պնդելով իր հայեցակետութեայ:

II) Խորհուրդը ձգտելու է հիմնաւոր երաշխառութիւնների միջոցով տպահովելու կենսական և խորը մտածուած բարենորոգութիւնների անշեղ գործադրումը:

Խառն Խորհուրդի գեկուցումը ընդունուեց միծ համակրանքով Ազգային ժողովի անդամների կողմից: Մի քանի պատգամաւորներ ցանկացան միայն ծանօթանաւ բարենորոգութիւնների մանրամասնութիւնների հետ: Բայց Խորհուրդը յայտնեց, որ անտեղի է գանում նոր պարզաբանութիւնների մէջ մտնելու, տեղեկացնելով սակայն, որ ազգային շահերը պաշտպաննեին նա մտադիր է յիսուել այն միջազգային պարտականութիւնների վրայ, որ վերցը է իր վրայ օսմանին կառավարութիւնը: Աւշադրութեան արժանի է այն, որ ըստ միծին մասամբ կենարօնի անդամներից (պահպանողականներից) բազկացած Խորհուրդը իր այս հայեցակետի պաշտպանութիւնը գտաւ զախականների կողմից, որոնք առաջարկեցին հրաժարուել նոր վիճաբանութիւններից և յայտնել Խորհուրդին լիտկառար վասահութիւն: Ըստամին զախականները հաղորդեցին, որ այսպիսի մի պատմական մօմենտում նրանք հրաժարուում են իրենց կուսակցական հայեցքներից, որպէս զի բոլորը համոզուին, որ բարենորոգութիւնների հարցում հայ ժողովուրդը միաբան է: Ի վերջո Ազգային ժողովը միաձայն կերպով յայտնեց իր հաւանութիւնը՝ Խառն Խորհուրդի գեկուցմանը:

Դեկտեմբերի 21-ի նիստը մի լուրջ նախազգուշացումն է տաճկական կառավարութեան համար: Զնայելով, որ երաշխառութիւններ պահանջող հսկութիւնները նրանց «միջազգային» անունը չէին տալիս, բայց արտասանուած ճառքերի իմաստը ոչ մի կասկած չի թողնում այս առթիւ:

Դեկտեմբերի 21-ի նիստը նշանաւոր զարձաւ տեղական կեանքի համար մի ուրիշ՝ խիստ կարեւոր դէպրով: Ազգային ժողովը միաձայն կերպականդացրեց

Նախկին պատրիարք Օրմանեանի պատիւը և բարի տնունը, ընդունելով նրա հասցեին ուղղուած մեղադրանքների սահմանութեանը: —

Խնչուս յայտնի է, պատրիարք Օրմանեանը պէտք է հեռանար իր պաշտօնից տաճկական սահմանադրութեան տռաջի օրերում, զիշելով ազգի պահանջին, որը մեղադրում էր նրան Սուլթան Արդուլ Համբիլին ցոյց տռուած հաճոյակամութեան և ազգային շահերին հակառակ ուրիշ վարժունքների համար:

Օրմանեանի ամենածայրահեղ թշնամիները միշտ եղիլ են զաշնակցուկանները և այժմ նրանք չցանկացան մասնակցել նրա պատուի վերականգմանը, ոյլ որոշեցին խոչնուած հանդիունալ, հազորդելով, որ ներկայ և պատմական մօմենտը պահանջում է ներքին խոռոչութիւնների վերացումն և այդ պատճառով նրանք քուէարկութիւնից ձեռնպահ են մնաւու Այս զեկուցումից յետոյ Աղջային Ժողովը 28 ձախով ընդդէմ է հերքեց Օրմանեանի դէմ կուտած մեղադրանքները և ձանակչեց նրան արդար:

Դաշնակցականների այս խաղարսիրական վերաբերմունքը հիմք է տալիս ենթադրելու, որ յանձնիս խելօր և ընդունակ Օրմանեանի նրանք մտադիր են համազային հարցում ձեռք բերել իրենց համար թէկուզ ժամանակաւոր դաշնակից: Ցամենայն դէպս կուսակցութիւնների մէջ հաստատուեց հթէ ոչ խաղաղութիւն, դոնեա ժամանակաւոր հաշտութիւն:

(Սարուագը.) Գիրա.

№ 12. Եորին ԿԱՅՍԵՐԻՎԱԿԱՆ Մեծութեան Կովկասի Փոխարքան Արտարին փործոց նախարարին.

Թիֆլիս, 7 փետրվարի 1913 թ. (նամակ).

Ամենայն Հայոց Կաթուղիկոսը այս տարուայ յունվարի 16-ի № 147 նամակով հազարդեց ինձ, որ նա իր կողմէից նշանակուած պատգամաւորութեան ներկայացուցիչ Պոլոս Նորար Փաշոյին պատուէր ուղարկեց՝ չզիմել զեսպանների վեհաժողովին հօնդուում և տոայժմ սահմանափակել իր գործունէութիւնը երոպական պետութիւնների կառավարիչ և ազգեցիկ թշնաներում համապատասխան հոգ պատրաստելու յօդուա Տաճկահայսուստանում մտցնուելիր անհրաժեշտ բարենորոգութեների վերահսկողութեամբ թուսատանի:

Ընդունին Գնորդ Պատրիարքը հաղորդեց, որ կ. Պոլսից և Տաճկահայսուստանից նա միշտ տիեզեկութիւններ է սահմանում, որ քրդերի և պիտուածաւակախմբերի յարձակումը հայերի վրայ, սպանութիւնները և կողովուանները շարունակուում են, իսկ յանցաւորները զատի չեն ենթարկուում իշխանութեան և օրէնքի կողմքից: Բացի այդ, համաձայն նրա ստացած վերջին տեղեկութիւնների, մահմեղական ժողովուրդը, տեղափոխուելով Բայկանեան թերակղաց Անատօլիա, հնոցնետ հաստատուում է բրիոսունեայ ազգաբնակչութեան մէջ, որով սուր կերպարանք է սուանում տռանց այն էլ բարդ հոդային հարցը և ախոյիհանութիւնը: Ցաման և վատանգալից լուրեր են պատճում ինչ որ քրդական պատրաստութիւնների և տաշէկայ շարժութեների մասին, որոնք ուղղուում են Անատօլիայի քրիստոնեաց տարրի հայերի որպէս զի զիւրութիւններ տրուի քրդերին ամբապն զուելու Տաճկաստանի

որոշ շրջաններում, Այս բանը հաստատում են միքանի քրդական ցեղերի շեխերի խորհրդակցութիւնը և ազգեցիկ բրդերի արած ցուցումները Կոլում:

Այսու Գնորդ Պատրիարքը աւելացնում է, որ նա ի՞շ հօտի հետ լիայ յոյ է, որ Կայերական Կառավարութիւնը անհրաժեշտ պատուէրներ կտայ իր Ինսպանին և Հիւպատոսներին Տաճկաստանում էական միջոցներ ձեռք առնելու բրդերի և տաճիկների չարակործութիւնների գէմ մինչև բարենու բոգումների ներմուծումը:

(Ստոբագր.) Կոմս Վորոնցով-Դաշկով.

№ 13. Դիսպանը Տաճկաստանում Արտարին գործոց Նախարարին.  
Կ. Պոլիս, 28 փետրվարի-13 մարտի 1913 թ. (հեռագիր).

Համաձայն իմ ստացած տեղեկութիւնների, Գերեանիայի անհարա արդիւնարերական շրջանները սկսել են վերջին ժամանակները հետաքրքրուել Հայաստանով, Գերմանական նուանդի համար նրա մէջ գտնում են գործութեան նոր շրջան և յինակէտ ընդդէմ հիւսիսի ազգեցութեան: Իր թէ Բերլինում կարգացել են դաստիճութիւններ, որոնց մէջ կառավարութեան ուշադրութեանն են հրատիրել այն հանգամանքը, որ ցանկալի կլինէր, եթէ Գերմանիան յարուցէր Հայաստանում բարենորոգումներ մտցնելու հարցը:

№ 14. Դիսպանը Փոմանիայում Արտարին գործոց Նախարարին.  
Փարիզ, 28 փետրվարի-13 մարտի 1913 թ. (նամակ).

Այս օրերս ինձ այցելեց Զեղ յայտնի Պողոս Նուբար Փաշան և յայտնեց հետեւեալը. համաձայն մի բանի ժամանակ սրանից առաջ Պետերբուրգում նրանց տրուած խորհրդի, հրաժարուելով կօնդոն զնալու ժամանութիւնից, որի նպատակն էր յարուցել զեսպանների ժողովում հայակական բարենորոգումների հարցը, նա, Պողոս Նուբար Փաշան, նորից զիմում է մեզ իմանալու, մարդիօք յարմար ժամանակ չէ այժմս յիշեցնել մեծ պետութիւններին հայ ժողովրդի կարիքների մասին: Այս քայլն անելուն նրան ստիպում է Տաճկաստանի և Բալկաննեան պետութիւնների մէջ մերձակայ խաղաղութեան կնքումը, որից յետոյ հերթը հասնելու է Փոքր Ասիայի զրութեան բարեկարգմանը: Պողոս Նուբար Փաշան կրկնեց ինձ, որ տաճկահայերը իրքէք չեն ցանկնում յարուցել ինքնավարութեան կամ հպատակութեան փոխելու հարցը: Նրանք միայն ձգտում են այն բարենորոգումների իրավորձմանը, որ նախատեսուել են Բերլինի դաշնագովով և մշակուած են 1895 թ. Ռուսաստանի, Ֆուանիայի և Անդիկայի կողմից, որոնք մինչև այժմս զառել են մեռած տառ: Ընդսմին հայերը իրենց յափերը դնում են Ռուսաստանի հօր պաշտպանութեան վրայ և անշեղ կերպով պատրաստ են ամէն մի դէպում հետեւ Ռուսական Կառավարութեան ցուցմունքներին: Համաձայն Պողոս Նուբար Փաշայի Կ. Պոլից ստացած տեղեկութիւնների, ներկայումս հանգամանքները բաւականին բարենպաստ են հայերի համար, որովհետեւ, ըստ էրևոյթին, տաճիկ կառավարութիւնը սկսում է զիտակցել լուրջ բարենորո-

գումաների ներմուծման անհրաժեշտութիւնը՝ Այդ անհրաժեշտութիւնը լիովին ընդունում են մեծ պետութիւնների դեսպանները կ. Պօլում, մինչև անգամ զերմանական գեսապնը, որը թէև մինչև այժմ զերին աստիճանի թշնամաբար էր զերաբերում հայկական ձգտութիւններին, ներկայում փոխել է իր զերաբերումները դէպի հայերը և արտայայտում է յօդում յիշեալ բարենորոգութիւնների, ի հետևում այս բոլորի Պօլոս Նուրար Փաշան մի քանի ուրիշ հայ պատգամաւորների հետ զերջին շաբաթների ընթացքում սկսել է մշակել բարենորոգութիւնների մանրամասն ծրագիր, ունենալով որպէս հմաք 1895 թ. ծրագիրը, որի մէջ նրանք մտցնում են մի քանի փոփոխութիւններ և լրացնութիւններ, զիխաւորս պէս անպայման և անհրաժեշտ եւրոպական զերահսկողութեան սահմանման իմաստով: Հէնց որ այդ ծրագիրը զերջնականա պէս պատրաստ կլինի և կնայի հջմիածնի Հայոց Կաթուղիկոսը, Պօլոս Նուրար փաշան կյանձնի ինձ ներկայացնելու Ռուսական Կառակարութեան բարեյակցողութեանը:

Ես յայսնեցի Պօլոս Նուրար փաշային, որ բոլոր զերոյիշեալի մասին կհաղորդեմ Զեղ և կսպասիմ նրա խոստացած բարենորոգութիւնների ծրագրին: Մինչ այդ, ես թախանձանօք ինդրեցի նրան—չանիլ հետազյում ոչ մի քայլ, առանց կայսերական Կառավարութեան համաձայնութեան և թոյլուութեան, որը, ինչպէս յայտնի է նրան, ամենամեծ համակրանքով է զերաբերում դէպի հայ ժողովրդի ճակատագիրը և հայկական բարենորոգութիւնների հարցը: Նրա այն հարցին, թէ կարող է նա նոյն զեկուցմամբ դիմել Ֆուանսիայի Արտաքին գործոց Նախարարին, ես պատասխանեցի, որ ոչ մի արգելք չեմ զանուու:

Այս խօսակցութիւնից մի քանի օր անց, Պօլոս Նուրար Փաշան այցելեց պ. Ժօննարին և յանձնեց նրան մի մանրամասն տեղեկագիր հայ ժողովրդի ցանկութիւնների մասին: Պ. Ժօննարը այս առթիւ ասաց ինձ, որ, նրա կարծիքով բարենորոգութիւնների հարցը արժանի է ամենալուրջ ուշադրութեան և իթէ մեծ պետութիւնները ցանկանում են նախազգուշացնել վատանգաւոր բարգութիւնները Փոքր Ասիայում, նրանք անպատճառ պիտի օգտուեն ներկայ հանդամանքներից, որպէս զի իրագործեն Բերլինի զաշնագիրը և 1895 թիւ կանոնագրութիւնները: Ընդունեցէք և այլու:

(Ստորագր.) Իզվոլսկի.

### Տ 15. Դեսպանը Տաճկաստանում Արտաքին գործոց նախարարին.

Կ. Պօլիս, 11 մարտի 1913 թ. (Նամակ):

Կ. Պօլսի Հայոց Պատրիարքարանի և Տաճկաստանի թեմական Առաջնորդների հաղորդագրութիւնները հայերի զերաբերմամբ գործադրած բրդական բռնութիւնների մասին՝ ցաւալիօրէն ճշտուու են:

Իմ ստացած բոլոքներից և տեղեկութիւններից արդարեւ եմ զալիս եմ այն համոզման, որ այդ բռնութիւնները առայժմ գուրս չեն գալիս Տաճկաստանի արևելեան վիլայէթների սովորական երեյթների շրջանակից և չեն կրուծ կրթու բնաւորութիւն ու հայերի սիստեմատիքական կոտորածի գոյն: Այդ համեմատական խաղաղութիւնը բացարձուում է ինչպէս Զերթարձը Գերազանցութեան կողմից Թուրքան փաշային տրուած խորհուրդ-

ներով ու իս՝ Դամն արած ցուցումներով, նոյնպէս և ձմբան առակալի ցըտով ու սահմանիթքով: Բայց կամկած չկայ, որ դրութիւնը ամեն մի ժամ կարող է սուր կերպարանք ստանալ և նախազգուշացման համար անհրաժեշտ է լուրջ միջոցներ ձեռք առնել կարելոյն չափ շուտով մտցնելու բարենորոգումներ Տաճկահայաստանում:

Սակայն, ըստ երեսյթին, ներկայ տաճիկ կառավարութիւնից այժմ ոչ մի լուրջ ձեռնարկութիւն այս գործում սպասել չի կարելի, Երիտասարդ թուրքերի նոր կարինետը միանգամայն մի կողմ է ծալել Քեամիլ փաշալի նախարարութեան ծրագիրը, որպիսին ևս ուղարկեցի Զերդ Բարձր Գիրազ գանցութեան 17 գեկանեմբերի 1912 թ. նամակով, ինչպէս ևս տեղակացայ արժանահաւատ ազբէւրներից, նա ոչ մի բանակցութիւն չի փառում Պատրիարքարանի և ոչ էլ առահասարակ հայերի հետ: Ըստ երեսյթին, երիտասարդ թուրքերի կառավարութիւնը, խուսափելով նրա համար անցանկալի հայկան ինքնավարութիւնից, վճռել է զիմել նմանօրինակ գեղերում քանից անգամ փորձուած միջոցին—յայսարարել բարենորոգումներ ընդհանուր պետութեան համար: Սոյն նպատակի իրագործման համար կառավարութիւնը մտադիր է օգտուելու 1911—1912 թ. նիստաերում պարլամենտական յանձնաժողովի մշակած «վիլայէթների կառավարումը» օրինագծից, որի երկորդ մասը, համաձայն սահմանադրութեան 36-րդ յօդուածի, հաստատուած լինենելով անցեալ տարուայ ապրիլ ամսամ Առութանի կողմից, մինչև այժմ չի մտել գործնական կենաքի մէջ, Տեղական վարչութեան բարենորոգումների հարց առաջ քիչ առաջ քննուեց մի տանձին յանձնաժողովուեմ, կազմուած վալիներից և մութասարիիներից: Ինչպէս ևս տեղեկացայ զալտոնի ազրիւրներից, այդ յանձնաժողովը, ներշնչուած լինելով ներքին գործոց նախարար Հաջի Ազիլ-Էջից, արտայայտուեց յօդուտ Ընդհանուր նահանգապետի (վալիների) իրաւունքների լայնացման, այսինքն յօդուտ վարչական սպակենարունացման: Ներկայումս սոյն առաջնորդութիւնները ընսաւմ է նախարարների Խորհուրդը.

Ժանգարմերիայի բարենորոգումը, որի մասին խօսում է «Յան Տիր լրագիրը իր փերթարի 23-ի համարում, նոյնպէս քննուեց առյու վալիների յանձնաժողովի կողմից և հաստատուեց նախարարների Խորհրդից: Համաձայն այս բարենորոգման, Տաճկատանը բաժանում է 5 սեկտորների, որոնք ենթարկում են առանձին վերտանչական յանձնաժողովներին: Վերջիններին կազմում մտնում են եւրոպացիք՝ տաճկական ժառայութեան մէջ, իսկ հայկական վիլայէթները մտնում են Տրավիզոնի սեկտորի մէջ: Բայց այդ առանձին յանձնաժողովները, դաւառ է ուղարկում մի ուրիշ, որի նախարարն է ժանգարմերիայի Ըստիանուր Վերատեսուչ գեներալ Բառումանը:

Մի քանի օր սրանից առաջ ես ստացայ մի ուրիշ տեղեկութիւն պատրաստող «Ընդհանուր բարենորոգումներ» մասին, Ձուանախանպատակ կամ Օստրօրոզ, որ երկու տարուայ (1909—1911) ընթացքում Արդարագաւութեան նախարարութեան Խորհրդականն էր և հրաժարուեց պաշտօնից այն պատճառով, որ նրա առաջնորդութիւնը բարենորոգումները չանցան, իր թէ ստացել է տաճկական կառավարութիւնից հրաւել ըստունելու համայն Սամանեան պետութեան Դատարանային Վերատեսուչ պաշտօնը Արջապէս ինձ յայտում են, որ նախկին մեծ վեզիր Խակի փաշային պատուէր է ուղարկուած համոզելու Անգլիական կառավարութեան, որ Հայաստանում առան-

ձին բարենորոգութերի մտցնելը անցանկայի լինելով, գերադասելի է ընդհանուր բարենորոգում համայն պիտութեան համար։  
(Ստորագր.) Գիրս.

№ 16. Թեսպանը Գերելանիայում Արտաքին գործոց նախարարին.  
Բերլին, 18/28 մարտի 1913 թ. (նամակ)։

Բերլինի հայ գաղութը բաւականին մեծ է և իւրաքանչիւր տարի տալիս է բարեգործական համերգ և դասախոսութիւններ հայերին հնաաբրբորդ զանազան հարցերի մասին։ Այս տարուայ ժողովը սակաւաքանակ էր, որը բացատրում է, ըստ երեսյթին, զաղութի նուազմամբ և նամանաւանդ կողկանան ուսանողների, որոնք իրը թէ վերադարձել են հայրենիք, շնորհիւ Ռուսաստանի յարաբերութեան փոխուելուն դէպի հայերը։

Խնչակս անցեալ տարիներում, նոյնակս և այժմ երեկոյթի ծրագրի մէջ մտնում էր զիկուցում Հայաստանի մասին։ Դասախոս դօքտօր Լեպսիուսը, յայնին եզիապոսագէտի որդին, վաղուց է, ինչ զրազում է հայկական հարցով և համարում է, որպէս լաւ ծանօթ Փոքր. Ասիայի և Պարսկաստանի հետ, ուր նա մի քանի անգամ ճանապարհորդութիւններ է արել։

Նրա նախաձեռնութեամբ Բերլինում 1896 թւին (հայկական կոտորածից յիշույ) հիմունց Deutsche Orient Mission ընկերութիւնը, որին պատակը կուլտուր—Կրթական և մարդասիրական է, Այն ընկերութեան միջոցներով, որը իրը թէ արդէս ծախսել է 10 ից մինչև 12 միլիոն մարկա, Փոքր. Ասիայում և Պարսկաստանում հիմնել և պահուում են բողոքական վարժարաններ։

Համաձայն իրեն դօքտօր Լէպսիուսի ասածի, նրա հիմնած ընկերութիւնը, բացարձակ թշնամի լինելով Արդուլ. Համբիդի բէժիմին, իր գոյութեան սուածի օրերում նկատում էր գերմանական կառավարութեան լիակատար հակակրութիւնը դէպի իրեն Վերջին ժամանակներու գերմանական իշխանութեան մինչաբարունքը փոխուել է և Deutsche Mission-ը ոչ թէ միայն չի հանդիպում խօսնուաների կառավարչական շնչաններից իր գործունէութեանը, այլ ընդհակառակը, նրանցից ստանում է ամէն տեսակ բարոյական և նոյն իսկ նիւթական օժանդակութիւն։ Ըստ երեսյթին, այդ ընկերութիւնը ցուցումներ է ստանում այժմ նաև Արտաքին նախարարութեան կողմից։

(Տես 1895 թ. գեսպանների ծրագրի 21 յօդուածը, կամ 1895 թ. հոկտեմբեր 20 Հրովարտակի 29 յօդ.)

## XVIII.

Զեկանորէն հաստատում է այն իրաւունքների և արտօնութիւնների անձեռնմխելութիւնը, որոնք ապահովուած են Սահմանադրութեամբ (Sahmanatrouitium) 1863 թ. և Սուլթանի կողմից շնորհուած բերատներով։

(Տես 1895 թ. երեք գեսպանների յիշատակագրի XI կէտը)։

## XIX.

❖ Նահանգի տերրիտորիայի վրայ արգելւում է բնակեցնել մուհաջիրներին։

## XX.

Նահանգի շրջանից գուրս, մասնաւորապէս կիլիկիայում, ապրող հայերի դրութիւնը բարելաւելու համար կմշակուեն առանձին կանոններ, համաձայն վերոյիշեալ սկզբունքների իմաստի։

(Տես 1895 թ. գետանների յիշատակագրի 12 յօդ. 1895 թ. 20 հոկտ. Հրովարտակի նախարանի 4 յօդ.)

XXI.

Մի առանձին մասնաժողով, կաղմուած տաճկական կառավարութեան և մի պետութիւնների ներկայացուցիչներից, կմշակի նահանգի Հիմնական Օրբները, ինչպէս նաև XX-րդ յօդ. յիշուած կանոնադրութիւնը, դեկա-վարուելով այս նախածրագրում արտայայտուած սկզբունքներով:

XXII.

Ա Մեծ պետութիւնները հոդ կտանեն այս կանոնագրութիւնների կա-տարման համար:

(Տես 1895 թ. Յիշատակագրի VIII յօդ. 1895 թ. հոկտ. 20 Հրով. 32 յօդ. և 1896 թ. Կրիստի կանոնադրութեան 14 յօդ.)

№ 51. Դեսպանը Գերմանիայում Արտաքին գործոց Նախարարին.  
Բերլին, 8/1 յունիսի 1913 թ. (հեռագիր).

Ստատո-Սեկրետարը յայտնեց ինձ, որ տաճկական ներկայացչի հրա-ւիրելու միտքը Քեոպանների խորհրդակցութեան մէջ թէս առաջ եկաւ նրանում Տաճկաստանի ամբողջութեան պաշտպանման և բարենորոգութեան ընդունման թեթեացման կշռադատութեամբ, այսուամենայնիւ նա չի պըն-դում այդ հարցի վրայ: Սակայն, Ստատո-Սեկրետարը կցանկանար իմանալ միս Կարիննետների կարծիքը նախարան վերջնական վճռի կայացումը  
(Ստորագր.) Սվերբեեվ.

№ 52. Արտաքին գործոց Նախարարի Օգնականը Դեսպանին Տաճկա-տանում:

Ս. Պետերբուրգ, 14 յունիսի 1913 թ. (հեռագիր).

Թուրիան-Փաշայից իմացայ, որ նրան յանձնարարուած է ծանօթացնել Նախարարին Տաճկաստանի այն շրջարկաւական գրութեան հետ վե-րաբերմամբ ըարենորոգութեան միտքը ամբողջ Ասիական Տաճկաստանը բա-ժանուում է 6 սեկտորների, որոնցից իւրաքանչիւրը իրեն գլուխ ունենալու է մի Ընդհանուր Վերատեսուչ, իսկ երկու արևելեան սեկտորները ենթարկուե-լու են եւրոպացի վերատեսուչներին, որոնք կունենան նոյնպէս եւրոպացի մասնագէտ օգնականներ:

Խուսափելով հարցի քննութիւնից ըստ էութեան, ես հասկացը թուրիան-Փաշային, թէ ինչ նշանակութիւն ունեն մեզ համար այն վայրերը, որոնց Տաճկաստանը, երկի, մտածում է մտցնել արևելեան սեկտորների մէջ: Ես անհրաժեշտ գտայ, որ Դուք ոչ մի վճռական բայլ չանի առանց մեր գիտակցութեան:

(Ստորագր.) Ներատով.

№ 53. Արտաքին գործոց Նախարարը Դեսպանին Ծանկաստամում.  
Կ. Պոլիս, 17—30 յունիսի 1913 թ. (հեռագիր).

Մեծ պետութիւնների դեսպանները այսօր նիստ են գումարել Հայաստանի բարենորոգութեանների քննադատութեան համար, Մանդէլտամի մշակած ծրագիրը ևս իմ կողմից ուղարկեցի դեսպանների ժողովին, որը որոշեց յանձնել ծրագիրը Դեսպանների ներկայացուցիչներից կազմուած յանձնաժողովին, իսկ վերջինս սկսելու է իր աշխատանքները չորեքարթի օր և վերջացնելու ամենամօտիկ ապագայում:

Աւատրիտկան և Գերմանական Դեսպանների այն առաջարկութեան, որ միաժամանակ քննութեան առնուի նաև տաճկական ծրագիրը, ևս յայտնեցի, որ այդ ծրագիրը ինձ անյայտ է և մինչև օրս Տաճկաստանը մեզ չի ներկայացրել, այդ պատճառով հնարաւոր չեմ տեսնում յետաձգել մեր ծրագրի ընաւատութիւնը Ժողովը համաձայնուեց ինձ հետ և որոշեց յանձնել յանձնաժողովին տաճկական ծրագիրները նրանց ներկայացնելուց յետոյ Ֆունստական գործոց Հաւատարմատարը կարգաց Բ. Դենից հէնց նոր ստացած նօտան, որը հազորդում է, թէ տաճկական ծրագիրը բարենորոգութեանը առաջիւ արդէն ներկայացուած է Ըստ երեսոյթին, այսօր բոլոր դեսպանները կտանան այդ նօտան, որը, սակայն, ծրագրին չի կցուած, իմ առաջարկութեամբ ընդունուած է, որ մեր նիստերը կրեն մտերժական բոյթ.

(Սատրագը.) Դիբս.

№ 54. Դեսպանը Ծանկաստամում՝ Արտաքին գործոց Նախարարին.  
Կ. Պոլիս, 19 յունիսի, 2 յուլիս 1913 թ. (հեռագիր).

Մեծ Վէզիւը հէնց նոր ուղարկեց ինձ տաճկական դեսպանների անուան ուղարկուած շըջարերայան հեռագիրը, վիլայէթների մասին այս տարրուայ հրատարակած լրացուցիչ յօդուածները և ընդհանուր վերատեսութիւնն<sup>\*)</sup> տրուած հրանանդները Բոլոր այդ գոկումնաները վերս բերում են Կայսրութեան ընդհանուր բարենորոգութեաններին, չիշելով մասնաւորապէս Հայաստանի մասին։ Շըջարերայան հեռագիրը յայտնում է, որ Կայսրութիւնը բաժանում է վեց սեկտորների, որով Հարկելեան վիլայէթները բաժանում են երկու սեկտորների առանց սահմանների որոշման ներկիղալի է, մի զուցէ հայկական վիլայէթների դասաւորումը այդ երկու սեկտորների մէջ բաժանի հայերին և յարի նրանց մահմեղական միհամանութեան հետո Սեկտորների զույն նշանակուած են եւրոպացի ընդհանուր վերատեսութեան, որոնց ենթարկում են եւրոպացի և տաճիկ մասն ազէտ օգնականները։ Համաձայն վիլայէթների օրէնքի լրացուցիչ յօդուածների, ընդհանուր վերատեսութեան նշանակում են Նախարարների Խորհրդի կողմից, Սուլթանի հաստատմամբ, բայց առանց մեծ պետութիւնների համաձայնութեան։ Վերատեսութեանի և հիմնարկութիւնների մէջ ծագան վէճերը վճռում է Նախարարների Խորհրդու կը հրանանդները պահում են վիլայէթների ներկայ իրաւադընութիւնը իր ոյժի մէջ տարակ միմիայն վերահսկողական կանոններ վերաբերմամբ ֆինանսների և արդարադատութեան բարոր ճիւղերի, Բացի այդ, ընդհանուր վերատեսութեար կտառավարութեանը ներկայացնում են ծրագիրներ տեղա-

\* ) Տես յաւելութեան № 1, 2, 3 և 4։

կան օրէնքների փոփոխման, թափառականների նիստ ու կացի, հարկա-  
տութեան, ժանդարմերիայի մասին և այլն։ Վերատեսութները իրաւագօր են  
արձակելու պաշտօնեաններին իրենց պաշտօններից, այսպէս որ վերջինների  
նշանակումը լիովին կախուած է կենտրօնական իշխանութիւնից կամ վայե-  
ներից։ Այդպիսով Բ. Դուան ներկայացրած օրէնքները կրում են անկապ և  
ծրագրային բնոյթ, բոլորովին հետու լինելով 1895 թ. դեսպանների մշա-  
կած բարենորոգութներից և Մանդէլշտամի բարդաւաճած ծրագրից։ Այդ  
պատճառով ինձ թւում է, որ պատգամատրների վաղուայ առաջին նիստը,  
որպէս ելակէտ դարձեալ ընդունելու է ուստական ծրագիրը, օգտուելով  
ի հարկէ, այն առաջական կանոնադիր առաջարկութիւններից։ որոնք ամ-  
րապնդում են մեր համապատասխան դրութիւնները։

(Սառապը.) Գիրս.

№ 55. Դեսպանը Տաճկաստանու Արտաքին գործոց Նախարարին.  
Կ. Պոլս, 20 յունիսի, 3 յուլիսի 1913 թ. (հետագիր)։

Հայկական հարցով զբաղուող յանձնաժողովը, բաղկացած Դեսպանա-  
տների ներկայացուցիչներից, այսօր սկսեց իր պարապմունքները Աւստրօ-Ռւս-  
գարական դեսպանատան մէջ, Ենի-Քեօյում։ Երբեակ Դաշնադրութեան ներ-  
կայացուցիչները հրաժարուեցին սկսել ուստական ծրագրի ընազատութիւնը,  
նախքան տաճկական ընդհանուուր բարենորոգութների նորագոյն առաջարկու-  
թիւնների ուսումնասիբըլ, Երեակ Համաձայնութեան ներկայացուցիչները  
պնդում էին ուստական ծրագրի նախնական ընդութեան վրայ, առաջարկե-  
լով զուգընթաց օգտուել յիշեալ տաճկական օրէնքներով։ Դաշնագրութեան  
ներկայացուցիչների առաջարկութիւնը անընդունելի եմ համարում, որով-  
հետև նա հակասում է այս ուղղակի նպատակին, որը համաձայն 1895 թ.  
հայարնակ վիլյոյէթների բարենորոգութների ներմուծման ծրագրի, զրուած  
է Դեսպանների Խորհրդակցութեան և Յանձնաժողովի առաջ։ Ես կարտա-  
յաբուեմ այս մտքով զեսպանների խորհրդակցութեան մէջ։

(Սառապը.) Գիրս.

№ 56. Դեսպանը Տաճկաստանու Արտաքին գործոց Նախարարին.  
Կ. Պոլս, 21 յունիսի, 4 յուլիսի 1913 թ. (հետագիր)։

Մարկիզ Պալլավիչնի, որին ես իմ զարմանքը յայտնեցի նրա և զեր-  
մօնական պատգամաւորի յանձնաժողովում ցոյց տևած հակադրութեան հա-  
մար, բացատրեց այդ բանը թիւրիմացութեամբ, — իրեւ թէ նրանք չնի ըմբռ-  
նել իրենց տրուած պատուէրները։ Նա ինստացաւ, որ միւս նիստում Պաշ-  
նազրութեան ներկայացուցիչները ամբողջապէս կենթարկուեն մեր առա-  
ջարկած զրադմունքների նախագծին։ Այս պատճառով ինցիդենտը վերացած  
եմ համարում։ Անշուշտ մենք հանդիպեցինք մի նախօրուք ծրագրուած փոր-  
ձի հաւ, որով ձգտում կար տալ ուստական ծրագրին երկրորդական նշա-  
նակութիւն, որպիսի նպատակը չիրագործուեց, չնորիւ Մանդէլշտամին  
արդեւ պատռէրների ճշգրիտ իրագործման և այն եռանդուն պաշտպա-

նութեան, որ ցոյց տւին մեր ներկայացչին ամսդիմական և ֆռանսիական  
ներկայացուցիչները:

(Ստորագր.) Գիր.

№ 57.Արտաքին գործոց Նախարարի Տեղակալը Ռուսական արտա-  
սահմանան Ներկայացուցիչներին.

Ո. Պետերբուրգ, 25 յունիսի, 1913 թ. (Երջարերական).

Ի լուսմն հայկական բարենորոգութեարի՝ վերաբերեալ նախաճնթաց զբա-  
րութեան, պատիւ ունիմ սրանով ուղարկելու Զերդ Գերագանցութեանը իմ  
25 յունիսի Ս. Պետերբուրգի Գերմանական, Աւստրօ-Ռւսական և Բատ-  
ական Դեսպաններին տրուած յուշադիրը, որպիսին պարզում է այն հիմա-  
կան կշռադատութիւնները, որոնցով զեկավարում է Կայսերական Կառա-  
վարութեան նախաձեռնութիւնը յիշեալ բարենորոգութեարի հարցում:

(Ստորագր.) Ներատօվ.

№ 57-ի. յաւելումն.

(Թարգմանութիւն).

Կայսերական Նախարարութիւնը կարեում է համարում Գերմանական  
(Աւստրօ-Ռւսական, Իտալական) Կառավարութեան ուշադրութիւնը հրա-  
ւիրել այն կշռադատութիւնների վրայ, որ պարզում են Կայսերական Կառա-  
վարութեան վերաբերմունքը հայկական վիլայէթներում մոցնուելիք բարե-  
նորոգութեան առթիւ:

Ռուսաստանը, ինչպէս նաև ուրիշ պետութիւնները, բացասաբար է վե-  
րաբերում Օսմաննեան Կայսրութեան բաժանման ամէն մի մաքին: Կայսե-  
րական Նախարարութիւնը նորապէս համոզաւած է, որ Տաճկաստանի ամ-  
բողջութիւնը բաւականին չափով կախում ունի այդ շքանների խաղաղա-  
ցումից, որովհետեւ նրանք ամէնից շատ են տառապել կամայականութիւնից  
և ամէն մի տեսակ հալածանքից, որ առաջն եկել վատ կառավարելուց:  
Սակայն, այդ խաղաղացումը հնարաւոր կլինի միմիայն այն դէպքում, եթէ  
մեծ պետութիւնները անյապաղ սկսեն ձեռնարկել անհրաժեշտ բարենորո-  
գութեարի գործադրումը:

Կայսերական Կառավարութիւնը քանիցս անգամ մեծ պետութիւնների,  
ինչպէս նաև Տաճկաստանի ուշադրութիւնն է Հրաւիրել այն ընդհանուր կատի  
վրայ, որ գոյութիւն ունի նրա կարծիքով հայկական հարցի և ուսուական  
կառավարութեան ձգառութեարի մէջ Կովկասում: Կայսերական Կառավարու-  
թիւնը չի կարող թոյլատեր մշտական անկարգութիւն և անիշխանութիւն,  
որը, չնորհիւ տաճկաց սահմանների մերձակայութեան, ամենակորստաբեր  
կերպով ազգում է հարեւան Կովկասի շրջանների վրայ: Վերջին տեղեկու-  
թիւնները հաստատում են, որ մօտիկ ապագայում սպասում են ցաւալի  
անկարգութիւններ քրդերի կողմից: Տեղական տաճկի իշխանութեան ան-  
փրածութիւնը և թուլութիւնը հիմք է տալիս երկիր կրելու այնպիսի ար-  
կածների ծագման տոթիւ, որոնց վրայ Կայսերական Կառավարութիւնը ոչ  
մի դէպքում անտարեր նայել չի կարող:

Այսպիսի հանգամանքներում մեծ պետութիւնների միայն արագ և

ըստ հնարքաւորութեան լիակատար համաձայնութիւնը կարող է նախազգուշացնել այն անխուսափելի վանազը, որ լի է բարդ հետեանքներով:

№ 58. Ա. Պետերբուրգի Գերմանական Դեսպանատան 26 յունիսի 1913 թ.  
տուած յոշագիրը.

(Թարգմանութիւն).

Համաձայն կ. Պօլսում Դեսպանների ժողովին առաջարկած ուսուական  
ծրագրի, Յ հայկական լիլայէթները միանում են իշխանութեամբ եւրո-  
պացի Ընդհանուր Նահանգապահեար, որը նշանակում է Սուլթանի կողմից:  
Ընդհանուր Նահանգապահեար լինելու է բրիտանիայ, տաճիկ, կամ, առա-  
ւելապէս եւրոպացի, թիշեալ և լիլայէթները պէտք է կազմին  
նահանգ, որը պատերազմական և վարչական տեսակէտից համարեա թէ  
անջատում է Օսմանեան Կայսրութիւնից Պաշտօնները և դատաւորները  
նշանակում են Ընդհանուր Նահանգապահեարի կողմից: Զօրագովով պիտի  
կատարուի բացառապէս Հայաստանում, իսկ խաղաղ ժամանակ Հայաստանից  
դուրս նրանցով օգտուելու իրաւունք չկայ:

Այս ծրագրը Կայսերական Կառավարութեան կարծիքով իիստ գերա-  
զանցում է 1895 թ. ծրագրը և նոյնիսկ Լիբանանի կանոնադրութիւնը  
Եթէ նա իրագործուէր, այն ժամանակ Անասոլիայի կէսից կկազմուէր  
Հայաստան, որը Տաճկաստանի հետ կապուած կլինէր թոյլ կերպով, չնորհիւ  
Մոլթանի վեհապետութեան Դժուար կլինէր Տաճկաստանի մնացած մասե-  
րին մերժել այն, ինչ որ արտօնուած է Հայաստանի համար: Այդպիսի մի  
զրութիւն փաստապէս առաջ կրերէր Տաճկաստանի բաժանումը որից  
Կայսերական Կառավարութիւնը ձգում է անպայման խուսափել:

Մատնանշելով այդ վանազների վրայ, Կայսերական Գերմանական  
Կառավարութիւնը կամենում է, որ այդ հարցում ուշադրութեան առնուեն  
նաև տաճիկների ցանկութիւնները:

№ 59. Արտաքին գործոց Նախարարը ուսամկան Հայաստարմատարին  
Գերմանիայում.

Ա. Պետերբուրգ, 25 յուլիսի 1913 թ. (համակ).

Կ. Պօլսի Կայսերական Դեսպանի նամակի պատճէից, որը այսօր հեր-  
թական սուրեհանգակի միջոցով ուղարկում ենք Ձեզ, Դուք կտեղեկանաք, որ  
մեծ պետութիւնների կ. Պօլսի Դեսպանատների ներկայացուցիչներից կազ-  
մուած միջազգային յանձնաժողովում հայկական հարցի առթիւ մշակուած  
ուսուական ծրագրի երկու գլխաւոր կէտերը անհամաձայնութեան տեղի  
տուին երրեակ Համաձայնութեան պետութիւնների ներկայացուցիչների մէջ  
մի կողմից և երրեակ Դաշնապարհեան միւս կողմից:

Այդ մեր ծրագրի հրկու կէտելն են, 1) հիմունի մի. Հայկական Նա-  
հանգի և Ընդհանուր Նահանգապահեարի նշանակումն համաձայնութեամբ մեծ  
պետութիւնների:

ինչ վերաբերում է երկրորդ կէտին, պէտք է ասել, որ համաձայն Մ. Ն. Գիրսի միանգամայն արզարացի նկատման, զիջել նրանում, — նշանակում է հրաժարութել ամէն մի բարենորդումից Հայաստանում և լու իրօք, Եւրոպայի մասնակցութիւնը Ընդհանուր Նահանգապետի նշանակման մէջ միակ մէջոցն է, որ ապահովում է բարենորդումների զործադրումը, որում Ռուսաստանը, շնորհիւ իր գրութեան դէպի հայ ժողովութը, ամենից առաւել շահագրգոււած է: Այս պատճառով հրաժարումը յիշեալ հիմնական սկզբունքից մեզ անհնարին է թւում:

Ինչ վերաբերում է առաջին կէտին — մի հայկական նահանգի կազմելուն, պէտք է ասել, որ զիջումն այդ հարցում անցանկալի է: Որովհետեւ հայարանկայէթների միացումը ճանաչել է ինչպէս Բերլինի դաշնագիրը, նոյն պէս և 1895 թ. Պասն հրովարտակը: Սակայն, որովհետեւ մեծ պիտույքի թիւնները մեր այդ բայցի մէջ նկատում են ձգտում ստեղծելու Տաճկառանում ինքնավար շրջաններ, ուստի մենք այդ կասկածանըը վերացնելու համար կարողէինք ծայրահեղ դէպում համաձայնակալ որ բարենորդումների շրջանները բաժանուեն երկու սեկտորի, որոնցից իւրաքանչիւրը ունենայ իր ընդհանուր վերատեսուչը, միմիայն հետևեալ անհրաժեշտ պայմաններով: 1) յիշեալ երկու սեկտորների պիտի բաժանուի միմիայն այն տարածութիւնը, որ սահմանագծուած է ուստական բարենորդումների ծրագրում և ուրիշ ոչ մի շրջան նրան աւելանալու չէ: Այս ինչ այդ պայմանը խանգարում է նոր տաճկական օրէնքը, զասաւորիով հայկական վիւլյէթները այնպիսի ծնող, որ մահմեղական բնակչութիւնը մեծամասնութիւն է կաղմաւութեան իւրաքանչիւր սեկտորում: 2) երկու Ընդհանուր Վերատեսուչները պիտի նշանակուեն համաձայնութեամբ մեծ պետութիւնների: լիակատար իւրառնք ունենարդ իրենց իւրատեսութեան ննթակայ վարչութեան պաշտօնեական նշաններին նշանակելու և արձակելու:

Շնորհիւ մեծ պիտույքի մէջ ծագած այս արմատական հարցերի տարածայնութեան, բարենորդումների զործը մատնուեց անշարժութեան, որից, սակայն, անհրաժեշտ է խռոսափել, աչքի առաջ ունենալով վտանգալից հետևանքները: Այս իմաստով ես յայտնեցի Գերմանական Դեսպանին և կարևոր եմ գտնում, որ Դուք ևս հէնց այժմ բացատրուէք պլ. Նազովի հետ հայկական բարենորդումների առթիւ, պարզելով նրան ինչպէս սոյն նամակում բերուած կշաղատութիւնները, նոյնպէս և այն փաստերը, որ Դուք կարող էք քաղել Զեզ ուղարկուած ենիք-Քեօյի յան: Ճնաժողովի արձանագրութիւններից:

(Ստորագր.) Սաղմօվ.

№ 60. Դեսպանը Տաճկառանում Արտաքին զործոց նախարարին.  
Կ. Պոլս, 27 յուլիսի, 9 օգոստոսի 1913 թ. (հետագիր).

Ենիք-Քեօյի յանձնաժողովի նիստերի արձանագրութիւնները արգէն բոլոր կարինեանները ստացել են: Որովհետեւ հայերի որիէ յեղափոխական շարժումը զսպել կարելի է միմիայն նրանց զբութեան բարեփոխութեան խոստումով, ուստի խնդրում եմ հնարաւոր ջանք զործ զնէք, որպէս զի յաջո-

զացնէր մեր հայեցակէտերի համաձայնեցումը օտար պետութիւնների հետ  
և տաք ինձ համապատասխան հրահանգների

(Ստորագը.) Գիրս.

№ 61. Թիսպանի Տանկաստանում Արտարին գործոց Նախարարին.  
Կ. Պոլիս, չ/16 օգոստոսի 1913 թիւ, (հեռագիր).

Համաձայն ամենաճշգրիտ ստացած տեղեկութիւնների, գերմանական  
գործակալ Լեպսիուսը յայտնեց հայերին, որ նա Գերմանական Դեսպանատան  
անունից լիազօր է տառջարկելու նրանց ուսուական և տաճկական բարենո-  
րոգումների ծրագրի հետեւալ միջակ պայմանները Հայստանը բաժանուում  
է երկու սեկտորներին՝ Վիլայէթների իրաւակարգը մնում է իր ոյժի մէջ,  
որով առաջին սեկտորը ընդդրկում է Տրապիզոնը, Միլազը և Էրզրումը, իսկ  
երկրորդը՝ Խարբերզը, Բիթլիսը և Դիարբեքը, Գերմանիան այսու չի  
հակառակում, որ երկու օտարերկրացի Ըստհանուր Վերատեսուները նշա-  
նակուեն միծ պետութիւնների համաձայնութեամբ Նա համաձայն է նաև,  
որ ինչպէս վիլայէթների ընդհանուր ժողովներում և վարչական խորհրդնե-  
րում սահմանուի մահմեղականների և քրիստոնեանների ներկայացչութեան  
ներմուծման հաւասար սկզբունքը, նոյնպէս և վարչական ու դատաստանա-  
կան պաշտօնեանների հարցում, բացառութեամբ միմիայն զուտ մահմեղակա-  
նաբնակ շրջանների հաւասարութեան սկզբունքը ներմուծւում է, սակայն,  
հինգ տարով, մինչև ընակչութեան ընդհանուր ցուցակազրութիւնը Այդ ժա-  
մանակամիջոցը անցնելուց յիսոյ, եթէ կարիք զգացուի, կարելի է անցնել  
դէպի համեմատական սկզբունքը, սակայն ոչ շուտ, քան հողային բարենո-  
րոգումների սահմանումից երկու տարի անց Լեպսիուսը խորհուրդ է տւել  
Կ. Պոլիս հրաւերել Պօղոս Նուրար Փաշային և շուտափոյթ վերջ զնել հայ-  
կական հարցին, որովհետեւ Ռուսաստանը իրը թէ ցանկանում է կապել նրան  
Ազգիանապօլսի հետ, մի բան, որ շատ վնասակար ազդեցութիւն կունենայ  
հայերի շահերի վրայ:

Ինձ հազորդում են, որ Թալաաթ.քէյը իր մօտ է կանչել հայ պատ-  
գամաւորներին, խնդրելով օգնել տաճիկներին վերջացնելու հայկական հար-  
ցը, Նախարարը ենթադրում է, որ աւելի լաւ է վճռել այդ խնդիրը տաճիկ-  
ների և հայերի անմիջական բանակցութիւններով: Ռուսներին, իրը թէ,  
չպէտք է հաւատալ Նրանք յարաբերութիւնների մէջ են նաև քրդերի հետ  
ի միջի այլոց, Քերմանական Դեսպանատունը իրը թէ յայտնել է նրան, որ  
ուսուական ծրագիրը արդէն վիժեց: Ինչ վերաբերում է միծ պետութիւննե-  
րի վերահսկողութեանը, սկզբունքալէս նա էլ գոյութիւն ունի, որովհետեւ  
Դեսպանները տալիս են իրենց ցուցութենքը Բ. Դուռն ամէն անգամ,  
երբ քուրզը սպանում է հային: Թալաաթը նոյնպէս խորհուրդ է տալիս  
հրաւերել Պօղոս Նուրար Փաշային և վերջ տալ երպարկան բանակցութիւն-  
ներին: Պատգամաւորները իրը թէ բացասական պատասխան տեին:

(Ստորագը.) Գիրս.

№ 62. Արտաքին գործոց Նախարարի նսմակը ուսաց Հաստատմանութեանից թիւն Դերմանիայում:  
Ս. Պետերբուրգ, 6 օգոստոսի 1913 թ.

Վերին աստիճանին ցանկալի եմ գտնում յարմար ըռպէին յայտնել Գերմանական կառավարութեանը մեր մշտական հաստաբըքութեան մասին հայկական հարցով, որին անհրաժեշտ է կենդանացնել իր մեռած զրութիւնից: Այսու բարեհաճեցէ հէնց առաջին յարմար մօմենտում խօսիլ պ. Ցիմեմերմանի հետ յուլիս 25-ի նամակի իմաստով, հրաւիրելով նրա ուշադրութիւնը այն բանի վրայ, որ մենք հետ չենք կանգնելու նամակի բովանդակութիւնից և չենք ձգձգի գործը, որպէս զի Դուռը ենթադրի, որ ամէն ինչ վերջանալու է միայն խօսակցութիւններով ու մենք լուրջ չենք պնդելու մեր պահանջների վայ:

Այդպիսի սխալ երևակայութիւն վերջ ի վերջոյ կարող է միայն սուրբնոյն տալ հարցին:

(Ստորագր.) Սաղօնով.

№ 63. Ռուսական Հաստատմանութեան Գերմանիայում Արտաքին գործոց Նախարարին.

Բերլին, 9/22 օգոստոսի 1913 թ. (հեռագիր).

Ես բացատրուեցի Ստատու-Սեկլեհետարի հետ Զերդ Բարձր Գերազանցութեան յուլիս 25-ի նամակի իմաստով վերաբերմար հայկական հարցին Ստատու-Սեկլեհետարը պատասխանեց ինձ միայն Ընդհանուր հականառութիւններով, ցոյց տալով, որ վասնգաւոր է սկիզբ զնել Աստիկան Տաճկառանի բաժանման, որից Գերմանիան ձգտում է խուսափել, մատնանշելով նաև այն հանգամանքի վրայ, որ ամենաբազմամարդ հայարևնակ շրջաններում հայերը հանուր բնակչութեան 42%<sub>0</sub> տոկոսն են, հետևաբար ամենուրեք փոքրամասնութիւն են կազմում: Նա աւելացրեց, որ ցանկանում է զալ համաձայնութեան և գրաւոր կերպով կամացնար տեսնել մեր ծրագրի փաստական հիմնաւորումը, որովհետև լաւ չի ըմբռնել նրա միտքը:

(Ստորագր.) Բընելսոնի.

№ 64. Դեսպանը Տաճաստանում՝ Արտաքին գործոց Նախարարին.

Կ. Պոլս, 14 օգոստոս 1913 թ. (նամակ).

Իմ ստացած տեղեկութիւնների համաձայն Մեծն Բրիտանիայի Արտաքին գործոց Ստատու-Սեկլեհետարի Օդնականը, յայտնելով Լօնդոնի տաճկական դեսպանին Հայաստանում կատարուած ոճրագործութիւնների ցուցակը, հասկացրեց նրան, թէ ինչպիսի վտանգ է սպառնում Տաճկաստանին և նրա արեւելան նահանգներին նմանորնան ցաւալի դէպքերի կրկնութիւնը, որոնք, վկայելով յիշեալ շրջանների անսաղաղութիւնը և վտանգալից դրութիւնը, կարող են առիթ տալ օտար միջամտութեան: Զգտելով, ըստ նրա ասածի, պահպանել Աստիկան Տաճկաստանի անձեռնմխելիութիւնը, Բընա-

Նախկան Կառավարութիւնը խորհուրդ է տալիս Թուանը կատարել անհապաղ քննութիւն և պատժել մեղաւորներին:

Ստանալով Թէվֆիկ փաշայի հաղորդագրութիւնը, Մեծ Վէզիրը ներկայացրեց յիշեալ ցուցակը ներքին, պատերազմական և արդարադատութեան Նախարարութիւններին, կարգադրելով ընդումին ձեռք տոնել ամէն տեսակ միջոցներ բաւարարելու Ասդդիայի ցանկութեանը և ներկայացնել կառավարած քննութիւնների արգիւնը—Բրիտանական Կառավարութեանը հաղորդելու համար:

(Ստորագր.) Դիրս.

№ 65 Որուսական Հաւատարմատարը Գերմանիայում՝ Արտաքին գործոց Նախարարին,

Բերլին, 21 օգոստոսի, 3 սեպտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Ստատու-Սեկրետարը յայտնեց ինձ, որ համաձայն Կ. Պոլսի Գերմանական Գերմանիկ հաղորդագրութեան, նա բանակցութիւններ է վարում այն տարածայնութիւնների մասին, որ ասած են նեկել մեր Դեսպանի և Առաջի Դրագոմանի մէջ Եազօվը պատուիրել է Վանգենհայմին մեծ զիջողութիւն ցոյց տալ, որպիսին և մինք ցոյց տւինք երկու սեկտորների հարցում:

(Ստորագր.) Բրոնեվոկի.

№ 66. Արտաքին գործոց Նախարարի փոխարէն Նախարարի Օգնականը Որուսական Հաւատարմատարին Գերմանիայում.

Ս. Պետերբուրգ, 23 օգոստոսի 1913 թ. (հեռագիր).

Կ. Պոլսի Գերմանական Դեսպանին տրուած ցուցումների համար ես գոհանակութիւն յայտնեցի Գերմանական Հաւատարմատարին:

Զմուռանաք յարմար դէպքերում խօսել Եազօվի հետ հայկական հարցի մասին:

(Ստորագր.) Ներատօվ.

№ 67. Արտաքին գործոց Նախարարի փոխարէն Նախարարի Օգնականը Կ. Պոլսի Որուաց Դեսպանին.

Ս. Պետերբուրգ, 29 օգոստոսի 1913 թ. (հեռագիր).

Ցանկալ է իմանալ, մերել է Ձեզ գերմանական Դեսպանը որևէ է առաջարկութիւն բարենորոգումների հարցի մասին և նկատի ունենալով Բերլինի մեր Հաւատարմատարին տուած Եազօվի համոզատասխան տեղեկութիւնը, Դուք կարող էքք, հակառակ դէպքում, Ձեր կողմից սկսել բանակցութիւններ բարձն Վանգենհայմի հետ:

(Ստորագր.) Ներատօվ.

№ 68. Ռուսական Հայաստարմատարք Գերմանիայում՝ Սրբարին գործոց  
Նախարարին.

Բերլին, 29 օգոստոսի, 11 սեպտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Ի պատասխան ներկայացրած մեր ծրագրի փաստական հիմնաւորման,  
Ստատու-Սեկրետարը ուղարկել է Հայկական հարցի առթիւ մի յուշազիր:  
Համաձայն լինելով Ռուսաստանի հետ Հայաստանի գրութեան բարեփոխման  
հարցում, Գերմանական Կառավարութիւնը, Հնայելով աելի ունեցած կար-  
ծիքների տարածայնութեան, հարաւոր է տեսնում գանել մեծ պետութիւն-  
ների համար այնպիսի մի բաւարար ելք, որը ընդունելի լինել նաև Տաճ-  
կաստանի կողմից: Մեր առաջարկութեան կը տերից շատերը ընդունուած են  
համարւում: Միւս կէտերը, համաձայն Կ. Պօլսից ստացած տեղեկութիւն-  
ների, Դուռը գտել է անդուռունելի, իսկ Գերմանական Կառավարութիւնը  
անհարին և անցանկալի է համարում ստիպել Տաճկաստանին ընդունելու  
այն կէտերը հակառակ Դուան ցանկութեան Այս պատճառով Գերմանիան  
անհամեշտ է գտնում, որ յանձնաժողովը վերանորովի իր զրադմունքնե-  
րը, հիմնելով տաճկական ծրագրի վրայ և ենթադրուել է, որ Տաճկաստա-  
նը չի մերժի մացնելու իր ծրագրի մէջ փոփոխութեանը՝ համապատասխան  
ուսուական ասածարկութիւնների, որոնք արժանացան յանձնաժողովի միա-  
ձայն հաւանութեան և կընդունի մեծ պետութիւնների իսկական վերահսկո-  
ղութիւնը բարենորոգութեանը հարցում:

(Ստորագր.) Բրօնելսկի.

№ 69. Ռուսական Հայաստարմատարք Գերմանիայում՝ Սրբարին գործոց  
Նախարարին.

Բերլին, 30 օգոստոսի, 12 սեպտեմբերի 1913 թ. (համակ).

Եքէկուայ դադոնի հուս արդէն պատիւ ունեցայ յայտնելու  
Զեր Բարձր Գերազանցութեանը Ստատու-Սեկրետարից նորիրս ստացած յու-  
շազիր բովանդակութիւնը հայկական բարենորոգութեանի առթիւ նա ցոյց է  
տալիս, որ առասկան ծրագրի դրութիւնների մի մասը արդէն կարելի է  
համարել ընդունուած բոլոր պետութիւնների կողմից: Իսկ եթէ մեացած  
դրութիւնների մի քանիսի առթիւ Կ. Պօլսի յանձնաժողովի պատղամաւոր-  
ների մի մասը եկել է մեր հայեցակէտից տարրեր եղարկացութեան, սրա  
պատճառը այն համոզմունքն է, որ Տաճկաստանը չի ընդունելու այդ գրու-  
թիւնները ինչ վերաբերում է Գերմանական Կառավարութեանը, նա ոչ հո-  
րաւոր, ոչ էլ ցանկալի է համարում ստիպել Տաճկաստանին այն բանում,  
որը նա յօժարակամ չի ընդունում: Այս պատճառով Բերլինի Կարինետը  
կարծում է, որ յանձնաժողովը պիտի վերսկէր իր զրադմունքները տաճ-  
կական ծրագրի ուսումնամաթրութեամբ, որի մէջ Տաճկաստանը անկասկած  
է համաձայնուի մացնել այնպիսի փոփոխութիւններ, որոնք, ի միջի այլոց,  
կհամապատասխանէին ուսուական ծրագրի միաձայն ընդունուած մասերին: Յուշազ  
գրի մէջ համոզմունք է յայտնում, որ Տաճկաստանը կընդունի մեծ  
պետութիւնների իսկական վերահսկողութիւնը բարենորոգութեանը հարցում:  
Այսօր այցելեցի Ստատու-Սեկրետարին և ասացի նրան, որ նրա առա-

ջուց ինձ տրուած խոստումից՝ հեռագրել բարօն Վանդենհայմին զի՞նող վերաբերութել մեր վերջին առաջարկութիւններին, ևս յոյս ունեի աւելի նպաստաւոր պատասխան ստանալու քան այն, որը նա ինձ հէնց նոր ռեղարկել է:

Պ. Եազօվը պատասխանեց, որ բարօն Վանդենհայմը Ստատո-Սեկրետարի վերոյիշեալ խորհրդի հիման վրայ, իբր թէ յանձնարարել է Կ. Պոլսի Դիրմանական Դեսպանատան Առաջին Դրագօմանին մտքերի փոխանակութեան մէջ մտնել Ստ. Սօվ. Մանդէլզուամի հայ, որը արդէն տեղի է ունեցել Սակայն, ոգբախտարար, այդ փոխանակութիւնը չի հարթել գոյութիւն ունեցող զինաւոր տարածայնութիւնները Համաձայն նրա այսօր Կ. Պոլսից ստացած տեղեկութիւնների, վերաբերմամբ երկու Առաջին Դրագօմանների խորհրդակցութեան, նա զալիս է այն համոզման, որ մենք ցանկանում ենք սեկուլյների բաժանումը կատարել ուղղահայեց գծով, իսկ գերմանական պատգամաւորը կողմնակից է հորիզոնական ուղղութեան բաժանման, որպիսի ձև առաջարկում է նաև տաճկական ծրագիրը Մանօթ Հինելով հարցի հետ, պ. Եազօվը հիմք չի գտնում զինելու իմ եսանդուն պնդումներին և հրահանգներ տալու բարօն Վանդենհայմին, որ սա ամբողջապէս ընդունի ուսուական ծրագիրը, ինչ վերաբերում է Ընդհանուր Վերատեսուչների նշանակմանը համաձայնութեամբ մեծ պետութիւնների, պէտք է ասել, որ Մեծ Վեգիրը յայտնել է, թէ նա չի կարող համաձայնուել այսպիսի սահմանափակման հետ Այս վերջին հարցի առթիւ պ. Եազօվը ի միջի այլոց, նկատեց, որ հսարաւոր է հասնել մինոյն նպատակին, առանց սկզբունքի յայտարարման, օրինակ համաձայնութեան զալ Դուան հետ այս կամ այն յարմար թեկնածուի անձնաւորութեան հարցում: Ստատո-Սեկրետարի միւս դիտողութիւններից ես եկայ այն եղանակացութեան, որ նա (կամ աւելի ճիշտն ասած, բարօն Վանդենհայմը) մտադիր է ընդունելու ոչ թէ համեմատական, այլ հաւասարութեան սկզբունքը հայտնակ վիւայէթների համար: Ի միջի այլոց, ես աշխատեցի աւելի մանրամասն բացատրութիւն ստանալ, թէ ինչպիսի հիմնարկութիւններում նա հնարաւոր է տեսնում իրագործել իշշեալ ներկայացութեան սկզբունքը Սակայն, ամէն մի որոշակի պատասխան տալուց նա խուսափում էր, յայտնելով, որ անծանօթ է հարցի մանրամասնութիւնների հետ:

Ի վերջոյ, երբ պ. Եազօվը կրկնեց իր ստերեօտիպ նախադասութիւնը— որ նրա կարծիքով պէտք է կանգ առնել այսպիսի մի միջակ ծրագրի վրայ, որպիսին ընդունելի լինէր նաև Տաճկաստանի կողմից, որին մեծ պետութիւնները մտադիր չեն ստիպմամբ իրագործել տալու հայկական բարենորդումները, ևս հակածաւեցի Ստատո-Սեկրետարին, որ Տաճկաստանը երբէք չէր հակառակի մեր ծրագրի դրութիւններին, եթէ գոյութիւն չունենար տարածայնութիւն մեծ պետութիւնների մէջ, որով և պէտք է բացատրել տաճկական հակառակութիւնը:

(Ստորագը.) Բրօնեվսկի.

#### № 69-ի յաւելումն (Թարգմանութիւն.)

Ընթացիկ ամսուայ 29-ի յուշագրում Կայսերական Ռուսական Դիսպանատունը ցաւ էր յայտնել Կ. Պոլսում հայկական բարենորդումներով զբաղուող յանձնաժողովի պարագմունքների բացատրական հետեանքների առ-

թիւ, Կայսերական Կառավարութիւնը, ձգահերթ Կայսերական Ռուսական Կառավարութիւնն հետ ի մի բարեփոխելու իրերի զրութիւնը Հայաստանում, ենթադրում է սակայն, — Հայելով երեսն եկած տարածայնութիւններին, պէտք է դանել համբ, որը բաւարարէր ինչչու մեծ սեղութիւններին, նոյնպէս և ընդունելի լինէր Տաճկաստանի կողմից:

Ռուսական ծրագրի մի քանի Նշանաւոր կէտարը պէտք է համարել արդին ընդունուած, ճշշտ է պատգամաւորների մի մասը հարկաւոր համարեց խուսափել ծրագրի ուրիշ կէտարի մի քանիսից, որոնք, ի հարկէ, պակաս ուշարժան չեն, բայց և այնպէս մեր կարծիքով նրանք չեն կազմում conditio sine qua non. Այս հանգամանքը բխում է այն կշռագաւորութիւնից, որ յիշեալ կէտարը ընդունուելու չեն Բ. Դուան կողմից, այն ինչ Կայսերական Կառավարութիւնը ոչ համարուր, ոչ էլ յարմար է տեսնում ստիպել Տաճկաստանին ենթարկուելու մի վճռի, որը նա չի ընդունում յօժարակամբ:

Աչքի առաջ ունենալով այս հանգամանքները, Կայսերական Կառավարութիւնը ենթադրում է, որ Յանձնաժողովը պիտի փերսկէր իր զրադմունքները, հիմունելով տաճկական ծրագրի վրայ: Կայսերական Կառավարութիւնը համոզուած է, որ Օսմաննեան Կառավարութիւնը, որը լի է ամենալաւ ցանկութիւններով, չեն հրաժարուի փոփոխութիւններ մատնելու իր ծրագրի մէջ, իսկ ըստ առաջնոյն այնպիսի փոփոխութիւն, որոնք համարովնակ են Յանձնաժողովից միաժայն հաւանութիւն ստացած ուսուական կէտարի հետո Բայց այդ նա կը դուռնի մեծ պետութիւնների իսկական վերահսկողութիւնն ոկղորւնքը, Կայսերական Կառավարութիւնը չի կասկածում, որ այսպիսի գործելակերպ համաձայնութիւն կատեղծի մեծ պետութիւնների և Տաճկաստանի մէջ վերաբերմամբ այն բարենորոգութիւնների նախագծի, որոնք համապատասխանելով ներկայ ժամանակի կարիքին, ապագայում կրագմտնան և կրարգաւաճեն:

Տերլին, 10 սեպտեմբերի 1913 թ.

Հ 70. Վանի Փոխ-Հիպատուով Կ. Փօլսի ոուսաց Դիսալանին.

Վան 1<sup>4</sup> սեպտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Տաճկական պահակախումբը օգոստոս 30-ի գիշերուան, պատահելով զլխաւոր փողոցներից մէկի վրայ երեք հայի և երկու կնոջ, որնք ճրագով վերադառնում էին տուն, յանկարծ կրակեց նրանց վրայ, որից սպանուեց տտամիաբոյժ Մելքոնը, իսկ մեացաները վախեցած, ալտաստանուեցին մերձակայ աներում: Քաղաքացիք սպասում էին, որ կառավարութիւնը դատ բաց կանի, բայց հրասաթափուեցին և ցուցարարութեամբ թաղեցին սպանուածին: Թաղմանը վալին ուղարկեց 60 ժանդարմ և մի պաշտօնեայ, հրամայելով ուղեկցութեան համար թոյլ տալ միայն սպանուածի ազգականներին, բայց հայերը, հաւաքուելով մօտաւորապէս 5000 հոգի, թոյլ չտուին ժանդարմներին մօտ դպալու զագաղին և ժողովրդին ցըելու ժամանակ հայերը դուրս բերեցին իրենց ատրճանակները իմանալով այդ մասին հուախօսով, վալին հրամայեց ժանդարմներին նահանջել Գերեզմանատանը հակակառավարչա-

կան ճառեր արտասանուեցին այն մասին, որ կառավարութիւնը մտադիր է ջարդ առաջ բերելու, նման Աղանայի և Ռումելիայի վերջին ջարդերի Հայերը հեռազրով պահանջեցին Դանից հեռացնել ուռմէլիական ժանդարմերին ու Աղանայից եկած պաշտօնեաներին և ապահովել քաղաքացիների կեանքը և զոյրը Քաղաքում խանութիւները փակ են և բացուելու չեն մինչեւպատասխան գոյլը Դրութիւնը խիստ վտանգաւոր է:

(Մտորագր.) Ակիմօվիչ.

№ 71. Վանի Փոխ-հիւպատոսը Կ Պօլսի ուստաց Դեսպանին.

Վան, 1/14 սեպտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Ինձ, Ցուանսիական և Գերմանուկան հիւպատոսների մօտ հայերը պատգամաւորութիւն ուղարկեցին և ներկայացրին Բ. Դուան տրուած հեռագրի պատճէն, որում նրանը պահանջնել են պատժել Ասիմ անունով պաշտօնեային, որը սպանեց Մելքոնին, պաշտօնազուրկ անել վալիին, մետկուրչին և ոստիկանապետին, աւելացնել հայկական ժանդարմէրիայի թիւը և վերացնել պահանջախուրերի շրջերը ցերեկով! Պատգամաւորութիւնը խընդում է, որ Դեսպանը ուշադրութեան առնի հայերի ողբարի զրութիւնը, որոնց սկսել են սպանել պահանջականմբերը Գերմանական հիւպատոսը, Նախանձելով, որ հայերը լիովին համակրում են Ռուսաւտանին, պաշտպանում է իշխանութիւնն, իսկ իշխանութիւնը աշխատում է ապացուցել, որ Մելքոնին պահանջախումբը չի սպանել, այն ինչ կասկած չկայ, որ Մելքոնին սպանեց Ասիմը Հիւպատոսը համոզում է հայերին աշխատել ի մի երիտասարդ թուրքերի հետ և յոյս չդնել ոչ եւրոպական վերահսկողութեան վրայ և ոչ էլ Ռուսաստանի վրայ:

(Մտորագր.) Ակիմօվիչ.

№ 72. Բիթլիսի Հիւպատոսը Դեսպանին Տաճկաստանում.

Բիթլիս, 1/11 սեպտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Թօտուրգ գիւղի քրգերը սպանեցին 2 հայ Մադէն գիւղից, Կնախէ գիւղում քրգերը վիրաւորեցին հայ քահանային և նրա երեխային:

(Մտորագր.) Շիրկօվ.

№ 73. Դեսպանը Տաճկաստանում Արտարին գործոց Նախարարին.

Կ. Պօլին, 2/11 սեպտեմբերի 1913 թ. (հեռագիր)

Յանձնաժողովի զբաղմունքների վերանորոգելը տաճկական ծրագրի հիման վրայ կնշանակէր հրաժարաւել մեր նեղայացըրած նախածրագրից, Այս պատճառով ես վերանորոգումը գտնում են վերին աստիճանի անցանկալի և աննպատակայարմար. Բայց այդ մեր ծրագրը քննադատելիս, յանձնաժողովը հաւասարապէս ուշադրութեան առաջ նաև տաճկական ծրագրը Մեր ծրագրի մէջ կան այնպիսի հիմնական կէտեր, որոնցից հայերը երբէք

չեն հրաժարուի, ինչպէս, օրինակ, եւրոպական վերահսկողութեան սահմանաման հէտու—Ես երկար խօսակցութիւն ունեցայ Վանգենհայմի հետ հայկական հարցի առթիւ Նա պնդում է այն մտքի վրայ, որ Եւրոպան ոչ մի հարկադրիչ միջոց ընդդէմ Տաճկաստանի մտադիր չէ ձեռնարկելու և այս պատճառով պէտք է սահմանափակուել առաջարկելու նրան միմիայն այն բարենորոգութիւններ, որ նա յօժմակամ կընդունի, Գանելով սակայն, որ Դուն յօժար կամքը կախուած է մեծ պետութիւնների միաձայնութիւնից, որ բարենորոգութիւնների գործադրումից հրաժարուելը լիէ վտանգալից հետեւանըներով, Վանգենհայմը անձամբ համաձայնուեց ինձ հետ, որ հետեւալ 3 կէտերը չափաղանց չեն. 1) երկու հայաբնակ սեկտորների լնդհանուր—պերատեսուչների նշանակումը մեծ պետութիւնների մաերմական համաձայնութեամբ՝ վերաբերմամբ անձնաւորութիւնների լնդհանուր, 2) Լիրահսկողութեան սահմանումը, որը իրազործուելու է երկու ձևով, անմիշական յարաբերութեամբ Բ. Դուն հետ և հիւղասասային ներկայացչի միջոցով համաձայն Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի, 3) Հաւասարութեան (քրիստոնեաների և մահմեղականների) սկզբունքի հաստատումը և անդական խորհրդաներում և վարչական պաշտօններում Իմ Գերմանական Ընկերը տալիս է իր համաձայնութիւնը պայմանով իմանալու՝ արդեօք Տաճկաստանը պատրաստ է լնդունելու յիշեալ 3 կէտերը, Նա առաջարկից ինձ կազմել մի խորհրդակցութիւն, բաղկացած ուսուական, գերմանական և տաճկական պատգամաւորներից և քննել Դուն ցանկութիւնները, Ես հրաժարուեցի այդ առաջարկութիւնից յայտնելով, որ ինչպէս նա, նոյնպէս և հս կարողենք Մեծ Վէզերի հետ ունեցած մտերմական բացարարութիւնների ժամանակ պարզել նրա ցանկութիւնները և ազդել նրանց վրայ, Բացի այդ ես աւելացրի, որ հնարաւոր չեմ գտնում հետ կանգնել այդ կէտերից, որոնց կարողենի դապել հայերին ութիւ կանգնելուց:

(Ստորագր.) Գիրս.

№ 74. Դրուսական Հաւասարմատարք Գևրմանիայում՝ Արտաքին գործոց Նախարարին.

Բերլին, 3/16 սեպտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Հայկական բարենորոգութիւնների առթիւ եղած խօսակցութեան ժամանակ Ստատ-Սեկրետարը յայտնեց, թէ նա առանձին բաւականութեամբ կարող է ինձ հաղորդել, որ հայկական բարենորոգութիւնների հարցում, ըստ երեսյթին, համաձայնութիւնը մեզ հետ կայանում է յաջող, որի համար մեր և Գերմանական Դիսպանը արդէն պատրաստի հող գտել են Իբր թէ Գիրսը համաձայն է փոխելու մեր սեկտորների բաժանման սիստեմը, համակերպուելով նոր տաճկական օրէնքի հետ, իսկ Վանգենհայմը—զիջելու հաւասար ներկայացչական սիստեմին երկու հայաբնակ սեկտորների տեղական խորհրդներում և ընդունելու այն սկզբունքը, որ լնդհանուր—նահանգամիտների նշանակումը տեղի է ունենալու նախական համաձայնութեամբ մեծ պետութիւնների, Ստատ-Սեկրետարը աւելացրեց, որ այդ յաջող հետեւանքը

արդիւնք է նրա տուած Վանգենհայմին խորհրդակին՝ վարուել աւելի զիջողաբար և յայտնեց իր ուրախութիւնը այդ մասին։  
(Ստորագր.) Բրօնելսկի,

Հ. 75 Դեսպանը Տաճկաստանում Արտարին գործոց Նախարարին.  
Կ. Պոլս, 4/1 սեպտեմբերի 1913 թ. (հեռագիր)

Հայկական բարեհորոգութեաներ:

Գերմանական Դեսպանը, Հաղորդելով ինձ Տաճկաստանի առաջին ան-  
յաջող զիմումի մասին առանձին պետութիւններին, որոնցից նա խնդրել էր  
առաջարկել Հայարժակ վլայշիթների համար ընդհանուր — վերատեսուչներ,  
Հարցրեց ինձ, արդին օք գտնում եմ ես մի որեից արգելք, որպէսզի Բ.  
Դուռը վերանորոգի իր այդ զիմումը ըոլոր մեծ պետութիւններին, ինդրե-  
լով նոյնը առանձնապէս Հայարժակ սեկտորների համար ևս պատասխանացի  
նրան, որ իմ անհատական կաթեթը Բ. Դուռն նմանօրինակ դիմումը կանե-  
նար պատահական նշանակութիւն և ոչ մի ապահովութիւն չէր տայ ապա-  
հայի համար, նամանաւանդ որ Բ. Դուռը ամէն մի ժամանակ կարող էր  
արձակել մեծ պետութիւններից առաջարկուած ընդհանուր — վերատեսուչնե-  
րին, կամ վերջիններս իրենք այս կամ այն առիթով կնեսանային իրենց  
պաշտօններից։ Հարցը կինքը լուրջ և ընդունելի այն ժամանակ, երբ տաճ-  
կական կառավարութիւնը սկզբունքապէս համաձայնուէր միշտ դիմելու ըս-  
տով մեծ պետութիւններին վերցրած ի մի և ինդրելը մատնացոյց անել  
Հայարժանակ վիլայէթների համար անձնաւորութիւններ, որոնցից նա նշա-  
նակում է ընդհանուր վերատեսուչների իրենց միահամուռ պատասխանում  
մեծ պետութիւնները աչքի առաջ կունենային Դուռն սկզբունքային զիկու-  
ցումը և կորոշէին մի քանի պայմաններով յիշեալ վերատեսուչների իրաւա-  
սութիւնը և առաջիկայ զործանէւութիւնը։ Դերմանական Դեսպանը անհատա-  
պէս համաձայն է ինձ հետ, բայց յայտնեց, որ պէտք է հարցնի այդ մա-  
սին Բերլինում։ Ինձ թւում է, որ այդպիսի պատասխանի նպատակը նա է,  
որ նախնական քննութեան ննթարկն իմ ասածը։

(Ստորագր.) Գիրս.

Հ. 76. Արտարին գործոց Նախարարի փոխարէն Նախարարի Օգնականը  
Ֆունսուիայի և Անգլիայի ուսաց Դեսպաններին.

Ս. Պետերբուրգ, 6 սեպտեմբերի 1913 թ. (հեռագիր)։

Վերջին ժամանակներս Հայկական Հարցը նորից գրաւել է մեծ պետու-  
թիւնների առանձին ուշադրութիւնը։

Այս պատճառով մենք անհրաժեշտ ենք գտնում յիշեալ Հարցի առթիւ  
մեր արած քայլերի մասին տեղիկացնել Կառավարութեանը, որի մօտ Դուռը  
ուղարկուած էր։

Որովհետո Հայկական բարեհորոգութեանի հարցում մեր ծրագրած դրու-  
թիւններից շատերին ամենամեծ հակառակութիւնը ցոյց տւեց Գերմանիան  
ուստի մենք պարտականութիւն դրինք մեր Կ. Պոլսի Դեսպանի վրայ, որ

չնորհիւ անմիջական բանակցութիւնների Գերմանական Դեսպանի հետ յաջողեցնի երկու պետութիւնների հայեցակէտերի համաձայննեցումը Վերաշին տեղեկութիւնները ցոյց են տալիս, ըստ երևոյթին, որ այդ բանը հնարաւոր է:

(Ստորագր.) Ներատօվ.

№ 77. Արտաքին գործոց Նախարարի փոխարքն Նախարարի Օգնականը Կ. Պոլի Դեսպանին.

Ս. Պետերբուրգ, 6 սեպտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Ձեր 4/7 սեպտեմբերի հեռագրում առաջարկած ձերն մենք ոչ մի արդեր չենք տեսնում: Ձեր ուշադրութիւնը միայն հրաւիրում ենք այն հանգամանքի վրայ, որ ցանկալի է նախօրօք պարզութեան որոշել, որ մեծ պետութիւնների պատասխանի մէջ մտնելու են ոչ թէ միայն ընդհանուր — վերատեսուչների իրաւասութիւնը և առաջիկայ գործունէութիւնը որոշող պայմանները, այլ և այն, որ յիշեալ անձնաւորութիւնները լիակատար իրաւունք ունեն իրենց ենթակալ պաշտօնեանեցի վերաբերմամբ և մեծ պետութիւնների իսկական վերահսկողութիւնը շեշտուած լինի: Այս պատճառով, նախքան տաճիկներին դէպի պետութիւններ ուղևորելը, ցանկալի է վազօրոք ընդհանուր համաձայնութեան գալ այն պատասխանի առթիւ: Որ մեծ պետութիւնները պիտի տան տաճիկներին: Հակառակ դէպքում մեծ պետութիւնների տարածայնութիւնը կամրապնդի տաճիկների դիմագրութիւնը:

(Ստորագր.) Ներատօվ.

№ 78. Դեսպանը Տաճկաստանում Արտաքին գործոց Նախարարին.

Կ. Պոլիս, 10/3 սեպտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Իմ Դերմանական ընկերու և ես համաձայնուեցինք գործադրել մեր ջաները, որպէս զի Բ. Պուռը և մեր ընկերները ընդունեն հետեւեալ կէտերից բաղկացած Հայաստանի բարենքորոշումների ծրագիրը.

1) Բ. Պուռը վճարեց զիմել մեծ պետութիւններին խնդրելով Արևելեան — Անատօլիայի 2 սեկտորների համար — որոնք են ա) Էրզրում, Տրապիզոն, Սիվազ և բ) Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբերքիր — առաջարկել իրեն 2 ընդհանուր վերատեսուչ, որոնց հետ նա պայման կապէր... տարովի: Միաժամանակ Պուռը յայտնում է, որ նա վճուել է դիմել մեծ պետութիւնների աջակցութեանը ամէն անգամ, երբ յիշեալ պայմանները կկորցնեն իրենց ոյժը:

2) Պուռը ընդունում է, որ այդ երկու վերատեսուչները իրաւագործին ներկայացնել Տաճկական կառավարութեանը բարձր պաշտօնեաների ու դատավորների թեկնածուների ցոցակը: Նրանց է պատկանում այս սեկտորների բոլոր պաշտօնեաների արձակման իրաւունքը առանց մի որևէ բացառութեան:

3) Իւրաքանչիւր սեկտորում հաստատում է ընտրողական ժողովի բաղկացած կէսը մահմէզականներից, կէսը քրիստոնեաններից:

4) Հաւասարութեան այս սկզբունքը ընդունուում է եւ կուսեկտորներում  
եղած բոլոր պաշտօնների դասաւորման մէջ:

5) Դուռը առաջարկում է, որ մեծ պետութիւնները իրենք հսկեն բա-  
րենորոգումների գործադրումը ինչպէս կ. Պոլսի իրենց Դեսպանների, նոյն-  
պէս և անդական հիւապատճենների միջոցով:

6) Դուռը ենթադրում է պայմանաւորուել մեծ պետութիւնների հետ  
ուրիշ բարենորոգումների առթիւ, որ պիտի ներմուծուեն Արեւելիան—Անտ-  
տօլիայի երկու սեկտորներում:

(Ստորագը.) Գիրս.

№ 79. Մուսական Հաւատարմատարը Գերմանիայում Արտաքին գործոց  
Նախարարին.

Քերլին, 10/21 սեպտեմբերի 1913 թ. (հետագիր).

Այսօր Եագօվը կարգաց կ. Պոլսից ստացած հեռագիրը, որով Ռուսա-  
կան և Գերմանական Դեսպանները կազմել են 6 կէտերից բաղկացած մի  
ծրագիր և պայմանաւորուել են համոզել Մեծ Վէզիրին ընդունելու ծրագիրը:  
Եագօվը շատ գոհ է այդ համաձայնութիւնից, որի մասին նա կտեղեկացնի  
Աւստրօ-Ռւսկարական և Խոսական Կառավարութիւններին:

(Ստորագը). Բըօնեվսկի.

№ 80. Մուսական Հաւատարմատարը Անգլիայում Արտաքին գործոց  
Նախարարին.

Լօնդօն, 17 սեպտեմբերի 1913 թ. (նամակ).

Սէր է. Գրէյը, ինչպէս Զեզ յայտնի է, բացակայում է Լօնդօնից,  
բայց երէկ ինձ յաջողուց տեսնուել էնց նոր այստեղ վերադարձած Սէր  
Ա. Նիկոլսոնի հետ, որին ևս, համաձայն Զեր առաջարկութեան, մտերմա-  
բար հաղորդեցի այն բարեխաջող ընթացքի մասին, որ ըստ երեսյթին ընդու-  
նում են մեր և կ. Պոլսի Գերմանական Դեսպանի բանակցութիւնները Հա-  
յատանի բարենորոգումների հարցում:

Սէր Ա. Նիկոլսոնը բացայայտ բաւականութեամբ ընդունեց իմ աեղե-  
կութիւնը և պատուիրեց հաղորդել Զերդ Բարձր Գերազանցութեանը իր շնոր-  
հակալութիւնը այս սիրալիր լուրի համար:

Նա աւելացրեց, որ մեր և Գերմանիայի անմիջական բանակցութիւնները  
հայկական հարցի վերաբերմամբ միանգամայն համապատասխան են Սէր. է.  
Գրէյի յանկութեանը, որը նմանօրինակ ուղղութեան մէջ գտնում է ամենա-  
ճիշտ միջոց խուսափելու վանգալից բարգութիւններից, որոնք կարող են  
ծագել Փոքր Ասիական փոխադարձ շահերի հողի վրայ:

Սակայն այդ մասին կօմս Բնակեցորդը արգէն յայտնել է:

(Ստորագը.) Էտուէր.

№ 81. Արտաքին գործոց Նախարարութեան կառավարից Ֆուանիայի  
և Անդիայի Ծուսական Հաւատարմատարին:

Ո. Պետերովը, 11 սեպտեմբերի 1913 թ. (հետագիր).

Բարենորոգումների ծրագիրը, որի մասին յայտնեց Կ. Պօլսից<sup>10/21</sup> սեպ-  
տեմբերի ստացած հեռագիրը, Կայսերական կառավարութեան կողմից հա-  
ւանութիւն դաւաւ:

Բարենամեցէք ներկայացնել յիշեալ ծրագիրը Կառավարութեանը, որի  
մատ Դուք ուղարկուած էք և խնդրել, որ նա պատուիրի իր Կ. Պօլսի Ներկա-  
յացչին պաշոպանելու Բ. Դռան առաջ մեր Դեսպանի տեսակէտը յիշեալ  
հարցում:

(Ստորագր.) Ներատօվ.

№ 82 Ֆուանիայի Ծուսական Հաւատարմատարը Արտաք գործոց Նախարարին.  
Փարիզ, <sup>12/25</sup> սեպտեմբերի 1913 թ. (հետագիր)

Ես յանձնեցի Պալէօլոցին Հայկական բարենորոգումների ծրագիրը: Նա  
դաւագիրը վերին աստիճանի նպատակայարմար և խոստացաւ, համա-  
ձայն Ձեր ցանկութեան, ուղարկել համապատասխան պատուէք Կ. Պօլսի  
Ֆուանսիական Դեսպանին:

(Ստորագր.) Սեփաստովուլուս.

№ 83. Դեսպանի Տաճկաստանու Արտաքին գործոց Նախարարին  
Կ. Պօլս, <sup>13/21</sup> Սեպտեմբերի 1913 թ. (հետագիր).

Դիմումնեմ Ձեր սեպտեմբերի 6-ի և իմ <sup>10/21</sup> սեպտեմբերի հեռագիրներին:  
Մեծ պետութիւնների մէջ նախնական համաձայնութեան կայացումը այն  
պատասխանի առթիւ, որ վերաբերմամբ Հայկական բարենորոգումների պի-  
տի զրուի Դռան զիմումն, կարող է առաջ բերել մեծ տարածայնութիւններ  
նոյն պետութիւնների մէջ: Սրանցից մի քանիսի հիմնական կշռագատու-  
թիւնը նա է, որ Տաճկաստանը երբէք յօժարակած չի համաձայնուի մտցնել  
բարենորոգումներ և ոչ մի պետութիւն հակադրիչ միջոցների չի դիմելու  
Դռան նախնական, թէկուզ սկզբունքային համաձայնութիւնը, անկասկած  
կթուլացնի մեծ պետութիւնների հակառակութիւնը և կթեթևացնի համա-  
մլու ծրագրի մշակումը: Այս կշռագատութիւնից զրգուած ես երէկ միան  
գամայն մասնակի կերպով բացատրուեցի Մեծ Վէզիրի հետ բարենորոգում-  
ների երկու գլխաւոր կէտերի առթիւ Մի փոքր տատանումից յետոյ նա  
անձամբ հնարաւոր գտաւ առաջի կէտի ընդունումը Բ. Դռան կողմից, որ վե-  
րաբերում է երկու ընդհանուր—վերատեսուչներին, սակայն ինդրեց ժամա-  
նակ տալ իրեն մտածելու:

(Ստորագր.) Գիրս.

№ 84. Անգղիայի Ռուսական Հաւատարմատարը Արտաքին գործոց  
Նախարարին.

Լօնդօն, 15/19 սեպտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Անգղիական հառավարութիւնը կպաշտպանի Դռան առաջ մեր ծրագիրը  
Հայաստանի բարենորոգութեանի առթիւ, որ մշակել են մեր և Գերմանական  
Դեսպանը Կ. Պոլտում,

(Ստորագր.) Էտոէր.

№ 85. Արտաքին գործոց Նախարարութեան կառավարիչը Դեսպանին  
Տաճկաստանում.

Ա. Պետերբուրգ, 24 սեպտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Անգղիան և Ֆրանսիան համաձայն են պաշտպանելու Զեր և Գերմա-  
նական Դեսպանի մշակած բարենորոգութեանի ծրագիրը Հայաստանի համար  
(Ստորագր.) Ներառակ.

№ 86. Դեսպանը Տաճկաստանու Արտաքին գործոց Նախարարին.

Կ. Պոլիս, 4/17 հոկտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Ես յարմար առիթ բաց չեմ թողնում ձեռքից, որպէս զի Մեծ Վ. Վ. վիրի  
տառաջ պնդեմ իմ և Վայգչեննայի մշակած վեց կէտերի սկզբունքային ըն-  
դունած անհրաժեշտութեան վրայ Այդ վեց կէտերի բնագիրը ես յանձնե-  
ցի Մեծ Վ. Վ. վիրին Պէտք է ասեմ, որ մինչև այժմ հանդիպում եմ նրա կող-  
մից յամառ հակառակութեան նրա ընդդիմախօսութեան գլխաւոր հիմքը  
կայանում է հետեւեալում. կազմելով երկու Հայաստան, որոնցից իւրաքան-  
չիւրը կկառավարուի Դռանից համարեա անկախ վերատեսչով, (որի հետ նա  
ընդհարութեար կունենայ, զրկուած լինելով սակայն արձակման իրաւունքից) մենք  
սկիզբ ենք դնում Տաճկաստանի բաժանման, որովհետև նրա մասցած մա-  
սկըն էլ կպահանջման նմանօրինակ արտօնութիւններ, Մենք մացնում ենք  
իրը թէ քաղաքական, բայց ոչ թէ քրչական սկզբունքներ, այն ինչ Տաճ-  
կաստանին հարկաւոր նմիմիայն վերջիններս, որոնց առթիւ և նա խնդ-  
րել էր եւրոպական խորհրդականներ, Սրանց աջակցութիւնը մեծ օգուտ ըն-  
ցեց մաքսային և ֆինանսական հիմնարկութիւնների վերակարգման ժամա-  
նակ, չնայելով որ այս հաստատութիւնների ղեկավարները տաճիկներ են  
Այդպիսի յառկութեան տէր եւրոպական խորհրդականներ հարկաւոր են նաև  
Անտոլիիական վիլայէթների բարեկարգութեան համար, Ես հականուեցի  
Մեծ Վ. Վ. վիրին, որ ամենից առաջ հարկաւոր է խաղաղ դրութեան մէջ պա-  
հել հայերին, որոնք պատրաստ են ոտքի կանգնելու, եթէ ներմուծուող բա-  
րենորոգութեանի հիմնարկութեան համար չի սահմանուի ապահովութիւն, որ  
մենք ոչ մի քաղաքական նպատակներով տրամադրուած չենք, այլ մասնակ-  
ցելով վերատեսուչների նշանակման հարցին, ցանկանում ենք մեզ  
համար ապահովացնել Հայաստանի դրութեան վերասկման իրաւունքը, որ-  
պիսի իրաւունք մեզ արդէն պատկանում է Տաճկաստանի կող մից ստորա-  
գրուած միջազգային դաշնագրով, (Թերլինի վեհաժողովի Յ1-րդ յօդուածը),

որ Տաճկաստանը չպիտի աչքաթող անի և այն հանգամանեցը, որ այս Յէտաերից բաղկացած ծրագիրը արդէն հաւանութիւն է գտել բոլոր մեծ պետութիւնների կողմից: Մեծ Վէզիրը պատասխանեց, որ այդ բանը, նրան յայտնի է, որովհետեւ Վանդեննայմը և Բօմբարը կրկնում են նոյնը ինչ ես, բայց նա, ջնայելով այդ բոլորին, չի կարող փոխել իր հայեցակետը: Ես խօսեցի Գերմանական Դեսպանի հետ. որոշեցինք պնդել, որ Մեծ Վէզիրը իր հետագայ բացատրութիւնների ժամանակ գրաւոր պատասխան տայ յիշեալ վեց կտտերի առթիւ:

(Ստորագր.) Գիրս.

№ 87. Դեսպանը Տաճկաստանում Արտաքին գործոց Նախարարին.

Կ. Պոլիս, <sup>4/17</sup> Հոկտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Գերմանական Դեսպանը հարցրեց ինձ, հնարաւոր նմ գտնում ես մեր զիօր հայկական բարենորոգութիւնների ներմուծումը՝ պայմանաւորիլ 4 տոկոսային մաքսային յակելումով, թէ ոչ: Նա խոստովանեց, որ Մեծ Վէզիրը հետ ունեցած իր խօսակցութեան ժամանակ պարզեց նրան, թէ Քան յամառութեան դէպքում մնձ պետութիւններից մէկը գուցէ առաջարկի այդպիսի մի պայման: Ես պատասխանեցի, որ այս առթիւ ոչ մի պատուէր չունեմ, բայց անհատապէս հնարաւոր հնամարէի առաջարկել յիշեալ պայմանը միայն այն դէպքում, եթէ Գերմանիան էլ, որ մինչև այժմ պայմանապէս չի յայտնի իր համաձայնութիւնը, ընդունէր այդ սկզբունքը Վանագեննայմը պատասխանեց, որ ծանօթ չէ իր Կառավարութեան կարծիքի հետ:

(Ստորագր.) Գիրս.

№ 88. Դեսպանը Տաճկաստանում Արտաքին գործոց Նախարարին.

Կ. Պոլիս, <sup>13/18</sup> Հոկտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Սայիդ Խալիֆ Փաշան երեկ յանձնեց ինձ նոյնպիսի մի ժամանաւոր գրութիւն, ինչպիսին ես ուղարկել էի նրան, յայտնելով մեր ծրագրի վեց կտտերը: Քրութիւնը չի տալիս անմիջական պատասխան այդ վեց կտտերին, այլ պարունակում է իր մէջ Տաճկաստանի սկզբունքային հաղորդագրութիւնը այն մասին, որ նա վճռել է մոտցնել բարենորոգութիւնը, դիմել մեծ պետութիւնների բարոյական և անտիսական լայն օգնութեանը և խնդրել նրանցից անձնաւորութիւններ, որոնց անհատական աջակցութեան կարիքը նա զգում է: Դուռը ձեռք է առնելու ամէն միջոց, որպէս զի այդ աջակցութիւնը բար հարաւորութեան արդիւնական լինի, խստագոյն պահպանելով: Սուրթանի վեհապետական իրաւունքները և պետութեան անկախութիւնը ես նկատեցի, որ Սայիդ-Խալիֆի վեհութումը հարցին նոր ընթացք չի տալիս և պէտք է սկսել նրա կօնկրէտ քննազատութիւնը: Առաջին կէտի առթիւ մի ժամուայ խօսակցութիւնից յետոյ, Մեծ Վէզիրը մեր տեսակէտերի տարրերութիւնը գտաւ նրանում, որ մենք ցանկանում ենք առաջարկել Դամանը եւրապական ընդհանուր-վերատառութիւնը, այն ինչ նա խնդրում է մեղնից եւրապական խորհրդականներ այդ վերատառութիւնը համար, երաշխաւորե-

լով, որ յիշեալ խորհրդականները կունենան լիակատար իրաւունք, իսկ վերածեսուչները անհրաժեշտօքէն կվատարեն նրանց խորհրդականները: Իմ այս նկատումիս, որ իրօք անհանրին է տալ խորհրդականներին այդպիսի իրաւունք, որի պատճառով և մենք ոտիզուած ենք պնդել ընդհանուր գերատեսուչների նշանակման վրայ՝ աջակցութեամբ մեծ պետութիւնների, Մեծ Վէգիրը ասաց: որ երեքշարթի օր, երբ մո նք կտեսնուենք կըկին անդամ, ևա կներկայացնի միլիօնուոր ապացոյց ի հաստատում իր մաքի:

(Ստորագր.) Գիրու.

№ 89. Մեծ Վէգիրի գրութիւնը, տրուած կ. Պօլսի ուսաց Դեսպանին: (Թարգմանութիւն). 13 հոկտեմբերի 1913 թ.

Յանկանալով ձեռնարկել բարենորոգութեանը, որոնց անհրաժեշտութիւնը զգալի է ամբողջ Կայսրութեան մէջ, Կասավարութիւնը անյապաղ իրագործելու և այս առթիւ մշակուած օրէնքները և կանոնները, որոնց գործադրումը յիշածուած էր բարկանհան դէպքերի պատճառով:

Անհրաժեշտ բարենորոգութեարի շուտափոյթ ներմուծման համար Կառավարութիւնը յոյս ունի ամենաընդգարածով կերպով օգտուելու մեծ պետութիւնների բազմիցս խոսացած բարյական և նիւթական օժանդակութիւնից և զիմելու է նրանց խնդրելով առաջարկել իրեն անձնաւորութիւններ, որոնց աջակցութեան կարիք նա զուում է, գտնելով այդ բանը կարենը իր ձեռնարկած վերածնութեան գործի համար: Նորին Մեծութեան Սուլթանի կառավարութիւնը վճռել է ամէն միջոց ձեռք առնել որպէս զի այդ թանկազին աջակցութիւնը զարձնի աւելի իրական և արգասաւոր, միաժամանակ խստօքէն դիմելով, որ ոչ մի կերպ, ոչ մի ձեռլ վեստուած չլինի Նորին Մեծութեան Սուլթանի վեհապետական իրաւունքը և պետութեան անկախութիւնը:

№ 90. Արտաքին գործոց Նախարարը Դեսպանին Գերմանիայում.  
Ս. Պետերբուրգ, 14 հոկտեմբերի 1913 թ. (հեռաղեր).

Համամիտ ենք կ. Պօլսի մեր Դեսպանին՝ Վանդենհայմին յայտնած մըտքի հետ, որով հայկական բարենորոգութեանը ծրագրի ընդունումը Պառն կողմից մենք կպայմանաւորէինք <sup>40</sup> յաւելման համաձայնութեամբ միմիայն այն դէպքում, եթէ Գերմանիան էլ առաջարկի այդպիսի պայման:

Բարեհաճեցէք հարցնել Ցիմերմանին, արդեօք հնարաւոր է գտնում նա մեր Դեսպանների միաբան ցուցութեալ կ. Պօլսում:  
(Ստորագր.) Սաղօնօվ.

№ 91. Դեսպանը Տաճկառանում՝ Արտաքին գործոց Նախարարին.  
կ. Պօլս, 16<sup>12</sup> հոկտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Սայիդ Խալիմը, բացատրուելով երէկ ինձ հետ հայկական հարցի առ-

թիւ, առաջ բերեց միմիայն մի փաստ ի համատառում իր այն մաքի, որ  
եւրոպական խորհրդականներին կարելէ տալ հայկական սեկտորներում  
իհակատար իրաւունք. Նա մատնացոյց արաւ անդղիական խորհրդականի  
վրայ, որը ինքնակամ կերպով կառավարում է օսմաննեան մաքսատները,  
չնայելով որ նա միմիայն անուանացէս է ենթարկուում տաճկական մաքսա-  
յին կառավարչին: Այսու ամենայնիւ նա յամառ կերպով պնդում էր, որ  
Դուռը չի կարող ընդունել եւրոպայի մասնակցութիւնը Ընդհանուր Վերա-  
տեսչի նշանակման հարցում: Նա համաձայնուում էր միայն Ընդունել եւրո-  
պական խորհրդականներին տաս տարուայ ժամանակամիջոցով մի պայմա-  
նով, որ Դուռը առաջարկութեան ինզորով զիմի ոչ թէ բոլոր մեծ պետու-  
թիւններին, այլ նըսանցից մի որևէ մէկին: Նա պատրաստականութիւն յայս-  
նեց գիմել թէկուզ Ռուսաստանին՝ ինզորելով երկու հայկական սեկոորնե-  
րի համար երկու խորհրդական: Առանարարկ Մեծ Վէզիրը այժմս աւելի պա-  
կաս, զիջողութիւն է ցոյց տալիս, քան մեր բանակցութիւնների սկզբում:  
Դուցէ նա անձամբ աւելի զիջողաբար վարուէք, եթէ ենթակայ չինէր ե-  
րիտասարդ Շուրքերի Կտրիննեաի խիստ հակողութեանը, որը զործում է իր  
ղեկավարների շօվինիստական զգացմուների ազդեցութեան տակ: Մեր  
բացատրութիւնների ժամանակ ես պնդում էր մեր վեց կէտերի վրայ, ա-  
ւելացնելով որպէս իմ անձնական ենթարկութիւնը, որ գուցէ ինձ հասկա-  
նալի թարար, եթէ տաճիկները իւրաքանչիւր սեկտորի համար ինզորէին մեծ  
պետութիւններից ոչ թէ մէկ Ընդհանուր վերատեսուչ, այլ երեք թէկնա-  
ծուներ, որոնցից Դուռը կնշանակէր մէկին: Բայց իմ այդ ենթարկութիւնը  
չբաւարարեց Մեծ Վէզիրին: Մեր խօսակցութեան վերջում ես յայտնեցի,  
որ նրա հակաճառութիւնների մասին կհաղորդեմ կայսերական նախարարու-  
թեանը, թէն հաւատացած եմ, որ նրանք համոզիցուիչ չեն թւալու:

Պատճէն ուղարկուում է Բերլին: (Ստորագր.) Գիրու.

№ 92. Գնապանը Տաճկաստանում Արտաքին գործոց Նախարարին.

Կ. Պոլիս, 16<sup>1</sup>, հոկտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Երիտասարդ Շուրքերի Կոմիտեի գլխաւոր զործիները, որնց հետ  
ես առիթ ունեցայ այս օրերս խօսելու, յայտնեցին ինձ նոյն կարծիքները,  
ինչպիսիք երեկ յամառութեամբ պաշտպանում էր Մեծ Վէզիրը: Այդ հան-  
գամանըը պարզ ապացոյց է, որ վերջինս զործում է նրանց ազդեցութեան  
տակ: Բացի այդ ես եկայ այն կարծիքին, որ նրանք աշխատում են մեծ  
պետութիւններին դնել կատարուած փաստի առաջ, նշանակելով Հայաստա-  
նի համար տաճկաճպատակ Ընդհանուր վերատեսուներ, իսկ յետոյ ինզորէ  
միայն առաջարկելու իրենց եւրոպական խորհրդականներ, Ըստ երկոյթին,  
ծրագրուած թէկնածուներից մէկը Խալաջեան անոնով հայն է, ճանապարհ-  
ների հաղորդակցութեան նախկին նախարարը, զէպի որը հայերը վերաբե-  
ռում են խիստ անվտան: — Թալաաթը բացի այդ յայտնեց ինձ, որ նա մտա-  
զիր է Թրակիայի զօրքերից լուսորել եօթ հազար լատոյն զինուոր և երկու  
հայկական սեկտորների հօթ վիւայէթների համար կազմակերպիլ նրանցից  
ժամանակարին: Նա հաւատացած է, որ այս ձեռով կարող է պաշտպանել  
հայերին քրդերի բռնութիւններից: Ընդհանրապէս վերցրած, երիտասարդ

տաճիկները աշխատում են թաղել հայկական հարցը, համարելով նրան Տաճկաստանի ներկայ դրութեան համար ամենավառպատոր հարցերից մէկը և երկիրդելով, որ հայերին արած ամէն մի զիջողութիւն կարող է առաջ բերել արաքների համապատասխան պահանջը, ես հակաճառեցի, ասելով՝ թէ հայկական հարցով մենք գրադում ենք այն պատճառով, որ իրաւունք ունենք համաձայն Միջինի դաշնագրի և այն հիման վրայ, որ անհրաժեշտ ենք համարում երաշխառորելու հայերի ապահայ գոյութեան պահանջով թիւնը: Միջիայն երրոպական երաշխառորութիւնը կարող է սահմանել խաղաղութիւն հայերի մէջ և այդպիսով ամրապնդել Տաճկաստանի ներքին անդորրութիւնը:

(Ստորագր.) Գիրս.

№ 93. Դեսպանը Գերմանիայում Արտաքին գործոց Նախարարին.

Բերլին, <sup>18</sup><sub>31</sub> Հոկտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Ցիմմերմանը յայտնեց ինձ, որ համաձայն նրա տեղեկութիւնների Վանդենհայմը Գիրսի հետ շարունակում է միարանօրէն գործել հայկական բարենորոգութիւնների հարցում: Մեծ Վէզիրը, ըստ կենոյթին, ցոյց է տալիս որոշ զիջողութիւն, բայց չի ընդունում ընդհանուր վերատեսուչների նշանակումը համաձայնութեամբ մեծ պետութիւնների, այլ նրա փոխարքն առաջարկում է իրաւունք տալ մեծ պետութիւններին, որ նրանք իրաքանչիւր Վերատեսչներից նշանակին մի խորհրդական: Վերջիններս կընտրուին այն պետութեան համապակներից, որ կորոշեն բոլոր մեծ պետութիւնները: Այս զէպրում ընդհանուր վերատեսուչները պարտաւոր կինէին հնթաքիուելու իրենց խորհրդականների կարծիքին, որոնք հաստատուած լինելով հինգ տարուայ ժամանակով, հնարաւորութիւնն կունենային վերանորոգելու իրենց իհազորութիւնները ոչ աւել քան երկու անգամ: Խնչպէս մեր, նոյնպէս և Գիրմանական Դեսպանը կտրծում է, թէ ոչտր է շարունակել պնդել որպէս զի Դուը ընդունի նրանց մշակած ծրագիրը: Բայց եթէ այդ բանը յաջողութիւն չգտնի, ծայրահեղ զէպրում Գիրմանական Դեսպանը հնարաւոր է տեսնում ընդունելու Մեծ Վէզիրի առաջարկութիւնը: Նոյն կարծիքին է նաև Ցիմմերմանը: Ես հակաճառեցի նրան, որ գործնական կեանքում ընդհանուր վերատեսուչների հնթարկումը իրենց խորհրդականների կարծիքին կարող է ապարդիւն մնալ և պատասխանեց ինձ, որ եթէ խորհրդականներին նշանակինք մենք, այն ժամանակ մեծ պետութիւնները միշտ հնարաւորութիւն կունենան լուրջ ճնշում գործ գնելու դառն վրայ: Այս կարծիքի հետ ես չէի կարող համաձայնուել, Միը Կ. Պօլսի Դեսպանի հեռապիրը չի հաստատում Վանդենհայմի լաւատեսութիւնը:

(Ստորագր.) Սպերբենվ.

№ 94 Դեսպանը Գերմանիայում Արտաքին գործոց Նախարարին

Բերլին, 19 Հոկտեմբերի 1 նոյեմբերի 1913 թ. (հեռագիր).

Ցիմմերմանը յայտնեց ինձ, որ համաձայն Կ. Պօլսի Գիրմանական Դեսպանի կարծիքի, Գիրմանիան  $4^0/0$  հարցում չափից դուրս կապուած լինելով Տաճկաստանի հետ, չի կարող առաջարկել նրան պայմաններու

Ստատու-Սեկրետարի Օգնականը ինձ ասաց, որ ի նկատի ունենալով այս հանգամանքը, ցանկալի չէ այդ առթիւ նոր առաջարկութիւն անել Տաճ-կաստանին, բայց ևս հակածանեցի՝ գտնելով, որ հայկական բարենորդում-ները այնքան ժօտ են Ռուսաստանի շահերին որ մենք դուցէ անհրաժեշ-տորին ստիպուած լինենք մի որևէ է ճնշում գործ զնել Տաճկաստանի վրայ: Ցիմմերմանը շարունակում է պնդել, որ մեզ կյաջողութ մացնել անհրաժեշտ բարենորդումները՝ առանց որևէ առանձին ճնշման զործարման: Բայց այդ նա խոստացաւ Զավիդի հետ ունիցած իր խօսակցութիւնների ժամանակ յարտնել նրան, որ մաքսային յաւելման համաձայնութիւնը Գերմանիան տալիս է պայմանով, որ Տաճկաստանը ընդունի մեզ հետ մշակած ծրագիրը: Մակայն, այդպիսի շեշտումն միմիտայն այն ժամանակ Զավիդի վրայ կթող-նէր ապաւորութիւն, եթէ նա կատարուած լինէր եռանդուն և պարզ կեր-պովէ, որում ես կասկածում եմ:

(Ստորագր.) Սվերբենի.

Հ 95. Արտարին գործոց Նախարարը Դիսպանին Տաճկաստանում.

Ա.Պետերբուրգ, 20 հոկտեմբերի 1913 թ. (հետագիր).

Եթէ տաճիկները մեծ նշանակութիւն են տալիս Սուլթանի հեղինակութեան արտաքին պահպանմանը, այն ժամանակ կարելի է նրանց յատկաց-նել Վալիի կամ Սուլթանի Տեղակալի նշանակման իրաւունքը իւրաքանչիւր սեկտորի համար առանձին, կամ երկուսի համար միասին միայն մի պայ-մանով, որ նրա իշխանութիւնը ունենայ լոկ անուանական բնոյթ, իսկ ընդ-դանուր վերատեսնչերը իրենց ձեռքում կենտրոնացնեն ծրագրում ենթա-հրուած բոլոր իրաւունքները:

Մենք զիջել կարող ենք ըստ ձեր, բայց ոչ ըստ էութեան:

(Ստորագր.) Սագոնօվ.

Հ 96. Դիսպանը Գերմանիայում Արտարին գործոց Նախարարին.

Բերլին, 25 հոկտեմբերի 17 նոյեմբերի 1913 թ. (համակ.).

Ես արդէն պատիւ ունիցայ յայտնելու Զերդ Բարձր Գերազանցութեանը, որ Արտաքին գործոց Դիսպատամենտի Կառավարիչը անձամբ լիո-վին հաւանութիւն տուից Զեր մտքին՝ պայմանաւորել չորրորդամայր մեր համաձայնութիւնը նրանով, որ Տաճկաստանը ընդունի հայկա-կան բարենորդումների վերաբերմամբ մեր մշակած ծրագիրը, բայց աւել-լացրից և այն, որ համաձայն Վանգենհայմի կարծիքի, Գերմանիան արդէն յիշեալ յաւելման հարցում այնքան է կապուած Դռան հետ, որ հնարաւո-րութիւն չունի այլևս նոր պայմաններ առաջարկելու:

Ազի առաջ ունենալով այս հանգամանքը, Ցիմմերմանը, որ համամիտ է Զերդ Բարձր Գերազանցութեան հետ մեր միաբան զործունէութեան ան հրաժեշտութեան տեսակէտում, յայտնեց ինձ, որ նրա կարծիքով այժմս պէտք է խուսափել Դռանը նոր ցուցումներ տալուց: Այս մոքի հետ, սա-կայն, ես լիովին չհամաձայնուեցի: Ինչպէս Զեր յայտնի է, ես հականառեցի

նրան հետևեալով, որովհետեւ հայկական բարենորոգութերի հարցը վերին աստիճանի մեծ նշանակութիւն ունի Ռուսաստանի համար, մեղանում գուցէ անհրաժեշտ գտնեն մի որեկցէ ճնշում գործ զնել Տաճկաստանի վրայ:

Լսելով իմ կը ռազմատութիւնները այն մասին, որ Գուռը ակնյայտի չի համաձայնուի ընդունելու մեր ծրագիրը ամբողջովին, Ստատու-Սեկրետարի Օգնականը թէ շարունակում էր պնդել, որ գուցէ մեզ յաջողուի պարտաւորացնել Տաճկաստանին՝ առանց ճնշման գործադրման, այնուամենայնիւ խոստացաւ յարմար գէպքում յայտնել Զավիդ-Բէյին, թէ Գերմանիայի համաձայնութիւնը մաքսային յաւելման վերաբերմամբ տրւում է պայմանով, որ Օսմանիան Կառավարութիւնը ընդունի մեզ հետ միաբանօրէն մշակուած բարենորոգութերի ծրագիրը:

Անցեալ երեքշարթի Ծիմմերմանը յայտնեց ինձ իր՝ Զավիդ-Բէյի հետ ունեցած առաջին խօսակցութեան բովանդակութիւնը այս առթիւ: Ցիմմերմանը, իրը թէ ամենահասնդուն կերպով մատնացոյց է արել, որ հանուր Եւրոպայի և նոյն իսկ իրման Տաճկաստանի շահերի տեսակէտից անհրաժեշտ է չհականակել Հայաստանի համար բոլոր ծրագրուած բարենորոգութերի ներմուծմանը:

Զավիդի այն հականառութեան, թէ ծրագիրը խախտում է Տաճկաստանի վիհապետութիւնը և եթէ չլինէին Ռուսաստանի որոգայթները Հայաստանում, այն ժամանակ ինը Տաճկաստանը հեշտորէն կարող էր ներմուծել բոլոր անհրաժեշտ բարենորոգութերը—Ծիմմերմանը իրը թէ պատասխանենէ, որ Ռուսաստանի որոգայթների մասին խօսք չի կարող լինել, իսկ բարենորոգութերի հարցը՝ շնորհիւ Կովկասում ապրող բազմաբանակ հայ բնակչութեան, Ռուսաստանի համար ունի առաջնակարգ նշանակութիւն և այդ պատճառով հասկանալի է, որ Կայսիլուական Կառավարութիւնը հարաւոր չի գտնում մացնելու որևէ փոփոխութեր խորը մտածուած և մշակուած ծրագրի մէջ:

Իրը թէ հաւասարիացնելով նրան, որ Ռուսաստանը և Գերմանիան այս գէպքում միանգամայն համերաշխ են, Արտաքին գործոց Դեպարտամենտի Կառավարիչը յայտնել է Զավիդ-Բէյին, որ համաձայն Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի, Տաճկաստանը ինը պարտաւորուել է ոչ թէ միայն մոցնել բարենորոգութեր, այլ և ենթարկել նրանց եւրոպական վերահսկողութեան:

Իմ հարցիս, յիշեցրել է նա արդեօք այն կապի մասին, որ գոյութիւն ունի բարենորոգութերի և 40% յաւելման հարցերի մէջ, նա պատասխանեց, որ առայժմ գերադասեց սահմանափակուել վերոյիշեալով, բայց իր երկրորդ խօսակցութեան մէջ լինելու է աւելի կտրական:

Սակայն, ես կասկածում եմ իմ խօսակցի լիակատար անկեղծութեան մասին և երկիր իմ կրում, մի գուցէ նրա ասածները Զավիդ-Բէյին շինեն բաւականին պարզ և եռանդուն:

Ես առիթ ունեցայ տեսնուելու Զավիդի հետ և յայտնելու նրան իմ համոզմունքը, որ գիտակցելով բարենորոգութերի անհրաժեշտութիւնը, Տաճկաստանը իր սեփական շահերի տեսակէտից չի հրաժարուի ընդունելու մեր մշակած ծրագիրը, Բայց այդ ես յայտնեցի նրան, որ ոչ թէ միայն Ռուսաստանը, որը իր սահմաններում մի միլիօնից աւել հայ բնակչութիւն ունի, այլ և ամբողջ Եւրոպան սաստիկ շահագրգոռուած է բարեկարգուած տեսնել այն բէժիմը, որպիսին ներկայում գոյութիւն ունի Հայաստանում:

Այս բանին Զավիդ-Բէյը հակածառեց ինձ. նա գանում է, որ հայկական հարցը Տաճկաստանի հիմնական հարցերից մէկն է, որ մեր ծրագիրը խախտում է նրա անկախութիւնը և որ Դուռը արդէն անշեղ վճռել է մացնել Հայաստանում ամենալայն բարենորոգութերը: Մեր հայեացքների տարբերութիւնը, շարունակեց Զավիդ-Բէյը, կայանում է նրանում, որ մենք ինքներս ենք ցանկանում նշանակել երկու ընդհանուր վերատեսուչներին—մի բան, որը Տաճկաստանը, որպէս նրա վեհապետութիւնը խախտող, երբէք չի ընդունի, այն ինչ Դուռը առաջարկում է մեզ իր ընտրութեամբ նշանակել նոյն ընդհանուր վերատեսուչներին մեծ պետութիւնների որի է մէկի հպատակներից: Զավիդի այս ասածը, ինչպէս Դուռը անձամբ տեսնում էր, չի համապատասխանում մեր Կ. Պօլսի Դեսպանի այն տպաւորութեամբ, որ նա սուցել է իր խօսակցութեան ժամանակ երիտասարդ թուրքերի կօմիտէտի գլխաւոր գործիչների հետ:

Իմ բերած փաստերից ոչ մէկը համեզեցուիչ չթւաց խօսակցիս, որին ես, ի միջի այլոց, յայտնեցի, որ Տաճկաստանի համար լուրջ նշանակութիւն ունեցող ներկայ մօմենտում, երբ ինք Դուռը լիակատար ամբողջութեամբ յարուցել է մեծ պետութիւնների հետ ունեցած իր տնտեսական յարաբերութիւնները, որոնք ընդգրկելով նրա ամենակենսունակ շաները, վերին աստիճանի զարգարութիւնների պատճառ են գառնում Երրորդայի համար: Տաճկաստանը պիտի ցոյց տայ մեծ զիջողութիւն և չդիմացրի մեր ցանկութիւններին:

Զավիդ-Բէյը աշխատում էր համոզել ինձ, որ եթէ մինչեւ այժմս չի յաջողուել Հայաստանում բարենորոգութեր մտցնել, դրա պատճառը Արզուլ-Համբդեան ըլֆիմն էր: Ներկայ կառավարութիւնը, նրա ասելով, այնքան ամրացել էիր վերջին յաջողութիւններից յետոյ», կարող է ներմուծել բոլոր անհրաժեշտ և ցանկալի բարեփոխութերը: Այդ մասին իմ յայտնած կասկածին Զավիդը աւելացրեց, որ առաջիկայ ընտրութիւնները անկասկած կհաստատին նրա խօսքերի հշմարտութիւնը:

Անդիմական Դեսպանը, որի հետ ես երեկ պատահեցի Արտաքին գործոց Դեպարտամենտի Կառավարչի մօտ, յայտնեց ինձ, որ համաձայն Մէր Էզվարդ Գրէյի պատուէրի, նա ցանկութիւնը յայտնեց Ցիմմերմանին, որ Գրէմանիան Ռուսաստանի հետ ի մի ճնշում գործ դնեն Տաճկաստանի վրայ, որպէս զի նա ընդունի բարենորոգութերի ծրագիրը:

(Սարուագոր.) Սվերբենի.

№ 97. Արտաքին գործոց Դախարարի Տեղակալը Դեսպանին Տաճկաստանում.  
Ա. Գետերբուրգ, 26 հոկտեմբերի 1913 թ, (հետագիր).

Գերմանական Համարմատարը, ստանալով Վանդինայմից տաճկաստան պատասխանագիրը, աշխատում էր պատշտպանել տաճիկների կէտերը հայկական հարցի մասին:

Ես պատասխանեցի, որ տաճիկների գրաւոր հաղորդագրութիւնը առայժմս մեզ յայտնի չէ և մենք չենք կարող հրաժարուել ապահովութիւնների էռութիւնից: բայց եթէ այդ ապահովութիւններին մի որևէ է ձևով պաշտպանութիւն տրուի, որով միևնույն ժամանակ տաճիկների ինքնասիրութիւնը վերաւուած չկինի, մենք չինք հրաժարուի նրանց քննութեան ընդունելուց:

Սելլուրների վերատահսչի նշանակուումը Սուլթանի անձնական իշխանութեամբ  
մինք կարող էինք ընդունել միայն այն գեղգում, եթէ յիշեալ վերա-  
տահսչի իրաւունքը լինէր լոկ անուանական և եթէ իրական իշխանու-  
թինը ու ամբողջ իրաւասութիւնը պատկանէր մեծ պետութիւններից նշանակ-  
ուած օտարերկրացի ընդհանուր վերատահսուներին կամ խորհրդականներին:

Դուք կարող եք յայտնել Զեր Գերմանական Ընկերոջը, որ եթէ Գեր-  
մանիան զուտ տեխնիբական պատերազմական գործում անհրաժեշտ է զըս-  
նում ապահովութիւն պահանջնելու իր վարպետների ծրագիրների իրագոր-  
ծման համար, նա առաւել քան մի ուրիշ պետութիւն պարտաւոր է հաս-  
կանալ և պաշտպանել այն տեսակէտը, որ մեզ համար ևս հայարնակ վի-  
լայէների բաղադրակիտական հարցում ապահովութիւններ են հարկաւոր:

(Ստորագր.) Ներատով.

#### № 98. Դեսպանը Տաճկաստանում Արտաքին գործոց Նախարարին.

Կ. Պոլս, 26 հոկտեմբերի—8 նոյեմբերի 1913 թ. (հետագիւ).

Երէկ Սայիդ Խալիլ Փաշան յանձնեց ինձ մի զրութիւն, որը իր թէ  
ճշտիւ որոշելու է, որ եւրոպական խորհրդականների (այլ ոչ թէ ընդհա-  
նուր վերատահսունների) նշանակման դէմքում, իշխանութիւնը կենարօնա-  
նալու է խորհրդականների ձեռքում: Ուղարկում եմ Զեղ այդ հեռագիրը  
№ 1-ով: Համաձայնութեան կայացման համար նա որոշ առաւելութիւն  
ունի, քայլ անկասկած կարօտ է էական փոփոխութիւնների: Եթէ Զերգ  
Գերազանցութիւնը թոյլ տայ, ես երկուշարթի օր Մեծ Վէզիրի հետ կախեն  
մտելումական բացատրութիւններ այն փոփոխութիւնների առթիւ, որոնց մասին  
յիշել եմ № 2 հեռազրում:

(Ստորագր.) Գիրս.

#### № 99. Դեսպանը Տաճկաստանում Արտաքին գործոց Նախարարին.

Կ. Պոլս, 26 հոկտեմբերի—8 նոյեմբերի 1913 թ. (հետագիւ № 1).

I. Իւրաքանչիւր Ընդհանուր-Վերատահսչին կից սահմանում է 10 տա-  
րով օտարերկրացի Խորհրդական, որ պիտի ունենայ տեխնիքական կըր-  
թութիւն:

II. Խորհրդականը համարում է Ընդհանուր-Վերատահսչի աշխատակից  
ինչպէս վերասկզբութեան հարցում, նոյնպէս և այն ընդհանուր բարենո-  
րոգութեանը վերաբերմամբ, որոնք պատկանում են Ընդհանուր-Վերատահսչի  
իրաւասութեանը Խորհրդականին անմիջապէս ենթակայ են Ընդհանուր-  
Վերատահսչութեան շրջանի վարչական բաժանմունքների վերատահսունները:  
Խորհրդականը նախագահում է վերասկզբութեան և բարենորոգութեանը  
Յանձնաժողովում, որ բաղկանում է այդ վերատահսուններից:

III. Խորհրդականը քննում է վերատահսունների զեկուցութեանը և  
յանձնում է կամ Ընդհանուր-Վերատահսչին անմիջապէս կամ ըննութիւնից  
յետոյ մտցնում է վերասկզբութեան Յանձնաժողովը Նա նոյնպէս յայտնում  
է իր կարծիքը այդ զեկուցութեան առթիւ:

IV. Ընդհանուր-Վերատահսունը գործազրում է յիշեալ յանձնաժողովի

որոշութերը և վերատեսուչների զեկուցութերը՝ տրուած Խորհրդական-ների միջոցով՝ համաձայն յանձնաժողովի իրաւասութեան սահմանների Ուրիշ հարցերի վերաբերմամբ նա դիմում է Նախարարութեանը:

Վ. Ընդհանուր-Վերատեսուչի և խորհրդականների մէջ ծագած վէճերը պիտի ներկայացնել Մեծ Վէզիրաթ, Նախարարների Խորհրդը քննում է վճռում է վէճը.  
(Ստորագր.) Գիրս.

100. Դեսպանը Տաճկաստանու Արտարին զործոց Նախարարին.  
Կ. Պոլիս, 26 հոկտեմբերի 8 նոյեմբերի 1913 թ. (հեռագիր № 2).

**Տաճկական ծրագրի ուղղումը.**

I. Բարձր Դուռը խնդրում է մեծ պետութիւններին առաջարկել իրեն երկու խորհրդական որպէս Ընդհանուր-Վերատեսուչների օգնական: Ընդհանուր-Վերատեսուչները համարւում են Արևելեան Անասուլիայի երկու սեկտորների գլուխ Դուռը մտադիր է պայման կապել Խորհրդականների հետ և 10 տարուայ ժամանակամիջնում կզիմի մեծ պետութիւնների աջակցութեանը ամէն անգամ, երբ այդ պայմանները կկորցնեն իրենց ոյժը:

II. Դուռը ճանաչում է, որ Ընդհանուր-Վերատեսուչները և Խորհրդականները միաբան իրաւունք ունեն նշանակիւու և արձակելու իրենց սիկուրի բոլոր պաշտօնեաներին և զատաւորներին:

III. Դուռը մշակում է հրանազնութեան գալով Դեսպանատաների համար, համաձայնութեան գալով Խեսպանատաների հետ:

IV. Ընդհանուր-Վերատեսուչները իրագործում են իրենց իրաւունքները, համաձայնութեան գալով Խորհրդականների հետ: Ընդհանուր-Վերատեսուչի ոչ մի հրամանը չի կարող իրագործուել, ևթէ նա տրուած է առանց Խորհրդականի համաձայնութեան: Ընդհանուր-Վերատեսուչների և Խորհրդականների մէջ ծագած տարածայնութիւնները Դուռը վճռում է՝ համաձայնութեան գալով Դեսպանատաների հետ:

V. Այդ երկու սեկտորների իւրաքանչիւրի մէջ կազմակերպում է ընտրողական ժողով, որի անդամները հաւասար թւով բարձրանում են մահմեդականներից և քրիստոնեաներից:

VI. Ցիշեալ հաւասարութեան սկզբունքը պահպանում է իր նշանակութիւնը երկու սեկտորների բոլոր պաշտօնների զատաւորման հարցում:  
(Ստորագր.) Գիրս.

№ 101. Արտարին զործոց Նախարարութիւնի Նախարարի Օգնականը Դեսպանին Տաճկաստանու Տաճկաստանու.

Ա. Պետեր Պետերի 26 հոկտեմբերի 8 նոյեմբերի հեռագիրին:

Արդիօք երկիւղ չէր կրում այն բանից, որ տաճկական վերատեսուչի և երրողական խորհրդականի մէջ տարածայնութիւնները կարող են պատահել շատ յաճախ Դիմել ամեն անգամ. Դուանը և Դեսպանատաներին, դա նշանակում է ստեղծել այնպիսի մի մարմին, որը հազիւ թէ համապատասխանէր երկրի կառավարելու նպատակներին, որովհետեւ Դեսպանատաների մէջ հա-

մերաշխութիւն հաստատելը շատ հեշտ չէ, իսկ այս վերջին դէպքում հանգամանքներից կօգտուեր միմիայն Դուռը, ինչպէս որ նա օգտուել է միշտ Այսպիսի պայմաններում ձեզք բերուած աղանովութիւնների նաև նակութիւնը կհաւասարուի զրոյի, որով մեծ պետութիւնների, նամանաւանդ Ռուսաստանի հեղինակութիւնը հայերի աչքում կթուլանայ:

Ամենալաւը կլինէր այն, եթէ Ընդհանուր-Վերատեսչին պատկանէր ընդհանուր վերահսկողութիւնը և իրաւունք տրուեր բողոքելու խորհրդականի որոշումների դէմ, իսկ խորհրդականը ճանաչուեր որպէս գործադիր իշխանութեան ներկայացուցիչ: Խորհրդականի այն որոշումները, որոնք բողոքի են ենթարկուած, պէտք էր ներկայացնել Դեսպանատների և Դուռն միաբար հայկացութեանը և որոշ ժամանակ—օրինակ, երկու շաբաթ անցնելուց յիտոյ, ճանաչել նրանց ընդունուած այն դէպքում, եթէ համաձայնութիւն չկայանար, Մայրայի դէպքում, եթէ ճշտիր անհնարին վինէր զտել Ընդհանուր - Վերատեսչի վերահսկողական իրաւունքը խորհրդականի գործադիր իշխանութիւնից, և բարեկայի յօւուածի վերջնական խօսքերից յիտոյ պէտք էր աւելացնել: Եթէ երկու շաբաթուայ ժամանակամիջոցում հաշուելով Խորհրդականի զեկուցման ստանալու օրից, Դուռն և Դեսպանատների մէջ համաձայնութիւն չկայանայ, Խորհրդականի կարծիքը ունենալու է վերջնական վճռի նշանակութիւն»:

(Ստորագր.) Ներատօվ.

№ 102. Դեսպանը Տաճկաստանու Արտաքին գործոց նախարարին.

Կ. Պօլիս, չ/16 նոյեմբերի 1913 թ. (հեռագիր).

Մեծ Վէղիբը համաձայնուեց իր 26 հոկտեմբերի ներկայացրած տաճկական ծրագրի մէջ մտցնել հետեւել ուղղումները. Կէտ 1. Դուռը պարտաւորում է դիմիլ միծ պետութիւններին՝ խնդրելով առաջարկել իրեն օտարեկրացի խորհրդականներ: Կէտ 6. Ընդհանուր Վերատեսչը չի կարող զիմել ոչ մի վարչական միջոցի՝ առանց Խորհրդականի նախնական համաձայնութեան, Այն հարցերը, որ տարածայնութիւնների առիթ են տուել, պիտի ներկայացնել Մեծ Վէղիբին, որը գործին տալիս է համապատասխան ընթացք: Բայց եթէ մի ամսուայ ժամանակամիջոցում վիճելի հարցը չվճռուի, Խորհրդականի կարծիքը վճռողական է համարում: Են խոստացայ այդ ուղղումների մասին հաղորդել Կայսերական Նախարարութեանը, մատնանշելով սակայն, որ շարունակում եմ անդել մեր վեց կտտերի վրայ, Թէկ Սայիդ Խալիֆի զիջուղութիւնները պաշտօնական բնոյթ չեն կրում, այսուամենայիւ ինձ թւում է՝ նրանք հիմք են տալիս յուսալու, որ նարաւոր կլինի կայացնել մի համաձայնութիւն, որը ընդունելի լինէր և տաճիկների և հայերի կողմից:

(Ստորագր.) Գիրս.

№ 103. Դեսպանը Դերևանիայում Արտաքին գործոց նախարարին.

Բերլին, չ/16 նոյեմբերի 1913 թ. (հեռագիր.)

Խօսք չի կարող լինել մեր և Գերմանիայի միաբան գործունէութեան մասին Կ. Պօլում վերաբերմաք հայկական բարենորոգումների և մաքսագին

յաւելման հարցերի կապի, որովհետև Տիմմերմանի իրը թէ եռանգուն յիշեցած մանը Զաւիդը պատասխանել է, որ յաւելման համաձայնութիւնը Գերմանիան արդէն տուել է և այդ պատճառով Բերլինի Կարինետը չի կարող նոր պայմաներ առաջարկել:

(Ստորագր.) Սվերբենվ.

№ 104. Արտաքին գործոց Նախարարը Դեսպանին Տաճկաստանում.

Ա. Պետերբուրգ, 5 նոյեմբերի 1913 թ. (Հեռագիր).

Զեր 3/16 նոյեմբերի հեռագիրը ստացուած է, Դիմում եմ Ներատօվի 28 Հոկտեմբերի հեռաղրին:

Կարծում ենք, որ դիւրութիւններ տալով Դամնը մեր ծրագրի ընդունման համար, մենք արել ենք ամենավերջին զիջումը և կզմուարանայինը առաջարկել նորը: Մեզ թում է, որ վերաբերմամբ խորհրդականի որոշումների բոլորի, մի ամսուայ ժամանակամիջոցը շատ գէպերի համար յարատե է և կիսանգարի գործի կանոնաւոր վարումը:

Պարբեցէք Զեզ յայտնի իմաստով:

(Ստորագր.) Սաղօնօվ.

№ 105. Արտաքին գործոց Նախարարը Դեսպանին Տաճկաստանում.

Ա. Պետերբուրգ, 9 նոյեմբերի 1913 թ. (Հեռագիր).

Թուրխան փաշայի միջոցով ես ստացայ Դամն հետևեալ հաղորդագրութիւնը.

Տողրուած լինելով Փաթը-Ասիայի բարենորոգումների ներմուծման հարցով, Օսմանեան կառավարութիւնը դիմեց զանազան մեծ պետութիւններին՝ ինդրելով այս նպատակի համար տալ իրեն որոշ քանակութեամբ փորձուած անձնաւորութիւններ, բայց ստացաւ մերժում՝ պատճառաբանուած նրանով, որ մեծ պետութիւնները անհրաժեշտորեն պիտի պայմանաւորուեն միմեանց հետ վերաբերմամբ բարենորոգումների հիմունքների—Դաւոր յայտնում է, որ կառավարիչները, որոնք չեն նշանակուած նրա կողմից, այլ հասաւատուած են մեծ պետութիւնների առաջարկութեամբ, իրեբեք չեն ունենայ բնակչութեան մէջ կարեոր հեղինակութիւն, այդ պատճառով խնդրում է չիսանգարել իրեն՝ հրաւիրելու անհրաժեշտ անձնաւորութիւններ երկրորդական պիտութիւնների հպատակներից:

Ես պատասխանեցի Դեսպանին, որ պնդելով հայաբնակ վիլայէթների բարենորոգումների վրայ, մենք դեկավարւում ենք միանգամայն հակառակ համոզմամբ, որով բացառապէս Դամն կողմից նշանակուած կառավարիչները չեն կարող ունենալ բնակչութեան մէջ հեղինակութիւն: Ես կըկին անգամ աւելացրի, որ մենք չենք ձգտում ոչ հողային նւաճումների և ոչ Առևլթանի պրէստիժի վարկաբեկմանը և զիջողութիւն ցոյց աւելինք ամէն մի պարագայում, որպէս զի չվիրաւորենք Տաճկաստանի ինքնասիրութիւնը, բայց այժմս մենք հասել ենք մեր զիջողութեան զարգթնակիւթիւն և այժմս նոր զիջութեան չենք անելու: Ես մասնացոյց արի Դեսպանին հայեցի խօսեմու-

թեան վրայ և այն հանգամանքի վրայ, որ մենք չենք կարող հրաժարուել ամենանւազ ապահովութիւնից:

Բարեհաճիցէք Զեր բացատրութիւնների ժամանակ յայտնել Մեծ Վէզպերին նոյնը, ինչ որ ես ասացի Դեսպաննեն, աւելացնելով որ մեր առաջարկութիւնների ընդունման ուշացումը կստեղծի Տաճկաստանի համար մի զըրութիւն, որը կսպանայ նրան լուրջ հետևանքներով; Եթէ հայերը կորցնեն իրենց դրութեան բարելաւման յոյսը, այն ժամանակ նրանք ստիպուած կլինեն դիմելու ծայրահեղ միջոցների, իսկ մենք բազմիցս նախազգուշացրել ենք Թուրքիային, որ գետի արդպիսի մի դրութիւն անտարըեր մաս չենք կարող:

(Ստորագր.) Սաղօնօվ.

Ա 106. Դեսպանը Տաճկաստանում՝ Արտաքին գործոց Նախարարին.

Կ. Պօլիս, 15 նոյեմբերի 1913 թ. (նամակ).

Ես արգեն պատիւ ունեցայ յայտնելու Զերդ Բ. Գերազանցութեան իմ նոյեմբերի 3-ի հեռագրով, որ Մեծ Վէզիրը հայկական հարցի առթիւ ինձ հետ ունեցած բացատրութեան ժամանակ մտցրեց Էակոն փոփոխութիւններ, բարենորոգումների ծրագրի յուշագրի մէջ: Մյդ յուշագիրը, որի հետ ես ծանօթացայ մասնաւոր կերպով, պէտք է ներկայացուի մեծ պետութիւնների Դեսպանատիւններին:

Մեծ Վէզիրի ծրագրին ես իմ կողմից առաջարկեցի նոր խմբագրութիւն, որը պարունակում է նրա հիմնական կէտերը և մացրի նրա մէջ ընդհանուր բնոյթ կրող մի բանի որոշումներ վերաբերմամբ նահանգական ժողովների կազմի և իրաւասութեան, պաշտօնների դասաւորման, զինուորական ծառայութեան, լեզուի, ուսումնարանների, հողային հարցի և արդարադատութեան:

Նոր խմբագրութիւնը ես յանձնեցի իշխան Սայիդ-Խալիֆին՝ խնդրելով հաղորդել ինձ թէ սա ինչքան է համապատասխանութ՝ նրա առաջարկութեանը: Բացի այդ աւելացրի, որ չընդունելով նրա ծրագիրը բաւարար այն դրութեամբ, որումնա զանւում էնրա կողմից ուղղուած խմբագրութեան մէջ, ես այնուամենայնիւ չեմ հրաժարուում հաղորդելու այդ ծրագրի բովանդակութեան մասին Զերդ Բարձր Գերազանցութեանը: Ընդունին ուղարկում եմ ծրագրը:

(Ստորագր.) Գիրս

Կ. Պօլսի սուսաց Դեսպանի 1913 թ. 15 նոյեմբեր նամակի յաւելումը.

(Թարգմանութիւն).

Յօդ. I. Բարձր Դուսը վճռել է դիմել մեծ պետութիւններին՝ խնդրելով առաջարկել իրեն երկու Խորհրդականներ, որոնք լինէին կից երկու Ընդհանուր Վերատեսուչներին: Վերջիններս նշանակում են Օսմանիան Կառավարութեան կողմից որպէս զլուխ Արևելեան Անատոլիայի երկու սելսորների, Ա) Երզրում, Տրապիզոն, Սիլվադ և Բ) Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբերքիր:

Բ. Դուսը ցանկութիւն է յայտնում կապել այս Խորհրդականների հետ պայման և միաժամանակ յայտարարում է, որ նա վճռել է տաս տարուայ ժամանակամիջոցում դիմել մեծ պետութիւնների աջակցութեանը ամէն անգամ, երբ այդ պայմանները կկորցնեն իրենց ոյժը:

Յօդ. II. Ընդհանուր Վերատեսչի և Խորհրդականի միահամուռ ձեռք առած միջոցները վերաբերմամբ վարչական, ֆինանսական և իրաւաբանական հարցերի, ունեն վճառղական նշանակութիւն և պիտի իրագործուեն այն քաղաքական և պատերազմական իշխանութիւնների միջոցով, որոնցից կախուած է նրանց զործադրումը:

Յօդ. III. Ընդհանուր Վերատեսուչները Խորհրդականի հետ միասին լիազօր են պաշտօնաղուրկ անելու իրենց սեկորդի բոլոր պաշտօնեաներին Այդ իրաւունքը նրանց պատկանում է համաձայն 1913 թ. յուլիս 1-ի Բ. Դառն շրջաբերական յուշագրին աւելացրած հրահանգների:

Խորհրդականի հետ միասին նրանը իրաւունքը ունեն նոյնակէս նշանակելու այն բոլոր պաշտօնեաներին և դատաւորներին, որոնց նշանակումը կայսերական Իրադէ չի պահանջում: Ինչ վերաբերում է պաշտօնեաներին և դատաւորներին, «որոնց նշանակումը պահանջում է Սուլթանի հաստատումը, Ընդհանուր Վերատեսուչները իրաւագօր են թեկնածուներ ներկայացնելու Նորին Մեծութեան Սուլթանի հաստատմանը»:

Յօդ. IV. Ընդհանուր Վերատեսուչների իրաւունքների և պարտականութիւնների հրահանգները, «որոնք աւելացրուած են Բ. Դառն 1913 թ. յուլիս 1-ի № 34233/75 շրջաբերական յուշագրին, բնութեան կառնուեն և Կյարմարուեն Բ. Դառն այն ցանկութիւններին, որ արտայառուած են այս յուշագրի մէջ»:

Յօդ. V. Խորհրդականը այն անմիջական հիմնարկութիւնն է, որին ենթարկուած են սեկտորի վերատեսչութեան մարմինները: Նա նախազանում է զիսաւոր վերատեսուչներից բաղկացած Վերատեսչական Յանձնաժողովում՝ այն բոլոր գէպերում, երբ յանձնաժողովը գումարելը անհամեշտ է զանում:

Յօդ. VI. Խորհրդականը բնուում է իր սեկտորի վիլայէթների գրութիւնը կամ անձամբ կամ իր ստորագիր վերատեսուչների միջոցով: Նմանապէս նա է բնուում բոլոր գէպերու և ընդհանուր կամ մասնաւոր բնոյթ կրող վարչական, ֆինանսական և իրաւաբանական հարցերը, որոնք կարող են ծագել Խորհրդականը ուսումնասիրում է վերատեսուչների կազմած հաշուեկիրը և յանձնում է Ընդհանուր Վերատեսչին կամ անմիջապէս կամ Վերատեսչական Յանձնաժողովում քննութեան ենթարկելով նրա այն մասերը, որոնց քննադատութիւնը յանձնաժողովում նա անհրաժեշտ է գտնում: Խորհրդականը պարտաւոր է յայնակել իր կարծիքը վերաբերմամբ այն հարցերի, որ բռվանդակում է հաշուեկիրը:

Յօդ. VII. Ընդհանուր Վերատեսուչը պարտաւոր է գործադրել վերատեսուչների հաշուեկիրը և Յանձնաժողովի այն որոշումները, որ առաջարկել և հաւանութիւն է տել Խորհրդականը:

Յօդ. VIII. Ընդհանուր Վերատեսուչը չի կարող ձեռք առնել վարչական, ֆինանսական և իրաւաբանական բնոյթ կրող ոչ մի միջոց՝ առանց Խորհրդականի նախական համաձայնութեան: Ընդհանուր Վերատեսչի և Խորհրդականի մէջ ծագած վէճերը պիտի ներկայացնել Մեծ Վէզիրաթ, որը տալիս է նրանց կարող ընթացք (համաձայնութեամբ Դիսպանատների): Եթէ տարածանութիւնը մի ամսուայ ընթացքում չլճառի, Խորհրդականի կարծիքը ունենալու է վճռողական նշանակութիւն:

Յօդ. IX. Հետևեալ հարցերը վճռուում են Խորհրդականի միջոցով անյապաղ և առանց Մեծ Վէզիրաթին դիմելու. 1) Որոշումներ, վերաբերմամբ օրէնքի

գործադրման, 2) որոշումներ, որ ընդհանուր բնոյթ չեն կրում և 3) շտառպղղական բնոյթ կրող հարցեր:

Յօդ. X. Ընդհանուր ժողովների և Կարչական Խորհրդների ընտրովի անդամները հաւասար թուզ ընտրում են մանմեդականներից և քրիստոնեաներից, հաւասարութեան նոյն սկզբունքը գործադրում է նաև երկու սեկտորի բոլոր հասարակական պաշտօնների զասաւորման հարցում:

Յօդ. XI. Ընդհանուր ժողովների օրէնսդրական և բիւզժէտային իրաւունքները ընդարձակուում են այն չափով, որը համապատասխանում է 1880 թ. օրինագծին:

Յօդ. XII. Իւրաքանչիւր սեկտորում բնակուղ զինուորները խաղաղ ժամանակ զինուորական ծառայութիւնը կատարում են տեղն ու տեղը համեղիական հեծելազօրը արձակուում է:

Յօդ. XIII. Օրէնքները, հրովարտակները և կառավարչական հազորդագրութիւնները իւրաքանչիւր սեկտորում յայտարարուում են տեղական լեզուներով: Իւրաքանչիւր ժամանաւոր անհատ խօսում է զատարանում և վարչական հիմնարկութիւններում իր մայրենի լեզուով: Դատավճիռները կազմուում են տաճկերին և իթէ հարաւոր է կողմերի լեզուի թարգմանութեամբ:

Յօդ. XIV. Իւրաքանչիւր ազգ իրաւունք ունի նոր հարկեր սահմանելու իր ուսութիւնարանների պիտոյքների համար: Այդ հարկերը պիտի հաւաքուեն յաւելիալ սահմանի մեջներից՝ ձևով:

XV Խորհրդականը նախագահում է նաև այն Յանձնաժողովում, որը զրադրուելու է հողային վէճերի քննադատութեամբ և հայերի հողերի վերապարձման հարցով:

XVI. Արդարագատութիւնը բարեփոխուելու է:

№ 107. Դեսպանը Տաճկաստանում Արտարին զրուց Նախարարին.

Կ. Պօլիս, 20 նոյեմբերի 1913 թ. (համակ).

Հայկական Պատրիարքարանի և Տաճկական Կառավարութեան յարարերութիւնները, որ լարուած են սկսած Պողոս Նուբար Փաշայի պատգամաւորութեան Եւրոպայում համբէս գալուց, վերջին ժամանակներս ստացել են աւելի սուր կերպարանք, նումանսաւանդ շնորհիւ առաջիկայ պարլամենտական ընտրութիւնների:

Ինչպէս յայտնի է, հայերը վերջին տաճկական պարլամենտում ունէին միմիայն 12 պատգամաւոր: Գտնելով, որ այդ թիւը չի համապատասխանուում կայսրութեան մէջ բնակուղ հայ ազգարնակչութեան թիւն, որը 2 միլիոնից վեր է, Պատրիարքը նոյեմբերի 15-ին զիմեց Արդարագատութեան Նախարարին մի թաքրիրով, որով հայերի համար պահանջում է համեմատական ներկայացչութիւն:

Համաձայն տաճկական ընտրողական օրէնքի, ասում է թաքրիրը, իւրաքանչիւր 50.000 արական բնակչութիւն տալիս է մի պատգամաւոր: Այդ հաշով հայ ազգը իրաւունք ունի տալու 20 ներկայացուցիչ: Բայց ընտրողական շրջանները կազմուած են այնպէս, որ հայ ազգը ոչ մի կերպով չի կարող ազգել ընտրութիւնների հետեւանքի վրայ: Այդ պատճառով Պատրիարքը խնդրում է, որ այժմեանից Դուռը ճանաչի հայ ժողովրդի իրա-

լունքը, որով հայ պատգամաւորների թիւը համապատասխան լինի ազգաւ ընակցւթեան թէին, իսկ այդ պատգամաւորներին ընտրեն միմիայն հայ ընտրողները:

Արդարագատութեան Նախարարը գտաւ յիշեալ թաքրիբը հակառակ պետական սահմանադրութեան և վերադարձրեց նրան Պատրիարքարան նոյեմբեր 7-ին, աւելացնելով նրան, սակայն, պատասխանող թասկարաւ Այդ թասկարայում Նախարարը պարզում է, որ Պատգամաւորների Ասեանը համարում է ներկայացուցիչ ոչ թէ տուանձին խմբերի կամ ազգութիւն-ների, այլ ընդհանուր օսմանեան ժողովրդի, Կառավարութիւնը չի կարող փոփոխել սահմանադրութիւնը իր սեփական իրաւունքով, բայց նա մտադիր է առաջարկել մի օրինագիծ փոքրամասնութեան իրաւունքների ապահովման համար, Սակայն այդպիսի հարցերի բննագատութիւնը գույք է Պատրիարքարանի իրաւասութիւնից և հակասում է ամբողջ օսմանեան ժողովրդի օրէնքներին, սովորութիւններին և իրաւունքներին, նամանաւանդ իրեն հայ ազգի սահմանադրական զգացմունքներին Այդ պատճառով Նախարարը յայտնում է, որ նա սրանից յետոյ այդպիսի թաքրիբներին չի պատասխանելու:

Հայկական Պատրիարքարանը պատասխանից Արդարագատութեան Նախարարի թասկարային մի նոր թաքրիբով, ուղղուած Մեծ Վէզիրի անուանը 1913 թ. նոյեմ. 11-ին Պատրիարքը յայտնում է, որ հնուց նա միջնորդի գեր է կատարում բոլոր հարցերի առթիւ հայ ժողովրդի և Կառավարութեան մէջ, որին նա անցեալում զիմել է մի քանի անգամ ընտրութիւնների մասին Հայերի ներկայ պահանջը բոլորովին չի հակառամ ասհմանադրութեանը, այն հանգամանքը, որ հայ պատգամաւորը պիտի ընտրուի միմիայն հայերի կողմից, երբէք չի զոկում նրանց համայն օսմանեան ժողովրդի ներկայացչի յատկութիւնից, Հայկառակ դէպքում արարական պատգամաւորներին պէտք էր համարել արարական ազդի ներկայացուցիչներ, իսկ Կ. Պօլսի ներկայացուցիչներին՝ միմիայն մայրաքաղաքի ներկայացուցիչներ և առասարակ պահանջի, որպէս զի իւրաքանչիւր պատգամաւոր ընտրուած լինի ամբողջ օսմանեան ժողովրդի կողմից: Հայերի յանկութեանը կարելի է բաւարարութիւն տալ՝ առանց սահմանադրութիւնը խախտելու: Անհրաժեշտ է միմիայն փոխել ներկայ ընտրողական իրաւունքը որը, ի դէպս ասած, ունի միմիայն ժամանակաւոր նշանակութիւն: Այս պատճառով Պատրիարքը յոյս է յայտնում, որ Մեծ Վէզիրը հաւանութիւն չի տայ Արդարագատութեան Նախարարի գործելակերպին և կընդունի այդ Նախարարի վերադարձած թաքրիբը:

Պատրիարքարանի և Կառավարութեան պաշտօնական գրագրութեան առթիւ տաճկաց մամուլը յարձակում է հայերի «Հակասահմանադրական» պահանջների վրայ, առաջ ընթելով հայկական մամուլի հականառութիւնը Ներկայումս Դուռը՝ յանկանալով ըստ սովորութեան ձգձել իր համար անախորժ հայկական հարցի լուծումը, կազմել է մի յանձնաժողով նրա ուսումնական թիւութեան համար, Այդ յանձնաժողովի կազմում մանում են կարինի մի քանի անդամները և նախկին նախարար Խաչաղեանը, որը հայ է և համարում է «Միութիւն» և Յառաջդիմութիւն» կուսակցութեան անդամ:

№ 108. Դեսպանը Տաճկաստանում՝ Արտաքին գործոց Նախարարին.  
Կ. Պօլիս, 23 նոյեմբեր 1913 թ. (նամակ).

Ի՞նչպէս յայտնի է Ձերդ Բարձր Գերազանցութեան, Գերմանական կառավարութիւնը վերջին ժամանակներս լարում է բոլոր ոյժերը, որպէս զի լայնացնի և ոյժեղացնի իր ազդեցութիւնը Տաճկաստանում, նամանաւանդ փոքր-ասիական վիլայէթներում:

Թողնելով զեր և մի կողմ այն զերմանական պատերազմական պատգամաւորութիւնը, որը մօտիկ ապագայում դալու է Տաճկաստան և որը անկասկած ազդեցութիւն կռնենայ տաճկական պատերազմական շրջանուների վրայ չափաք է մոռանալ գերմանացիների գործունէութիւնը և ուրիշ ուղղութեամբ:

Երգումմի մեր Ընդհանուր հիպատոսի հազորդագրութիւններից կայսերական նախարարութիւնը հնարաւորութիւն ստացաւ ծանօթանալու էրգումմի Գերմանական հիւպատոս պ. Անդերսի գործունէութեան և այն զիրքի հետ, որը նա ստեղծել է այստեղի իշխանութեան և ազգարնակութեան մէջ նոյնպէս նրանից պարզ է, թէ ինչպիսի ուշագրութիւն է արրում գերմանական պրօպագանգային, գլխաւորապէս, ուսումնարաններում:

Ի՞նչպէս ինձ հազորդում են, Բերլինի Օսմաննեան Դեսպանատունը յայտնել է իր Կառավարութեանը, որ գերմանական զեկովար շրջաններում պատրաստուած է մի ծրագիր, որով Փոքր-Ասիայի զանազան վիլայէթներում հիմնելու են մի շարք ուսումնարաններ, ուր տաճիկ երեխանները պիտի ձրի կը թութիւն ստանան Միաժամանակ որոշուած է, գերմանական կառավարութեան հաշով Կ. Պօլում և գաւառում պահել գոյութիւն ունեցող ուսումնարաններում ուսուցիչներ և ուսուցչունեներ, որոնք աւանդէին գերմանական լեզուն Դեսպանի տեղեկութիւնների համաձայն, այդ առթիւ Բերլինում արդէն սկսուել են բանակցութիւններ Արտաքին գործոց և Ժողովրդական Լռաւորութեան նախարարութեան մէջ:

Այդ ծրագրի իրագործումը անշուշտ սաստիկ կունդղացնի գերմանական ազդեցութիւնը Տաճկաստանում:

(Ստորագր.) Գիրս.

№ 109. Արտաքին գործոց Նախարարը Դեսպանին Տաճկաստանում.  
Ս. Պետերբուրգ, 23 նոյեմբերի 1913 թ. (հետագիր).

Ձեր նոյեմբեր 15-ի նամակով ուղարկած ծրագրի առթիւ բարեհաճեցէք տալ հնուհեալ պարզաբանութիւնները.

Կարելի է արդեօք բաւականին ապահովուած համարել երկու սեկտորների վարչութեան ննդհանուր-Վերատեսչի և Խորհրդականի միաբան իշխանութեանը, Կարիք չկմայ պարզել ճշտորէն, թէ ինչպէս և մեմ միջոցով քննուելու են Ընդհանուր-Վերատեսչի իրաւասութեան հրահանգները, որոնց մասին յիշում է 4-րդ յօդուածը:

Ումբից և մվ պիտի ընտրի ծ-րդ յօդուածում յիշուած Վերատեսուչներին:

Ումբին արդեօք Ընդհանուր-Վերատեսուչը և Խորհրդականը միաբան

իրաւունք արձակելու վայիներին և առհասարակ այն բոլոր անձնաւորուս թիւններին, որոնց նշանակման համար Սուլթանի հաստատումը անհրաժեշտ է:

Արդի՞օք Խորհրդականը իրաւունք ունի որոշելու, թէ ինչպիսի հարցերի վերաբերմամբ նրա վճիռը համարւում է վերջնական, որի մասին յիշում է 9-րդ յօդուածը:

Տարածայնութիւնների ժամանակամիջոցը (8-րդ յօդ) ցանկալի է կըրածատել երկու շաբաթով:

(Ստորագր.) Սաղօնօվ.

№ 110. Դեսպանը Տաճկաստանում՝ Արտարին գրծոց նախարարին:

Կ. Պոլս, 25 նոյեմբերի, 8 դեկտեմբերի 1913 թ. (հետագիր).

Դիմաւմ եմ Ձեր 23 նոյեմբերի հեռագային:

Տակիս եմ իմ 15 նոյեմբերի նամակին աւելացրած ծրագրի պարզաբանութիւնները:

5, 6, 7 և 8 յօդուածները ապահովում են վարչութեան հնթարկումը Հնդկանուր-Վերատեսչի և Խորհրդականի միահամառու իշխանութեանը, իսկ որոշ գէպքերում միայն Խորհրդականի իշխանութեանը, ինչ վերաբերում է Հնդկանուր-Վերատեսչի իրաւութեան հրանանդների վերաբննանը, այդ առթիւ 4 րդ յօդուածը ենթադրում է մեծ պետութիւնների մասնակցութիւնը վերաբննման հարցին, որովհետեւ ամրող յուշագիրը ենթադրում է Դեսպանների աշակցութիւնը բարենրոգութեարի գործում: Աւելի ճշգիր որոշել այդ մասնակցութիւնը գժուար է, —որպէս զի տաճիկների ինքնասիրութիւնը չը վիրաւորուի:

Վերատեսուչները միանգամայն հնթարկում են Խորհրդականին: Վերջինս կարող է արձակել ինչպէս նրանց, նոյնպէս և բոլոր մասցած պաշտօն հաններին: Այդ պատճառով նրանց հաստատման կարգը նշանակութիւն չունի:

3-րդ յօդուածը տալիս է Հնդկանուր-Վերատեսչին և Խորհրդականին միաբան իրաւունք արձակելու առհասարակ սեկտորի բոլոր պաշտօնեաններին:

9 րդ յօդուածը չի խմբազրուած աւելի պարզ ձևով, որպէս զի Խորհրդականին հասարաւորութիւն արուի անձամբ որոշելու այն հարցերը, որոնք կրում են շտապողական, ընթացիկ և օրէնքի գործադրման բնոյթ:

8-րդ յօդուածը խօսում է միմիկայն ընդհանուր հարցերի մասին, որոնք չեն կրում շտապողական բնոյթ, այս պատճառով ամսուայ ժամանակամիջոցը երկար չէ:

(Ստորագր.) Գիրս.

№ 111. Էրզրումի Ընդհանուր-Դիվանակուսը Դեսպանին Տաճկաստանում.

Էրզրում, 7 դեկտեմբերի 1913 թ. (հետագիր).

Քաղաքում արհեստական ձևով մահմեդականների մէջ գրգռում է առաջ

եկել հայերի դէմ։ Այդ նպատակի համար իթթիհաղի անդամների շատ անեւ ըում տեղի են ունենում գաղանի ժողովներ։ Իթթիհաղի ժողովը նախագահութեամբ մայրաքաղաքի կօմիսսար ԱԱՀԴ Խլլմի Բէյի գրադուած է հականայկական պրօպագանդայով։ Տեղական սրբիկաները, դարաշի, որոնց պետք կանչուած է Գերմանական Հիւպատոսարան, եռանդուն կերպով զինուու են։ Մի խօսքով ամէն ինչ աղէտ է գուշակուու։ Մի քանի հայեր երկիւ են յայտնում, որ Գերմանիան մտադրութեամբ է ստեղծում անկարգութիւններ, որպէս զի կործանի բարենորոգութիւնների հարցը։

(Ստորագր.) Աղամօվ.

№ 112. Դեսպանը Տամէկաստանում Արտարին գործոց Նախարարին.

Կ. Պոլիս, 12 գեկտեմբերի 1913 թ. հեռագիր։

Ես և Գերմանական Դեսպանը առաջին անգամ միասին այցելեցինք Մեծ Վէզդիրին։ Վերջինս յայտնեց մեղ, թէ Նախարարութեան Խորհրդում նա լուրջ խոչնդուների հանդիպեց այն հարցի վերաբերմամբ, որ Տաճկաստանը պաշտօնապէս պարտաւորով դիմելու մեծ պետութիւններին և խնդրի առաջարկել իրեն եւրոպական խորհրդականներ միաբանորէն քննկու մեծ պետութիւնների ներկայացոցի հների հետ բոլոր տարածայնութիւնները, որ կծագեն սիկոտուների խորհրդականների և ընդհանուր վերատեսչի մէջ։ Մեծ Վէզդիրը առաջարկեց մեղ համաձայնուել, որ առաջին անգամ նա բանաւոր կերպով դիմէ մեծ պետութիւններին՝ խորհրդով ցոյց տալ իրեն իւրաքանչիւր խորհրդականի պաշտօնի համար երկու թեկնածու, որոնցից Դուռը կընարի մէկին։ Յետոյ նա պաշտօնապէս մեղ կհաղորդի խորհրդականների նշանակման մասին, մատանսնելով՝ որ նրանց հետ պայման է կապում տաս տարով և եթէ խորհրդականները հետանան իրենց պաշտօնից նախ քան յիշեալ ժամանակամիջոցի լրանալը, նրանց տեղապահները կնշանակուեն նոյն պայմաններուի։ Մենք հականառեցինք, որ այդ պայմանների մասին անհրաժեշտ է յիշել պաշտօնական յուշագրի մէջ։ Մեծ Վէզդիրը համաձայնուեց առաջարկել Նախարարութիւնը պայմանների համար կամ կամ անդամանութիւնը նախորօք մեղնից հաւանակութիւնը, ու արագ Դուռը յոյս է զնում մեծ պետութիւնների նոյն բարեհաճ աշակցութեան վրայ նրանց նշանակման ժամանակու թեկնածուների առաջարկութեան առթիւ բանացի խնդրի ներկայացնելու ժամանակ Մեծ Վէզդիրը գրաւոր կերպով մեղ կհաղորդի նախօրօք մեղնից հաւանակութիւն ստացած պայմանների մասին վերաբերմամբ խորհրդականների գործունէութեան Խորհրդականի և ընդհանուր վերատեսչի տարածայնութիւնների առթիւ նկատեցինք, որ մեր կարծիքով նրանց վերացման ամենալաւ միջոցը կլնի այն, եթէ վերադառնանք մեր նախկին ենթագրութեան, այսինքն եւրոպացի ընդհանուր վերատեսուչների, այլ ոչ թէ խորհրդականների նշանակմանը։ Մեծ Վէզդիրը գտաւ, որ այդպիսի մի ելք հնարաւոր է և այդ մասին առաջարկութիւն կանի Նախարարների Խորհրդին։

(Ստորագր.) Գիլս.

№ 113 Արտաքին գործոց Նախարարը Դեսպանին Տանկաստանում.  
Ս. Գետերութեա, 14 դեկտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Դիմում հմ Զեր դեկտեմբերի 12-ի հեռագրին:

Սայիդ Խալիֆին արած Զեր առաջարկութիւնը՝ վերադառնալ նախկին հնթագրութեան, այսինքն եւրոպացի ընդհանուր վերատեսուչների նշանակում հարցին, հաւանութիւն է գտնում Կայսերական Կառավարութեան կողմից:  
(Ստորագր.) Սադօնօվ.

№ 114. Դեսպանի Տանկաստանում Արտաքին գործոց Նախարարին.  
Կ. Պոլիս, 16/29 դեկտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Ստացայ Զեր 14 դեկտեմբերի հեռագրը:

Նախարարների Խորհուրդը վերագրել է Մհեմ Վէզիրին առաջարկելու Արեւելեան-Անատոլիայում բարենորդութեան հետեւալ պայմանները. Մհեմ Վէզիրը կդիմի կիսապաշտօնական և բանացի ձեռվ մեծ պիտութիւնների ներկայացուցիչներին, ինդեղելով արևելեան սեկառորդ Ընդհանուր Վերատեսչի պաշտօնների համար առաջարկել էրեն թեկնածուներ, Բացի այդ նա կիսապաշտօնապէ մեզ կյայտնի յիշեսլ անձնաւորութիւնների իրաւասութեան մասին, նախապէս այս աթիւ համաձայնութեան գալով մեզ հետո, եթր մննք կհաղորդենք թեկնածունների անունները, նա պաշտօնական յուշագրով մեզ կիմացնի այդ անձնաւորութիւնների նշանակման և իրաւասութեան մասին՝ աւելացնելով, որ նրանց հետ պայման է կապում 10 տարով և եթէ այդ 10 տարուայ ընթացքում նրանք փոխուեն, այն ժամանակ Դուռը կդիմի մհեմ պետութիւնների աջակցութեանը:—Այս վերջին պայմանի վերաբերմամբ ես զեր ևս համաձայն չեմ Նախարարների Խորհրդի որոշման հետո իմ և Գերմանական Դեսպանի վերջին անդամ Մհեմ Վէզիրին այցելելու ժամանակ սրոշուեց, որ պայմանը փոխուելու է հետեւալ խմբագրութեամբ.

«Բարձր Դուռը յոյս է զնում մեծ պետութիւնների նոյն բարեհաճ աշխացութեան վրայ»:

Նախարարների Խորհուրդը ցանկանում է «նոյն» բարը բաց թողնել, այն ինչ միմիայն այդ բառն է տալիս ապահովութիւն, որ նոր ընտրութիւնների դէպրում նրանք կատարուելու են ներկայ կարգով: Աչքի առաջ ունենալով այդ հանգամանքը, ես խստի պնդեցի յիշեալ բարի պահպանման վրայ, Մհեմ Վէզիրը խոստացաւ այդ առթիւ համոզել Նախարարների Խորհրդին:—Չուեթշաբթի երեկոյան Մհեմ Վէզիրը նախնական ծանօթութեան համար կուղարկի ինձ վերատեսուչների վերօրութիւնների բնագիրը:—Եթէ այդ բնագրի և Դասն առաջիկայ յուշագրի (որի բնագիրը կորոշուի նախօրօք նախ քան թեկնածունների ներկայացնելը) «նոյն» բարի պահպանման վերաբերմամբ, մեզ մէջ համաձայնութիւն կայտանայ, այն ժամանակ ծրագիրը ես ընդունելի կհամարէի:

(Ստորագր.) Գիրս,

№ 115. Արտարին գործոց Նախարարը Դեսպանին Ֆուանսիայում.  
Ս. Գևառերուրդ, 18 դեկտեմբերի 1913 թ. (Հետազիր).

Վերջին տեղեկութիւնները կ. Պօլսից յոյս են ներշնչում, որ մենք  
Դանից բարենպաստ պատասխան կտանանք հայկական բարենորոգութիւնի  
առթիւ Ի խուսափում տարածայնութիւնների, որոնք կպատահէին  
ծրագրում Խորհրդականների և Հնդհանուր-Վերաբեսչի մէջ, կարելի է  
սպասել, որ Դուռը իւրաքանչիւր սեկտորի համար մեծ պետութիւնների առ  
ռաջարկութեամբ նշանակի եւրոպական ընդհանուր վերաբեսուչներ փոխա-  
նակ յիշեալ խորհրդականների.

Այս պատճառով ցանկակի է աչքի առաջ ունենալ հէնց այժմեանից  
թեկնածուներ երկրորդական պետութիւնների հապատակներից; Խնդրում եմ  
Զեղանից, որ միանգամայն մտերմաբար հաղորդէք Պողոս Նուբար Փաշալին  
այդ մասին և տեղեկանաք, աչքի առաջ հնակ նա արդեօք համապատաս-  
խան թեկնածուներ.

(Ստորագը.) Սազօնօվ.

№ 116 Դեսպանը Տաճկաստանում Արտարին գործոց Նախարարին.  
Կ. Պօլիս, 24 դեկտեմբերի /13 յունվարի 1913 թ. (Հետազիր).

Վերջին եռանդուն բանակցութիւնների ժամանակի, որ ես վերաբեր-  
մամբ ընդհանուր վերաբեսուչների լիազօրութիւնների վարում էի անցեալ  
շաբաթուայ ընթանքում Մեծ Վէզիրի հետ և նրա միջոցով Նախա-  
րաբանների Խորհրդի հետ, ես աշխատում էի մուցնել այդ լիազօրութիւնների  
մէջ բարենորոգութեամբ զլսառը սկզբունքները, այս ինչ Նախարաբանների  
Խորհուրդը ձգտում էր սահմանափակել ամբողջ գործը միմիայն վերաբե-  
սուչների նշանակման հարցով և նրանց անհատական լիազօրութիւնների ո-  
րոշմամբ երէկ Մեծ Վէզիրը մեր մուկրմական և միաժամանակ եռան-  
դուն խորհրդակցութիւնից յետոյ ներկայացրեց լիազօրութիւնների բնա-  
գիրը, որը իրը թէ Դատավագիրը կազմուեց յայտնի նույն մասնաւոր կիրարով  
յանձնեցի նրան յուշագրի ձրագիրը, որը նա պիտի ուղարկի Դեսպանաւոնե-  
րին վերաբեսուչների նշանակումըց յետոյ:

Այսօր ես կրկն անգամ խօսում էի Մեծ Վէզիրի հետ իմ ծրագրի մա-  
սին: Մեծ Վէզիրը նրա մէջ մացրեց լուրջ փոփոխութիւնը, որոնց թէն նա  
անձամբ ընդունում է, բայց անհրաժեշտ է գտնում ներկայացնել Նախարաբ-  
անների Խորհրդի հայեցազութեանը: Միաժամանակ ուղարկում եմ այդ ծրագ-  
րի բնագիրը, փոփոխուած Մեծ Վէզիրի կողմից<sup>\*\*</sup>).—Ես յայտնեցի, որ այս  
փոփոխուած ծրագիրը կներկայացնեմ Կայսերական Կառավարութեան բա-  
րեհայեցողութեանը, թէկ չեմ երաշխաւորում, որ նա ընդունի ծրագիրը:  
Ես անձամբ համոզուած եմ, որ ներկայացում մենք աւելի մեծ արդիւնքի  
համանել չենք կարող և առայժմս պէտք է բաւականանանք բարենորոգում-  
ների միմիայն լուրջ սկզբունքով, որը անշուշտ կրաքաւաճի ապագայում  
շնորհի ընդհանուր վերաբեսուչների գործունէութեան: Մեծ պետութիւն-

\* ) Տես № 117. II.

\*\*) Տես № 117. I.

Ների աջակցութեամբ նշանակուած վերատեսուչները միշտ պաշտպանութիւն կդառնեն Դեսպանատների կողմից: Իսկ ներկայ հանգամանքներում ես հնարաւոր չեմ գտնում Դասն նոր պաշտօնական հաստատմամբ առանձնապէս շեշտել այդ պաշտպանութիւնը, որը բխում է Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածից: Նոյն իսկ ինձ թում է, որ նմանօրինակ ամէն մի հաստատումն կարող է ունենալ և հակառակ հետեւանք՝ սահմանափակելով մեր վերահսկողութեան շրջանակները, այն ինչ նրա բացակայութեան դէպքում 61-րդ յօդուածին կարելի է տալ ընդարձակ մեկնարանութիւն:—Աւելի լայն պահանջներ դնելու դէպքում մեծ պետութիւններն էլ մեզ չեն հետեւ:

Նախարարների Խորհրդի վճիռը ինձ կյայտնեն վաղը:

(Ստորագր.) Գիրա.

№ 117. Դեսպանը Տաճկաստանում Արտաթին գործոց Նախարարին.  
Կ. Պոլս, Յ գեկտեմբերի 1913 թ. (հեռագիր).

I. Պատիւ ունիմ յայտնելու Զեղ, որ երկու Ընդհանուր Վերատեսուչներ նշանակում են զլուխ Արեւելան Անատոլիայի երկու սեկտորների: Այդ սեկտորների վարչութեան, արդարադատութեան, ոստիկանութեան և ժանդարմերիայի վերահսկողութիւնը կազմում է Ընդհանուր Վերատեսուչների իրաւասութիւնը: Համաձայն Ընդհանուր Վերատեսչի պահանջի, այն դէպքում, երբ հասարակուան անդորրութիւնը անապահով է, զինուորական ոյժերը տրւում են նրա իշխանութեան տակ, որպէս զի ձեռք առնուեն միջոցներ՝ համապատասխան նրա իրաւունքների: Նայած հանգամանքներին, Ընդհանուր Վերատեսուչները պաշտօնադուրէ են անում անընդունակ կամ հակառարոյ պաշտօնհանքներին, դատի ենթարկելով նրանց, որոնք մեղադրուում են պատժակիր ոճրագործութիւններում: Նրանք ժամանակաւորապէս փոխում են արձակուած պաշտօնհանքներին նոր անձնաւորութիւններով, որոնք բաւարում են ծառայութեան մէջ մտնելու նախատեսնուած օրէնքների և կանոնների պայմաններին: Այդ պաշտօնհանքների վերջնական նշանակումը կատարւում է համաձայն ձեռքի և պայմանների, որ սահմանել են յիշեալ օրէնքները և կանոնները: Բոլոր արձակուած պաշտօնհանքների մասին Ընդհանուր Վերատեսուչները հաղորդում են համառօտ պատճառաւրանուած հեռագրով համապատասխան նախարարութեանը, իսկ յետոյ մի շարթուայ ժամանակամիջոցում իւրաքանչիւր արձակուած պաշտօնհայի գործը ուղարկում են նախարարութեանը՝ տալով պատճառների մանրամասն զեկուցում: Լուրջ դէպքերում, երբ անհրաժեշտ է ձեռք տանել շուտափոյթ միջոցներ, Ընդհանուր Վերատեսուչները իրաւունք ունեն առանց հետաձգման որձակելու դատաստանական անփոխ պաշտօնհանքներին պայմանով, որ այդ մասին անյապաղ հաղորդեն Արդարադատութեան Դեպարտամենտին: Ի դէպս, եթէ վակիները գործել են մի այնպիսի յանցանք, որը անհրաժեշտորէն պահանջում է զիմումն խփառ միջոցների, Ընդհանուր Վերատեսուչները ներկայացնում են այդ հարցը Ներքին գործոց Նախարարութեան հայեցողութեալն, որը պարտաւոր է անմիջապէս արձակել վալիին պաշտօնից և զեկուցել այդ մասին նախարարների Խորհրդին: Վերջինս պարտաւոր է որոշել հարցը 8 օրուայ ընթացքում:

Ա. Ընդհանուր Վերատեսուչները նախագահում են այն յանձնաժողով-ներում, որոնք կոչուած են քննիլու հոգային վէճրը և վերադարձնելու հայրին նրանցից խափ հոգերը: Նրանց իրաւունքներին և պարտականութիւններին վերաբերող աւելի մանրամասն հրահանգներ կտրուեն Ընդհանուր Վերատեսուչների նշանակումից յետոյ և որանց մասնակցութեամբ ի գէպս, եթէ 10 տարուայ ընթացքում Ընդհանուր Վերատեսուչների պաշտօնը երը և իցէ մայ բաց, Բարձր Դուռը Ընդհանուր Վերատեսուչների ընտրութեան հարցում իր յոյսը զնում է մեծ պետութիւնների բարեհաճ աջակցութեան վրայ: Այն սկզբունքները, որոնցով Ընդհանուր Վերատեսուչները զեկալվաբուելու են բարեհորոպութեամբ, որը պիտի ի բագործուի ամենակարգ ժամանակիշնչում վերահակողութեամբ Ընդհանուր Վերատեսուչների, ընդհանուր ժողովների և վարչական խորհրդների ընտրողական անդամները հաւասար թուզվ ընտրուելու են մահմեղականներից և ոչ—մահմեղականներից: Նոյն սկզբունքը, ըստ հնարաւորութեան, գործադրուելու է երկու սեկտորի բոլոր հասարակական պաշտօնների դասաւորման ժամանակ: Ընդհանուր ժողովների օրէնսդրական և բիւղժէտային իրաւասութիւնը որոշում է վիլայէթների օրէնքի հիման վրայ: Համբիդիական հեծելազորը արձակում է: Օրէնքները, հրովարտակները և կառավարչական համորդագրութիւնները իւրաքանչիւր սեկտորում կ'յայտարարուեն տեղական ինքունների, իւրաքանչիւր մասնաւոր անհատ օգտում է իւր սեփական լիզուով ինչպէս դատարանում, նոյնպէս և վարչական հիմնարկութիւններում: Դատավճիրները խմբագրուում են տաճկերէն լեզուով, իսկ ըստ հնարաւորութեան թարգմանութեամբ կողմերի լիզուով: Իւրաքանչիւր ազգութիւն իր մէջ իւրաւունք ունի տուրք սահմաննելու ուսումնարանների պիտոյների համար: Տուրքը հաւաքում է յաւեհալ սանթիմների ձևով:

(Ստորագր.) Գիրս.

№ 118. Արտարին գրծոց նախարարը Դեսպանին Տաճկաստանում.  
Ս. Պետերբուրգ, 26 գեկտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Դիմում եմ Ձեր նոյնիմբեր 15-ի հեռագրին: Ենտապայ բանակցութիւնների ժամանակ բարեհանցէք աջքի առաջուննեալ Նախարարութեան հետեւել նկատումները: Ընդհանուր-Վերատեսութիւններին պիտի պատկանի ոչ թէ միայն ստորագիր պաշտօննեաններին արձակելու իրաւունքը, այլ նաև վարչութեան գերազանցութեան պաշտօննեանների նշանակումը և որանց հաստատման համար Սուլթանին ներկայացնելու իրաւունքը:

Նախքան աւելի մանրամասն հրահանգների մշակելը Ընդհանուր վերատեսութեանների իրաւունքները և պարտականութիւնները որոշում են ընդհանուր գրութեամբ, որի հիման վրայ նրանք համարում են իրենց սեկտորի քաղաքական իշխանութեան ամենաբարձր ինստանցիան:

Ցանկական կլինիկ բաց թողնել այն նախարարն, որով տեղական ժողովները և խորհուրդները մինչեւ ցուցակագրութիւն միայն կազմուած պիտի լինեն հաւասար թուզվ մահմեղականներից և ոչ—մահմեղականներից:

Ցանկալի է վերականգնել արդարադառութեան բարեփոխման յօդուածը:

Նոյնպէս ցանկալի է մացնել նախածրազրի այն կէտը, որով զինուորական ժառայութիւնը կատարում է բնակութեան տեղում:

Յուշազրի մէջ չեն յիշուած այն վիւայէթները, որոնցից կազմում են երկու սեկտորները:

Յիշեալ նկատումները լիովին համապատասխանում են այն ծրագրին, որը իր ժամանակին ձևականօրէն ստացաւ Գերմանիայի հաւանութիւնը և այս պատճառով նրա կողմից բողոքների տեղի չեն կարող տալ:

(Ստորագր.) Սազօնօվ.

№ 119. Դեսպանը Տանկարանում Արտարին գրքոց նախարարին.

Կ. Պոլիս, 27 գեկտեմբերի 1913 թ. (հասագիր.)

Զեր 26 գեկտեմբերի հեռագրի նկատումները անշուշտ լիովին համապատասխանում են նախընթաց ծրագրիներին, բայց վերջիններս, կամ աւելի ճիշտ ասած բացառապէս վեց կէտերից բաղկացած ծրագրերը, մեացածների վերաբերմամբ ծառայում է որպէս հէնք Տաճկաստանի հետ բանակցութիւններ վարելու համար Դուռը պաշտօնապէս երբէք չի յայտնել իր համաձայնութիւնը նրանց ընդունման համար, իսկ բանակցութիւնների ժամանակ նրանց ճեղք փոխուեց միմիշայն շնորհիւ իրերի դրութեան: Այսպիսի հանգամանքներում ես ձգտում էի, ինչքան որ հաւաքաւր էր, չդիպչել նրանց էտոթեանը՝ գտնելով, որ գերազանցի է հարցը թողնել անորոշ, քան թոյլ տալ Դուռնը ուղարկի հրաժարուել նրանցից: Գերմանիան անկասկած հաւանութիւն տուեց 6 կէտերից բաղկացած նախածրագրին, բայց կ. Պոլիսի Գերմանական Դեսպանատունը միշտ էլ պնդում էր, որ ինձ նեցուկ կլինի սիմիայն այն չափով, ինչքան որ բարենորդումների գործադրումը խուսափում է ճնշման միջոցների դիմելուց: Ներկայումս նա յայտնում է այդ բանում նրան հետևում են բոլոր մեացած Դեսպանատները, որ այժմս աւելի մեծ արդիւնքներ ստանալ անհնարին է, իսկ ձեռք բերած մի թանկագին սկիզբ է Ընդհանուր Վերատեսուների միջոցով զարգացնելու: ծրագրուած բարենորդումները Հէնց այդ պատճառով ես յայտնեցի իմ համոզմունքը, որ մեացած Դեսպանատները, իսկ ամենից առաջ Գերմանականը, այլևս չեն պաշտպանի մեզ, եթէ իրենց կառավարութեան կողմից դրական պատուէր չստանան: Հետևաբար մենք կզործէինք մինակ, մեր վրայ կրկնուի գործի ամրող ծանրութիւնը, նրա հետևանքը, այսինքն ստիպուած կլինիքի Դուռն յամառութեան գէպքում, որը համարեա թէ անխուսափելի է, դիմել ճնշման: Մի գուցէ այդ բոլորը մեղնից շատ ժամանակ խլէր, այն ինչ Ընդհանուր Վերատեսուների լիազօրութիւնների ընդհանուր մասը, որ մշակել ենք մենք, Դուռը վճռել է գործագրել նաև ուրիշ սեկտորներում և իր ներկայացչի միջոցով երրողացիներ է հրաւիրում նրանց համար Այսպիսի պայմաններում հայկական սեկտորների դրութենը ժամանակաւորապէս կվատթարանայ, իսկ այդ բանում Դուռը կմեղադրի մեզ:

(Ստորագր.) Գիրս.

№ 120. Հըզրումի Ընդհանուր Դատաստանում.  
կրգում, 29 դեկտեմբերի - 11 յունվարի 1913/14 թ. (հեռագիր).

Այստեղի գաղտնի գումարուող ժողովներում խօսում են հայկական կոտորածի մասին, Մօլլաների համանով մահմեդականները իրենց զիսին կրում են սպիտակ փաթեթ, Լրերի համաձայն ամէն ինչ պատրաստ է կոտորածի համար, մայրաքաղաքից միայն ազդանշանի են սպասում, իթթիհաղ կուսակցութեան անդամները բացայացտ կերպով ստորագրել են տալիս վերահսկողութեան դէմ պատրաստած բողոքագիրը, նախօրօք մեղադրելով միծ պետութիւններին կոտորածի մէջ, որը առաջ է զարու շնորհիւ նրանց միջամտութեան բարենորոգումների գործում, Տրամադրութիւնը շատ վրդովեցուցիչ է, ցանկալի է նախազգուշացնել կոտորածը վճռողական միջոցներով:  
(Ստորագր.) Ադամօվ.

№ 121. Արտարին գործոց Նախարարը Դատավանին Տամնատանում.  
Ս. Պետերբուրգ, 29 դեկտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Պուրտալէսը յայտնեց ինձ, որ Դասան հետ հայկական բարենորոգումների ասթիւ վարած վերջին բանակցութիւնների ժամանակ Դուք իր թէ առաջարկել էք նոր պահանջներ, որոնք չեն մտնում Գերմանիայի պաշտպանած բարենորոգումների նախածրագրի մէջ, Գերմանական Դատավանին ես պատասխանեցի մի յուշագրով, որով հերթում եմ այդ մեղադրանքը: Մատնացոյց անհեռով Դասան հետ վարած մեր բանակցութիւնների խաղաղասիրական բնոյթի և մեր արած զիջումների վրայ, ես նկատել եմ, որ նախարարութիւնը նոյնեմբեր ամսում մշակուած ծրագիրը ընդունել է որպէս վերջնական ծրագիր և այդ իմաստով Զեղ տուել է համապատասխան ցուցմունք Յոյս ունեմ, որ իմ յուշագիրը կունենայ որոշ ազգեցութիւն: Բայց եթէ յետապայում Դուք համոզուէք, որ Բ. Դասան հակառակութիւնը յաղթել դժուար է, այն ժամանակ համաձայնութիւն կայացնելու նպատակով Դուք ազատօրէն կարող էք պաշտպանել այն կէտերը, որոնց մասին զրուած է դեկտեմբերի 26-ի իմ հետազրի մէջ:

(Ստորագր.) Սաղօնօվ.

№ 122. Արտարին գործոց Նախարարի յուշագիրը Ս. Պետերբուրգի Գերմանական Դատավանին,

29 դեկտ. 1913 (11 յունվ. 1914 թ.)

(Թարգմանութիւն).

Ինձ հետ ունեցած արդի խօսակցութեան ժամանակ Զերդ Գերազանցութիւնը ի միջի այլոց բարեհաճեցիք ասել, որ Կայսերական Դատավանը՝ հայրանակ վիլայէթների բարենորոգումների ներմուծման առթիւ Դասան հետ վարած բանակցութիւնների ժամանակ առաջարկել է նոր պահանջներ, որոնք չեն մտնում այն ծրագրի մէջ, որը նա իր Գերմանական ընկերոջ հետ միասին պաշտպանում էք առաջ:

Ի խուսափում հարաւոր թիւրիմացութիւնների այն հարցում, ուր

մեր պետութիւնների աշխատակցութիւնը այնքան յաջող հետևանք է ունեցել պարտք եմ համարում յայտնել Ձեզ, որ այդ գործը ևս ենթարկել եմ ամենամարդամասն ընտելիքնեան:

Ձերդ Գերազանցութեանը յայտնի է, որ վեց շաբաթ սրանից առաջ, Դուան հետ երկար բանակցութիւններ վարելուց յիտոյ, Օսմանեան Կառավարութիւնը մշակեց կ, Պօլսի գեսապանների անուուանը մի յուշազիր: Որովհետեւ Մեծ Վէզիրի պատասխանը ուշացաւ, ուստի Ռուսական Դեսպանանը և Բարօն Վանդենհայմը այցելեցին Նրան մի քանի օր առաջ նախքան նրա արձակուրդ գնալը, Մեծ Վէզիրը պատասխաննեց նրանց, որ նրա կարծիքով եւրոպական խորհրդականների փոխարէն աւելի գերազանակի կլինէը հաստատել նախկին ընդհանուր վերատեսաւչներին:

Որովհետեւ երկու դեսպաններն էլ համաձայնուեցին Մեծ Վէզիրի հետ, վերջին մի քանի օր սրանից առաջ Դերսին ներկայացրեց յուշազիր մի նոր ծրագիր, որի մէջ այս անգամ խօսում է ընդհանուր վերատեսաւչների մասին, թէս Ռուսական Դեսպանի նախընթաց նկատումները ուշազիքութեան չեն առնուած:

Դեսպանը պատասխաննեց, որ այդ մասին կհաջորդի Ս. Պետերբուրգ, կասկած յայտնելով սակայն այն բանում, որ մենք կընդունենք ծրագիրը:

Համեմատելով յուշազիր նոր ծրագիրը նոյն մերը ամսում մշակածի հետ, որը Կայսերական կառավարութիւնը համարեց որպէս զիջումների վերջնական ծրագիր և համաձայնուեց նրանց հետ, ևս չէր կարող չնկատել զարմանքով, որ Դուռը բացէ թողել միքանի խիստ կարեսը կէտեր, որում կարող էք համոզուել յաւելումի միջոցով<sup>(\*)</sup>):

Այդ պատճառով՝ ստիպուած էի առաջարկել Կայսերական Դեսպանին, որ նա պիտի յիշեալ հարցերի վերականգման վրայ նոր յուշազրում:

Հաղորդելով այդ մասին Ձերդ Գերազանցութեանը ի տեղեկութիւն, յոյս ունեմ Դուռը կրարեհանէք հաւատալ, որ Դուան հետ վարած երկար բանակցութիւնների ժամանակ մենք ապացուցինք համաձայնութեան զալու մեր անկեղծ ցանկութիւնը: Այդ համաձայնութիւնը պաշտպան էր հանդիսանուած Տանկաստանի օրինական խնդիրութեանը և նրա իսկական շահէրին: Միաժամանակ եւ բաւականութեամբ շեշտում եմ այն, որ յիշեալ բանակցութիւնների ժամանակ Գերմանիան ցոյց տուեց մեզ իր աջակցութիւնը, գտնելով մեր պահանջները արդարացի:

### № 123. Արտաքին գործոց Նախարարը Դեսպանին Տաճկաստանում.

Ս. Պետերբուրգ, 31 գեկտեմբերի 1913 թ. (հետազիր).

Բարեհնաձեցէք Դուանը մատնացոյց անկել մերձակայ վտանգի վրայ, եթէ նա ձեռք չառնի միջոցներ հայկական վիլայէթների անկարգութիւնների նախազգուշացման համար և ամենավճռողական կերպով հասկացրէք հետեւանքների մասին:

Տեղեկութիւն է տրում Փարիզ, Լօնդոն և Բերլին:

(Ստորագր.) Սագօնով.

<sup>(\*)</sup> Տես 1913 թ. նոյեմբեր 15 յունիսան I, III, IV, X, XII և XVI յօդուածները (№ 106) և կ. Պօլսի ուսուաց Դեսպանի 1913 թ. դեկտեմբեր 24-ի նամակը (№ 117). — եր. 75, 76, 77, 84, — 85:

Մանօթ. Թարգմանչիք

№ 124. Արտաքին գործոց Նախարարք Դեսպաններին Անգղիայում, Ֆուան-սիայում և Գրեմանիայում.

Ս. Պետերբուրգ, 31 դեկտեմբերի 1913 թ. (հեռագիր).

Ի նկատի ունենալով խորհրդիւնների ծագման վտանգը, որոնք ամենաբարդ հետևանաների պատճառ կզառնային, բարեհաճեցէք իմանալ Կառավարութիւնից, որի մօտ Դուք ուղարկուած էք, արդեօք հնարաւոր չի գըտ նում նա եռանգուն ցուցումն անելու Դաշնը:

Տեղեկութիւն է արւում Կ. Պոլիս.

(Սարդար.) Սաղօնօվ.

№ 125. Դեսպանը Տանըլիստանում Արտաքին գործոց Նախարարին.

Կ. Պոլիս 17 յունվարի 1914 թ. (հեռագիր).

Յուշագիրի ծրագրի կետերը, սրանց վերաբերմամբ լիակատար համաձայնութիւնն է կայացել իմ եւ Նախարարների Խորհրդի մէջ:

Երկու օտարերկրացի Ընդհանուր Վերատեսուչներ նշանակւում են զլուխ Արքելեան-Անատօլիայի երկու սեկտորների. Ա) Սիվազ, Էրզրում, Տրավիդն, Բ) Վան, Բիթլիս, Խարերդ, Դիարբեկիր. Այդ սեկտորների վարչութեան, արդարադաւութեան, ոստիկանութեան և ժանդարմերիայի վերահսկողութիւնը կազմում է Ընդհանուր Վերատեսուչների իրաւասութիւնը. Համաձայն Ընդհանուր Վերատեսչի պահանջի, այն դէպքերում, երբ հասարակական անդորրութիւնը մասամբով է, զինուորական ոյժերը արւում են նրա իշխանութեան տակ, որպէս զի ձեռք առնուեն միջոցներ՝ համապատասխան նրա իրաւունքների, հայած հանգամանքներին, Ընդհանուր Վերատեսուչները պաշտօնագործ են անում անընդունակ կամ հակարարոյ պաշտօնեաներին, դասի և նժամակելով այնպիսիներին, որոնք մեզազրում են պատժակիր ոճրագործութիւններում Նրանք փոխում են արձակուած ստորին պաշտօնեաներին նոր անձնաւորութիւններով, որոնք բաւարարում են ծառայութեան մէջ մոռնելու համար նախատեսնուած օրէնքների և կանոնների պայմաններին. Նրանք իրաւունք ունեն առաջարկութիւններ անել Նորին Մեծութեան Սուլթանի Կառավարութեանը բարձր պաշտօնեաների նշանակման մասին Ռուսու արձակուած պաշտօնեաների մասին Ընդհանուր Վերատեսուչները անյապաղ հաղորդում են համապատասխան նախարարներին համառօտ պատճառաբանուած հեռագիրներով, իսկ յետոյ մի շարաթուայ Ընթացքում իրացանչիւր արձակուած պաշտօնեայի գործը ուղարկում են նախարարներին՝ տալով պատճառաների մանրուման զեկուցում Լուրջ դէպքերում, երբ անհրաժեշտ է ձեռք առնել շուտափոյթ միջոցներ, Ընդհանուր Վերատեսուչները իրաւունք ունեն առանց հետաձգման արձակելու դատաստանական անփոխ պաշտօնեաներին՝ պայմանով, որ այդ մասին անյապաղ հաղորդեն Արդարադաւութեան Դեսպանամենտին. Ի դէպս, եթէ վալիները գործեն մի այնպիսի յանցանք, որը անհրաժեշտօրէն պահանջում է դիմութիւն իրստ միջոցների, Ընդհանուր Վերատեսուչները ներկայացնում են այդ հարցը համապատասխան Նախարարի հայեցողութեանը, որը այդ մասին շուտափոյթ յայտնում է Նախարարների Խորհրդին. Վերջինս կայաց նում է իր որոշումը չորս օրուայ Ընթացքում Ընդհանուր Վերատեսչի հետ պագիրը ստանալուց յնազ:

Հողային հարցերը վճռւում են լ. Վեր, անմիջական վերանձնողութեամբ։ Ընդհանուր Վերատեսուչների իրաւունքներին և պարտականութիւններին վերաբերող աւելի մանրամասն հրահանգներ կարուեն նրանց նշանակումից յետոյ և նրանց աջակցութեամբ։ Ի դեպս, եթէ 10 տարուայ ընթացքում Ընդհանուր Վերատեսուչների պաշտօնը երբ և իցէ մնայ բայց, թ. Դուռը Ընդհանուր Վերատեսուչների ընտրութեան հարցում իր յոյսը գնում է մեծ պետութիւնների բարեհան աշխակցութեան վրայ Օրէնքները, հրովարտակները և կառավարչական հազորդազրութիւնները իրաքանչիւր սեկտորում կյայտարարուեն տեղական լիգուններով։ Եթէ Ընդհանուր Վերատեսուչներ հարցուոր է գտնում, իրաքանչիւր կողմ իրաւունք ունի զատարանում և վարչական հիմնարկութիւններում օգտուելու իր մայրենի լիգուով։ Դատավճիւր կաղմուում են տաճկերէն լիգուով և ըստ հաւարարութեան, թարգմանութեամբ կողմների լիգուով։ Կայսերական կառավարութիւնը չի հակառակի այն բանին, որ հաւատակիցները մասնակցեն համայնշական ուսումնարանների պահելու ծախսներին։ Խրաբանչիւր օսմանանդատակ կասարուած է իր գինուուրական պարտականութիւնը խաղաղ ժամանակ այն զինուուրական շրջանում, որտեղ նա ապօռում է։ Բայց ուղարկելով ցամարային գօրք եմէնի, Ասսիրի և Նէջզի հեռաւոր մասները, Կայսերական կառավարութիւնը ցնոր կարգագրութիւն կլրցնի այդ զօրքերը Կայսրութեան բոլոր մասներից, համապատասխան նրա մէջ բնակւող ազգութիւնների թւաքանակի։ Բացի այդ, ծովային զօրքների մէջ նա կմոցնի Կայսրութեան բոլոր մասներից գումարած նորակոչ զինուուրներին։ Համբիդական զօրքանդերը փոխում են պահեստի հեծելազօրի, Նրանց զէնքերը կպահուեն պահեստաբանում և կտրուի իրենց միմիայն զօրքագողովի և զինավարութեան ժամանակ։ Նրանք ենթարկուում են այն զօրքաբանակների հրամանատարներն, որոնց շրջանում գտնուում են։ Խողակ ժամանակ զօրքանդերի, էսկադրօնների և զօրքախմբակների պետքերը ընտրուում են օսմանիան զօրքի սպաներից։ Այդ զօրքանդերի զինուուրները կատարում են իրենց զինուուրական ծառայութիւնը մի տարուայ ընթացքում։ Ցիշեալ զօրքակների մէջ մասնելու համար զինուուրները իրենց սեփական հաջուով պիտի ձեռք բերին ձի և զինուուր լիովին։ Խրաբանչիւր անձն՝ առանձ ցեղի և կրօնի խորութեան, որ ապրում է որոշ շրջանում և ենթարկուում է յիշեալ պահանջներին, կարող է մասնել այդ զօրքանդերի մէջ։ Զօրքագողովի կամ զինավարութեան ժամանակ այդ զօրքանդերը ենթարկուում են կանունաւոր զօրքերի համար սահմանուած որոշումներին։ Վիլայէթների ընդհանուր խորհրդների իրաւասութիւնը որոշուում է 1913 թ. (1329) մարտի 13-ի օրէնքով։ (Մտարգր.) Գիրս.

Ա 126. Դիսպանը Տաճկաստանում՝ Արտաքին գործոց Նախարարին.  
Կ. Պոլիս. 4/17 յունվարի 1914 թ. (Հեռագիր).

Թե՛ եւս համաձայներին զի կայսցել վերաբերմ ամբ ընդհանուր եւ վարչական խորհրդների կազմի, ինչպէս նաև պաշտօնների դասարաման հարցուած եմ պնդում եմ հետեւիալ խմբագրութեան վրայ, և Արևելիան Անտոլիայի (Էրզրում, Տրապիզոն, Սիլվադ, Վան, Բիթլիս, Խարբերդի) երկու սեկտորների ընդհանուր ժողովների և վարչական խորհրդների ընդհանուր խորհրդների իրաւասութիւնը որոշուում է 1913 թ. (1329) մարտի 13-ի օրէնքով։

ըից և բրիստոնեաներից Այդ ձեռվ ընտրութիւնները շարունակում են մինչ չեմ բնակչութեան ցուցակագրութիւնը, Վերջինս կատարուելու է Ընդհանուր վկաստիսչի հսկողութեամբ ամենակարճ ժամանակամիջոցում, — ըստ հնարաւորութեան ոչ աւել քան մի տարուայ ընթացքում, որոշելով զանազան կրօնների, ազգութիւնների և լեզուների ճիշտ համաշխափութիւնը։ Մեծ վէդիրը յայտնում է, որ Նախարարների Խորհուրդը մահմեդականների և ոչ — մահմեդականների հաւասար ներկայացչութեան մեր պահանջը ընդունում է ժամանակաւորպէս, մինչև ցուցակագրութիւն, որը հազիւ թէ հինգ տարուց շուտ կատարուի, բայց այդ պահանջը նաև ընդունում է միմիայն Վանի և Բիթլիսի վիլայէթի խորդղների համար, չնայելով որ այդ տեղերումն էլ հայերը, ըստ նրա ասածի, բնակչութեան կէսը չեն կազմում։ Մնացած վիլայէթներում Նախարարների Խորհուրդը հսարաւող չի գտնում, թէկուզ ժամանակաւորպէս, թոյլ տալ հաւասար ներկայացչութիւն, երկիւզ կրելով մահմեդականների իրը թէ անբաւականութեան բանկումից, որոնք նրա ասելով կազմում են ձնշող մեծամասնութիւն։ Շնորհիւ այս հանդամանքի Խորհուրդը առաջարկում է յիշեալ վիլայէթների համար՝ բացառութեամբ Տրապիզոնի, ընտրութիւնների հետեւալ սիստեմը. Հայ ընտրողների ցուցակաթիւր որոշում են իրենք հայերը։ Այդ բանում կառավարութիւնը վստահաթիւր որոշում է նրանց վրայի։ Տաճիկ ընտրողների թիւը որոշում է ներկայումս գոյութիւն ունեցող ցուցակներով։ Ընդհանուր խորդղների անդամների բանակը պիտի համապատասխան լինի յիշեալ ազգութիւնների բանակին։

(Ստորագր.) Գիրս.

### № 127. Արտաքին գործոց Նախարարը Դեսպանին Ժանկաստանում.

Ս. Պատերբուրգ, 4 յունվարի 1914 թ. (Հեռագիր).

Ֆախրէդին-Բէյի ասելով, Դուռը պատրաստ է թէկուզ վաղը համաձայնութեան զալ հայկական հարցում, եթէ մենք մեր կողմից անհնք հետեւալ զիջումները։

1) Ընդհանուր խորդղները զրկուում են հեկեցեական և ուսումնարանային պիտոյքների համար հարկեր սահմանելու իրաւունքից,

2) Մենք պէտք է հրաժարուենք այն մտքից, որով վարչութեան և խորհրդների մէջ մահմեդականների և ոչ—մահմեդականների համար պահանջումք ենք մտցնել հաւասար ներկայացչութեան սկզբունք,

և 3) Համիդիական հեծելազորը չ'պիտի արձակուի։

Ես յայտնեցի տաճկական Հաւատարմատարին, որ կտրականօրէն մերժում եմ երկորդ և երրորդ կտերը։ Ինչ վերաբերում է առաջի կէտին, ես յայտնեցի, որ ուսումնարանային պիտոյքների բաւարարութեան համար աւելի լաւ միջոց չեմ գտնում, քան ընդհանուր հարկատառութիւնը։ Իսկ հեկեցական հարկերի մասին ասացի, որ եթէ հնար լինէր իրավանչիւր ազգութեան համար տուրք սահմանել առանձնապէս, այն ժամանակ գործը կտանար հաջապատասխան ընթացք։

(Ստորագր.) Սազօնօվ.

№ 128. Երզրումի Հնդկանուր - հիւալատում Դեսպանին Տաճկաստանում.  
Երզրում, 6/12 յունվար 1914թ. (հեռագիր).

Ուրբաթ առաջօտեան խանութների մեծ մասը փակուած էին և հայերը քաղաք առաջառ էին յարձակման Մայրաքաղաքի էմինսար Խիլմի Բէյի ղեկավարութեամբ իթթինադի անդամները գրգռում են մահմեդական-ներին Գերմանական հիւալատու Անգէրսի նախաճենութեամբ իթթինադի ժողովը քաղաքի ծայրում կազմակերպել է ատրճանակների հրաձգութեան աւարտ Փողովին ներկայ էին տեղական օրիկաների կամ դադաշների մեծամասութիւնը իրենց գէնքերով և ինքը հիւալատու մասնակցում էլ հրաձգութեանը Հրաւերուած էին միմիայն մահմեդականները, նոյն խոկ քաղաքամերձ գիւղերից Այդպիսի անժամանակ և չեղած մի զուարճութիւն հայերին կոտորածի երկիր ներշնչեց և վհասումն առաջ բներեց սուսահպատակների մէջ, Այդ պատճառով ևս մեր գրակամանի միջոցով բողոքեցի զուարճութեան դէմ վալին, որովհետեւ այդ բանը ահ ու սարսափ է ատրածում.

(Ստորագր.) Աղամօվ.

№ 129. Ոտուաց Հաւատարմատարը Տաճկաստանում Արտարին զործոց նախարարին.

Կ. Պօլիս, 6/12 յունվարի 1914թ. (հեռագիր).

Դիմում եմ Ձեր յունվար 4-ի հեռագրին:  
Տաճկաց Հաւատարմատարի արած երեք կէտերի ղեկուցման առթիւ թոյլ եմ տալիս ասել հետևեալը, 1) Համաձայն 1913թւի վիլայէթների օրէնքի 80 և 81-րդ յօդուածների ուսումնարանային ծախսերը մասնում են վիլայէթի բիթքէչտի մէջ, քննութեան ենթարկուելով ընդհանուր խորհրդներում Այս տեսակէտից տաճկական պահանջը մնում է միմանդամայն անհասկանալի, Հայերը գանգատուում են, որ նրանք ընդհանուր հարկատութիւնից չեն ստանում իրենց ուսումնարանների ծախսերի համար համապատասխան մասը Հայերի համար օգտաւէտ կլինէր, եթէ իւրաքանչիւր աղդութիւն իրաւունք ունենար իր մէջ ուսումնարանների և եկեղեցիների պիտոյըների վերաբերմամբ տուր-քեր նշանակելով բայց հազիւ թէ տաճկիները ընդունեն այդ պահանջը; 2) Մահմեդականների և ոչ-մահմեդականների հաւատար ներկայացչութեան սկզբունքը Վարչական Խորհրդներում չի կարող կասկած յարուցել, որովհետև նոյն իսկ համաձայն հին տաճկական օրէնքի նրանց 4 անդամներից երկուսը մահմեդական էին, իսկ երկուսը ոչ-մահմեդականն Մնացած անդամները-պաշտօն-եաներ և համանջի ներկայացուցիչներ էին, Խօսքը Ընդհանուր Խորհրդի մասնի է; 3) Համբդիական հեծելազօրի մասին կարողեմ դիմել միմիայն Դեսպանի յունվար 4-ի հեռագրին:

Թեումէ, որ տաճկաց Հաւատարմատարը լաւ ծանօթ չէ գործի հետ:

(Ստորագր.) Գուլբէվիչ.

Հայագում (Հայական Ա)

№ 130. Դեսպանը Ֆուանսիայում Արտաքին գործոց Նախարարին,  
Փարիզ, 6/19 յունվարի 1914 թ. (հետագիր).

Արտաքին գործոց Նախարարը համամիտ է Զեղ հետ այն բանում, որ  
տաճկական փոխառութեան և չըստ տոկոսային յաւելման լուծման հարցում  
անհամեշտ է Երրեակ Համաձայնութեան բոլոր երեք պետութիւնների հա-  
մերաշի գործունելութիւնը. Այդ հանգամանքը կ. Պօլաւմ մեծ նշանակու-  
թիւն կտայ նրանց ձայնին. Գումերը աւելացրեց, որ այստեղ ժամանող Զա-  
ւիդի հետ տեսնուելիս նա յայտնելու է նրան ամենակորական ձևով, թէ Ֆուան-  
սիական Կառավարութիւնը աջակցութիւն կանի միմիայն այն դէպքում, եթէ  
Տաճկա ստանց սաացած գումարները չծախսի նոր սպառագինութիւնների վրայ  
իր նուաճողական ձգութեան իրագործումն տալու համար Տաճկաստանը նմա-  
նապէս պիտի պարտաւորուի ցոյց առաջ խոնհեմութիւն և խաղաղասիրութիւն  
գանազան հերթական հարցերում, ինչպիսին և գերմանական պատերազմական  
պատգամաւորութիւնը, հայկական բարենորոգութեան կղզիների հարցը և այլն  
(Ստորագ.) Իզվուսկի.

№ 131. Ռուսաց Հասատարմատարք Ցամկաստանում Արտաքին գործոց  
Նախարարին.

Կ. Պօլիս, 7/20 յունվարի 1914 թ. (հետագիր).

Անդրլիական հիւպատոսի տեղեկութիւնները Էրզրումից, ինչպէս նաև  
Աղամօվի հետագիրը, ցոյց են տալիս, որ մահմեդական ամբոխի Փանատիկո-  
սութեան բռնկումը հնարաւոր է, եթէ բարենորոգութեան ներմուծումը յէ-  
տաձգուի: Ի նկատի ունենալով այդ հանգամանքը, ես անհատապէս առաջար-  
կեցի Մեծ Ազգիրին հետևեալ ձեւը. «Մինչև վերջնական ցուցակագրու-  
թիւնը, ըրպիսին ձեռնարկելու են Ընդհանուր Վերատեսուչները ամենակարճ  
ժամանակամիջոցում և եթէ հնարաւոր է մի տարուց ոչ ուշ, չորոշի զա-  
նազան դաւանութիւնների, աղջութիւնների և լիզունների ճիշտ համաշխափու-  
թիւնը, - էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայէթների ընդհանուր ժողովների  
ընտրողական անդամները պիտի ընտրուեն հաւասար թւով մահմեդական-  
ներից և ոչ մահմեդականներից, իսկ Սիվազի, Խարբերդի և Դիարբերից  
վիլայէթներում անդամների ՝ թիվներու են մահմեդական և ՚ի ոչմահմեդա-  
կան: Վարչական խորհրդների ընտրողական անդամները առաջուայ հման  
ըոլոր վիլայէթներում ընտրուելու են հաւասար թւով մահմեդականներից և ոչ-  
մահմեդականներից: Հաւասարութեան սկզբունքի սահմանումը մահմեդական-  
ների և քրիստոնեաների մէջ խստի ընդունում է ոստիկանութեան և ժամա-  
գարմերիցի ընտրութեան հարցում և հնար եղածին չափ երկու սեկ-  
տորների մնացած ուրիշ հասարակական պաշտօնների դասաւորման հարցում: Ես,  
դարձեալ անհատապէս, ուսումնարանների համար առաջարկեցի հետևեալ  
ձեւ, - ընթարքանչիւր համայնք իր վիլայէթի ժողովը դական լուսաւորու-  
թեան բիւղժէտից սպանալու է՝ համապատասխան այն չափի, որով մասնակ-  
ցում է ժողովրդական լուսաւորութեան հարկերին: Կայսերական կառավա-  
րութիւնը ոչ մի հակառակութիւն ցոյց չի առաջ այն բանում, որպէս զի հա-  
մայնքներում հաւատակիցները մասնակցեն իրենց ուսումնարանների պահելու  
ժամաներին: Հաւատակիցները

Մեծ Վէգիրը լիակատար համակրանքով վերաբերուեց դէպի այդ առաջարկութիւնը։ Բայց որովհետև Նախարարների Խորհրդում նա մեծ հեղինակութիւն չի վայելում, ևս բարւօք համարեցի զիմել կարինետի աւելի ազդեցիկ անդամներին—Թալաաթին— և Խալիլին։ Ֆաանիական Հաւատարմատարը խոստացաւ ազդել իր անձնական ընկեր Զեման-Փաշայի վրայ, Դժբախտարար ինչպէս Թալաաթին, նոյնպէս և Խալիլը յամառ կերպով պնդում են այն առաջարկութեան վրայ, որի մասին Զեղ յայտնել է Դեսպանի յունվար 16-ի հեռագիրը Հաւասար ներկայացչութեան սկզբունքը նրանք ընդունում են բացառապէս Վանի և Բիթլիսի վիլայէթների համար Նոյն հսկ Էրզրումի վիլայէթի համար նրանք պնդում են ընտրութիւնների այն ձեր վրայ, որի մասին հազորդել է վերցիշեալ հեռագիրը Աչքի առաջ ունենալով այս յամառութիւնը, որ ցայց են տալիս Տաճկաստանի բախար տնօրինող մի բանի անձնաւորութիւններ, ես կարծում եմ, որ Նախարարների Խորհրդը չի ընդունի ոչ Դեսպանի ձեւը (յունվ. 4 հեռագիրը) և ոչ էլ իմ միանգանան անհատական բնոյթ կրող առաջարկութիւնները Այս պատճառով խնդրում եմ Զերդ Բարձր Գերազանցութիւնից ինձ ցուցումներ տաք և կարևոր դէպում ճնշում գործ դնէք Տաճկաստանի ներկայացչի վրայ Պետերբուրգում,

(Ստորագր.) Դուլկէվիչ.

№ 132. Արտաքին գործոց Նախարարը ուստաց Հաւատարմատարին  
Տաճկաստանում։

Ս. Պետերբուրգ, 8 յունվարի 1914 թ. (հեռագիր)։

Դիմում եմ Զեր յունվար 7-ի հեռագրին։

Ուսումնաբանների առթիւ առաջարկած Զեր ձերն տալիս ենք լիակատար հաւատութիւն։

Ներկայացչութեան հարցի վերաբերմամբ գտնում ենք, որ վերջնական հարաւոր զիջումը մեր կողմից կազմում է հաւասար ներկայացչութեան սկզբունքի սահմանումը Վանի, Բիթլիսի և էրզրումի վիլայէթների համար։  
(Ստորագր.) Սաղօնօվ։

№ 133 Ուստաց Հաւատարմատարը Տաճկաստանում՝ Արտաքին գործոց  
Նախարարին։

Կ. Պոլիս, 10|2, յունվարի 1914 թ. (հեռագիր)։

Դիմում եմ Դեսպանի յունվար 4-ի և Զեր յունվար 8-ի հեռագիրներին։  
Ուսումնաբանների առթիւ իմ ձեւը ընդունուած է, իսկ Ըսդհանուր Խորհրդների կազմին և պաշտօնների գասաւորմանը վերաբերող առաջարկութիւնները մերժուած են Նախարարների Խորհրդի կողմից։ Յայտնեյով այդ մասին, Մեծ Վէգիրը աւելացրեց, որ էրզրումի վիլայէթում տաճիկ ժողովրդի ազգայնական գիտակցութիւնը աւելի է զարգացել, մահմեդական հոգևորականութեան ազդեցութիւնը այնտեղ առաջնապէս զգալի է և Նախարարների Խորհրդը հաւասար ներկայացչութիւնը առաջնուայ նման հնարա-

ւոր է գտնում միմիայն վանի և Բիթլիսի վիլայէթի համար։ Ինչ վերաբես  
բերում է պաշտօնների դասաւորման հարցին, Խորհուրդը պնդում է, որ  
հաւասարութեան սկզբունքը բոլոր պաշտօնների համար պիտի առաջանա  
փակուի «autant que possible» նախադասութեամբ՝ առանց բացառութեան  
ուսուհանութեան և ժանդարմերիայի Ռողէս պատճառ այդ յամառութեան  
մատնացոյց հն անում այն հանդարձանքի վրայ, որ անհնարին է միանդամից պաշ-  
տօնագործ անել տաճիկ ոստիկանների և ժանդարմերիայի անդին բանա-  
կութիւնը, որոնց մեծամասնութիւնը փոխադրուած է Մակեդոնիայից և Թրա-  
կիայից։

(Ստորագր.) Գուլիկիվիչ

№ 134. Ռուսաց Հաւասարմատարը Տանլաստանում Արտաքին գործոց  
Նախարարին.

Կ. Պոլիս, <sup>12</sup>/<sub>15</sub> յունվարի 1914 թ. (հետագիր)։

Դիմում եմ Ձեր յունվար 10-ի հեռագրին։

Մեծ Վէզիրը և Թալաւաթը համաձայնուեցին մոցնել հաւասար ներկա-  
յացչութիւնը նաև էրզրումի վիլայէթում, միմիայն մի պայմանով, որ յիշ-  
եալ սկզբունքը ներմուծուի ոչ թէ անյապաղ, ինչպէս Վանում և Բիթլի-  
սում, այլ այն դէպքում, եթէ ցուցակագրութիւնը չի վերջանայ մօտակայ  
տարուայ ընթացքում Ոստիկանութեան և ժանդարմերիայի պաշտօնների  
դասաւորման հարցում տաճիկները համաձայնուեցին, որ վերատեսուները  
հաւասարութեան սկզբունքը գործադրին ոչ թէ «autant que possible» (ինչ  
չափով որ հնարաւոր է), այլ համաձայն իմ տաշարկած ձեր «à la mesure que  
les postes deviendraient vacants» (ինչ չափով որ ազատ պաշտօններ կը աց-  
ուին), Միւս պաշտօնների համար հաւասարութեան սկզբունքը պայմանա-  
ւորում է «autant que possible»։ Վերջին կէտը որում տաճիկները զիշել  
չեն ցանկանում, ուս Արվազի, Խարբերդի և Դիարբերդի ընդհանուր խոր-  
հրդականների ներկայացչութիւնն է։ Տաճիկները հրաժարում են այդ վիլայ-  
էթների համար ընդունել մահմենդական <sup>2/3</sup> անդամների դիմաց քիմատոննեա-  
ների <sup>1/3</sup>, ներկայացչութիւնը և առաջարկում են անյապաղ սահմանել ըն-  
տրութիւնների համեմատական սկզբունքը, որով մահմենդական ընտրութիւնների  
թիւը որոշում է գոյութիւն ունեցող ընտրութական ցուցակներով, իսկ ոչ-  
մահմենդականներինը համապատասխան համայնքների ներկայացրած ցուցակ-  
ներով։ Ի նկատի ունինալով Գերմանական Դեսպանատան վերին աստիճա-  
նի կեղծ վարժունքը, սամանաւանդ վերջին ժամանակներս, չեմ կարծում,  
թէ հսարաւոր լինի զիշումներ ձեռք բերել այս վերջին հարցումն էլ եթէ  
Ձերդը Բարձր Դերագանցութիւնը ցանկանում է Խարբերդի, Արվազի և Դիար-  
բերդի վիլայէթներում ապահովել հայերի համար նըանց խնդրած <sup>1/3</sup>,  
ձայնը, այն ժամանակ անհրաժեշտ է, որ Դուք անձամբ ճնշում գործ զնէք  
տաճկական Հաւասարմատարի վրայ Հակառակ դէպքում, խնդրում եմ Ձերդ  
Բարձր Գերազանցութեան, որ շուտափոյթ լիազօրէք ինձ կնքելու (parapher)  
Մեծ Վէզիրի հետ կայացած համաձայնութիւնը։

(Ստորագր.) Գուլիկիվիչ

№ 135. Արտաքին գործոց Նախարարը ուստաց Հայաստարմատարին Տաճ-  
կաստանում;

Կ. Պօլիս, 15 յունվարի 1914 թ. (հեռագիր).

Զեր յունվար 12-ի հեռագիրը ստացուած է.

Երեկ ես ասացի Ֆախրէդդին Բէյին, որ ժամանակ է վերջ տալ հայ-  
կական բարենորոգութեաներին և խուսափել տարածայնութիւններ ու ձգձում-  
ներ առաջ բերելուց, որովհետև այդ հանգամանքները միմիայն խրախու-  
սում են տեղական խոսվարար տարրերին, ի վերջոյ ես խնդրեցի նրան  
հեռագրել իր Կառավարութեանը հետևեալը.

«Սիլվալի, Խարբերգի և Դիարբէքիրի վիլայէթների Ընդհանուր Խոր-  
հրդներում ընտրողական անդամների <sup>2</sup> և բազկացած պիտի մնի մահմեդա-  
կաններից և <sup>1/3</sup>-ը բարիստոնեաններից»:

(Ստորագր.) Մազօնօվ.

№ 136. Ուստաց Հայաստարմատարը Տաճկաստանում Արտաքին գործոց  
Նախարարին.

Կ. Պօլիս, 16/<sub>2</sub>, յունվարի 1914 թ. (հեռագիր).

Դիմում եմ իմ յունվար 12-ի հեռագրին:

Տեղեկացայ, որ եթէ Լայսերական Կառավարութիւնը ամենամօտիկ  
ժամանակամիջոցում չպատասխանի Տաճկաստանի վերջին առաջարկութիւն-  
ներին, այս ժամանակ Դուռը դիմելու է անցեալ ամրան Ենիքեօյում խոր-  
հրդակցող մեծ պիտութիւնների միջամտութեանը, խնդրելով վճառել նրանց  
մէջ մացած վիճելի հարցերը իրը թէ Դուռը մտադիր է առաջարկել մեծ  
պիտութիւններին հետեւեալ երկու հարցերը. Ա—Համապատասխանում է ար-  
դիօք համեմատական ընտրողական սկզբունքը անաշառութեան պահանջնե-  
րին, թէ ոչ, Ե—Արդիօք համեմատական սկզբունքում բաւականին չեն ա-  
պահովում հայերի շահերը այն ընտրողական ցուցակները, որ կազմելու են  
իրենք հայերը և որոնց կառավարութիւնը հաւատ է ընծայում Երկիւլալի  
է, մի գուցէ այս ձեռվուած հարցը վճափ գործը ոչ լօգուած մեզ, նամա-  
նաւանդ, որ ենթադրուող բայլի հարաւարոր խրախուսութիւնը մեծ պիտութիւն-  
ների ներկայացուցիչներից մէկն է».

(Ստորագր.) Գուլկէվիչ.

№ 137. Ուստաց Հայաստարմատարը Տաճկաստանում Արտաքին գործոց  
Նախարարին.

Կ. Պօլիս, 16/<sub>2</sub>, նոյեմբերի 1915 թ. (հեռագիր).

Զերդ Բարձր Գերազանցութեան պնդութեան ըստ երկոյթին տաճիկ-  
ների վրայ խիստ ազգեցութիւն են ունեցել Մեծ Վէզիրը այսօր ինձ հրաւի-  
րեց իր մօտ: Խօսակցութեան սկզբում Սայիդ-Խալիմը պնդում էր իր տեսակէտի  
վրայ, որը իրը թէ ունի սկզբունքային նշանակութիւն: Չսայած այդ հան-  
գամանքին, մաքերի երկար փոխանակութիւնից յետոյ ինձ յաջողուեց հա-

մողել նրան ընդունելու և ի զեկուցումն հետեւալ ընագիրը, որը հաւանութիւն գտաւ է հետեւ այդանու մտադրութիւնամբ գումարած նախարարների Խորհրդի կողմից:

«Սիվազի, Խարբերդի և Դիարբերդի վիլայէթներում ընդհանուր խորհրդների անդամները այժմեանից ընտրուելու են համեմատական սկզբունքով—այսինքն մինչև ցուցակագրութիւնը մահմեդական ընտրողները որոշում են այն ցուցակներօվ, որոնց հիման վրայ կատարուեցին վերջին ընտրութիւնները, իսկ ոչ մահմեդականները—իրենց համայնքների ներկայացրած ցուցակներով։ Սակայն, եթէ նիւթական դժուարութիւնների շնորհիւ այդպիսի ժամանակաւոր ընտրողական կարգ անիրազործելի մնայ, այն ժամանակ Ընդհանուր Վեհատեսուչը Սիվազի, Խարբերդի և Դիարբերդի Ընդհանուր Խորհրդների տեղերի գասաւորման համար իրաւունք ունի առաջարկելու այն համաշափութիւնը, որ աւելի կհամապատասխանէր յիշեալ երեք վիլայէթների իսկական պահանջներին և պայմաններին։»

Այդ զիջումը պիտի համարել Դասն վերջնական զիջումը, որից աւելին նա չի անի։ Չվերաւորելով տաճիկների ինքնասիրութիւնը, այս ընազիրը միենայն ժամանակ Ընդհանուր վերատեսուչներին (որոնց մեծ պետութիւնները ի հարկէ կպաշտպաննեն) հնարաւորութիւն է տալիս ապահովելու հայրի համար արդարացի ներկայացչութիւն յիշեալ վիլայէթներում։

Ի նկատի ունենալով այս հանդամանները, թոյլ եմ տալիս ինձ բարեխօսելու Զերդ Բարձր Գերազանցութեան առաջ վերոյիշեալ ձեի ընդունման համար, որպէս զի խուսափել իմ այսօրուայ հեռազրում յիշուած հնարաւորութիւններից և պահել հայկական բարեհորդութեամբ հարցի նախաձեռնութիւնը ուսւական ձեռքերում։

(Ստորագը.) Գուլկէվիչ.

№ 138. Արտաքին գործոց նախարարը ուսւաց Հաւատարմատարին Տանկառանում։

Ս. Պետերբուրգ, 17 յունվարի 1914 թ. (հեռագիր).

Դիմում եմ մեր Դիսպանի 1913 թ. գեկտիմենի 16-ի հեռագրին։

Համաձայն տեղիս հայ գործիչների Յերկինից ստացած տեղեկութիւնների, իրը թէ Սուլթանը խնդրել է մեծ պետութիւններին ցոյց տալ իրեն տաս թեկնածու, որոնցից նա երկուսին ընտրելու է Ընդհանուր Վեհատեսուչ։ Այդպիսի մի ենթազրութիւն չի համապատասխանում Մեծ Վէզիրի արած գեկուցմանը Կայսերական Դեսպանին, որով Դուռը ըրանացի՛ կերպով է դիմելու մեծ պետութիւնների ներկայացուցիչներին։ Բացի այդ, շնորհիւ միջազգային մտերմական բանակցութիւնների, մենք արդէն աչքի առաջ ունենք Ընդհանուր Վեհատեսուչներ։

(Ստորագը.) Սազօնօվ.

Հ. 139. Խոսաց Հաւատարմատարք Տաճկաստանու Արտաքին գործոց  
Նախարարին.

Կ. Պոլիս, 18/31 յունվարի 1914 թ. (հեռագիր).

17 յունվարի հեռագիրը ստացայ:

Դուն դիմումը մեծ պետութիւններին կլինի այն ձեռվ, որի մասին  
յայտնում է Դեսպանի ուղարկած 1913 թ. դեկտեմբեր 16-ի հեռագիրը:

Բերլինից ստացուած տեղեկութիւնները, որոնց մասին յիշել են հա-  
յերը, անհիմն են:

(Ստորագր.) Գուլկէվիչ.

Հ. 140. Արտաքին գործոց Նախարար ուսաց Հաւատարմատարին  
Տաճկաստանում:

Ո. Պետերբուրգ, 18 յունվարի 1914 թ. (հեռագիր).

Դիմում եմ յունվարի 19 ի հեռագրին: Զեր յունվար 16-ի հեռագիրը  
ստացուած է:

Մենք երկիւդ ենք կրում, մի զուցէ Տաճկաստանը վերաբնակեցման  
միջոցով Հայաստանում ստեղծէ մահմեղական մեծամասնութիւն: Այս պատ-  
ճառով մենք բացասաբար ենք վերաբերում դէպի համեմատական սկզբանքը  
և գերադասում ենք ընդհանուր խորհրդներում հիմնել որոշ համաշափութիւն  
ազգութիւնների ներկայացուցիչների մէջ:

Ցուցակագրութեան արագացումը նպաստաւոք է տաճիկների համար,  
որովհետև հարաւորութիւն է տալիս նրանց շահաւետելու հայերի ընաշխա-  
ման բազմամեայ քաղաքականութեան հետևանքները, այն ինչ շատ հայեր  
միմիան այժմս կարող էին վերադասնալ իրենց ծննդավայր:

Հրաւիրելով տաճկաց Հաւատարմատարին ինձ մօտ, ես յայտնեցի նրան,  
որ մենք Սիվազի, Խարբերդի և Դիարբէքիրի համար պնդում ենք այն ձեր  
վրայ, որ ըերուած է իմ յունվար 15 ի հետագրի մէջ, էրդրումի վիւաչէթի  
վերաբերմամբ ես մերժեցի տաճիկների առաջարկած այն պայմանը, որով  
հաւասար ներկայացչութիւնը ներմուծուելու է ոչ թէ անյապազ, այլ նայած  
ցուցակագրութեան և ինպեսցի նրան յայտնել Դունը մեր հետևեալ պա-  
հանջը:

«Երդրումի վիւաչէթում ընդհանուր խորհրդների ընտրողական անդամ-  
ները՝ առանց սպասելու ցուցակագրութեան, այժմեանից հաւասար թւով  
ընտրուելու են մահմեղականներից և ոչ—մահմեղականներից»:

Տաճկաց Հաւատարմատարի հականաւմանը—թէ Թուրքիայի յայտնած  
առաջարկութիւնները նրա ամենալիրջին զիջումներն են, ես պատասխա-  
նեցի, որ մենք այդ բանը չենք կարող ընդունել, որովհետև Ռուսաստանը  
վաղուց ինչ արել է իր վերջին հարաւոր զիջումը: Յարմար դէպօւմ  
կարող էք յայտնել, թէ Դուն դիմումը մեծ պետութիւններին չի կարող  
մեզ յետ կանգնացնել մեր պահանջներից, այլ կոտիպի վերադասնալ մեր  
նախաձրագրին, որովհետև զիջելով մենք ենթադրում էինք, որ Դուռը  
կըսահատի զիջումները և իր հերթին կերպութիւնների մեր վերջնական պահանջ-  
ները:

Ի դէպս, եթէ յիշեալ պահանջները կընդունուեն, Դուռը լիազօր էք Կայ-

սերական Կառավարութեան կողմից հայկական բարեհորոգութեան վերաբեր-  
մամբ համաձայնութիւն կնքելու Մեծ Վէզիրի հետ  
(Ստորագը.) Սագօնօվ.

№ 141. Ռուսաց Հասատարմատարք Տաճկաստանու Արտաքին գործոց  
Նախարարին.

Կ. Պօլիս, 20 յունվարի 2 փետրուարի 1914 թ. (հեռագիր).

Ստացայ Զեր յունվար 18-ի հեռագիրը:

Ես յայտնեցի Մեծ Վէզիրին, որ իրաւունք եմ ստացել նրա հետ հա-  
համաձայնութիւն կնքելու միայն պայմանով, որ ինչպէս Վանի ու Բիթլիսի  
վիլայէթում, նոյնպէս և երրում վիլայէթում առանց ուշացնելու ներ-  
մուծում համեմատական սկզբունքը, իսկ Խարբերդի, Դիարբեքիրի և Սիվազի  
ընդհանուր խորհրդներում հայերին անյապաղ յատկացուի տեղերի<sup>1/3</sup>։  
— Մեծ Վէզիրը այդ մասին տեղեկութիւն ստացել էր տաճկաց Հա-  
ւատարմատարք և գտնուում էր վերին աստիճանի յուզուած դրութեան մէջ։  
Նա սաստիկ վշտացել էր այն բանով, որ Կայսերական Կառավարութիւնը  
ցոյց չտուից ամենանուազ վստահութիւն, ասանց որի անհնարին են մեծ  
պետութիւնների բանակցութիւնները և համաձայնութիւն կայացումը։ Սայիդ  
Խալիֆը աւելացրեց, որ կառավարութիւնը ոչ մը զիջում այլ ևս չի կարող  
անել, որպէսիտե այս հարցում նա հնարաւորութիւն չունի արդարացնելու  
պալատների առաջ իր վրայ դրած յայսերը։ Այդ պատճառով նա ուժին խնդ-  
րում է Զեր՝ ընդունել ծրագիրը ներկայ նմբազրութեամբ և յայտնում է, որ  
բարեհորոգութեարի ներմուծման ուշացնելը արգեն առիթ է տւել մացած  
միծ պետութիւնների անբաւականութեանը։ Իմ կողմից անհրաժեշտ եմ  
գտնում աւելացնել հետեւալը։ Զեր երկիրը այն առթիւ, որ չնորհիւ վերա-  
բնակեցման հայաստանում կստեղծուէր մահմեդական մեծամասնութիւն,  
կարել է վերացնել՝ մտցնելով վերատեսուչների անուան և նրանց մասնակ-  
ցութեամբ որպատաճ հրահանգների մէջ ուսուական ծրագրի երկու կէտերը.  
յօդ. 19. նահանգի տերը իտորիայի վրայ արգելում է բնակեցնել մուշաջիր-  
ներին\* և յօդ. 14. «միմիայն նստակեաց բնակչութիւնը իրաւունք ունի  
ընտրելու և ընտրուելու»։

(Ստորագը.) Գուրէէվիչ.

Ռուսաց Հասատարմատարք Տաճկաստանու Արտաքին գործոց  
Նախարարին.

Կ. Պօլիս, 20 յունվարի 2 փետրուարի 1913 թ. (հեռագիր).

Դիմում եմ Զեր 18 յունվարի հեռագրին։

Միծ պետութիւնների ներկայացուցիչներից միքանիսը դժբախտարար  
չեն համակրում մեր վերջին պնդումներին նրանք գտնում են, որ տեղերի<sup>1/3</sup>  
ապահովացումը հայերի համար երեք վիլայէթներում երկրորդական հարց է,  
Այս զէտքում գուցէ աւելի յարմար է օգտուել Զերդ Բարձր Գերազանցու-  
թեան ինձ թոյլատրած իրաւունքից, այսինքն առաջարկել տաճիկներին վե-

լազարնալ մեր նախածըռագրին: Եթէ կայսերական կառավարութիւնը որոշի ընդհատել բանակցութիւնները, այն ժամանակ մեզ համար աւելի նպատակայարմար կլինէր հանդէս գալ մեր նախածըռագրի ընդարձակ պահանջներով: (Ոտորագր.) Գուլկէվիչ.

№ 143. Արտարին գրիծոց նախարարը ոռուաց Հաստարմատարին Տաճ- կաստանում.

Ս. Պետերբուրգ, 21 յունվարի 1914 թ. (հեռագիր).

Դիմում և՛ Զեր յունվար 16 հեռագրին,

Բարեհաճեցէք յայտնել Մեծ Վէզիրին հետևեալը.

Զգտելով մեր և Օսմանիան կառավարութեան մէջ համաձայնութեան կայացմանը, մենք երկու վիճելի հարցերին, այսինքն համեմատական սկզբ- րունքին և պաշտօնների դասաւորմանը, տալիս ենք հետևեալ փոխուած իշխ- բագրութիւնը. Զեր յունվար 16-ի հեռագրում յիշուած «իրանց համայնքների ներկայացրած ցուցակներուվ» խօսքերից յետոյ պէտք է աւելացնել. «Համեմատական սկզբունքը չի վերաբերում վիլայէթի կօմիտէտի անդամների ըն- տրութեանը. փոքրամասնութիւնը այսուել միշտ պիտի ունենայ մի ներկայացուցիչ՝ Բացի այդ անհրաժեշտ է ընդհանուր վերատեսուչների հրանդ- ների մի յօդուածով պարտաւորացնել Տաճկաստանին, որ այժմս և եթ նա համաձայնուի միջոցներ ձեռնարկել վերալարձնելու քրիստոնեայ հոգատէրե- րին նրանց հողերը և ընակեցնի ուսումէլիսական կամ ուրիշ փախատականնե- րին բարենորոգուող վիլայէթներում: Պաշտօնների դասաւորման նախադա- սութիւնը ցանկալի է խմբագրել հետևեալ ձևով. «Համաձայն պաշտօնների աստիճանաբար բացման և ծառայութեան նոր պայմանների ներմուծման»:

Մեր այդ նշանաւոր վլչութերի համար մենք տաճիկներից պահանջում ենք միմիայն համեմատական սկզբունքի սահմանումը էրզրումի վիլայէթում, որովհետեւ առանց նրան բարենորոգուածների հարցը էապէս կխանդարուի: Կար- ծում ենք, թէ մեր վերջին խաղաղասիրական պայմանները Դուռը կլնահատի ըստ արժանաւորութեան:

(Ստորագր.) Սաղօնօվ.

№ 144. Ոռուաց Հաստարմատարը Տաճկաստանում Արտարին գրիծոց նախարարին.

Կ. Պոլիս, 23 յունվարի—5 փետրուարի 1914 թ. (հեռագիր).

Սայիդ Խալիլը, որին ևս ծանօթացը Զեր 21 յունվարի հեռագրի բո- վանդակութեան հետ, յայտնեց ինձ այսօր, որ Տաճկաստանը, ի ցաւ Մեծ Վէզիրի, կարող է մեզ անել միմիայն մի զիջում՝ ընդունելով Զեր պահանջը վերաբերմամբ փոքրամասնութեան ներկայացչութեան ապահովացման այն վիլայէթների կօմիտէտներում, ուր անյապաղ ներմուծում է համեմատա- կան սկզբունքը. Մեծ Վէզիրը ուժգին խնդրում է Զերդ Բարձր Գերազան- ցութիւնից չպնդել ուրիշ կէտերի վրայ, որովհետեւ Դուռը ներքին բաղաքա- կան կշռադատութիւններից դրդուած չի կարող ընդունել յիշեալ կէտերը: Նա- քնդգծեց Տաճկաստանի մեզ հետ հաշտ ապրելու ցանկութիւնը և ինդրեց գնահա-

տեղնքա, արած այն զիջումները, որոնք խիստ ծանր են տաճկական ինքնասիրութեան համար Այդ պատասխանը ես վերագրութեմայն խորհրդական որ համաձայն իմ քաղած արժանահաւատ տեղեկութիւններին, նա ստացել է Աւատրիական Դեսպանից և Գերմանական Հաւատարմատարից: Թոյլ եմ տալիս ինձ կարծելու, թէ բարենորոգումների շուտափոյթ ներմուծման համար կարելի է առայժմս սահմանափակուել այն զիջումով, որը յաջողացրեց Զերդ Բարձր Գերազանցութիւնը: Ներկայ շօվինիստական կարինեալից՝ առանց արտակարգ ճնշման գործարման գժուար է սպասել հաւասարութեան սկզբունքի անյապազ ներմուծումը իրգործի վիլայէթում: Հողերի վերադարձման հայցը նախատեսել է համաձայնութեան ծրագրի այն կէտը, որի հիման վրայ հոդային վէճերը բննուում են Ընդհանուր Վերատեսուչների անմիջական զիկավարութեամբ: Մուհաջիր մասին Մեծ Վէզիրը յայտնեց, որ Դուռը ցանկանում է բնակեցնել մահմեդականներին ոչ թէ Հայաստանում, այլ Փոքր-Ասիայի ափերին: Մայիս Խալիմը, իր ասելով, անգօր է համոգելու կարինեալի անդամներին, որպէս զի նրանք մեծ պետութիւնների առաջ յիշեալ մտքով ձևական պարտականութիւն վերցնեն իրենց վրայ: Կարծում եմ, թէ զժուար չի լինի ստիպել, որ Դուռը մուհաջիրների առթիւ համապատասխան կէտ մտցնի Ընդհանուր Վերատեսուչների հրահանգների մէջ:

(Ստորագը.) Դուկէվիչ.

№ 145. Արտաքին գործոց Նախարարը ոուսաց Հաւատարմատարին  
Տանկաստանում.

Ս. Պետերբուրգ, 25 յունվարի 1914 թ. (հեռագիր).

Դուք լիազօր էք ստորագրելու համաձայնութիւնը:

Ցայտնեցէք Մեծ Վէզիրին, որ ցուցակագրութիւնը անշուշտ պիտի կատարուի միմիայն Ընդհանուր Վերատեսուչների վերահսկողութեամբ, որովհետեւ միայն այդ պայմանն է ապահովութիւն ներկայացնում ցուցակագրութեան անաշառ կատարման համար:

(Ստորագը.) Սազնով.

№ 146. Ոուսաց Հաւատարմատարը Տանկաստանում Արտաքին գործոց  
Նախարարին.

Կ. Պոլիս, 26 յունվարի (8 վետրուարի 1914 թ. հեռագիր).

Մեծ Վէզիրը և ես այսօր ստորագրեցինք հայկական բարեհնորոգումների առթիւ կայացած մեր համաձայնութիւնը, որի բնագիրը ուղարկում եմ վաղը: Մայիս-Խալիմը յոյս յայտնեց, որ կնքուած պայմանը կնպաստի երկու պիտութիւնների յարաբերութիւնների բարեկամանը և ինդրեց յայտնել Զեզ իր խորին երախտիքը այն խաղաղասիրական վերաբերմունքի համար, որ ցոյց տուեց Զերդ Բարձր Գերազանցութիւնը:

(Ստորագը.) Դուկէվիչ.

147. Դուս-տաճկական համաձայնութեան ընագիրը վերաբերեամբ հայկական բարենորդումների.  
(Թարգմանութիւն).

Նորին Գերազանցութեան պարոն Կոնստանտին Գուլկէվիչի—Ռուսական կայսերական Հաւատարմատարի և Նորին Վահեմափայլութեան Իշխան Սայդ Խալիմ Փաշայի—Օսմանեան կայսրութեան Արագին գործոց Նախարարի և Մեծ Վեգիրի մէջ համաձայնութիւն կայացաւ այն մասին, որ Ընդհանուր Գերատեսուչների նշանակման հետ, որոնք հաստատում են զլուկ Արևելեան Անառօլիայի երկու սեկորների, Բարձր Դուռը միաժամանակ զիմելու է մեծ պետութիւններին հատեսեալ յուշագրով.

Երկու օտարերկրացի Ընդհանուր Վերատեսուչներ հաստատում են զլուկ Արևելեան Անառօլիայի երկու սեկորների, պարոն Ա... սեկորնի, որ կազմում են երզումի, Տրավիզոնի և Սիլվազի վիլայէթները և պ. Յ... սեկորնի, որ կազմում են Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբերդի վիլայէթները.

Այդ սեկորների վարչութեան, արդարադատութեան, ոստիկանութեան և ժանդարմերիայի վերահսկողութիւնը կազմում է Ընդհանուր Վերատեսուչների իրաւասութիւնը:

Համաձայն Ընդհանուր Վերատեսուչի պահանջի, այն դէպքերում, երբ հասարակական անդորրութիւնը անսապահով է, զինուուրական ոյժերը դըմում են նրա իշխանութեան տակ, որպէս զի ձեռք առնեն միջոցներ՝ համապատասխան նրա իրաւունքների:

Նայած հանգամանքներին, Ընդհանուր Վերատեսուչները պաշտօնագուրկ են անում անընդունակ կամ հակարարոյ պաշտօնեաներին, դատի ենթարկելով նրանց, որոնք մեղաղղուում են պատժակիր ոճագործութիւններում: Նրանք փոխում են արձակուած ստորին պաշտօնեաներին նոր անձնաւորութիւններով, որոնք բաւարարում են ծասայութեան մէջ մանելու համար նախատեսնուած օրէնքների և կանոնների պայմաններին:

Նրանք իրաւունք ունեն առաջարկութիւններ անել Նորին Մեծութեան Սուլթանի Կառավարութեանը բարձր պաշտօնեաների նշանակման մասին:

Բոլոր արձակուած պաշտօնեաների մասին նրանք անյապաղ հայորդում են համապատասխան նախարարութիւններին համառօտ պատճառարանուած հետագերով, իսկ յետոյ մի շաբաթուայ ընթացքում իրաքանչիւր արձակուած պաշտօնեայի գործը ուղարկուում են նախարարութեան տալով պատճառների մանրամասն զեկուցում:

Լուրջ դէպքերում, երբ անյարաժիշտ է ձեռք առնել շուտափոյթ միջոցներ, Ընդհանուր Վերատեսուչները իրաւունք ունեն առանց յիտաձգման արձակելու դատաստանական անփոխ պաշտօնեաներին՝ պայմանով, որ այդ մասին անյապաղ հազրողն արգարարութեան գեղարտամենտին:

Ի դէպս, եթէ վալիները գործեն մի այնպիսի յանցանք, որը անհրաժեշտութէն պահանջում է զիմումն իսկառ միջոցների, Ընդհանուր Վերատեսուչները այդ մասին հետագործ պիտի հաղորդեն ներքին գործոց նախարարին, որը անյապաղ զեկուցում է դէպքի մասին նախարարների Խորհրդին: Վերջինս պարտաւոր է կայացնել իր որոշումը ոչ ուշ, քան չորս օր անց Ընդհանուր Վերատեսչի հեռագրի ստանալուց:

Հողային հարցերը վճռւած են Ընդհանուր Վերատեսչի անմիջական վերահսկողութեամբ:

Ընդհանուր Վերատեսուչների իրաւունքներին և պարտականութիւններին վերաբերող աւելի մանրամասն հրահանգներ կտրուեն նրանց նշանակումից յետոյ և նրանց աջակցութեամբ, ի դէպս, եթէ 10 տարուայ ընթացքում Ընդհանուր Վերատեսուչների պաշտօնը մնայ բաց, Դուռը նրանց ընտրութեան հարցում իր յոյսը գնումէ մեծ պետութիւնների բարեհաճ աջակցութեան վրայ:

Օրէնքները, հրովարտակները և կառավարչական նազորդագրութիւնները իւրաքանչիւր սեկտորում կյայտարարուեն տեղական լեզուներով եթէ Ընդհանուր Վերատեսուչը հնարաւոր է գտնում, իւրաքանչիւր կողմ իրաւունք ունի դատարանում և վարչական հիմնարկութիւններում օգտուելու իր մայրենի լեզուով: Դատավճիռները կազմում են տաճկերէն լեզուով և ըստ հնարաւորութեան թարգմանուում են կողմերի լեզուով:

Իւրաքանչիւր ցեղական տարրի մասը (ունսուր) վիլայէթի ժողովրդական լուսաւորութեան բիւթէ էտում պիսի համապատասխանի այն վճարին, որ նա տալիս է ժողովրդական լուսաւորութեան համար կայսերական կառավարութիւնը չի հակառակի այն բանին, որ հաւատակիցները մասնակցեն համայնական ուսումնարանների պահելու ծախսներին:

Խաղաղ ժամանակ իւրաքանչիւր օսմանահպատակ կատարում է իր զինուորական պարտականութիւնը այն զինուորական շրջանում, որտեղ նա ապրում է: Բայց ուղարկելով ցամաքային զօրք եմէնի, Ասսիրի և Նէջի հեռաւոր մասերը, Կայսերական Կառավարութիւնը ցնոր կարգադրութիւն կլրացնի այդ զօրքերը Կայսրութեան բոլոր մասերից, համապատասխան նրա մէջ բնակւող ազգութիւնների թւաքանակի: Բացի այդ, ծովային զօրքերի մէջ նա կմտցնի Կայսրութեան բոլոր մասերից գումարած նորակոչ զինուորներին:

Համբիլիկան զօրագնդերը փոխուում են պահեստի հեծելազօրին նրանց զէնքերը կպահուեն պահեստարանում և կտրուի իրենց միմիայն զօրաժողովի և զինավարժութեան ժամանակ: Ներանք ենթարկուում են այն զօրաքանակների հրամանատարին, որոնց շրջանում գտնուում են: Խաղաղ ժամանակ զօրքախմբակների պետերը ընտրում են օսմանիան զործող զօրքի սպաներից: Այդ զօրագնդերի զինուորները կատարում են իրենց զինուորական ծառայութիւնը մի տարուայ ընթացքում: Եթիեալ զօրագնդերի մէջ մտնելու համար զինուորները իրենց սեփական հաշուով պիտի ձեռք բերեն ձի և զգեստը լիովին: Իւրաքանչիւր անձն տռանց ցեղի և կրօնի խորութեան, որ ապրում է որոշ շրջանում և ենթարկուում է յիշեալ պահանջներին, կարող է մտնել այդ զօրագնդերի մէջ: Զօրաժողովի կամ զինավարժութեան ժամանակ զօրագնդերը ենթարկուում են կանոնաւոր զօրքերի համար սահմանուած որոշումներին:

Վիլայէթների Ընդհանուր Խորհրդների իւրաւատութիւնը որոշում է 1913 թ. (1329) մարտի 13 ի օրէնքով:

Եթիու սեկտորներում գոյութիւն ունեցող զանազան կրօնների, ազգութիւնների և լնզունների իսկական համաչափութիւնը կորոշուի փերշական ցուցակագրութեան միջոցով, որը կատարուելու է Ընդհանուր Վերատեսուչների հսկողութեամբ ամենակարճ ժամանակամիջոցում,—ըստ հնարաւորութեան ոչ աւել քան մի տարուայ ընթացքում:

Մինչև յիշեալ ժամանակը վանի և Բիթիսի վիւայէթներում Ընդհանուր Առջևդների (մէջիսի ու ումումի) և Կօմիտէաների անդամները ընտրում են հաւասար թւով մահմեղականներից և ոչ-մահմեղականներից:

Եթէ երգուոմի վիւայէթում վելչնական ցուցակագրութիւնը մի տարուայ ընթացքում չվերջանայ, այն ժամանակ Ընդհանուր Խորհրդների անդամները կընտրուեն նոյն հաւասարութեան սկզբունքի հիման վրայ, ինչ վիրոյիշեալ երկու վիւայէթներում:

Սիվաղի, Խարբերդի և Դիարքէթի Ընդհանուր Խորհրդների անդամները հէնց այժմեանից ընտրուելու են համեմատական սկզբունքով: Մահմեղական ընտրուների թիւը մինչև ցուցակագրութեան վերջանաւը որոշում է այն ընտրողական ցուցակներով, որոնք հիմք են ծառայել վերջին ընտրութիւնների համար, իսկ ոչ-մահմեղական անդամների թիւը որոշում է համաձայն համապատասխան համայնքների ներկայացրած ցուցակների:

Մակայն, եթէ զանազան գործնական գժուաբութիւնների պատճառով յիշեալ ժամանակաւոր սիստեմը նպատակայարմար լինի, այն զէպրում Ընդհանուր Վերատեսուներին իրաւունք է տրում երեք վիւայէթներում — Սիփազ, Խարբերդ և Դիարքէթի՝ առաջարկել Ընդհանուր Ժողովների տեղերի դասաւորման համար նոր համաչափութիւն, որը աւելի համապատասխանէ ժամանակի պահանջներին և վերոյիշեալ վիւայէթների կարիքներին:

Բոլոր վիւայէթներում, ուր Ընդհանուր Խորհրդի անդամները ընտրուում են համեմատական սկզբունքի հիման վրայ, փոքրամասութիւնը Կօմիտէաներում (Էնջումէն) կունենայ իր ներկայացչութիւնը:

Վարչական Խորհրդի անդամները տալաջաւայ նման ընտրուում են հաւասար թւով մահմեղականներից և ոչ-մահմեղականներից:

Հաւասարութեան սկզբունքը մահմեղականների և ոչ-մահմեղականների մէջ հաստատում է նաև երկու սեկտորների սուբիկանութեան և ժանդարմերիայի պաշտօններում՝ համաձայն աղասուած տեղերի այն զէպրում, եթէ Ընդհանուր Վերատեսուները չգտնեն այդ բանը ոչ յարմար:

Նոյն հաւասարութեան սկզբունքը հնար հղածին չափ զործադրում է երկու սեկտորների բոլոր մեացած պաշտօնների դասաւորման հարցում:

Ի հսկումն որի վիրոյիշեալ ան ձաւարութիւնները ստորագրեցին այս պայմանը և կնքեցին նրան իրենց կնիքներով:

(Ստորագր.) Գուլիկիվչ.

(Ստորագր.) Սայիդ Խալիմ.

Կ. Պոլիս, 26 յունվարի 8 գիտուարի 1914 թ. (նամակ).

**№ 148.** Ուսաց Հաւասարմատարը Տաճկաստանում Արտաքին գործոց Նախարարին:

Կ. Պոլիս, 26 յունվարի 1914 թ. (նամակ).

Ինչպէս ես պատիւ ունեցայ յայտնելու Զերդ Բարձր Դերս զանցութեանը այս տարուայ յունվար 26-ի հեռագրով, Մեծ Վէզիրը և ես ստորագրեցինք այն համաձայնութիւնը, որով Տաճկաստանը պարտաւորուում է զիմել մեծ պետութիւններին մի յուշագրով, որպէսին հայկական բարենորոգութերի առթիւ մշակեց Կայսերական Դեսպանատունը Դուան հւա միասին: Այդ զի-

մումը Դուռը կանի այն ժամանակ, երբ մեծ պետութիւնները ցոյց կտան նրան Արքեթեան Անապօղիայի համար երկու Ընդհանուր Վերատեսութ

Ցունվար 26-ի պայմանը, որ կցում եմ այս նամակին, վերջացնում է Հայաստանի բարենորդութիւնների առթիւ սկսած նախապատրաստական աշխատանքները Այդ բարենորդութիւնների հարցը հերթական դարձաւ անցեալ 1913 թ. մայիսի 24-ին, երբ Կայսերական Կառավարութիւնը մի շաբերականով զիմեց մեծ պետութիւններին, Վերոյիշեալ վաւերագիրը անկասկած ունի մեծ պատմական նշանակութիւն:

Հայաստանում բարենորդութիւններ մտցնելու պարտականութիւնը ԴՆՌ-ուեց Տաճ'աստանի վրայ առաջին անգամ 1878 թւին Սան-Սեփանոյի զաշնազրի 16-րդ յօդուածով և ընդարձակուեց Բերլինի վեհաժողովի 61-րդ յօդուածով՝ Խնչպէս յայտնի է, Տաճ'աստանը Հ'ատարեց այդ պարտ սկանութիւնը Ճիշտ է, Ռուսաստանի Անգղիայի և Ֆուանսիայի պնդումները ստիպեցին Սուլթան Արդուլ Համիդին 1895 թ. հոկտեմբեր 20-ին հրատարակել մի հրովարտակ Հայաստանի բարենորդութիւնների մասին, բայց այդ հրովարտակը զարձաւ մեաւ տառ Մինչև այսօր Հայաստանի գժբախտ քրիստոնեայ բնակչութիւնը շարունակում է տառապել տաճկական պաշտօն-նեանների կամայականութիւնից և բանութիւններից, նաև այն բրդերի անկարգութիւններից, որոնք անպատճի կերպով վասնդի են ենթարկում խաղաղ բնակչութեան կ'անքը, պատիւը և գոյը:

Գիտակցելով տաճկական վարչութեան արմասական բարեփոխութեան անհրաժեշտութիւնը Հայաստանում, Կայսերական Կառավարութիւնը քննադատութեան համար ներկայացրեց մեծ պետութիւններին բարենորդութիւնների մի ծրագիր, որ հիմնում է Ռուսաստանի, Ֆուանսիայի և Անգղիայի Դեսպանների 1895 թւին մշակած սկզբունքների վրայ Համապատասխանելով հայրել բոլոր ցանկութիւններին, այդ ծրագիրը առաջարկում է հիմնել մի Հայկական Նահանգի Ընդհանուր Նահանգութեան նշանակութ է Սուլթանը համաձայնութեամբ մեծ պետութիւններին Ընդհանուր Նահանգապետը ստանում է լայն իրաւունքներ։ Հիմնում է Նահանգապատասխան ժամանակակից իրաւասութեամբ, իսկ մասմեղականներին և ոչ-մահամդականներին նրա մէջ յատկացնում է տեղերի հաւասար թիւ Նոյն հաւասարութեան սկզբունքը որոշուած է մտցնել բոլոր պաշտօնների դասաւորման մէջ, հաշուելով նաև ոստիկանութիւնը և ժանդարմերին Ընդունում է լեզուների գործածման հաւասարութիւնը Թրդական համիդիկ հեծելազօրը արձակում է, Բոլոր պայտութիւններին արւում է ուսման աւանդութեան հաւասար իրաւունք և հարկերի սահմանութեան իրենց ուսումնարանների ծախսերի համար Հայերից ապօրինի գրաւած հողերը կիրազարձնուեն:

Ռուսական ծրագիրը, որ քննեցին մեծ պետութիւնների Դիսպանաների ներկայացրութիւնները սկսած 1913 թ. յունիսի 3-ից միշե նոյն յուլիսի 24 ը, հանդիպեց Երեսակ Դաշնադրութեան պատգամաւորների յամառ հակասակութեանը, որոնք որպէս հիմք Հայաստանի բարենորդութիւնների առաջակում էին տաճկական օրէնքները, նամանաւանդ վիլայէթների օրէնքի յաւելում և այն հրանանդները, որ Դուռը 1913 թ. յուլիս 1 ի յուշագրով յայտնեց Դեսպաններին։ Այդ ակտերով, որ տաճկական կառավարութիւնը շտապ կազմել էր Բերլինից արուած խորհրդների ազդեցութեան տակ, Տաճկահայաստանը բաժանում է երկու սեկտորի, որոնցից իրագանչիւրը իրեն գլուխ է ու-

նհնալու օտարերկրացի Ընդհանուր Վերատեսուչ Սրանց նշանակում է Սուլթանը՝ առանց մեծ պետութիւնների համաձայնութեան Վելայէթների ներկայ իրաւակարգը պահում է իր գոյութիւնը, իսկ Վերատեսուչները իրաւունք ունեն միմիայն հսկելու վարչութիւնը և արձակելու պաշտօնեաներին Կայսերական Դիսպանատունը չեր կարող, իհարկէ, ընդունել, որ Հայաստանի բարենորդութեան համբար հիմք ծառայեն տաճկական վերին առաջանանի թերի և անկապ կանոնադրութիւնները և առաջարկեց Ենիթ-Քեօյի Յանձնաժողովին քննադատել սուսական ծրագիրը: Դժբախտաբար այդ քննադատութիւնը նպաստեց միմիայն մի քանի հարցերի առթիւ համաձայնութեան կայացման, — ուսումնաբանների, հոդային հարցի և լնդուների հաւասար գործածման: Ինչ վերաբերում է բարենորդութեան դիմունքներին, մի Հայկական Նահանգի հիմնման, Ընդհանուր Նահանգգաղեանի նշանակման համաձայնութեամբ մեծ պետութիւնների, Նահանգական ժողովի գումարման և հաւասարութեան սկզբունքի ներմուծման ինչպէս այս ժողովի աեղերի դասաւորման հարցում, Նոյնպէս և մնացած պաշտօններում, — Երբեակ Դաշնագրութեան Ներկայացուցիչները անպայման թշնամարտը վերաբերութիւնը դէպի սուսական ծրագիրը: Տաճկական շահների պաշտպանութեան հարցում առանձնապէս աչքի ընկառ Գերմանական Ներկայացուցիչը և եթէ երբ և իցէ Ենիթ-Քեօյի Յանձնաժողովի արձանագրութիւնները լոյս լնծայուէին, այն ժամանակ հայերը ակնայտի կերպով կծանօթանային գերմանացների իսկական զգացմունքների հետ, որոնք աշխատել են միաժամանակ գրաւել հայերին իրենց շողոքորթող խոստութերով:

Աչքի առաջ ունենալով Ենիթ-Քեօյի Յանձնաժողովի զրազմունքների այդպիսի վախճանը, Կայսերական Դիսպանը բարուց համարեց ապահովէլ Հայաստանի բարենորդութեան իրազործումը, Կայացնելով փոխադարձ համաձայնութիւն — Երբեակ Դաշնագրութեան Դիսպանատուների հետ, իսկ ըստ առաջնոյն Գերմանիայի հետ և նրանց աջակցութեամբ առաջարկել Դուանը բորենորդութեների մի ծրագիր, որը թէ այնքան լնդարձակ չէր, ինչպէս մեր նախկինը, բայց և այնպէս ժամանակաւորապէս բաւարարութիւն կտար Անտուլիայի հայ ընակչութեանը Հօֆմէյստր Գիբսի և Բարօն Վանդինհայմի բանակցութիւնների արդիւնքը եղաւ վեց կէտերից բաղկացած 1913 թ. սեպտեմբեր ամսուայ ծրագիրը: Բաժանելով Արևելեան Անատօլիան երկու սեկտորի, այդ ծրագիրը տալիս է Դուանը իրաւունք՝ նշանակիլու սեկտորների համար երկու Ընդհանուր Վերատեսուչ, որոնց առաջարկում են մեծ պետութիւնները: Վերատեսութեանները իրաւագոր հն արձակելու բոլոր պաշտօնեաններին, նշանակելու ստորին ծառայողներին և ներկայացնել բարձր պաշտօնեաններ ու դատաւորներ Սուլթանին հաստատման համար Խերաքանչիւր սեկտորում սահմանում է ժողով, բաղկացած հաւասար թւով մահմեղականներից և քրիստոնեաններից: Մեծ պետութիւնները իրաւունք են ստանում հսկելու ներմուծուող բարենորդութեները — Կ. Պոլում իրենց Դիսպանների միջոցով, իսկ գաւում հիմքում իրենց Դիսպանների միջոցով:

Երբ առևագերմանական կէտերը հաւանութիւն ստացան ուրիշ պետութիւնների կողմից, Կայսերական Դիսպանը Կ. Պոլում մասնաւոր կերպով յայտնեց նրանց մասին Դուանը: Այդ օրուանից բարենորդութեների առթիւ վարած բանակցութիւնները ծանրացան միմիայն Ռուսաստանի վրայ: Ընդհանուր բնոյթ կրող գրաւոր մի գեկուցմամբ Տաճկասամանը պատրաստականութիւն յայտնեց:

մտցնել բարենորոգութեանը, յենուելով մեծ պետութիւնների բարոյական և նիւթական աջակցութեան վրայ (Հոկտեմբեր 12), բայց յետոյ աշխատեց խոյս տալ այն բանից, որ Ընդհանուր Վերատեսուչները նշանակուին մեծ պետութիւնների առաջարկութեամբ Տիեսնուելով Կայսերական Դեսպանի հետ, Մեծ Վէզիրը առաջարկեց հիմել Տաճկամսն Վերատեսուչներին կից Օտարերկրացի Խորհրդականները, որոնց ձեւքում փաստապէս կենտրօնանար ամբողջ Խշանառութիւնը Սակայն 1913 թ. հոկտեմբեր 25-ին Խորհրդականների մասին Ներկայացրած տաճկական ծրագիրը որոշումին բաւարարութիւն չտուեց վերացիշեալ պայմաններ և ընդհակառակը ոչ մի էական իրաւունք չյամկացրեց նրանց: Այդ պատճառով Կայսերական Դեսպանը Մեծ Վէզիրի հետ երկար բանակցութիւններ վարելուց յիսոյ արժամաշակն քննութեան հնթարկեց ծրագիրը, մացնելով նրա մէջ մի շարք ուղղումներ և յօդուածներ, որոնք իրօք առաջնորդում էին տաճկական Ընդհանուր Վերատեսուչների և նմանիկումը օաւարերկրացի Խորհրդականներին: 1913 թ. նոյեմբեր 9/22 Հօֆմէյստր Գիրսը յանձնեց վերամշակուած ծրագիրը դարձեալ մասնաւոր կերպով Մեծ Վէզիրին: Յիշեալ ծրագիրը, որոշում է Վերատեսուչների և Խորհրդականների ընդհանուր իրաւասութեան սահմանները ինչպէս նաև նրանց մէջ ծագած վիճաբանութիւնների վճռելու ձեւը, սահմանում է հաւասրութեան սկզբունքը վերաբերմամբ Ընդհանուր Խորհրդների տեղերի և պաշտօնների դասաւորման, հաստատում է լիգունների հաւասար գործածման իրաւունքը, ընդունում է տեղական դինուուրական ծառայութիւնը, կանոնաւորում է ուսումնարանային, արգարազատութեան և հողային հարցերը:

Տաճկաց Նախարարների Խորհուրդը նկատեց, որ իր առաջակած խորհրդականների հիմնարկութեամբ յաջործուեց տապալի բարենորոգութեանը ներմուծումը, որովհետեւ նրա համար նոր մշակած ծրագիրը աւելի ծանր էր, քան ուսուգերմանականը, ուստի նա բարուօք համարեց միանգամայն հրաժարուել այդ ծրագրից, զեկուեմբեր 12-ին ուսուական և գերմանական Դեսպանը ներկայացան Մեծ Վէզիրին Վերջին յայտնեց, որ Վերատեսուչների և Խորհրդականների մէջ ծագած վիճաբանութիւնների վճռելու ձեւը, անյարմար է գտնում, որովհետեւ Խորհրդականների կարծիքը համարեա թէ միշտ ուսնենալու է վճռողական նշանակութիւն: Երբ Դեսպանները առաջարկեցին վերադառնալ նախկին Եւրոպական Ընդհանուր Վերատեսուչների նշանակման հարցին, Սայդի Խալիմը յայտնեց, որ այդպիսի մի ելք հնարաւոր է:

Դեկտեմբեր 16-ին Մեծ Վէզիրը առաջարկեց Կայսերական Դեսպանին Ընդհանուր Վերատեսուչների նշանակման հետեւալ ձեւը: Յիշեալ անձնաւոր բութիւնների իրաւասութեան վերաբերմամբ Մեծ Վէզիրը կիսապաշտօնական ձեռով պայմանաւորուում է մեծ պետութիւնների ներկայացուցիչների հետ և յիտոյ դարձեալ կիսապաշտօնապէս ու բանացի կերպով զիմում է մեծ պետութիւնների ներկայացուցիչներին, ինդքելով ցոյց տալ իրեն թեկոնածուներ, որից յետոյ նա պաշտօնապէս հաղորդում է պետութիւններին վերատեսուչների նշանակման և նրանց իրաւասութեան մասին: Այս հարցի առթիւ Կայսերական Դեսպանի և Մեծ Վէզիրի մէջ սկսուեցին եռանդուն բանակցութիւններ: Հօֆմէյստր Գիրսը աշխատում էր նոր ծրագրի մէջ մտցնել բարենորոգութեանը գլխաւոր սկզբունքները, իսկ Նախարարների Խորհուրդը ձգտում էր սահմանափակել գործը Վերատեսուչների նշանակման և նրանց իրաւասութեան որոշման հարցով: Դեկտեմբեր 23-ին Մեծ Վէզիր

ներկայացրեց Դեսպանին իրաւասութեան բնագիրը, իսկ Դեսպանը իր կողմէց յանձնեց Սայիդ Խալիմին յուշագրի ծրագիրը որպիսին Դուռը պիտի ուղարկեր մեծ պիտութիւններին վերատեսուչներ նշանակելուց յետոյ: Այսուհետև համարեա թէ իւրաքանչիւր օր Մեծ Վէզիրը և Դեսպանը բանակեցութիւններ էին վարում յիշեալ բնագրերի վերջնական խմբագրութեան առթիւ: Ի վերջոյ երկու բնագրերից կաղմուց մէկ նորը: Վերջապէս Հօֆմէյստր Գիլսի արձակուրդ գնալու օրերին, 1914 թ. յունիվար 5-ին, շնորհիւ փոխադարձ զիջութիւրի, համաձայնութիւն կայացաւ բոլոր կէտերի առթիւ, բացառութեամբ 3-ի Այդ կէտերը հետևեալներն են. 1) ուսութիւնաբային հարցը, տեղերի դասաւորման հարցը ոստիկանութեան և ժանդարմէրիայի մէջ վերաբերմամբ մահմեղականների և ոչ-մահմեղականների, 2) մահմեղականների և ոչ-մահմեղականների թւական համաշափութեան հարցը Ըստհանուր Ասդիանուր Խորհրդակում:

Առաջին երկու կէտերի առթիւ խմբագրուեց մի նոր ձև, որ բաւարարէ համարում ինչպէս հայերի, նոյնպէս և տաճիկների համար: Վերջին կէտի, այսինքն Ընդհանուր Խորհրդական կազմի վերաբերմամբ, միմիայն Զերդ Բարձր Կերպանցութեան անհատական եռանդուն ջանքերի շնորհիւ յաջողուեց պարտաւորացնել տաճիկներին ընդունելու գոհացուցիչ բնագիր:

Վեհառանալով յունիվար 26-ի վաւերագրի արձէրին, պէտք է ասել, որ նա չի տալիս հայերին ինքնավարութեան այն լայն իրաւունքները, ինչ որ առաջարկում էր Ընդհանուր կազմի վերաբերութիւնը Փոխանակ բոլոր հայարձնակայացման և մի նահանգի կազմակերպման հանդերձ մի Ընդհանուր Նահանգապետի, ստիպուած եղանք ընդունել երկու սեկտորների սահմանումը երկու Ընդհանուր Վերատեսուչներով: Բացի այդ, յիշեալ սեկտորների կազմի մէջ մտնում են և այնպիսի մասիր, որոնք բացառապէս բնակուած են մահմեղականներով: Ապարդին մացին այն ջանքերը, որ ուղղուած էին Տաճկանայատառնի ներկայացչական ժողովի հիմնան համար: Հնար չեղաւ նաև ընդարձակել վիլայէթների Ընդհանուր Խորհրդների իրաւասութիւնը այն չափով, ինչ չափով այդ բանը նախատեսել էր 1880 թ. Միջազգային Ցանձնաժողովը Եւրոպական Տաճկաստանի վիլայէթների համար: Մենք ստիպուած էինք հրաժարուել նաև մեր ծրագրի մի քանի երկրորդական կէտերից:

Չսայելով այս բոլորին, կասկած չկայ, որ յունիվար 26-ի վաւերագիրը առաջին նշանակութիւն ունի հայ ժողովով ապահովմական ճակատագրի համար:

Յուշագիրը, որով Դուռը պարտաւոր է զիմել մեծ պետութիւններին, թէ չի ասում, որ Ընդհանուր Վերատեսուչները նշանակում են մեծ պետութիւնների ստաջարկութեամբ, բայց և այնպէս տաճկական ինքնասիրութեան համար նրա արած զիջումը ունի լոկ պղատօնական նշանակութիւն: Համաձայն բանացի պայմանի, Դուռը պարտաւոր է նշանակել Ընդհանուր Վերատեսուչներին մեծ պետութիւնների առաջարկած անձնական պայմանը, որը յիշեալ պաշտօնները 10 տարուայ ժամանակամիջոցում երը և իցէ մասն բացի Արդարիութ ուրեմն Հայկական վիլայէթների կառավարումը գուում է օպարեկիւացիների հսկողութեան տակ:

որոնց առաջարկում են մեծ պետութիւնները Ռուիշ խօսքով ասած, փաստագիս այդ վիլայէթների հաւար ստորագրում է մի գրութիւն, որ նման է Լիբանանի դրութեանը, սակայն այն ասաւելութեամբ, որ այսաեղ Ընդհանուր Վերատեսութները օտարերկացից են, այն ինչ լիբանանի Ընդհանուր Նահանգապետութ տաճկահօգատակ է Հայուրնակ վիլայէթների համար որոշուած նիրկայ իրաւակարզը, համեմառած Հայաստանի բարենրուդումների առթիւ 1895 թ. 8—10 հոկտեմբերի հրապարակած Սուլթանի հրովարտակի հետ, պէտք է համարել յառաջընթաց քայլ Սահմանելով Շինհագոյն Կօմիսար բարենրուդումների գործադրամն համար պաշտօնը, 1895 թ. հրովարտակը, ինչպէս յայսնի է, ոչ մի խօսք չեր յիշում մեծ պետութիւնների համաձայնութեան մասին:

Խօսելով Ընդհանուր Վերատեսութների իրաւասութեան մասին, պէտք է նկատել, որ յունվ սր 26-ի վաւերագիրը դարձնում է նրանց ոչ թէ միայն վարչութեան, դատարանի, ոստիկանութեան և ժանդարմերիայի գվերահսկողութ, այլ և բարձրագոյն կառավարիչը Ընդհանուր Վերատեսութները նշանակում են բոլորն ստրում պաշտօննեաներին և առաջարկում են Պանար նշանակիլ բարձր պաշտօնների Նրանք իրաւունք ունեն արձակական վարչութեան բոլոր անբնակունակ կամ հակաբարոյ պաշտօննեաներին բացառութեամբ վալիների (Ընդհանուր Նահանգապետերի): Նրանք նոյն իսկ իրաւագոր են հեռացնելու պաշտօնից անփոխ դատաւորներին, հաղորդելով այդ մասին Արգարադատութեան Նախարարութեանը ինչ վերաբերում է վալիներին, Ընդհանուր Վերատեսութները իրաւունք ունեն նրանց ազօրինի գործունէութեան մասին հեռագրել Դուռնը, իսկ Նախարարների Խորհուրդը պարտաւոր է և օրուայ ընթացքում կարացնել իր վճիռը՝ Կամկած չկայ, որ այդ վճիռը չի կարող հակառակ լինել Ընդհանուր Վերատեսութիւնի կարծիքին, Ուրիշ բան է, եթէ իր զի՞տդրութեամբ Դուռը ցանկանուր արձակել վերատեսութներին, բայց այդ քայլին դիմելով կինուր անօգուտ, որովհետեւ, համաձայն յունվար 26-ի վաւերագրի վերոցիշեալ կէտի, ասպարեզ կդար մեծ պետութիւնների նոր միջա բուռթիւնը վերատեսութների նշանակման հարցում:

Ընդհանուր Վերատեսութները կարող են գիմել սեկտարների գինուորական ոյժերին, որպէս զի հարկ եղած դէպքում իրենց իրաւասութեան շըրջանում ձեւք առնեն անհրաժեշտ միջոցների:

Հոգային հարցերի կարգաւորումը և ժողովրդագրութիւնը կատարում են Ընդհանուր Վերատեսութների ուղղակի վերասակողութեամբ Վերանկառութեան իրաւունքը նաև գրութեան և դատավարութեան մասնակութ, նաև ապահովութ պաշտօննեաների նշանակման և արձակման իրաւունքը հնայաւորութիւն կտան բանիմաց Վերատեսութներին կենարօնացնելու իրենց ձեռքում շրջանի ամբողջ իշխանութիւնը Բացի այդ, յունվար 26-ի վաւերագիրը նախատիսել է Վերատեսութների իրաւունքների և պարտականութիւնների համար աւելի մասրամասն հրահանգներ, իսկ այս հանգամանքը աւելի կարգացնի նրանց լիազօրութիւնները այն իմաստով, որը մեր ցանկալի է:

Վաւերագրում, որպէս ընդհանուր օրէնք, մտցրուած է այն կէտը, որի հիման վրայ խաղաղ ժամանակ դիմուորական ծառայութիւնը կատարում է բնակավայրում: Այդ կէտը 1895 թ. հրովարտակում չկար:

կան անկանոն զօրագնդերը թէև չեն արձակւում, բայց նրանցից կազմւում է կանոնաւոր պահեստի զօրք, որը զննալվարժութեան և զօրաժողովի ժամանակ ենթարկւում է ընդհանուր դիմումներին, իսկ մնացած ժամանակ զրկւում է զէնք կրելու իրաւունքից:

Կարեռագոյն նշանակութիւն ունի հայերի համար այն որոշումը, որը վիլայէթի բիւդժէտում իւրաքանչիւր ազգութեան ուսումնարանների համար ապահովում է Նըրանց մասը այն համեմատական չափով, ինչ չափով համապատասխան ազգութիւն մասնակցում է վիլայէթի ուսումնարաններին հարեւերին, այդ հարկերից դայացած գումարները կառավարութիւնը մինչև այժմ սովորաբար ծախսում էր առաջական ուսումնարանների վրայի Բայց այդ, Դուռը ճանաչում է հաւատավելցների իրաւունքը՝ մասնակցել համայնական ուսումնարանների պահելու ծախսներին: 1895 թ. հրովարտակի մէջ այդպիսի կէտեր չկտյին:

Նորութիւն պիտի համարել նաև օրէնքների, հրովարտակների և պաշտօնական հաղորդագրութիւնների յայտարարարումը բոլոր տեղական լեզուներով: Գատավճանները կայացւում են առաջակերպ և հսար եղածին չափ թարգմանում են կողմների լեզուով: Ընդհանուր Վերատեսուչները կարող են նաև թոյլ տալ որ կողմները դատարանում և վարչական հիմնարկութիւններում արտայայտուեն իրենց մայրենի լեզուով:

Համաձայն հայերի ցանկութեան՝ որոշուած է ամենակարևոր հարցերից մէկը, որ վերաբերում է պաշտօնների զասաւորմանը մահմեդականների և ոչ-մահմեդականների մէջ, 1895 թի հրովարտակը զասաւորման հարցում զեկավարուում էր համեմատական սկզբունքով: Վերաբերմամբ սատիկանութեան և ժամանդարմերին պաշտօնների, յունվարի 26-ի վաերագիրը մահմեդականների և ոչ-մահմեդականների մէջ հաստատում է հաւասարութեան սկզբունքը այն չափով, ինչ չափով ազատ պաշտօններ բացուեն և այն գեպքում, եթէ Ընդհանուր Վերատեսուչները անյարձմար չեն գտնում այդ սկզբունքը: Այդպիսի մի նախարան ոչ մի վկաս չի ներկայացնում քրիստոնեայ պազարներին, հաւասարութեան սկզբունքը գործադրուում է ըստ նախաւորութեան, այսինքն, ուրիշ խօսքով ասած, գործակ կախում ունի Ընդհանուր Վերատեսուչներից:

Վերջապէս Պանի և Բիթլիսի քրիստոնեայ ազգարնակութիւնը յիշեալ վիլայէթների Ընդհանուր Խորհրդներում ստանում է տեղերի կէսը մինչև ցուցակագրութեան վերջանալը: Ցաւտարուութեան սկզբունքը ներմոծւում է նաև երզումի վիլայէթում, եթէ միայն ցուցակագրութիւնը չվերջանայ մօտակայ տարուայ ընթացքում: Մնացած վիլայէթներում Ընդհանուր Խորհրդների անդամները ընտրուում են համեմատական սկզբունքով: Որպէս զի տաճիկ իշխանութիւնը և չարը գործ չդնի իշխանութիւնները, ոչ մահմեդական ընտրողների թիւը որոշում է ոչ-մահմեդական համայնքների ներկայացրած ցուցակներով, իսկ մահմեդականներինը այն ցուցակներով: Որո՞նք ծառայել են հիմք վերջին պարաւմենտական ընտրութիւնների համար Բայց այդ, եթէ Ընդհանուր Վերատեսուչները գտնեն այդ ընտրողական սիստեմը անգործնական, այն ժամանակ նրանք իրաւունք ունեն առաջարկութիւն անելու նրա փոխելու մասին:

Վերջապէս ջնորհիւ Զերգ Բարձր Գերազանցութեան նախաձեռնութեան

յաջողուեց վիլայէթների Ընդհանուր Խորհրդների ժողովներում (էնջումննեռը) ապահովել փոքրամասնութեան ներկայացչութիւնը:

Այդպիսով 1914 թ. յունվար 26-ի վաւերագիրը պէտք է համարել հայ ազգի պատմութեան աւելի բախտաւոր դարեցը համար ակիզբ Ներքին քաղաքագիտական տեսակէտից, այդ վաւերագիրը հայ ազգի համար ունի նոյն նշանակութիւնը, ինչ 1870 թ. Գիրմանը բուլղարների համար Յիշեալ Գիրմանը հիմնեց Բուլղարական իշկարիսարը և այդ ձևով պատեց բուլղարական ազգը յունական խնամակալութիւնից Հայերը չեն կարող չգիտակցել, որ յիշեալ օրից արուած է առաջին քայլը ազատելու նրանց աաճկական բանութիւնից:

1914 թ. յունվար 16-ի վաւերագիրը ունի մեծ նշանակութիւն Ռուսաստանի միջազգային գրութեան համար Վաւերագիրը կնքուած է Մեծ Գէպիրի և Ռուսաստանի Ներկայացչի կողմից, Երանով Տաճկաստանի պարտասուում է Ռուսաստանի առաջ գիմել մեծ պետութիւններին մի յուշագրով, որի բարանգակալութիւնը ճշաբի սրտուածէ: Այդպիսով ընդգծուում է պաշտօնապէս Ռուսաստանի զեկավար դերը հայկական բարենորոգութեան հարցում, թերեւ հաստատուածէ Սան-Սահիփանոյի դաշնագրի 16-րդ յօդուածը: Այդ հանգամանքը ի հարկէ չի կարող չունենալ ամենանպաստաւոր հետեանք Ռուսաստանի միջազգային հեղինակութեան համար և Մերձակայ Արևելքի քրիստոնեայ ազգաբանակութիւն սիրտը կըցնի նոր երախտագիտութեամբ գէղի Ռուսական Միապետութիւն

Դասն հետ համաձայնութիւն կայացնելու համար կայսերական Գեուպանը սսիրպուած էր մաքանել շատ դժուարութիւնների գէմ: Մը կողմից հա պէտք է աշխատէր իրագործել հայերի բնական ցանկութիւնը, ձեռք բերելով նրանց համար կարեցն չափ լայն բարենորոգութեանը, միւս կողմից հա հանդիպուում էր Դուան յամար հականակութեանը, որը լարում էր իր բուլոր Չափերը, որպէս զի զրօյի հաւասարեցնի իրեն առաջարկած բարենորոգութեանը: Այս նսպասակով նա դիմագրուում էր մեր ծրագրի բոլոր էական մասերին: Ինչ վերաբերուում է Գիրմանիային, նա բանակցութիւնների մէջ մտաւ մնաց հետ հայկական հարցի առթիւ երկու նպատակով: նախ, որպէս զի յարմար ժամանակին յիշեցնի Դուան, որ չսորիւ իր միջամտութեան նա զափեց Ռուսաստանին պահանջելու լայն բարենորոգութեանը և նրանց փոխանակ յաջողացը աւելի համեստ և Տաճկաստանի համար անվտանգ բարենորոգութեանը: Երկրորդ, որպէս զի զրաւի դէպ իրեն հայերի ուշագրութիւնը: Գիրմանիան գնահատուում է հայերին, շնորիւ նրանց գերակշութեան կիրիկայում, իսկ Տաճկաստանի այդ մասը նա համարում է իր շաների աղդեցութեան ըրջան: Այդ պատճառով Գիրմանիայի վերաբերմունքը բոլոր ժամանակ յայտնի եղաւ իր կեղծութեամբ, իսկ նրա պաշտպանութիւնը (հայերի համար) կրում է լոկ երեակայական բնոյթ: Իրօք գերման դիալումատները տաճիկների հաւատարիմ խորհրդակիցներն էին:

(Ստորագը.) Գուլկէվիչ.

№ 149. Արտաքին գործոց Նախարարը ուստաց Հաւատարմատարին Տաճկաստում։

Ս. Պետերբուրգ, 28 յունվարի 1914 թ. (հեռագիր)։

Զեր յունվար 26-ի հեռագիրը ստացուած է։

Մենք բաւականութեամբ ընդունեցինք կայտցած համաձայնութեան լուրը և կցանկանայինք, որ այդ համաձայնութիւնը ծառայէր որպէս հիմք մեր և Տաճկաստանի բարեկամական յարաբերութիւնների զարգացման համար։

Այդ մասին կարող էք յայտնել Մեծ Վէզիրին։

(Ստորագր.) Սակօնով։

№ 150 Ուստաց Հաւատարմատարը Տաճկաստանում Արտաքին գործոց Նախարարին։

Կ. Պոլս, 28 յունվարի—10 փետրուարի 1914 թ. (հեռագիր)։

Աւստրիական և Խոալական Դեսպանները ասացին ինձ հետեւելը. Նրանք յայտնեցին իրենց Կառավարութիւններին որ Մեծ Վէզիրը ինդուում է առաջարկել Դուանը երկու սկզբունքների համար ընդհանուր վերատեսուչներ։ Ընդումին նրանք աւելացրին, որ իւրաքանչիւր տեղի համար պիտի առաջարկել երկու թեկնածու, որպէսզի Բ. Դուանը սրած ցուցումները չկրին շափազանց ճնշման ընտյթ։ Այսօր Մեծ Վէզիրը ինդուում ինձ հաղորդել Զերդ Բարձր Գերազանցութեանը նրա համարովանդակ խնդիրը։

(Ստորագր.) Գուլկէվիչ։

№ 151. Ուստաց Հաւատարմատարը Տաճկաստանում Արտաքին գործոց Նախարարին։

Կ. Պոլս, 29 յունվարի—11 փետրուարի 1914 թ. (հեռագիր)։

Ստացայ հետեւել տեղեկութիւնը. Սայիդ Խալիմը գիմել է Ֆռանսիական Հաւատարմատարին առաջարկելով յայտնել իր Կառավարութեանը, որ Դուանը իւրաքանչիւր սեկտորի վերատեսչութեան պաշտօնի համար ինդուում է ցոյց տալ իրեն և երկու թեկնածու։

(Ստորագր.) Գուլկէվիչ։

№ 152. Արտաքին գործոց Նախարարը Դեսպաններին Ֆռանսիայում, Անգլիայում, Գերմանիայում, Աւստրօ-Ռուսարիայում և Խուալիայում։

Ս. Պետերբուրգ, 30 յունվարի 1914 թ. (հեռագիր)։

Բարեհաճեցք յայտնել Կառավարութեանը, որի մօտ Դուք ուղարկուած էք, հետեւելը։

Աչքի առաջ ունենալով մեր և տաճիկների մէջ կայտցած համաձայն ութիւնը Հայաստանի բարենորոգումների առթիւ, նաև այն, որ Դուռը զիմել է առանձնազէս իւրաքանչիւր մեծ պետութեանը՝ խնդրելով ցոյց տալ իրեն

թեկնածուներ Արևելեան Անատօլիայի սեկտորների գերատեսութերի պաշտօնների համար, մենք կարծում ենք, թէ մեծ պիտութիւնները համապատասխան թեկնածուներ պիտի որոշն միասին:

(Ստորագր.) Սաղօնօվ.

№ 153. Առաւաց Հասատարմատարը Տաճկաստանում Արտաքին գործոց Նախարարին.

Կ. Պոլիս, 31 յունվարի—13 փետրուարի 1914 թ. (հեռագիր).

Սայդիդ Խալիմը դիմել է Անգղիայի և Գերմանիայի Դեսպաններին, խնդրելով Արևելեան Անատօլիայի իւրաքանչիւր սեկտորի Վերատեսչի պաշտօնի համար առաջարկել Դանը երկու թիկնածու:

(Ստորագր.) Գուլկեվիչ.

№ 154. Դեսպանը Անգղիայում Արտաքին գործոց Նախարարին.

Լոնդոն, 4/17 փետրուարի 1914 թ. (հեռագիր).

Դրէյը յայտնեց ինձ, որ Զեր տեսակէտը Հայաստանի Ընդհանուր Վերատեսուչների թեկնածութեան հարցում, նա սկզբունքով ընդունում է,

(Ստորագր.) Բենկենդօրֆ.

№ 155. Դեսպանը Տաճկաստանում Արտաքին գործոց Նախարարին.

Կ. Պոլիս, 10/2 մարտի 1914 թ. (հեռագիր).

Ֆուա՛սիական և Մնացական Դեսպանները ընդունեցին Ընդհանուր Վերատեսուչների թեկնածուների մեր ցուցակը՝ Վենայի Կարինետը հասդրեց Աւստրիական Դեսպանին, որդ իմել է Բերլինի կազմիքին Իտալական Դեսպանը լիազօր է ընդունելու ցուցակը՝ Տի օմնես (եթէ բոլորը ընդունեն):

(Ստորագր.) Գիբս.

№ 156. Առաւաց Դեսպանը Աւստրօ-Ռւսարիայում Արտաքին գործոց Նախարարին.

Վենետիկ, 24 մարտի- 6 ապրիլի 1914 թ. (հեռագիր).

Կ. Պոլիս Աւստրօ-Ռւսարական Դեսպանը լիազօր է իր ընկեների հետ միասին յանձնել Դռանը այն 5 թեկնածուների ցուցակը, որ Մուսական կառավարութիւնը առաջարկել է հայաբնակ վիայէթների Ընդհանուր Վերատեսչութեան պաշտօնների համար:

(Ստորագր.) Շերեկո.

№ 157. Դեսպանը Տաճկաստանում՝ Արտաքին գործոց Նախարարին.  
հ. Պոլիս, 2/18 ապրիլ 1914 թ. (հեռագիր).

Արևելքան վիլայէթների համար Դուռը Ընդհանուր Վերատեսուչ ըն-  
տրեց հօլմոդացի Վէստէնէլիին և Խորվէգիացի Հօփփին։  
(Ստորագր.) Գիրս.

№ 158. Վեհափառ Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Արտա-  
քին գործոց Նախարարին.

Ս. Էջմիածին, 16 ապրիլ 1914 թ. (նամակ).

Նորին Պայծառափայլութիւն Նորին Կայսերական Մեծութեան Փո-  
խարբան Կովկասում Գեներալ-Ադիւտանտ Կոմս Իլլարիօն իշխանովիչ Վօրօն-  
ցով Դաշկովը յայտնեց ինձ Ռուսական Կայսերական Հաւատարմատարի և  
Օսմանեան Կայսրութեան Մեծ Վէզիրի մէջ յունվար 26-ին կայացած համա-  
ձայնութեան մասին՝ վերաբերմամբ Հայաստանի բարենորոգութերի, որը  
յաջողութել է շնորհիւ Նորին Կայսերական Մեծութեան, իմ բազմաչարչար  
հօտի Թագակիր Պաշտպանի Կառավարութեան ջանքերին։ Նորին Կայսերա-  
կան Մեծութեան Փոխարքայի նամակին աւելացուած է յիշեալ համաձայ-  
նութեան բնագրի թարգմանութիւնը, որով Զերդ Բարձր Գերազանցութիւնը  
բարեհնաձել էք պատուել ինձ։

Տաճկանայերի համար պատմական նշանակութիւն ունեցող այս օրերը,  
երբ շնորհիւ Զերդ Բարձր Գերազանցութեան հաստատում և զեր մարդասի-  
րական քաղաքականութեան հիմք է գորում իմ հօտի մտաւոր ոյժերի խա-  
ղաղ և կուտուրական զարգացմանը այսուղ, ուր մինչև այժմս տիրապե-  
տում էր բրիստունեայ ժողովրդի յաջորդական բնաջնջման սխատեմը, երբ  
Ազատարար Թագաւորի մեծ գործը մարմանում է յօդուա բարեբախառու-  
թեան և յառաջադիմութեան մի ամրող ազգութեան, որը շնորհիւ քրիստո-  
նէական կրօնի իր անձնանիրութեանը և ձգտմանը զէպի Մեծն Ռուսաստան  
զարերի ընթացրում ենթարկուել է անընդհատ հալածանքների, երբ իմ  
Պաշտելի Միապետ Թագաւոր Կայսեր Նիկոլայոս Երկրորդի կամօր հայ  
ժողովուրդը նորից կոչւում է պատմական ասպարէզու որաէս եղակի տարր,  
որ ընդունակ է Ասիական Տաճկաստանում իրագործելու եւրոպական հոգեւոր  
և նիւթական կուտուրայի սկզբունքները, —այս պատմական օրերը ես սըր-  
բազան պարտականութիւնս եմ համարում իմ և ամբողջ հայ ազգի կողմից  
յայտնելու Զերդ Բարձր Գերազանցութեանը երախտագիտութեանս ամենա-  
անկեղծ զգացմունքները։

Ինչպէս յայտնի է Զերդ Բարձր Բարձր Գերազանցութեան, հայկական հարցի պատ-  
մական աճումը Տաճկաստանում, շնորհիւ ազգիս տուած հազարաւոր թանկադին  
զոհերի, հաւակացեց հայ ժողովրդին, թէ ինչ գործնական նշանակութիւն ունին  
Օսմանեան Կառավարութեան բազմաքանակ խոստումները — ուահանել մարդ-  
կային դոյլութեան համար հանգուրժելի պայմաններ այնպիսի իրական երաշ-  
խաւորութիւնների միջոցով, որոնք պիտի ստիպէին նրան իրօր գործադրել  
մինչ այժմս սպասուող ըարենորոգութերը, նոյն պատմական աճումը նախ-  
որոշեց այդ երաշխաւորութիւնները հայ ազգի համար, որը, աղօթելով առ

Աստուած, ուզգիլ է իր հայեացքը դէպի Մէծ Ռուսական Պետութիւնը, —  
—Արեւելքի բրիսատոնեայ ժողովրդի Վաղեմի Պաշտպանը:

Ներկայումս, երբ չորդին Զերդ Բարձր Գերազանցութեան իմաստուն  
զեկավառութեան, ուռւական դիպօմատիան իր վրայ վերցրեց Տաճկաստանի  
բարենորդումների մշակման և իրագործման իրական նախաձեռնութիւնը,  
և համոզուած եմ, որ իմ հօտը խաղաղ կերպով կարող է վերսկսել զարա-  
ւոր հալածանքներով Հլատած իր ոյժերի մտաւոր—կուտուրական զարգա-  
ցումը և վատահ լինել դէպի ապագան, երկիւղ չկըրելով այն սովորական  
խոչնորաներից, որ Օսմանիան Կառավարութիւնը կարող է դնել  
Զերդ Բարձր Գերազանցութեան յետազայ զործունէութեանը Տաճկահայտ-  
ատանի բարեթորոգումների ամբապնզման և անշեղ զործադրման հարցում:

Նոյն խոր հաւաալ դէպի Զերդ Բարձր Գերազանցութեան բարեացա-  
կամութիւնը, որ անգին փաստերով ապացուցիք Զեր բարհան վերաբեր-  
մունքը դէպի հայերը և նրանց օրինական ձգտումները, հիմք է տալիս ինձ  
և իմ հօտին յուսաւու, որ Զերդ Բարձր Գերազանցութիւնը կաշտոպանի  
բարենորդումների հարցը նաև այն ժամանակ, երբ հրանակներ կմշակուեն  
Քնդանսուը Վերատեսունէների համար, որոնք համաձայն Զերդ Բարձր Գե-  
րազանցութեան մոքի պիտի իրագործեն այս տարրուայ յունվար 26-ի բա-  
րենորդումների հիմունքները:

Զերմագին աղօթելով Ամենակարողին Զերդ Բարձր Գերազանցութեան  
բարօրութեան ու արկատութեան համար և օրհնելով Զեր աշխատանքները  
իւ բարերախտութիւն Մեծն Ռուսաստանի, պատիւ ունեմ Զերդ Բարձր  
Գերազանցութեան զերմեռանդ աղօթարար

(Ստորագր.) Գեւորգ V Ծայրագոյն Պատրիարք և  
Կաթողիկոս ամենայն Հայոց.

№ 159. Գետպանը Տաճկաստանու Արտարին զործոց Նախարարին.

Կ. Պոլիս, 10/13 մայիսի 1914 թ. (Հետագիր).

Արեւելեան լիլայէների Քնդանսուը Վերատեսուչները Վէստէնէկ և  
Հօգիք այսօր կնքեցին իրենց պայմանները Ներքին զործոց Նախարար Թա-  
լաթի հետ:

(Ստորագր.) Գիրո.

# ՅԱՒԵԼՈՒՄՆԵՐ.

ՅԱԽԵԼՈՒՄՆ № 1. (Քարգմանութիւն).

Բարձր Դուռն յուշագրի պատմէն, ուղարկուած Կ. Պօլի Ռուսական Կայսերական Դեսպանատանը 1913 թ. յուլիս 1-ին (ն. տ.) № 34233/75.

Ի լուսն անցեալ յունիս 29-ի իմ հազորդադրութեան № 34217/73, պատիւ բանեմ ընդումին ուղարկելու Զերք Գերազանցութեանը հետեւալ զըրութիւնները Մահմուդ Շէֆկէթ Փաշայի Կարինետի ձևանարկած աշխատանքների և բարենորոգութեանը առթիւ պիտութեան արտասահմանեան ներկայացուցիչներին ուղարկուած զրութեան պատճէն, «Վիլայէթների Ընդհանուր Վարչութեան ժամանակաւոր Օրէնքի լրացուցիչ յօդուածներց-ի և «Ընդհանուր Վերատեսուչների իրաւունքների և արտօնութիւնների հրահանգներց-ի Քարգմանութիւնները»:

ՅԱԽԵԼՈՒՄՆ № 2.

Օսմաննեան Դեսպանատներին ուղարկուած Հրահանգը Ընդհանուր թնագիրը.

Մահմուդ Շէֆկէթ Փաշայի Կարինետը, վերցնելով իր վրայ իշխանութեան պատասխանատւութիւնը ամենավտանգաւոր հանգամանքներում և ճգնելով տալ պատերազմին հնար եղածին շափ նպաստաւոր ընթացք, իր ամենալուրջ ուշագրութիւնը դարձրեց նաև պիտութեան ներքին բարենորոգութիւնը զործագրման վրայ:

Այս նպատակով և համաձայն Վիլայէթների Ընդհանուր Վարչութեան ժամանակաւոր Օրէնքի, նա Ընդհանուր Վերատեսուչներին իրաւունք յատկացրեց վճռելու տեղական շահներին վերաբերող հարցերը, Վիլայէթների թիւգծէտը առանձնացուած է, պաշտօնինանիրի արտօնութիւնները և պարտականութիւնները ընդարձակութեանը հարցելու նշանի վճռելու նոյն իսկ ամենաշնչին նշանակութիւն ունեցող վիճելի հարցերը, որոնք կարող են ծագել մի որևէ շրջանի բնակչութեան մէջ, ընդունուում է շրջել զատարանների սկզբունքը և հրատարակում է օրէնք վերաբերմաքը հաշտարար գատաւորների: Այստօլիայի 15 սանցակներում հիմնուում են դատաստանական ատեաններ: Այդպիսի ատեաններ հաստատում են նաև արեկեան վիլայէթների հարիւր կազմակերում: Բազգաղի և Բէյրութի վիլայէթների ապահացիօն ատեանները կրկնապատկում են նայիբների, դատաւորների և դատաստանական պաշտօննեանների նշանա-

կումը և հաստատումը նախատեսնուուած է մի առանձին օրէնքով Լեռնանցք+  
ների հարթման, նաև անշարժ կալուածների գրաւ զնելու և փոխադրելու  
առթիւ սահմանուուած օրէնքների չնորհիւ, այժմնանից սկսում է այդպիսի  
կալուածների շրջանառութիւնը Մի օրէնք, յատկացնելով բարեգործական  
հիմնարկութիւններին սեփականութեան իրաւունք, հնարաւորութիւն է տա-  
լիս այնպիսի ընկերութիւնների կազմակերպման, որոնք իրաւահաս են պայ-  
մաններ կապելու միմեանց հետ վերաբերմամբ նողային կալուածների Վա-  
կուֆ և Միրի հիմնարկութիւնները, չնորհիւ սեփականութեան իրաւունքի  
տարածմանը անշարժ կալուածների վրայ, պիտի մասնակցեն պարտքերի  
վճարին նոյն իսկ այն գէպքում, եթէ նրանց իշխողը կամ սեփականատէրը  
վախճանուի նոյն օրէնքը գիւղատնտեսութեան համար հաստատում է լայն  
վարկ, այդ միջոցը ապահովում է քաղաքների բարօրութիւնը և զարգաց-  
նում է գիւղատնտեսութիւնը:

Իւրաքանչիւր վիլայէթի կարգը և անդորրութիւնը ամրապնդելու հա-  
մար գաւառ է ուղարկուում ժանդարմերիայի հսկիչ մի մարմին զեկավարու-  
թեամբ Բառուման Փաշայի, որը տեղն ու տեղը պիտի որոշի իւրաքանչիւր  
վիլայէթի համար ժանդարմերի անհրաժեշտ քանաքը: Ռումելիայի ժանդարմ-  
ները զասաւորուած են զանազան վայրերում, իսկ նրանց թիւը լրացնելու  
համար շուտով կուղարկուեն նորելը: Որպէս զի վերոյիշեալ օրէնքները և  
կանոնները իւրաքործուեն կատարելապէս, պիտութիւնը բաժանուում է վեց  
ընդհանուոր վերատեսչական սեկտորների: Աւելի ընդարձակ սեկտորները,  
օրինակ արևելեան վիլայէթների սեկտորները, կունենան իրենց օտարեր-  
կրացի ընդհանուոր վերատեսչները: Ժանդարմերիայի, արդարադատութեան,  
հասարակական աշխատանքների և գիւղատնտեսութեան գործերում ընդհա-  
նուր վերատեսուչներին օգնում են ստորագիր օտարերկրացի և տաճկահպա-  
տակ մասնագէտ անձնաւորութիւնների Նախարարութիւնների համար հրա-  
ւիրուում են մի օտարերկրացի խորհրդական և մի վերատեսուչ, իսկ որոշ  
Դեպարտամենտների համար—օտարերկրացի պաշտօնեանների Յիշեալ օտարեր-  
կրացի պաշտօնեանների հրաւիրման առթիւ Մահմուդ Շէֆկէթ Փաշայի Կա-  
րինետը վարում է համապատասխան բանակցութիւն Երբ Արևելեան Անա-  
տոլիայի եօթ վիլայէթների ժանդարմերիայի պիտերը, ինչպէս նաև համա-  
պատասխան սեկտորների ժանդարմերիայի երկու վերատեսչները վերջնա-  
կանապէս կորոշուեն, այն ժամանակ նրանք անյատպազ հիաստատուեն իրենց  
պաշտօնների մէջ վերոյիշեալ բանակցութեան նպաստակը կազմում է ընդ-  
հանուր վերատեսուչների և ուրիշ օտարերկրացի պաշտօնեանների հրաւի-  
րուում: Ֆինանսական Նախարարութեանը կից կազմուած ֆինանսական յանձ-  
նաժողովի անդամների թիւը աւելացուում է, նրանց իրաւունքները ընդար-  
ձակուում են ինչպէս բիւղէտի մշակման, նոյնպէս և ֆինանսական օրէնք-  
ների ճշգրիտ գործադրման վերահսկողութեան հարցում:

### ՅԱԽԵԼՈՒՄՆ № 3.

Վիլայէթների վարչութեան Օրէնքի լրացուցիչ Յօդուածները (Բարգ-  
մանութիւն):

Յօդ. I.—Զգտելով վիլայէթների և համայնքների վարչութեան առթիւ

Հրատարակուած օրէնքների գործադրուման արագացմանը, զոհացուցիչ ռէժիմի և իրաւակարգի հաստատմանը, վերջապէս բնակչութեան անդորրութեան և բարօրութեան սահմանմանը, Օսմանեան Կայսրութիւնը բաժանում է մի քանի վերատեսչական սեկուլյարի, որոնցից իւրաքանչիւրը իւրեն զլուխ ունենալու է մի հսկիչ Ընդհանուր Վերատեսուչ:

Յօդ. II.—Համաձայն Նախարարների Խորհրդի վճռի, որը պիտի հաստատուի Կայսերական իրադէով, Ընդհանուր վերատեսուչները ընտրուում են ծ տարով:

Յօդ. III.—Ընդհանուր վերատեսուչների իրաւունքները և արտօնութիւնները որոշում է այն Ընդհանուր կանոնադրութիւնը, որի կարգադրութիւնները պարտագիր են Նախարարութիւնների և Վիլայէթների համար:

Յօդ. IV.—Ընդհանուր վերատեսուչների ստորագիր պաշտօնեաների քանակը, նմանապէս օտարերկրացի և տեղացի մասնագէտների թիւը որոշում է Նախարարների Խորհրդը համաձայն իւրաքանչիւր սեկուլյար մեծութեան և կարիքների: Նրանք նշանակուում են Ընդհանուր վերատեսուչների համաձայնութեամբ կամ նրանց ցուցմունքով, իսկ Նրանց իրաւասութեան սահմանը որոշում է մի առանձին կանոնադրութեամբ:

Յօդ. V.—Ընդհանուր վերատեսչի և մի որի է Նախարարութեան մէջ ծագած տարածայնութիւնները քննում և գործադրում է Նախարարների Խորհրդութեամբ:

Յօդ. VI.—Օրէնքները մտնում են ոյժի մէջ սկսած հրատարակման օրից:

Յօդ. VII.—Նախարարների Խորհրդուրը պարտաւոր է իրագործել վերոյիշեալ օրէնքները:

#### ՅԱԽԵՂՈՒՄՆ Հ 4.

Ընդհանուր Վերատեսուչների արտօնութիւններին եւ իրաւասութեամբ վերաբերող հրամաններ:

Յօդ. I.—Ընդհանուր վերատեսուչները հաստատում են իրենց ընակալայլը համապատասխան ցըջանի այն բարգարում, որը նրանք յարմար են գտնուում:

Յօդ. II.—Ընդհանուր վերատեսուչները որոշում են իրենց վերահսկուական հանապարհորդութիւնների ժամանակը և գործելակերպը, ցըջելով կամ անձամբ, կամ ուղարկելով իրենց ներկայացուցիչներին:

Յօդ. III.—Ընդհանուր վերատեսուչների պահանջի համաձայն հեռագրական պաշտօնեաները, թողնելով իրենց պաշտօնաեղը, պարաւոր են կատարել պաշտօնական հաղորդագրութիւնները ժանդարմենը և զինուորները նմանապէս պարաւոր են ենթարկուել Նրանց հրամաններին:

Յօդ. IV.—Ընդհանուր վերատեսուչները իրենց ցըջանի սահմաններում հսկուում են Կայսրութեան վիլայէթների և համայնքների վարչութեան բոլոր օրէնքների, կանոնների և կանոնադրութիւնների գործադրումը:

Յօդ. V.—Ընդհանուր վերատեսուչները, խորհրդակցիկ Ընդհանուր Նախանգաղետների հետ, առաջարկուում են պատճառաբանուած օրինագծեր Կայսրութեան այն օրէնքների փոփոխման մասին, որոնք չեն համապատասխանում իրենց ցըջանի իւրական պահանջներին: Նրանք մշակուում են նաև

այնպիսի կարգադրութիւնները, որոնք նպաստում են օրէնքների գործադրմանը համապատասխան շրջաններու մը:

Այս կարգադրութիւնները պիտի հաստատուեն պատշաճ Դեպարտամենտի կողմից:

Յօդ. VI.—Ընդհանուր վերատեսուչները, համակերպուելով վիլայէթների վարչութեան օրէնքի 3-րդ կէտին, որոշում են այն վայրերը, ուր կարիք կայ կազմելու մի բաղադրական մարմին, որից յետոյ նրանք խորհրդակցում են Ընդհանուր նահանգապետի ու Զօրաբանների Հրամանատարի հետ և մըշակում անհրաժեշտ օրինագիծ յիշեալ վայրերի համար Նրանք որոշում են հարեան վիլայէթների բաղադրաները և համայնքների սահմանները Համակերպուելով վերոյիշեալ օրէնքին, նրանք հազրողում են ներքին գործոց նախարարին վիլայէթների Ընդհանուր Խորհրդների վճիռների մասին վերաբերմաք սահմանների և կազմների պետերի արձակման, սահմանների փոփոխման ու ուղղման և վերջապէս նոր սահմանների որոշման այն դէպում, երբ յիշեալ վայրերը բաժանուում են նոր վարչուան մասների:

Յօդ. VII.—Ընդհանուր վերատեսուչները, համակերպուելով վիլայէթների օրէնքի 4-րդ յօդուածին, մշակում և ներկայացնուում են ներքին գործոց նախարարին առանձին օրինագծեր և կանոնադրութիւն վերաբերմաք այն թափառական ցեղերի բնակեցման և կառավարման, որոնք գտնուում են համապատասխան վերատեսչի շրջանում, ի նկատի ունենալով նրանց նիստ ու կացը, սովորութիւնները, հասարակական և տեղական պահանջները: Վալիների հետ միասին նրանք միջացներ են ձեռք առնուում, որպէս զի թոյլ չտան թափառականներին կատարել որևէ յափշտակութիւն, սահմաններով նրանց մէջ հակում գէպի նստակեաց կեանքը և երկրագործական ու արդինաբերական պարապմունքները:

Յօդ. VIII.—Ընդհանուր վերատեսուչները պիտի հաստատեն սերտ կապիրենց շրջանի գանագան ազգութիւնների մէջ և վերացնեն գոյութիւն ունեցող թիւրիմացութիւնները: Ծնակչութեան համար նրանք ապահովում են հաւասարութիւնը ընդհանրապէս և իւրաքանչիւր անհատի իրաւունքը ու ազատութիւնը մասնաւորսպէս:

Յօդ. IX.—Ընդհանուր վերատեսուչները ուղղակի ի անուղղակի կերպով հսկում են բոլոր պաշտօնահաններին, ստուգելով նրանց ընդունակութիւնը և գործունելութիւնը:

Յօդ. X.—Ընդհանուր վերատեսուչները, նայած հանգամանքին, արձակում կամ փոխում են անընդունակ և հակարարոյ պաշտօնեաններին նրանք, որ մեղադրուում են որևէ յանցանքում, սամիջապէս ենթարկուում են դատի:

Յօդ. XI.—Ընդհ. վերատեսուչները վալիներին ենթակայ պաշտօնեանները վերաբերմաք կայտցած վճիռների մասին հազրողում են վալիներին կենսորնական կառավարութեան կողմից նշանակուած պաշտօնեանների մասին տեղեկութիւն է արցում համապատասխան Դեպարտամենտին: Այդ երկու կարգի պաշտօնեանները հարկ եղած դէպում կարող են փոխանակել միմեանց:

Յօդ. XII.—Ընդհանուր վերատեսուչների հրամանով արձակուած պաշտօնահանքը չեն կարող վերահստատուել իրենց պաշտօնում մինչեւ որ նրանց արձակման իրաւական կամ վարչական պատճառները գրաւոր կերպով չը պարզուեն:

Յօդ. XIII.—Ընդհանուր վերատեսուչներին նոյն ձևով, ինչպէս վիլայէթի պաշտօնեաները, ենթարկում են նաև վարչութիւնների, գտարանների, ժանդարմերիայի, հասարակական աշխատանքների և երկրագործութեան վերատեսուչները, որոնք կատարում են ընդհ. վերատեսուչների գրաւոր հրամանները Այս վերատեսուչները ներկայացնում են ընդհանուր վերատեսչների իրենց գործունէութեան զեկուցագիրը, վարուելով համաձայն իրենց իրաւասութեան, իսկ նրա պատճէն ուղարկում են այն Դիպարտամենտին, որից կախում ունեն:

Ընդհանուր վերատեսչի կամ Նախարարութեան հրամանի համաձայն պաշտօնեաների մասին պատրաստուած զեկուցագիրը և տեղեկագրերը նմանապէս պէտք է ներկայացնել ընդհանուր վերատեսուչներին, իսկ պատճէն համապատասխան Նախարարութեանը,

Յօդ. XIV.—Ֆինանսների վերատեսուչը անմիջապէս ենթարկում է Ֆինանսների Նախարարութեանը: Իր գործունէութեան արդիւնքի մասին նա տեղեկագիր է ներկայացնում վերոյիշեալ Նախարարին, իսկ տեղեկագրի պատճէն ուղարկում է ընդհանուր վերատեսչին: Եթէ վերջինն մի որևէ դէպքի մասին անհրաժեշտ է համարում կատարել անյապաղ վերաստուգութիւն, այդ առթիւն յայտնում է տեղական վերատեսչին, որը պարտաւոր է կատարել պահանջած ստուգութիւնը անձամբ կամ մի ուրիշ վերատեսչին միջոցով և համապատասխան արդինքը ներկայացնել ընդհանուր վերատեսչին: Ֆինանսների Նախարարին նոյնպէս պիտի իրազեկ անել այդ մասին:

Յօդ. XV.—Ի դէպս, եթէ մի դատաստանական պաշտօնեայ, որ պատկանում է անփոխ դատաւորների կարգին, մեղադրուում է այնպիսի յանցանքում, որի համար սահմանուած է ծանր պատիժ կամ արձակութեամբ պաշտօնից, ընդհանուր վերատեսուչը զեկուցում է այդ մասին Արդարադատութեան Նախարարին և դատի է յանձնում յանցաւորին: Հետևանքի մասին Արդարադատութեան Նախարարը պիտի յայտնի ոչ ուշ ըան մի շաբաթուայ ընթացքում: Խոկ եթէ յիշեալ պաշտօնեան դատաւոր չէ, այն ժամանակ նրա արձակումը կամ փոխումը, նայած պաշտօնի աստիճանին, պատկանում է կամ ընդհանուր վերատեսչին, կամ Արդարադատութեան Նախարարութեանը, կամ ապագելացիօն դատարանների ընդհանուր դատավային:

Յօդ. XVI.—Ընդհանուր վերատեսուչների ամենաառաջնակարգ պարտականութիւններից մէկը հետեւեան է, նրանք հսկում են, որ դատավարութիւնը կատարուի առանց որևէ ազդեցութեան, ամենախիստ անկողմնապահութեամբ և ազատութեամբ: Դատաւորների վրայ որևէ ձևով տպաւորութիւն թողնելը արգելուած պիտի լինի:

Յօդ. XVII.—Ընդհանուր վերատեսուչների այն բոլոր հաղորդագրութիւնները, որոնք բարեփոխութիւններ են ներմուծում վարչական և իրաւական մասում, պարտագիր են բոլոր դատաստանական պաշտօնեաների համար:

Յօդ. XVIII.—Ոստիկանութեան ու ժանդարմերիայի կազմակերպումը և վերակազմութիւնը իրաւանչեր վերատեսչական շրջանում կատարում է ընդհանուր վերատեսչի զիտակցութեամբ և նրա զեկավարութեամբ:

Յօդ. XIX.—Ոստիկանութեան և ժանդարմերիայի կազմի անհրաժեշտ փոփոխութեարի մասին ընդհանուր վերատեսուչը, խորհրդակցելով վալիի

հետ, առաջարկում է կենտ. օնական իշխանութեանը, որից կախուած է նրանց ներմուծումը:

Յօդ. XX.—Ընդհանուր վերատեսուչները ամենամանրամասն կերպով ստուգում են այն գումարները, որ պեսական բիւղֆէտը սահմանել է վիւլայէթի հասարակական պիտոյքների համար Խորհրդակցելով այդ առթիւ վալիների հետ, նրանը մատնացոյց են անում աւելորդ կամ թերի ծախսերի վրայ և ձեռք առնում համապատասխան միջոցներ:

Յօդ. XXI.—Ընդհանուր վերատեսուչները որոշում են տասանորդ հարկերի հաւաքման ձեր և առաջարկում են կենտրոնական կառավարութեանը. Պահպանելով զանձարանի շահերը մի կողմից և հարկատուներինը միւս—այդ ձեր շնորհիւ իր հասարակ և գործնական բնոյթի, պիտի խուսափի ամեն մի դժուարութիւնից և վասակից, որ կարող են կըել երկրագործները:

Յօդ. XXII.—Ընդհանուր վերատեսուչները, մշակելով հոդային կայուածների հարկերի հաւաքման ձեր և խորհրդակցելով վալիների հետ անհրաժեշտ տեղիդի մասին, կարող են յարուցիլ կալուածների ցուցակագրութեան և ներմուծուած բարենորոգումների ընդարձակման հարցերը:

Յօդ. XXIII.—Ընդհանուր վերատեսուչները իրենց կից տեխնիկական մասնագէտների Խորհրդների օգնութեամբ պէտք է ուսումնասիրեն այն անհրաժեշտ միջոցները, որ յօրուա պետութեան պահանջում է իրենց շրջանի հանճերի ու անտառների շահաւէտումը և հոդի պարարտացումը Նրանք պիտի զարկ տան երկրագործութեան բարգաւաճմանը, հսար եղածին չափ նուազեցնեն հարկանանութեան ծախսերը, խրախուսեն ժողովրդական լուսաւորութիւնը, արդինաբերութիւնը և առևտուրը, դիւրութիւններ սաեղծեն ճանապարհների հաղորդակցութեան համար, և վերջապէս ուսումնասիրեն այն բոլոր պարագաները, որ ի բնէ կանոնադրութիւնների մտաւոր և տնտեսական պահանջների դարգացմանը:

Նրանք աջակցում են վալիներին այն բարենորոգումների հարցում, որ հաստատել է Նախարարութիւնը: Ընդհանուր բիւղֆէտից առանձին զումար պահանջող բարենորոգումների և կայսերական հաստատմանը Անթակայ օրէնքների մասին պէտք է տեղեկութիւն տալ համապատասխան Դեպարտամենտին:

### ՑԱԽԵԼՈՒՄՆ № 5.

Հայկական բարենորոգումների առթիւ տեղի ունեցած բանացի վիճականութիւնները Ենիւթեյում, Աւատրո Ունգարական Կայսերական Դեպարտամենտում վերաբերմամբ Խուսական Նախածրագրի, որ մշակեց պ, Ա. Մանուկյան կամաց կամ կ. Պոլակի Խուսական Կայսերական Դեպարտամենտ:

Հայկական Բարենորոգումների Ցախմաժողով:

### Ն ի ս տ Ի.

Երկուշաբթի, 8 յուլիսի, 1913 թ.

Ներկայ են.

Պ. Շեօնքերգ, ներկայացուցիչ Գերմանիայի դեսպանատան +

- Պ. Պանթիլի, ներկայացուցիչ Աւստրօ Ունգարական դեսպանատան,  
 Պ. Սեն-Քանտեն, ներկայացուցիչ Ֆուանսիայի դեսպանատան,  
 Պ. Ֆիզմօրիս, ներկայացուցիչ Մեծն Բրիտանիայի դեսպանատան,  
 Պ. Շաբեր, ներկայացուցիչ Իտալիայի դեսպանատան,  
 Պ. Մանդելտամ, ներկայացուցիչ Իռուսաստանի դեսպանատան:  
 Նիստը սկսում է 2 ժ. 30 րոպ.

Յանձնաժողովը գտնում է, որ բոլոր ներկայացուցիչները ստացել են պատումք քննելու ուսուական նախածրագիրը, նմանապէս և Բարձր Դասն վերջին հաղորդագրութիւնները և քննութեան հետևանքները ներկայացնելու համապատասխան գեսպանատան հայեցողութեանը:

Գերմանիայի, Աւստրօ-Ունգարիայի և Իտալիայի ներկայացուցիչները յայտնում են այն միտքը, որ աչքի առաջ ունենալով յուրիս 1-ի Բարձր Դասն շրջաբերականը, պատճաշ կը լինէր բննագաւութեան հարցը սկսել այն բարենորոգումներով, որ Բ. Դուռը հրատարակեց:

Ֆուանսիայի, Մեծ-Բրիտանիայի և Ուուսաստանի ներկայացուցիչները, ընդհակառակո, ընդունում են այն հիմունքը, որ քննադատութեան ելակետ պիտի ծառայէ ուսուական նախածրագիրը:

Այդ հարցի վերաբերմամբ ներկայացուչները որոշում են հարցապնդմամբ դիմել իրենց լիազօրներին:

Նիստը փակւում է 3 ժ. 30 րոպէին:

Հայկական Բարենորոգումների Յանձնաժողով.

## Նիստ Ա.

Հինգշաբթի, 7 յուլիսի, 1913 թ.

Ներկայ են.

- Պ. Շենքերգ, ներկայացուցիչ Գերմանիայի դեսպանատան,  
 Պ. Պանթիլի, ներկայացուցիչ Աւստրօ-Ունգարական դեսպանատան,  
 Պ. Սեն-Քանտեն, ներկայացուցիչ Ֆուանսիայի դեսպանատան,  
 Պ. Ֆիզմօրիս, ներկայացուցիչ Մեծն Բրիտանիայի դեսպանատան,  
 Պ. Շաբեր, ներկայացուցիչ Իտալիայի դեսպանատան,  
 Պ. Մանդելտամ, ներկայացուցիչ Իռուսաստանի դեսպանատան:

Նիստը բացում է 10 ժ. 30 րոպ.

Պանթիլի — Եայտնում է, որ նրան պատուիրուեց քննադատելու ուսուական ծրագիրը ի մի Բ. Դուռն հաղորդագրութիւնների հետ, ունենալով ելակտութեական նախածրագիրը:

Շենքերգ. — Եայտնում է, որ նրան հրահանգուած է ի մի քննութեան առնել ուսուական նախածրագիրը Բ. Դուռն հաղորդագրութիւնների հետ. Նա չի հակառակութեական այն բանին, որ ուսուական նախածրագրի զանազան կէտերի աստիճանական քննադատութիւնը տեղի է տալու մի շարք վիճաբանութիւնների:

Շաբեր. — Մտացել է մինսոյն հրահանգները, որպիսին տրուած է նրա գերմանական ընկերոջ:

Նախածրագրի առաջին կէտը հետևեալն է.

Վեց վիլայէթներից էրգում, Վան, Բիթլիս, Դիարբէրի, Խարբերդ, Սիլվազ, կազմուելու է մի նախանդ, բայց ասւթեամբ որոշ մասերի, ով զըտ-

Նուու են սահմանածայրերու որպիսից են չերքիարին, — Սղերտի, Բիշերի-կի ու Մալաթիայի հարաւային մասը և Սիվազի հիւսիս-արևմտեան մասը:

Մանդելյան. — ռուսական գեսպանատան ներկայացուցիչը, այդ է էտի առթիւ տալիս է հետեւեալ բացատրութիւնները.

«Սահմանածայրի դաշնագրի 16-րդ յօդուածը և Բերլինի վեհաժողովի 61-րդ յօդուածը խօսում են ՀԱՅԱՍՏԱՆԻ վիլայէթների բարենորոգութեան մասին:

Վեց պետութիւնների կողմից Բ. Դան 7 սեպտ. 1880 թ. տրուած կոլեկտիւ հօսում է նոյն ձևով:

Երեք գեսպանների ծրագիրը, մշակուած 1895 թ. մարտ ապրիլ ամիսներում (Դեկտ. Գիրք, եր. 48) կրում է հասնեալ անունը «Ծրագիր առդմիսիստրատիւ բարենորոգութեան» որ պիտի ներմուծուեն հայկական վեհաջարի ծրագիրը 1895 թ. 20 հոկտեմբերի հանդիւ բարենորոգութեան հրովարտակի, ուղարկուած վեց պիտութիւններին, խօսում է՝ հերդուումում, Սիվազում, Վանում, Դիարբեքիրում, Բիթլիսում և Մամուրիէթու Աղդում մտցուեիր գարչական բարենորոգութեան մասին: Նոյն ձևով խօսում է հրովարտակի նախարանը և Մեծ վկանաթի կարգա, դրութեան պատճեն, ուղարկուած յիշեալ վեց պիտութիւններին և գործավար Շաքիր-փաշային Այստեղից ակնյայտնի է, որ ինքը Բ. Դուռը ճանաչել է վեց վիլայէթների ներքին գրութեան ճամանմանութիւնը, որովհետեւ նա ինքը հրատարակել է նրանց ճամար ճամանման բարենորոգութեան, նշանակիլով մի բարձր-գործակալ, որին որոշուած է տալ ճառանձին յանձնարարութիւն վերատեսելու բարենորոգութեան իրագործումը և գործադրութիւն (ա. հրովարտակի նախարանի ասածին կէտը), Բ. Դուռը արդէն ճանարաւոր է գտել յանձնելու բարենորոգութեան վեհավարութիւնը յիշեալ վեց վիլայէթներում մի որոշ ոյժի:

Այս ճանգամանքը աւելի նշանակալից է այն պատճառով, որ վերջին սուստածկական պատերազմից յետոյ Օսմանեան կայսրութիւնը ձեռք առաւ որոշ վարչական միջոցներ, որոնք ուղղուած էին ճանդիսաւոր կերպով զտելու հայար հակառակ մի բարձր-գործակալ, որին որոշուած է տալ ճառանձին յանձնարարութիւն վերատեսելու բարենորոգութեան իրագործումը և գործադրութիւն (ժամանակ. I կէտի) արդարացի կերպով յիշենուած է, որ «10 տարուայ ընթացքում, առաջ քան 1875 թ. երգումի այլալաթը բովանդակում էր իր մէջ Զիւղիր, Ղարս, Էրզրում, իսկ Վանի այլալաթը ընդգրկում էր Հերքիարին, Մուշ և Բիթլիսը Այդ այլալաթը յետոյ բաժանուեց հինգ վիլայէթների. 1887 թ. պատերազմից յետոյ, այդ սարածութեան մի մասը վերադարձւեց Թուրքիային, որը բաժանուեց կառավարութեան կողմից վիլայէթների. Էրզրում, Ղան, Հերքիարի, Մուշ և լոյտ օրից ոկտած Հերքիարի շրջանը միացուեց Վանի հետ, իսկ Մուշի շրջանը՝ Բիթլիսի հետ, որից կազմուեց նոր վիլայէթ, Նոյնպէս այդ ժամանակից սկսած Մամուրիէթ ուլ-Աղիզ սանջակը փոխուեց վիլայէթի, որին կցուեց հարևան հողերից միքանիսը, իսկ Թէրսիմի վիլա-յէթը փոխուելով սանջակի, կցուեց Խարբերդի վիլայէթինչ:

Սահմանների արհեստական ձևով այդ փոխուման ակնյայտնի նպատակն էր գտել հայարանակ շրջանները և միացնել նրանց բրդաբնակ կամ տաճակարնակ շրջանների հետ, առաջ բերելով այդ ձևով հայկական փոքրամասնութիւն Սակայն քաղաքական այդ սահմանափոխութեանը չէին կարող կործանել շահերի այն ընդհանրութիւնը, որով կապուած էին յիշեալ աշխաննե-

բում բնակուող ազգութիւնները, իսկ Բ. Դուռը պնդում էր նրանց (շրջանների) միութեան վրայ ամեն ժամանակ, երբ բարենորոգումների ներմուծման հարցը ասպարէզ էր գալիս:

Այսպէս ուրեմն, ուռաւական ծրագրի առաջարկութիւնը՝ կազմել մի ընդհանուր նահանգ ներկայ վեց վիլայէթների տարածութեան մեծ մասից, նիմուռում է աւելի շուտ նախվին, քան նոր զրութեան վրայ: Ի միջի այլոց ծրագրը հիմուռում է երեք գետանների 1895 թ. յիշատակազրի առաջին կտի վրայ, որը արդէն մատնացոյց արել էր «վիլայէթների քանակի» պատահական նուազեցման» առաւելութիւնների վրայ:

Պարզ է, որ ծրագրուած բարենորոգումները նպաստաւոր կը լինեն ոչ միայն հայերի համար, նուաւական ծրագրեր հոգ է տանում և այն մասին, որ տաճիկներին, քրդերին և այդ շրջանում ապրող ուրիշ ազգութիւններին ևս ապահովուի արգարացի և համահաւասար իրաւունք մասնակցելու ներքին գործերին: Սակայն չպէտք է աչքաթող անել իսկութիւնը: Ի երկինի վիճաժաղովի 61-րդ յօդուածով Բ. Դուռը պարտաւորուեց ապահովել հայերին հանգստութիւն ընդգէմ չերքէցների և բրդերի»: Վեց զիսապահների կողմից 1880 թ. 7 մետսեսքերի արուած կօլլեկտի: յուշազիրը պարունակում է իր մէջ հետևեալը: «Բ. Դուռը գործադրելու է միատեսակ կանոններ և հայերի և քրդերի համար. թւում էր յարմար, ամենից առաջ բաժանել նրանց վարչական կողմից, ինչքան որ գործնական կեանքում այդ բանը հնարաւոր կը լինէր, աչքի առաջ ունենարով այստեղ այն հանգամանքը, որ միանդամայն անկարելի էր կոտավարել միատեսակ ձեռվ և նստակիաց և կիսանստակիաց ազգերը: Անօգուտ կը լինէր այսու յիշել, որ սկած 1880 թ. և նոյն իսկ 1895 ու 1899 թ.թ. կոտորածներից յիսոյ քրդերի և հայերի յարաբերութիւնները ոչնչով բարելաւուած չեն Ի հարկէ, անհրաժեշտ է վեց վիլայէթներում աշխատել գանել միջոցներ երկու գլխաւոր ազգութիւնների հաշտ ապրելու համար: Բայց ինձ թւում է անօգուտ՝ պահել վեց վիլայէթների շրջանում այն սահմանակի մաս երը, ուր քրդերը մեծամասնութիւն են կազմում: Ահա այդ պատճառով ուռաւական նախածրագիրը առաջարկում է ի բաց առնել նահանգից սանջակ չերքիարին, Սղերաթի, Բիշերիկի և Մալաթիայի հարաւային մասերը և Սիվազի հիւսիս-արևմտեան մասը, ուր հայ բնակչութիւնը սակաւաբանակ է:

Նահանգի սահմանի ճշգրիտ որոշման համար հարկաւոր է մի առանձին յանձնաժողով: Նախածրագիրը սահմանափակիւմ է միմիշայն առաջարկութեամբ սկզբունքի, որ նահանգից պէտք է նանուեն այն մասերը, որոնք բնակուած չեն հայերով:

Բ. Դուռը իր 1913 թ. 5 յուլիսի բանաւոր յուշագիր ներկայացնում է մեծ պետութիւններին մի նախագիծ, որը պարունակում է վեց վարչական սեկտորների գասաւորումը, որոնք կախում ունեն ընդհանուր վերատեսչութիւնից՝ որոնք կազմուած են համաձայն վիլայէթների վարչութեան լրացուցիչ օրէնքի: Զի կարելի բաւականութեամբ չմատնանշել, որ վիլայէթներից չորսը, որ բնակուած են հայերով (Բիթիս, Դիարբէքիր, Մամուրիէթ-ուլ-Ազիզ և Վան) կազմում են մի վարչական սեկտոր: հարկաւոր էր միմիշայն ի բաց առնել նրանից այն մասերը, որոնք բնակուած չեն հայերով: Եւ ընդհակառակը, ցաւալի է, որ երգուում և Սիվազ վիլայէթի մի մասը մտցրուած են ուրիշ սեկտորի մէջ:

Այսպիսով ես գալիս եմ այն եղբակացութեան, որ վեց հայաբնակ վեհայէթների տարածութեան մեծամասութիւնից մի նահանգ կազմելը բխում է այդ շրջանի բնակչութեան շահերի միատեսակութիւնից, որոնք (շահերը) այլ կերպ ապահովուած չի կարելի համարել, քան եղակի և միատեսակ իշխանութեան սահմանամբ»:

§ 2 Կազմուած է այսպէս.

«Նահանգը պարունակելու է իր մէջ հետեւալ վարչական բաժանմունքները, 1) Սանջակ, 2) Կազա, 3) Նահիէ».

Մանդելյանմ.—Պարզաբանում է այս գրութիւնը հետեւալ կերպով. նոր նահանգի կազմելուց յիսոյ, որի գլուխ անցած կը լինի կենտրոնական կառավարութեան ներկայացուցիչը, ևս անօգուտ կը համարէի նրա բաժանումը վիլայէթների, Մի կողմէն չլինելով այնքան մեծատարած, նա հարաւորութիւն է տալիս նահանգապետին շատ հեշտ կերպով կառավարել նահանգը մութասարիքների և զայմազամների օդութեամբ և խուսափել վալիների աւելորդ ցանցերից. Կառավարութեան (վարչութեան) անդամների մէջ կը ստեղծուէր միմիշայն համերաշխ գործունէութիւն: Միևս կողմէն՝ վալիները, աչքի առաջ ունենալով իրենց աստիճանը և պաշտօնը, Օսմանեան կայսրութեան մէջ, հեշտ կերպով կարող են հակադրութեան մէջ լընդգէմ նահանգապետի և խախտել գործավարութեան այն ուղղութիւնը, որպիսին նա կը ցանկանար տեսնել իր վարչութեան մէջ:

Տնտեսական կշռադատութիւնները նոյնպէս պէտք է հաշուել առնելու:

Պանֆիլի. — Խուսական նախաձրաբնուում գտնում է նպատակ՝ միացնել ի մի բոլոր այն շրջանամասերը, որ բնակուած են հայերով և քրդերովի բայց նա յայտնում է, որ միենայն նպատակին կարելի էր հասնել՝ կազմենով մէկ կամ երկու վարչական սեկտոր, բաղկացած յայտնի վիլայէթներից: Նա հարց է տալիս. թէ ի՞նչու ոռւսական ծրագիրը ձգտում է դէպի այդպիսի մի վարչական փոփոխութեան Օսմանեան կայսրութեան մէջ:

Նեօնիքրդ. — Մատնացոյց է անում այն էական զանազանութեան վրայ, որ գտնում է ոռւսական ծրագրի վալիի և տաճկական օրէնքով սահմանուած ընդհանուուր վերատեսչը մէջ: Այս վերջնը ոչ մի ուղղակի միջամբ՝ տութեան իրաւունք չունի վիլայէթի վարչական գործերում: Նրա պաշտօնը կայսում է նահանգի հոգուութեան, կարգաւորման և ուղղավարութեան մէջ, նա հսկում և հովանաւորում է օրէնքների և կանոնների գործադրումը և վերանսկում է բոլոր ծառայողներին. նա առաջարկում է օրէնքի և կանոնի ծրագիր, զրագուելով իր շրջանի բարեկարգութեամբ. նա ուղղում է այն սխալ և անյարմար կողմերը, որ նկատում է և այս տեսակէտից լիազօրուած է պաշտօնեաներին յետ կոչելու կամ փոխելու ծառայութիւնից: Բայց վարչական ընթացիկ գործերի վարումը միշտ յատկացնուած է վիլայէթի սովորական մարմիններին: Թերեւս դժուար է պաշտառ նույն Օսմանեան կառավարութեան այն միտքը, որ առաջ բերելով Յ սեկտոր, հնարաւոր է նպաստել աւելի մեծ վարչական ամբողջութիւններ կազմելուն:

Նեօնիքրդ. — Ցոյց է տալիս մի շարք խոչնդուներ, որոնք ընդհանրապէս խօսում են ընդդէմ լայնատարած շրջանների ստեղծման Հայաստանում ձանապարհների խիստ սակաւացանակութիւնը, մասնաւորապէս ձմբանը, երբ հեռագրական հաղորդակցութիւնները համարեա թէ միշտ կտրուած են, իսկ սարերը անմատչելի անց ու դարձի համար, առաջ կը բե-

բի այն, որ ահագին սանջակներ զրկուած կը լինէին շրջանի կենտրոնական իշխանութեան հետ կապ ունենաւուց: Դրա հետևանքը կը լինէը վարչութեան անշարժութիւնը, իսկ սա սկիզբ կը դնէր մի բառային գրութեան այդ նոր վարչական երկրներում, ուր հետևաէս մոցրուած գրութիւնը չէր կարող զարգանալ:

Ի միջի այլոց, հասարակական իրաւակարգի դեկավարութեան ապահովման համար անհարժեշտ կը լինէր, որ առաջի տարիների ընթացքում բարենորոգութեանը շրջաններում պահուէին բաւականին մեծ բանակութեամբ պատերազմական ոյժեր Սրբ հայութեանը, ի դեպս եթէ կաղմուկու լինի մի նախնդ, կը լինէը այն, որ սանջակների զլամաւոր իրադարձութեամբ, օրինակ՝ զօրահամանատարի աստիճանը կը լինի բարձր, բան աւելի մեծ նշանակութիւն ունեցող քաղաքական պաշտօնեայի, — մի դրութիւն, ուր շատ զրժուար առաջ կերթար այդ երկու աստիճանաւորների անհրաժեշտ աշխատակցութիւնը:

Եեօնիքը, — գալիս է այն հզրակացութեան, որ անգործուական կը լինէր մի եզակի հայկական նահանդի վարչութիւնը և ամեն մի փորձ այդ ուղղութեամբ կը ստեղծէր սանջանկների նոյն անկախութիւնը, որով օգտաւում են ներկայ վիւայէթները: Սանջակների թիւը հաւանականորէն աւելի մեծ կը զառնար, քան ներկ ու միւայէթներինը, իսկ վարչական շրջանների քանակը նուազելու փոխ կաւելանար:

Նաբ Միանում է այն կարծիքին, որը յայտնեց իր գերմանացի կոլլեգը:

Ոին-Քանտեն, — ի պաշտպանութիւն առևական առաջարկութեան յայտնում է, որ աւելի զժուար կը լինէր դժոնել վեց լաւ վարի, քան մէկ լաւ նահանգապետ, նա երկիւղ է յայտնում, միանալով Մանդէլշտամին, որ վալինները, լինելով բարձրաստիճան պաշտօնեաներ, կարող են խչընդու ներկայանալ բարենորոգիչ մարմնի գործունէութեանը, որպիսին է ընդհանուր նահանգապետը, իսկ ընդհանուր վերատեսչին, հնուեապէս, աւելի ևս շուռու:

Պանֆիլի, — Զի ուրանում, որ ընդհանուր վերատեսուչները կարող են որոշ դժուարութիւնների հանդիպել, լինելով կից վարիններին, բայց նա կարծում է, թէ այդ հարցում եւրոպական վերահսկութեան կազմակերպումը կարող է նպատակին հասած լինել:

Եեօնիքը, — Նորից պնդում է այն էական զանազանութեան վրայ, որ պէտք է տեսնել բարենորոգութեանը գործի և վարչական ընթացիկ աշխատանքների մէջ, վերջինը, բարեփոխուած լինելով համապատասխան որոշ ձերի, մնում է իր գոյութեան մէջ անխախտ, այն ինչ բարենորոգման գործը պահանջում է մի առանձին շարժունութիւն:

Բարենորոգութեանը շրջանակը կարելի է լայնացնել համաձայն ցանկացածի, իսկ վարչական սահմանը պիտի մնայ նեղուած:

Նա զատափեանում է այն վարչական ամբողջականութիւնը, որ նախատեսնում է ուսւական նախածրագիրը: Այդ մեծ տարածութիւնը կազմում է Տաճկաստանի ՎՇ-ը, իսկ տերըիտօրինա հաւասար լինելով Գերմանիայի կեսին, կամփուէր իր մէջ Բուլղարիան և Ռումինիան ի մի վերցրած:

Ֆիցմօրին, — Նկատում է, որ վեց վիւայէթների առանձին դրութիւնը ճանաչուած է գիւղամների կողմից և ընդունուած 1895 թ. իրեն Թուրքիայի կողմից: Նա պնդում է, որ նըաւց վարչական միացումը աւելի լաւ կը

համազատախանէր իրերի ներքին զբութիանը, քան ներկայ բաժանումը վիլայէթների, եւ իսկապէս առաջ եկած անկարգութիւնների սկիզբը պիտի գանել երկու էտնիքական թշնամի տարրերի շփման մէջ, հայի և քրդի Արդ տարրերը ուղիղ բնակում են այն շրջաններում, որոնց համար առաջարկում է միևնուն վարչական իշխանութիւնը:

Պանթիլի. — Գտնում է, որ ընդունելով մի հայկական նահանգի կազմութերպումը համաձայն ուստական ծրագրի, մենք կը ստեղծենք Կայսրութիւնն մէջ մի շրջան, որ նրա ուրիշ մասերի հետ համեմատած, կը գանուի առաւել բարեկեցիկ զրութիւնն մէջ: Արդեօք երկիւղ չպէտք է կրեւ, որ ընդհանուր վերատեսնութիւնների բնակչութիւնը, վիտակցիլով այդ, կը պահանջի նմանորնակ արտօնութիւններ և իր համար:

Ֆիզմօրին. — Նկատում է, որ հարցը այստեղ առաւելութիւնների մասին չէ, այլ հաստատել մի առանձին ուժիմ համարակալաման որոշ համացեղ շրջանի, որ գտնում է առանձին պայմանների մէջ:

Պանթիլի. — Գտնում է, որ ուրիշ համազգի շրջանները ևս, օրինակ՝ Սուբրին, գտնում է նոյնպէս առանձին պայմանների մէջ:

Շեօնքիրդ. — Կարծում է, թէ վիլայէթների օրէնքը, հրատարակուած նորիր, նախատեսել է արդէն լայն առանձն ուռիթիւն ընդհանուր նահանգական ժողովը կարող է զբաղուել վիլայէթներին վերաբերուող օրէնքրական հարցերով, աչքի առաջ ունենալով իւրաքանչիւր շրջանի սահնձին պայմանները:

Շեօնքիրդ. — Սակայն չի վիճում այն մասին, որ բարենորոգութիւնը կը լինեն աւելի շատապ Հայաստանի համար, քան այլուր. նրանց անարգել գործադրումը ապահովուած պիտի լինէր մի հաստատութիւնը, որը, ըստ նրա անձնական կարծիքի, կախում ունենար միջազգային մշտական վերահսկուութեան հիմնարկութիւնից:

Շաբէր. — Ընդունում է իր գերմանական կողէզի կարծիքը:

Սիմ. Քանտեն. — Նկատում է, որ Շեօնքիրդի առանձնութիւնը ազատ չէ վտանգից:

Գեց ընդհանուր ժողովները, որ կը կազմուեն վեց հայկական վիլայէթներում, կարող են ի նկատի ունենալ իրեց պատահելիք դժուարութիւնները և աշխատել զնազան միջոցներով նրանց գէմն առնել Ընդհանուր նահանգապետի միակ իշխանութիւնը թուում է անհրաժեշտ բարենորոգութիւնների գործադրութիւն ամբողջութիւնը ապահովելու համար:

Մանեկլյում. — Պատասխանում է զնազան կարծիրներ արտայատող ներին Հայարանակ շրջանների ամբողջ պատուալինը ցոյց է տալիս, որ չնորհի միահօր կամքի բացակայութիւնն, ժողովուրդը ենթարկուել է շատ չարիբների: Այնքանէ է Մի գործադրական մարմին, որն ունենար ազատ գործելու հնարաւորութիւն, բայց ոչ այնպիսի մեծաքանակ պաշտօնեաներով, որոնք դրուած են վալինների տրամադրութիւնն տակ:

Մանեկլյում. — Միանզաման հաշուի է առնում այն, որ նախածըագիրը կրծատելով վիլայէթների թիւը, ընդարձակում է սահնջակների վարչական իրաւասութիւնը: Սակայն նա վհատում է այդ բանում հետեւելու օսմանիան օրէնստուի ոգուն, որը իրեն ներկայում յայտարարել է կողմանակից ապակենաւուացման նախածրագիրը իրօք ունի երկու նպատակ, նախ կարելոյն չափ լայն ինքնավարութիւն վարչական փոքր ամբողջութիւնների համար, երկորդ՝ աւելի

անմիջական յարաբերութիւն այդ ամբողջութիւնների ընդհանուր կառավարչի հետ, —մի բան, որ անհնարին կը լինէր, եթէ պահպանուէր և աւ լին երի հիմա արկութիւն ը»:

Կարծիքները, որ յայտնուած են ընդէմ նախագծուած շըջանի լայնածաւալութեան, համողեցուցիչ չեն Վեց վիլայէթները մտնում են ամենափոքր վիլայէթների կարգում, նրանցից իւրաքանչիւրը ունի աւելի փոքր տարածութիւն, քան Բաղզատի, Բասսօրայի կամ Խուզավէնդիգարի վիլայէթը:

Շեօնբերգ —Պնդում է, որ հէնց այդ վերջին հանդամանքը անհնարին է դարձուա աշխարհագրտկանապէս ստեղծելու աւելի մեծ վարչական սահման:

Մանդելշտամ. —Նկատում է, որ խօսքը գործի պայմանների մասին է: Եթէ յիրաւի պայմանները գոյութիւն ունեն, նրանք ի բնէ խոչնդու կը հանդիսանան սանջակի զիմաւոր տեղերի և ընդհանուր նահնդապետի բնակավայրի յարաբերութիւններին:

Սակայն Բարձր Դուռը ինքը կարեսր չէր համարել կանդ առնելու այդ աշխարհագրական գծուարութիւնների վրայ, որովհետև նա գեռ ևս մինչ 1878 թ. կազմել էր երգումի այլալիթը, որ ամփոփում էր իր մէջ ներկայ վիլայէթներից մէքանիսը, գոյութիւն տալով բաւականին մեծ վերատեսչական շըջանների:

Շեօնբերգ. —Յայտնում է, որ պիտի խուսափել կառավարչի և վերատեսչի պաշտօնները շփոթելուց, վերջիններին պատկանում է վերահսկողութիւնը և վերատեսչութիւնը, բայց ոչ թէ միջամտութիւն վարչութեան գործերին:

Մանդելշտամ. —Կարծում է, ընդհակառակը, թէ ընդհանուր վերատեսուչների միջամտութիւնը վիլայէթների վարչութեան մէջ կը լինի մշտական թ. Դուռն յուլիսի 1-ի ըրջաբերականով հրատարակած «Հրահանգները» ակնյայտնի ապացոյց են դրան։ Համաձայն 4-րդ յօդուածի ընդհանուր վերատեսուչները «հսկում են իրենց սահմանների շըջանում վիլայէթների ու համայնքների վերաբերմամբ հրատարակած օրէնքների, ինչպէս նաև Կայսրութեան ուրիշ կանոնների գործադրություն։ 8-րդ յօդուածը նպատակ է դնում «սահմանել բարի ներդաշնակութիւն շըջանի բնակիչների մէջ, ցըիլ նրանց մէջ եղած թիւրիմացութիւնները, ապահովել բոլորի համար իրաւունքի հաւասարութիւն և յարգել տալ ընդհանրապէս իւրաքանչիւրի ազատութիւնը և իրաւունքները։ 9-րդ յօդուածը աւելի ևս պարզ է, որովհետև նա յայտնապէս յատկացնում է նրանց իրաւունք «ուղղակի և աննորդղակի կերպով կօնտրօիր ենթարկել» բոլոր պաշտօննեաններին և նրանց «գործունէութեան և ընդունակութեան աստիճանը ստուգել»։ 10-րդ յօդուածը հաստատում է այդ կօնտրօլը թոյլատերելով վերատեսուչներին, համաձայն հանդամանքների, յշետ կոչելու ծատայութիւնից կամ փոխելու այն պաշտօննեաններին, որոնց նորա կը գտնեն անբաւարար կամ վարմունքի տէր»։ 11-րդ յօդուածը վերջապէս ցըրում է ամեն մի անորոշութիւն, մասնաւորապէս շեշտելով, որ վալինների կողմից «նշանակուած պաշտօննեանների առթիւ կայացած վճիռների մասին» նրանց տեղեկութիւն կը տրուի Կարելի՞ է արդեօք երեւակայել դրանցից աւելի կատարեալ միջամտութիւն վիլայէթի վարչութեան մէջ։

Շեօնբերգի թուած իրաւունքները չեն կազմում այն բոլորը, որ մի շըջանի ընդհանուր վերատեսչին յատկացուած են, միևնույն ժամանակ սա

մի գերազանց, վերադիր պաշտօնեայ է վալիի հետ համեմատած։

Սոյն տարուայ յուլիսի 1-ի հրահանգները խօսում են ի նպաստ նախածրագրի. վերջինս միակ գործադրական իշխանութեան անհրաժեշտութիւնն է յայտարարում այն շրջանի համար, որ կազմուած է համանման դրութեան մէջ գտնուող վայրերից։

Շեօնքերգ. — Պնդում է իր տեսակիտի վրայ Այդ հրահանգների 8-րդ յօդուածը ունի այնքան լայն իմաստ, որ նրանից կարելի է եզրակացնել ամենը, ինչ որ ցանկալի է Պաշտօնականերին յասու կոչելու իրաւունքը, որ պատկանում է ընդհանուոր վերատեսութներին, համաձայն 11-րդ յօդուածի, ուրիշ ոչ այլ ինչ է, բայց եթէ իրավործութն նոցա ուղղագիր կամ վարիչ (կօրբէկտիւ) իշխանութեան, Միւս կողմից և և 7-րդ յօդուածները, որ շատ հանգամանըներում նախատեսնում են ընդհանուր վերատեսութիւնը, վալիների և կենտրոնական իշխանութեան համագործունէութիւնը, հաստատապէս պարզում են նրանց ուղղակի միջամտութիւնը ընթացիկ վարչական գործերին։

Սէն-Քանտէն. — Հաստատում է, որ ճշրահանգները՝ տալիս են ընդհանուր վերատեսութներին շատ լայն իրաւունքներ, բայց վաստ սահմանագծուած և չեն բովանդակում իրենց մէջ այնպիսի կարգադրութիւններ, որոնցով հնարաւոր լինէր նախազգուշացնել նրանց և վալիների մէջ ծագած հնարաւոր կօնֆիւկտները։

Մանդիլյամ. — Անցնում է ընդհանուր հարցի քննադատութեանը, որը համարում է բոլորից գերազանց. ցանկալի՞ է արդիօք ընդունել, որ վեց վիերէկթները կազմեն մի ամբողջականութիւն, գտնելով, որ նրանց դրութիւնը պահանջում է սահմաննել միակ դեկավարիչ ոյժ, որպէս զլուխ վարչութեան եթէ այս, ուրիմն պէտք է ընդունել սուսական նախածրագրի առաջարկած իրաւակարգը։ Սակայն կասկածանքից վեր է, որ վեց վիլայէթները ունին ընդհանուր համանմանութիւն։

Ցանձնաժողովը անցնում է ոռուական նախածրագրի երրորդ պարագափի 1-ին յօդուածի քննադատութեանը։

«Վարչական բաժանումների սահմանումը կատարուելու է այնպէս, որ նրանց մէջ եղած միատեսակ ազգերը խմբուած լինեն ըստ նարաւորութեան ի մի»։

Մանդիլյամ. — Տալիս է հետեւալ բացաւրութիւնները։

Վեց դեսպանների կօլէկտիւ նօտան, տրուած թ. Դոանը 7 սեպտեմբ. 1880 թ. ասում է. «Համայնքների կամ առհասարակ վարչական շրջանների դասաւորումը հետեւակս պէտք է կատարուի այն ձևով, որ համագիտ տարրերը կարողանան խմբուած լինել ի մի. այդ դասաւորումը պիտի ձգտի հայերին խմբելու, իսկ անել դէպքում հայերին և տաճիկներին ի մի, ի բաց առանելով բրդերին»։

Միւս կողմից 1895 թ. երեք դեսպանների կողմից տրուած յիշատակառ գիրը (կէտ I) ասում է. «Նոր դասաւորումը... պիտի անել այնպէս, որ պանակչութիւնը բաժանուի ազգագրական խմբերի—իւրաքանչիւր շրջանի զանազան վայրերում միատեսակ ազգերը ի մի»։

Յ թ., որ փոխարինուած է 1895 թ. յիշատակագրից, ունի հետեւալ պարզ նպատակը. դադարեցնել այն ընդհանութիւնը, որոնց աղքիւրն է ցեղական կամ կօրսնական զանազանութիւնը։

Այդ մեկնութիւններին ոչ մի հակածառութիւն չկ լինում։  
Ցանձնաժղովը որոշում է կայացնել իր հետեւեալ նիստը չորեքշաբթի,  
9 յուլիսի, առաւօտեան ժամի 10-ին։  
Նիստը վերջանում է 3/4 ժ. կէսօրից յետոյ։

Հայկական Բարենորոգումների Յանձնաժողով.

Նիստ III.

Չորեքշաբթի, 9 յուլիսի, 1913,

Ներկայ են.

- Պ. Շեօնքերգ, ներկայացուցիչ Գերմանիայի գեսպանատան։  
Պ. Պանֆիլի, ներկայացուցիչ Աւստրօ Ռւսպարական գեսպանատան։  
Պ. Սին-Քանտեն, ներկայացուցիչ Ֆրանսիայի գեսպանատան։  
Պ. Ֆիզմօրիս, ներկայացուցիչ Մհն-Բրիտանիայի դեսպանատան։  
Պ. Շաբէր, ներկայացուցիչ Իտալիայի գեսպանատան։  
Պ. Մանդելշտամ, ներկայացուցիչ Ռուսաստանի գեսպանատան։  
Նիստը բացում է 10 ժ.

Պանֆիլին առաջարկում է քննադատել առևտեան նախածրագրի շրջագուռածը, դա հետեւեալն է. «Ընդհանուր նահնակագիտը (Վալի Ումումի) հայկական նահնակագի կլինի տաճկանապատկ թթիստոնիայ կամ՝ առաւելապէս Ելրոպացի, Նշանակուած նորին Մ'եծութեան Սովորանի կողմից ճ տարրուայ ժամանակով համածայնութեամբ մեծ պետութիւնների».

Մանդելշտամը տալիս է հետեւեալ պարզաբանութիւնը:

Այս յօդուածը բխում է այն խոր համոզունքից, որ իւրաքանչիւր լուրջ բարենորոգում վերաբերմաւը նահնակի վարչութեան հնաթագրում է, որպէս անհրաժեշտ պայման, ընդհ. նահնակումը նորին Մեծութեան Սուլթանի կողմից համաձայնութեամբ մեծ պետութիւնների:

Այս անուանը պատշաճ ոչ մի բարենորոգում երբէք իւրագործուած չի եղել Տաճկաստանում, առանց մեծ պետութիւնների մասնակցութեան Դրան ապացոյց են Արևելեան-Ռուսէլիան, Կրիտը, Լիբանանը, Սակայն աւելորդ է կանգ առնել այս օրինակի վրայ. միմիայն Հայաստանի պատմութիւնը բաւական է այս գրութեան պացուցան համար Սահ. Ստեփանոյի գաշնագիրը, Կիպրոսի համաձայնաթիւնը և Բերլինի վեհաժողովը որոշեցին բարենորոգումներ հայաբնակ վիլայէթների համար Բ. Դուռը այդ բանում ոչխնչ չարեց: Ճնշուած լինելով զեսպանատների կողմից, նա 1880 թ. յուլիսի 5 ին ուղարկեց նրանց մի յուշագիր, որ պարունակում է իր մէջ, ինչպէս եւ բոլոր Բ. Դուռն կողմից եղած հաղորդագրութիւնները, ընդհանուր բարենորոգումների խոստումն: Մեծ պետութիւնները չքաւականացան այդ խոստումներով. նրանց 7 սեպտ. 1880 թ. պատասխանող յուշագրի մէջ մնչք կարդում ենք հետեւեալը. «Բերլինի գաշնագրի 61 րդ յօդուածով Դուռը պարտաւորուեց» առանց յետաձգելու իրագործել այնպիսի բարեփոխութիւններ, որ տեղական կարիքը պահնաջում է հայաբնակ շրջանների համար: Ստորագրող պետութիւնները, ցաւ յայտնելով նկատում են, որ յուլիսի 5-ի նօտան աչքի առաջ չի ունեցել տեղական կարիքը, որի մասին խօսում է վերօյիշ-

եալ յօգուածը: Մեծ պէտութիւնները անշուշտ բաւականութեամբ կընդունէին այն լայն բարենորոգումները, որ կմտցնուէին Օսմանիան Կայսրութեան բոլոր մասերում: Բայց նրանց համար ամենից առաջ ցանկալի է տեսնել Բերլինի դաշնագրի իրագործումը և նրանք չեն կարող համաձայնուել, որ Բ. Դուռը իրեն ազատուած համարի այն պարտականութիւններից, որ դրուած են նրա վրայ յիշեալ յօդւածով, առաջարկելով մի փոխուած իրաւակարգ, ուր մենք չենք տեսնում և ոչ մէկը այն բարենորոգումներից, որոնք մասնաւորապէս ծրագրուած էին յօգուածնոյն յօգուածով առանձացուած վիլայէթների (շրջանների): Այդ վիլայէթների բնորոշող կողմը կայանում է նրանում, որ ի միջի այլոց, լայնածաւալ վայրերի բնակչութեան մեծամասնութիւնը բաղկացած է բըստոննեաններից և ահա ամեն մի բարենորոգում, որ ուշագրութեան չէր առնի յիշեալ հանգամանքը, չէր կարող տալ բաւարար արդիւնքն:

Այդ յուշագրից ոչ մի հաեւանք չունեցաւ, իսկ հայերի գրութիւնը շարուշ կուեց նախկին նման Սամայոյ կոտորածները 1895 թ. ստիպեցին ֆուանիայի, Մեծն-Բրիտանիայի և Ռուսաստանի ներկայացուցիչներին կազմակերպել մի անկետա և ներկայացնել Բ. Դուռը յիշատակագիր և բարենորոգումների ծրագրի թիշատակագիրի VII յօդ. (4 նորատող) նախատեսնում է, որ «Մի Բարձր Պաշտօնակատար, առանձնապէս ուզարկուած Նորին Մեծութեան Սուլթանի կողմից, լիազօրուելու է սոյն բարենորոգումների անշեղ և ճշգրիտ կատարման հսկողութեան համար»: Անդիհական կառավարութիւնը, մի առ ժամանակ անց, առաջարկեց ի յաւելումն այդ երկուսի այն, որ յիշեալ Բարձր Պաշտօնակատարի (Haut Commissaire) ընտրումը հաստատուի մեծ պետութիւնների կողմից և այդ բանում Ռուսաստանը և Ֆուանիան տուին իրենց համաձայնութիւնը (տես Դեղին զիրք, № 52 և 55): Մինչ այդ Թուրքիան շուտափոյթ նշանակեց Շաքիր-Փաշային Արևելիան Անտառիայի նահանգների վերատեսուչ (տ. Դեղին զիրք, եր. 73): Այդ մասին Բ. Դուռը յայտնեց առաջնակարգ դրակու հաններին 6/18 յուլիսի 1895 թ.

Երեք զեսպանատները ընդունեցին նշանակումը, հաւատ ընծայելով Բ. Դուռն բարենորոգումների ծրագրի հաղորդագրութիւններին և բարձր պաշտօնակատարի իրաւունքների էռութեան բացարարութիւններին:

1895 թ. հոկտեմբերի 20 ի հրավարտակը ստեղծում է օնսկիչ գերապաշտօնակատար վերաբերմամբ բարենորոգումների կորժադրման պաշտօնը, բայց ոչ մի խօսք չէ յիշում մեծ պետութիւնների համաձայնութեան մասին:

Այդ «բարենորոգումների» հետեանքը յայտնի է շատ լաւ Հայերի դրութիւնը ներկայում մնում է նոյնը և ևս խկապէս ոչ մի նիմք չեմ տեսնում մեծ հաւատ տածելու դէպի այն խոսուումների կրկնութիւնը, որոնք 18 տարուայ ընթացքում ցոյց չառեն իրենց իրազործումը թէկուզ ամենաշնչին չափով: Բարենորոգումների կօնտրուը որ պիտի ներմուծուէր մեծ պիտութիւնների միջոցով—մնում է բաց իր ամբողջութեամբ: Եւ այդ կօնտրուի մասերց մէկն է նորին Կայսրական Մեծութեան Սուլթանի կողմից մի կառավարչի նշանակումը, որ վայեէր Երոպայի վասահութիւնը:

1895 թ. հրովարտակի 32-յօդուածը հստատուելով «Մշտական վերահսկողութեան յանձնաժողով», չի տալիս համապատասխան ցանկալի ապահովութիւն, չայիշով, որ ղետպանատներին իրաւունք էր տրուած մտնել:

յարաբերութիւնների մէջ այդ յանձնաժողովի հետո Նոյնիսկ եթէ վերջինս ըաղկացած լինէր եւրոպացիներից, նա օսմաննեան վարչական այդ ձևով հիւսուած մեխանիզմի մէջ կը դառնար ուրիշ ոչ այլ ինչ, բայց եթէ մի խճճուածք, որ խոչնոտ կը հանդիսանար ընդհանուր նահանգապետի ազատ գործունէութեանը, թողնելով գեր ևս մի կողմ այն տարածայնութիւնները, որ միշտ հսարաւոր կը լինէին նոյն յանձնաժողովի անդամների մէջ Թուրքիայի կողմից նշանակուած գերապաշտօնակատարները և տաճկական հսկողութեան յանձնաժողովները արդէն ապացուցին իրենց անգորութիւնը: Այն ինչ անհրաժեշտ է, որ ընդհանուր նահանգապետը Սուլթանից ստացած յանձնարարութեան կատարման համար ունենայ գործունէութեան լիակատար ամբողջութիւն:

Բ. Դուան ըշացերական հսուագիրները՝ ուղարկուած Օսմաննեան կառավարութեան զեսպանատներին, հաղորդում է կայսրութեան 6 ընդհանուր վերատեսչութեան սեկտորների բաժանման մասին, որոնցից ամենանշանաւորները, ինչպիսիք են արևելիան Անտոլիան բովանդակողները, կունենան իրենց գուխ եւրոպացի (étrangers) ընդհանուր վերատեսչներ:

Նախ և առաջ ես վերցնում եմ վերատեսչ խօսքը: Այդ տիտղոսը ենթադրում է, որ ներկայ վարչական իրաւակարգը մնում է իր ոյժի մէջ, լիովին ենթարկուելով վերատեսչի հսկողութեանը Յենուելով վերևում պարզուած հիմունքների վրայ, ես անհրաժեշտ եմ գտնում վերացնելու վալիների պաշտօնը և կենտրոնացնելու ամրող վարչական իշխանութիւնը ոչ թէ մի վերատեսչի ձեռքում, այլ մի ընդհանուր նահանգապետի:

Բ. Դուաը յայտարարում է, որ Արևելիան վիլայէթների ընդհանուր վերատեսչութեամբ կը լինեն եւրոպացիք (étrangers), նախածրագիրը նոյնակս գերազատում է, որ նահանգի գլուխ անցած լինեն եւրոպացի կառավարիչների Բայց ևս պէտք է խոստովանեմ, որ նոյնիսկ մի տաճկահապատակ քրիստոնեայ, նշանակուած լինելով ընդհանուր նահանգապետ մեծ պետութիւնների համաձայնութեամբ, անելիքայի կորպուսը աւելի մեծ նեղինակութիւն, քան մի վերատեսչ կամ մի ընդհանուր նահանգապետ, նշանակուած առանց այդ համաձայնութեան: Այդ վերջինս կը լինէր Դուան համար մի հասարակ պաշտօնեայ, չունենալով ժողովրդի աշջում մի որևէ նշանակութիւն:

Ես թոյլ եմ տալիս ինձ աւելացնելու ևս միքանի խօսք, որպէսզի ընդդեմ այն, որ նախածրագիրը առաջարկում է մի միջոց, որ լիովին ներդաշնակ է նորին Կայսերական Մհծութեան Սուլթանի վերաբարութեան հետ:

Բերլինի գաշնագրի 13-րդ յօդուածը ասում է. «Բալկանների հարաւում կազմուում է մ' ըշացն Արևելիան Ոտումէլի անուամբ, որ գտնուելու է նորին Կայսերական Մհծութեան Սուլթանի բաղարական և պատերազմական ամսմիջական իշխանութեան տակ վարչական ինքնավարութեան պայմաններով. նա կունենայ բըհատոնեայ ընդհանուր նահանգապետ»: Եւ սակայն Բերլինի գաշնագրի 17-րդ յօդուածը ասում է. «Արևելիան Ոտումէլիայի ընդհանուր նահանգապետը նշանակում է Բ. Դուան կողմից 5 տարով մեծ պետութիւնների համաձայնութեամբ»: Ուրիշն ընդհանուր նահանգապետի նշանակումը մեծ պետութիւնների համաձայնութեամբ ընդունուած էր վերջիններին կողմից, որպէս ոչ հակասող Սուլթանի վեհապետութեանը:

Բացի այդ, 1896 թ. 1 սեպտեմբերի Կը էտի կամոնագիրը, որ ճրատարակուած էր այն ժամանակ, երբ Կը տը դես ևս կազմում էր շրջան (քօնմած), իր 1 յօղուածում առանձ է, և կը էտի լինի քրիստոնեայ, նշանակուած Սուլթանի կողմից 5 տարով, համաձայնութիւնը մեծ պետութիւնների»։ Վերջապէս միը աչքի առաջ ունենք ներկայ կիբանամը և նա ձեր յիշողութիւնն եմ հրաւիրում 10/23 դեկտեմ. 1912 թ. արձանագրութեան վրայ, որով կիբանամի նահանգապետ նշանակուած էր Օհաննէս քէյ կուխուուշեանը։ Այդ արձանագրութեան մէջ մենք կարդում ենք. մեծ պետութիւնների ներկայացոցցիները համամիտ են պնդելու, որ ներկայ արձանագրութեամբ նրանց և Բ. Դուան մէջ սոյն նշանակման առթիւ հաստատւում է նախնական համաձայնութիւնը թ զեկալարութիւնը այն պայմանների, որոնք սկսած արձանագրութեան օրաթւից սահմանում են նահանգապետի իշխանութեան հինգամեայ ժամանակամիջոցը։

Իսկ նախածրագրի առաջարկութիւնը կայսրութեան համար միմիայն մի վիրանորոգումն է. Մեծ պետութիւնների մասնակցութիւնը ընդհանուր նահանգապետի նշանակմանը այստեղ, ինչպէս նաև վերոյիշեալ զէպերում, հիմնում է Բ. Դուան սեփական կամքի վրայ և հետևարար չի կարող համարուել որպէս Սուլթանի վիհանգնութեան իրաւունքների կրծատութեան։ Պանդիլի. — Կը ինում է առաջի յօղուածի առթիւ իր արած նկատողութիւնները. Նա չի հասկանում, թէ ինչու մի լինդանուր նահանգապետի կողմից կառավարուող շրջանի կազմակերպումը ներկայացնում է աւելի մեծ ապահովութիւնը, քան ներկայ իրաւասահմանումը երկու ընդհանուր վերատեսուչներով։ Մանդէլշամբ ամենից սուած ընդունեց, որ ընդհանուր վերատեսուչները կունենան շատ ընդարձակ իրաւունքներ ու իշտ առած, երբ ընդհանուր նահանգապետը իր սեփական իշխանութեամբ ձեռք կառնէ անհրաժեշտ միջոցներ, ընդհանուր վերատեսուչները ստիպուած են դիմելու կենսունական կառավարութեանը կուց այդքանը լինէր աւելի նկատակայարար, բայց եթէ Դուռը պարտաւորուի նշանակելու երողացի վերատեսուչներ, այն ժամանակ մենք հասած կը լինենք նոյն սպատակին, կարեք չպալու այլևս խորապէս փոխելու ներկայ իրաւակազմը։

Պանդիլին նոյնիսկ կարծում է, թէ տաճկան սիստեմը տալիս է աւելի մեծ ապահովութիւնը, քան ուսական սիստեմը և իսկապէս ընդհանուր նահանգապետը չէր կարող տեղական կարիքները իմանալ նոյնքան լաւ, ինչպէս ներկայ վալիները և շնորհի. իր ընդարձակ պարտականութիւնների կը մնար գործունէութիւնից գորևս և աւելի լաւ է պահել վարչութեան գործունէութեան մէջ փորձուած վալիներին, որ տեղական գործեան պահանջներին լուսատեղեակ են, ուսնենալով նրանց վրայ վերատեսուչներ, որոնք աղասուած լինելով վարչութեան ընթացիկ գործերից, կարող էին իրենց ամբողջ գործունէութիւնը դոհել բարենորոգութեամբ։

Ինչ վերաբերում է այն խոչնուններին, որ կարող էին պատահել ընդհանուր վերատեսուչները վալիների կողմից, այդ սանում կարելի է զգութեան դիմութիւնը կոստարով միջոցով, 1895 թիւ ֆօրմուլան անյաջող էր, և ընդունելով այն նորից, մենք կը ստեղծէինք մի ամենալինասակար պատճէց Բայց նրան կարելի է գործադրել ուրիշ կերպ. կամ կարգել մի յանձնաժո-

ողոք, կազմուած խառն ազգերից, կամ, որը աւելի լաւ է, սահմանել ընդհանուր վերատեսուչների անմիջական յարաբերութիւն գեսպանատների հետ, որոնք կը պաշտպանէին դրանց առաջարկութիւնները թ. Դուան մօտ:

Միւս կողմից պնդել, որ մի ընդհանուր նահանգապետի սահմանումը չէր հակասի Սուլթանի վեհապետութեանը, թւում է գժուար: Անտարակոյս, Սուլթանը կարող է իր իրաւունքների որոշ մասը զիջել մի որեւէ պաշտօնեայի, բայց նրա համաձայնութիւնը տրուած անհրաժեշտութեամբ՝ իրօք չէր արգելի նրա վեհապետութեան կրատմանը: Նմանապէս և ուսւական նախածրագիրը, ենթադրելով, որ Սուլթանը ստորագրում է հանգամանքներից ստիպուած, արդարեւ առաջ կը բերէր կայսրութեան վեհապետութեան կը ճանապահումը:

Պանֆիլին եզրափակում է, որ նա գերազասում է ընդունել թ. Դուան առաջարկութիւնները, մտցնելով նրանց մէջ որոշ ուղղութեար ներկայ վարչութիւնը, նրա հետ վերցրած ընդհանուր վերատեսուչները և լուրջ հսկողութիւնը, թւում է նրան, կարող են ապահովել հայերի շահերը, նոյնը և արենելեան Անտառօլիայում բնակուող քրդերի:

Եեօնբերգ.—Միւնում է Պանֆիլիի կարծերին: Մանդէլշտամի նախածրագրի այդ մասի իրազործումը կը տար ընդհանուր նահանգապետին իրօք վիակասար իշխանութիւն, որը շատ բանով կը գերազանցէր վալիին տրուած իրաւունքներից և առաջ կը բերէր լոկ երեակայական կախումն կենտրոնական կառավարութիւնից:

Մանդէլշտամի առաջարկութիւնը բխում է Լիբանանի կանոնագրի 1 յօդուածից, որը նոյնպէս տալիս է ընդհանուր նահանգապետին իրաւունք նշանակելու պաշտօնեաներ և դատաւորներ Բայց Լիբանանի փորձերը չեն խրախուսում նմանօրինակ փորձերի կը լինումը և որ նահանգապետի ընտրումը իւրաքանչիւր հինգ տարի, առաջ կը բերէր պաշտօնեաների և դատաւորների փոփոխումն, այսինքն դա կը լինէր մի միջոց վերացնելու դատավարութեան և վարչութեան յառաջընթացութիւնը այն բարենորոգուող երկրում, ուր կարիքը կրկնակի է:

Նմանօրինակ միջոց կը լինէր մի խիստ հարուած պաշտօնեաների և դատաւորների բարքերի համար: Նա, ով ծանօթ է արևելեան բնաւորութեան հետ, չի կասկածի, որ աստիճանաւորը կամ դատաւորը, նախատեսնելով իր հինգամեայ պաշտօնի ժամանակամիջջոցը, կաշխատի օգտուել նրանից, շահասիրելով ազգեցիկ անձնաւորութիւններին: Այլ տեսակէտից Լիբանանում գոյութիւն ունեցող դրութիւնը նոյնպէս կարող է օրինակ ծառայել:

Ընդունելով իսկ, որ հիմնարկութիւնը, որի մասին խօսւում է, տուեց լաւ հետեանքներ Լիբանանում, դարձեալ վատանգալից կը լինէր մացնել նոյն միջոցը մի երկրում, որ ութսուն անգամ մեծ է Լիբանանից: Դա կը լինէր նոյն բանը, եթէ Տարասկոնի գաւորի վարչական հիմնարկութիւնների ձեռվ փորձ լինէր կառավարելու ամբողջ ֆուանսիան:

Յատկացնել ընդհանուր նահանգապետին պաշտօնեաների նշանակման և յետ կոչման իրաւունքը, մինոյն բանն է, ինչ դարձնել նրան անկախ աէր մի ինքնապար շրջանի և զրկել Սուլթանին իր էական առաւելութիւնների որոշ մասերից:

Մանդէլշտամի առաջարկը ընդգծում է այս միտքը և նրանով, որ ընդհանուր նահանգապետի նշանակման համար պահանջւում է մեծ պետութիւն:

ների համբական համաձայնութիւնը, մի քան, որին կը պատահէք բոլոր ինք-  
նալար շրջանների ստատուտների մէջ, Մենք բոլորս գիտենք, շարունակում  
է Շեօնքերը, որ սոյնօրինակ ինքնավարութիւն անհրաժեշտօրէն առաջ  
կը բերի Հայաստանի լիովին անջատումը Օսմանեան կայսրութիւնից, իսկ  
դեկապարուելով Տաճկաստանի տեղրժուորիալ status quo-ի պահպանութիւնը,  
և յայտնում եմ այն միտքը, որ պէտք է խուսափել ամեն մի միջոցից, որ  
կարող էր վնասի Սուլթանի վեհապետութեանը:

Պանֆիլի — Իրեն հսկակարծիք է յայտաբարում Մանգելշտամին մի կե-  
տում ևս Վերջինս կարծում է, թէ ընոյնիսկ տաճկանպատակ քրիստոնեան,  
նշանակուելով ընդհանուր նահանգապետ համաձանութեամբ մեծ պետութիւն-  
ների, աներկրպայելիօրէն կունենայ աւելի մեծ հեղինակութիւն, քան մի վերատե-  
սուչ կամ երրոպացի ընդհանուր նահանգապետ՝ առանց այդ համաձայնութեան  
և այդ վերջինը կը դառնար Բ. Դուան հասարակ պաշտօնեար, չունենալով ոչ  
մի նշանակութիւն ժողովրդի աշքում: Տեղին չէ արգեօք կարծել, թէ ընդ-  
հակառակը, մի տաճկանպատակ քրիստոնեայ աստիճանանուր, նշանակուած  
նոյնիսկ մեծ պետութիւնների համաձայնութեամբ, կը լինի պակաս հեղինա-  
կաւոր, քան մի երրոպացի վերատեսուչ նշանակուած նոյնիսկ առանց մեծ պե-  
տութիւնների համաձայնութեան Յայտնի չէ արգեօք, որ բնակչութիւնը  
միշտ աւելի մեծ հաւատով է վերաբերում զէպ եւրոպացին:

Դաքէր. — Համակարծիք է իր Աւետրօ-Ունգարական կոլեգի հետ:

Մանդիլյամ. — Նկատում է, որ եթէ եւրոպացին օսմանեան աստիճա-  
նաւոր է նշանակուում ասանց մեծ պետութիւնների միջամտութեան, նրան  
դադարում են ճանաչել որպէս այդպիսին: Փորձը ցոյց է տալիս, որ բնակ-  
չութիւնը նրան չի զանազանում ուրիշներից և համարում է ֆէսաւոր,  
նժաննեցնելով բոլոր մնացածներին, — որպէս Բ. Դուան մի հասարակ պաշ-  
տօնեայ:

Պանֆիլի. — Կարծում է, թէ մեծ պետութիւնների համաձայնութիւնը  
բաղաքական գործ է, որին միմիայն դեսպանատաները կարող են նշանակու-  
թիւն տալ, բայց ոչ բնակչութիւնը, որը կապուած է արտաքին կշռադատու-  
թիւնների հետ:

Մանդիլյամ. — Գտնում է ընդհակառակը, որ այդ գաղափարը շատ  
հեշտ կերպով է թափանցում մասսայի մէջ:

Պանֆիլի. — Աւելացնում է, որ եթէ Դուուր նշանակում է եւրոպացի ընդ-  
հանուր վերատեսուչներ, նա ընտրէու է նրանց ոչ թէ հասարակ անձնա-  
ւորութիւններից, այլ հաւանորին դիմելու է պետութիւններին: Պետութիւն-  
ների մէջ ընդհանուր համաձայնութիւն գոյութիւն չի ունենայ, իսկ օֆֆի-  
ցիօք նշանակումը այս կամ այն պետութեան կողմից կը հաստատի վերին  
աստիճանի լուրջ ապահովութիւն:

Մանդիլյամ. — Ցանկանալով սահմանագծել տեսակէտերի այն տարրե-  
րութիւնը, որ գոյութիւն ունի իր և Աւետրօ-Ունգարիայի ներկայացուցչի  
մէջ, հարցնում է վերջինին՝ ընդունելով է նա արգեօք մեծ պետութիւնների  
միջամտութիւնը ընդհանուր նահանգապետի մշակման հարցում:

Պանֆիլի. — Պատասխանում է, որ սկզբունքապէս նա թշնամի է ընդ-  
հանուր նահանգապետի հիմնարկմանը, սակայն ընդհանուր վերատեսուչներին  
վերաբերուղ հարցում նա պընդում է, որ մեծ պետութիւնների հաւա-  
նութիւնը, թէօրէթիկապէս օգտաւէտ լինելով անյաջող ընտրութեան խու-

սափման համար, չի ունենայ raison d'être, որովհետև Դուռն ընտրումը պատահական եւրոպացիներից չի լինելու:

Մանդիլյոսամ.—Երկիւղ է յայտնում, մի գուցէ ընդհանուր վերատեսութերը մուշները, նշանակուած մի անզամ, ընկենն Դուռն ազգեցութեան տակ:

Ենօնբերգ.—Նկատում է, որ ընդհանուր նահանգապետն էլ կարող է ենթակայ լինել նոյն կասկածանքին:

Մանդիլյոսամ.—Հակաբանում է, որ իրապէս ընդհանուր նահանգապետը գիտակցիուն է իր անկախութիւնը Բ. Դոնից:

Ենօնբերգ.—Կարծում է, թէ ընդհանուր վերատեսութերը նոյնպէս զերկալը ուն նմանօրինակ գիտակցութեամբ, համոզուած լինելով, որ նոյն քան հինգամեայ ժամանակամիջոցի լրանալը նրանց կարող են արտաքսիլ պաշտօնից:

Մանդիլյոտամ.—Գտնում է, որ այդ կշռագատութիւնը բաւականի ապահովութիւն չի տալիս. այն պաշտօնեաները, որոնց նշանակումը կախում է ունենալու միմիայն Բ. Դոնից, կաշխատեն հանոյ թուալ նրան, որպէս կրկին անզամ ստանան նոյն պաշտօնը:

Պանդիլի.—Մտածում է կայսերական վեհապետութեան պահպանման մասին: Պէտք է իմանալ, որ վերջինիս համար մեծ հարուած կը լինէր, եթէ Սուլթանը պարտաւորուէր իր վեհապետութեան մի մասը յանձնել այս կամ այն պաշտօնեային:

Մանդիլյոտամ.—Յայտնում է, որ ուսւական նախանձրագիրը չի ձգտում Սուլթանի վեհապետութեան կը բաժանմանը Սկզբունքապէս հիմնուելով էլլինէկի և լէ Ֆուրերի թէօրիաների գրայ, Մանդիլյոտամը կարծում է, թէ վեհապետութեան գաղափարը զուտ ձևական է և ուրիշ ոչ այլ ինչ, բայց եթէ պետութեան բովանդակ իրաւունքները Սյդ իրաւունքները իրօք փոփոխում են համաձայն պետութիւնների և ժամանակների: Զգէտք է սակայն շփոթել այդ իրաւունքների փոփոխականութիւնը վեհագետութեան բովանդակ գաղափարի հետո վեհապետութիւնը թագաւորութեան յատկանիշն է. նա կարողէ պարտաւորուել և որոշուել միմիայն իր սեփական կամքով: Պետութիւնը սակայն կարող է մի պայմանագրով զիջել ուրիշն իր իրաւունքների անսահման մասը, չկորցնելով միևնույն ժամանակ իր վեհապետութիւնը: Մանդիլյոտամը կարծում է, թէ կարեւոք է մի անզամ ևս յիշելու Բերլինի դաշնագրի 13 և 17 յօդուածները, որոնք, թւում է նրան, պարզորէն ապացուցում են նրա թէզիսի ճշմարտութիւնը:

Ենօնբերգ.—Ընդունում է, որ Սուլթանի վեհապետութիւնը դոյութիւն կունենայ որոշ չափով, իսկ եթէ անզամանակներ որոշ արտօնութիւնները Բայց վեհապետութիւնը չի կարելի ընդունել անկախ այն իրաւունքներից, որ կազմում են նրա մասը: Նա ենթարկեւում է փոփոխման՝ համաձայն պետութիւնների, իսկ մի պետութեան համար՝ համաձայն ժամանակների: Այն հարցը, որ ներկայում զրուած է մեր առաջ, կայանում է հետեւելում: Իմանալ՝ արգիօք Մանդիլյոտամի ծրագրի իրագործումից յետոյ Սութանի վեհապետութիւնը կը մնայ նոյնը, ինչպիսին նա այսօք է, թէ ոչ: Անշնչառ ոչ, որ բովհետու նրանից մենք կը պոկենք այնպիսի էական մաս, ինչպիսին է պաշտօնեաներ նշանակելու կամ արձակելու իրաւունքը: Սյդ փոփոխմանը շարունակում է Ենօնբերգը, մեղ թւում է անընդունելի և այն պատճառով, որ կայսերական կառավարութեան գրայ հարկաւոր կը լինէր զործ դնել:

ճնշում, որպէսզի կառավառութիւնը ընդունէք յիշեալ փոփոխումը, իսկ ճշնշումից մենք ցանկանում ենք խուսափել:

Պանֆիլի. — Գտնում է տեղին զբաղուել հարցի իրողութեամբ Մենք կանգնած ենք մի կազմից, ասում է նա, հանդէպնոր հրատարակուած օրէնքների, որ մտցնում են որոշ բարենորոգութիւններ Միւս կողմից ասպարէզ է եկել մի ինչ որ նախաձրաբարի, որ հիմն է կազմելու մեր կողմից տրուելիք առաջարկութիւնների, որպէսզի Դոնից նոր բարենորոգութիւններ խընդիմք Սուլթանը ակնյայտնի կարող է՝ առանց իր վեհապետութեան կը քառական արտօման, յօժարակամ հրաժարուել թաղի այս կամ այն արտօնութիւնից, բայց ոռուական նախաձրաբարը տեղի է տալիս Բ. Դուան և մեծ պետութիւնների մէջ առեւրի բացման, որով Սուլթանը ստիպուած է լինելու զի՞չի իր վեհապետական իրաւունքների որոշ մասը իսկ այդ վերջին դէպրում Սուլթանի վճիրը յօժարակամ չի լինում և այսունրա վեհապետութիւնը պահպանուած չէր կարելի համարել:

Թիգմօրիս. — Նկատում է, որ կամայական կը լինէր նախապէս կարծել, թէ Սուլթանը հակառակելու է: Գուցէ նա ազատօրէն ընդունի զեսպանա տների առաջարկութիւնները:

Ան. Քանիտին. — Գտնում է Պանֆիլիի թէօրան վտանգալից: Եթէ գեապանատները ընդունեն այս, դա կը նշանակի, որ մեծ պետութիւնները սկզբունքապէս պիտի հրաժարուեն Բ. Դուան վրայ մի որևէ է ազգեցութիւն ունենալուց, որը յօզուա բնակչութեան կարենոր է բարենորոգութիւնների ներմուծման տեսակէտից: Սոյնօրինակ բարենորոգութիւններ երբէք զերծ չին մտում կենորոնական իշխանութեան իրաւունքների ահմանափակումից կամ Սուլթանի վեհապետական արտօնութիւնների կրծատումից:

Նկատուեց և այն, որ Եհօնքերգը նախատում է ոռուական նախաձրագիրը ընդհանուր նահանգապետին պաշտօնեաների նշանակման և արձակման իրաւունք յատկացնելու համար, որպիսին նա համարում է միապետի էական տռաւելութիւնը: Բայց արդիօք նոյն իրաւունքը Բ. Դոնից ճանաչուած չէ եղել ընդհանուր վերատեսուչների համար: Ապա ուրիմն ուր է այստեղ զանազանութիւնը:

Պանֆիլի. — Գտնում է զանազանութիւնը նրանում, որ ընդհանուր վերատեսուչներին աղ իրաւունքները տրուած են կայսերական կառավարութեան կողմից յօժարակամ: Նրա կարծիքով պէտք է խուսափել Բ. Դուանը առաջարկել ամեն միջոց, որ կը նուազեցնէր Սուլթանի արտօնութիւնները, նախատեսնուած չլինելով գեսպանատներին հաղորդուած հրովարտակների կողմից:

Ան. Քանիտին. — Պնդում է, որ այդպիսի մի գէպքում անհարին կը լինի առաջարկելու այդ հրովարտակների մի որկից փոփոխութիւն:

Պանֆիլի. — Պատասխանում է, որ պէտք է զանազանել բարենորոգումը ների չնորհումը նրանց գործադրումից: Պետութիւնները կարող են, չինասեւով կայսերական վեհապետութիւնը, խորել կօնտրոլի ենթարկել բարենորոգութիւնի գործութիւնը, որ Սուլթանը բարեհաճօրէն չնորհել է:

Եհօնքերգ. — Միանալով Պանֆիլիի կը պատասխան գանում է նրանց մէջ վճռովական հմունքներ՝ արդեկել մեծ պետութիւններին միջամտելու բարենորոգութիւնների պաշտօնեաներին նշանակման գործին, Սուլթանը

իհարկէ, կարող է՝ առանց վեհապետութիւնից զրկուելու տալ իր արտօնութիւնների որոշ մասը մի պաշտօնեայի, որին նշանակելու է ինքը, սակայն ոչ մի օտար միջամտութեամբ, որովհետև այդ պաշտօնեան նրա բովանդակ գործադիր ներկայացուցիչն է, եւ ոչ մի առաւելութիւն չէր լինի, եթէ մնձ պետութիւնները նշանակման մէջ ձայն ունենային:

Շաբէր. — Յայտնում է իր լիուլի համաձայնութիւնը Գերմանիայի և Աւստրո-Անդարիայի ներկայացուցիչների կարծիքների հետ:

Մանդիլտամ. — Ընդհակառակը, պնդում է իր յայտնած կարծիքի վրայ, որը ընդունուած է ներկայ միջազգային իրաւունքի կողմից, մի պետութիւն համարում է անկախ վեհապետական մինչ այն ժամանակ, երբ նա չի սահմանափուել իր սեփական կամքով, նա վեհապետական է ույսիսկ այն ժամանակ, երբ ընդարձակ իրաւունքներով լիազօրում է պաշտօնեաններին, թէկուզ սրանք նշանակուած լինեն գործելու աշխատակցութեամբ եւրոպացիների, վեհապետական է նաև այն ժամանակ, երբ ենթարկուում է օտար վերահսկութեան եթէ մի որ վիճում է այս ուկրունքի գէմ, ուրին կարիք կայ մի առ մի թէել նրան այն իրաւունքները, որ մասն են կազմում վեհապետութեան արտօնութիւնների, մի անդիւրեկան բան, սակայն գէպի որը ձգտում են Գերմանիայի և Աւստրո-Անդարիայի պ. պ. ներկայացուցիչները:

Եօնիքր. — Յայտնում է, որ վեհապետութիւն «souveraineté» խօսը կարելի է գործ ածել երկու մտքով. սուբեկտի իմաստով — զա պետութեան իրաւունքն է գծիռներ կայացնել իր սեփական բազու կարգաւորման համար և օրեկտի իմաստով — զա ամբողջութիւնն է պետութեան կողմից գործադրուող իրաւունքների նուսական նախածրագով սուբեկտի վեհապետութիւնը կը մնայ նոյնը, իսկ օրեկտի վեհապետութիւնը կը ճատուած և այսու Եօնրերգը մերժում է ընդունել այդ փոփոխութիւնը:

Պանֆիլի. — Կարծում է, թէ կարելի է իւրաքանչիւր պետութեան միապետի իրաւունքները ընորոշել առանձնապէս նուսական նախածրագիրը և թէ հաշուի չի առնում Սոլլթանի վեհապետութիւնը իր մէջ «en soi», զրկում է նրան իր վեհապետութեան որոշ էական իրաւունքներից, Պանֆիլին կրկնում է, որ այդ բանին նա համաձայն չի լինի: Նա եղբափակում է, որ գերազատում է յօժարական մտցրուած բարենքորութեանը, լրացնելով նոցա այն փախութիւններով, որոնք կը համարուէին անհրաժեշտ ըստ պայմանների և ոչ հակասու Օսմանան պետութեան վեհապետյն իրաւունքներին.

Սին-Բանտէն. — Իրեն բաւարարուած չի զգում այդ գործութեալով, որ ենթագրում է Սոլլթանի վեհապետական իրաւունքների նախական որոշումը: Եթէ դեսպանատները բանակցութիւններ սկսէին այդպիսի հողի վրայ, որի անորոշութիւնը շատ իրաւացի կերպով ցոյց տուից Մանդէլտամը, նրանք տեղի կը տային անօգուած վիճաբանութիւնների, կը հասդիպէին խոչնոտաների թ. Դուռն կողմից, որը կը մերժէր նրանց միջամտել իր ներքին գործերին և այդպիսով կը ստեղծէր սկրունք: Հնորհիւ որի բոլոր նրանց դիմութերը ու Յօօ անուշադրութեան կը մասնուէին:

Ֆիջմօրիս. — Կանգներով գործական տեսակետի վրայ հաստատում է, որ Գերմանիայի, Աւստրո-Անդարիայի և Խոալիայի ներկայացուցիչների կողմից ուղղուած անձական սիստեմը խօսում է վալիների, ընդհանուր վերատեսուների և եւրոպական վերահսկութեան ժաման, այն ինչ ուսուական նախածրագիրը աչքի առաջ ունի մի իմասն ընդհանուր վերատեսուներին և եւրո-

պական վերահսկչին, Հետևաբար առաջի դէպքում մենք գործ ունենք երեքի, իսկ երկրորդ դէպքում՝ երկու մարմինների հետ Այդ վերջին սիստեմը նրա կարծիքով ուշարժան է իր պարզութեամբ և աւելի լաւ է պատասխանում տեղական կարիքներին, որոնց համար նա կոչուած է:

Սէն. Քանտէն, — Հաստատում է այդ նկատողութեան ճշմարտութիւնը: Ի միջի այլոց նա մատնանշում է այն սխալ դատողութիւնների վրայ, որ նիստի սկզբում ըստեցին ընդդէմ ընդհանուր նահանգապետի հիմնարկութեան, յենուելով Լիբանանի օրինակի վրայ Շեօնքերգը ասաց, որ ընդհանուր նահանգապետի հիմնամեայ փոփոխութիւնը առաջ կը բերէր բոլոր պաշտօնեանների փոփոխումը և այդ պատճառով գոյութիւն ունեցող իրաւակարգը կը խանգարուէր: Այդպիսի մի խանգարումն անկասկած ցաւալի բան կը լինէր, բայց արդեօք դա պմրզ է, ակնյայտնի է: Այդ բանը գոյութիւն չունի նոյնիսկ Լիբանանում, ուր մինչև այսօր քաղաքական պայքարները կենդանի են: Հայաստանի ընդհանուր նահանգապետը, ընտրուած համաձայնութեամբ մեծ պետութիւնների, կը լինի անշուշտ հմուտ անձնաւորութիւն, այնպիսի բնաւորութեամբ, որ կըմբռնի տեղական անյարմարութիւնները և ղեկավարուելով իր վարչական շահերով, ցոյց կը տայ գործնական եռանդ, ուր Շեօնքերգին վհատեցնում է: Բացի այդ՝ եւրոպական լուրացիքը ինքը կը լուսաբանի անհրաժեշտ կարիքը: Ի միջի այլոց, երկիւղ շէր մին արդեօք, որ ընդհանուր վերատեսուչները կարող են ի չարը գործ դնել իրենց իրաւունքները, որոնք նշանակման և արձակման հարցում այնքան ընդարձակ են, որպիսին չունի ընդհանուր նահանգապետը:

Ցանձնածողովը վճառում է հաւաքուել շաբաթ, յուլիսի 12 ին, ժ. 9½, առաւօտեան:

Նիստը վերջանում է երկուսի կէսին:

Հայկական Բարենորոգումների Յանձնաժողով.

Ն ի ս տ 4.

Շաբաթ, 12 յունիսի, 1913.

### Ներկայ են.

- Պ. Շեօնքերգ, ներկայացուցիչ Գերմանիայի դեսպանատան,
- Պ. Պանֆիլի, ներկայացուցիչ Աւստրօ-Ռւսդարական դեսպանատան,
- Սէն. Քանտէն, ներկայացուցիչ մուանսիայի դեսպանատան,
- Ֆիցմօրիս, ներկայացուցիչ Մեծ-Բրիտանիայի դեսպանատան,
- Պ. Շաբեր, ներկայացուցիչ Խոալիայի դեսպանատան,
- Պ. Մանդելշտամ, ներկայացուցիչ Ռուսաստանի դեսպանատան.

Նիստը բացում է առաւօտեան 9½ ժ.

Սէն. Քանտէն. — Կարում է նախկին նիստի բերանացի վիճաբանութիւնները, որոնք ընդունում են:

Պանֆիլի. — Մ կոսում է քննադատութիւնը ուսուական նախածրագրի III յօդուածով, որ ասում է.

«Ըստինուր նահանգապետը համարում է նահանգի գործադիր իշխանութեան ներկայացուցիչ: Նա նշանակում եւ արձակում է նահանգի

բոլոր վարչական պաշտօնաններին, առանց մի որեկցէ բացառութեան: Նմանապէս նա է նշանակում նահանգի բոլոր դատաւորներին:

**Մանդիլուալ.** — Տալիս է հետեւել բացարարութեանները:

«Նախածրագիրը ձգտում է, որ մեծ պետքանիւնների համաձայնութեամբ՝ Առողջապահուած ընդհանուր նահանգապետի վարչութիւնը ազատուած լինի Բ. Դասն կամայական միջամտութիւնից: Թուրքիայի արքի պատմութիւնը ազագուցում է, որ վիլայէթների բարենորոգուումը միշտ հանդիպում է կենտրոնական իշխանութեան բաց կամ գաղտնի հակառակութիւններին միջամտութեամբ: Անհրաժեշտ է, որպէսզի ընդհանուր նահանգապետը ունենայ լիակատար աղատութիւն բարենորոգուումների գործադրման մէջ, առանց ուշադրութիւն գարճնելու կենտրոնական իշխանութեան պաշտօնների պատահական գաւերի վրայ:

«Ակնյատնի է, որ այս նպատակի իրագործման համար ընդհանուր նահանգապետին պէտք է լիազօրել նահանգի բոլոր պաշտօնեանների նշանակման և արձակման իրաւունքով: Նոյնպիսի իրաւունքը պիտի տալ նրան նաև դատաւորների նշանակման հարցում: Սա նոյնիւնածրագրի առաջարկն է:

«Տաճակական ներկայ իրանակարգը տալիս է վալիններին շատ թոյլ իրաւունք մասնակցելու իրենց վիլայէթի պաշտօնեանների ընտրմանը: 13 մարտի 1913 թ. ժամանակաւոր օրէնքը չմտցրեց այդ տեսակէտից մի նշանաւոր փոփոխութիւն: Մութասարիքները և զայմաղամեները առաջարկուում են ներքին գործոց նախարարի կողմից և նշանակում Կայսերական իրադէով (յօդուած 8): Վալինների օգնականները և վիլայէթների ընդհանուր գարատուղարները նշանակում են նոյնպէս իրադէովի, բայց վալինի նախանական խորհրդակցութիւնից յետոյ (յօդ. 9): Վիլայէթի վարչական գանական ծառայութիւնների ներկայացուցիչները և միթքանի ուրիշ պաշտօնեանները նշանակուում են այն նախարարի կողմից, որից կախում ունեն: Միմիայն ներքին գործոց նախարարը պարտաւոր է որոշ նշանակումների համար գիմնել վալինի նախանական կարծիքին (յօդ. 9): Վալին նշանակում է միմիայն երկուրդական պաշտօնեանները, որպիսիք են սանդակների ծառայողները և կազանների գանձապետները:

«Քէտք է ընդունել, որ 1913 թէի օրէնքը տալիս է վալինն շատ մեծ իշխանութիւն, երբ նա խօսում է պաշտօնեանների արձակման մասին: Եթէ վալին նահրաժեշտ է համարում արձակել մի պաշտօնեայի, որ նշանակուած է կամ Կայսերական իրադէով, կամ Նախարարի կողմից: Նա յայտնում է այդ մասին կենտրոնական կառավարութեանը, որը պիտի խորհրդակցի Պետական Խորհրդի հետ Բայց եթէ նախարարը չի պատասխանում վալինին մի ամսուայ ընթացքում, վալին կարող է արձակել պաշտօնեային իր սեփական պատասխանաւութեամբ (յօդ. 12):

«1913 թ. «Ընդհանուր վերատեսուչների իրաւունքների և արտօնութիւնների հրահանգներ»-ում մենք չենք գտնում մի այսպիսի կարգադրութիւն, որ վերաբերէր պաշտօնեանների նշանակմանը Ընդհակառակը, այդ հրահանգների Տ-րդ յօդուածը զաղոնի ընդունում է այն սկզբունքը, որ նախարարները յայտարարել է արձակման առթիւ Այդ յօդուածը ասում է: «Ընդհանուր վերատեսուչները արձակում են կամ վոխում, համաձայն հանգամանքների, այն պաշտօնեաններին, որոնց նոքա գտնում են անընդունակ կամ վատ վարմունքի տէր: Նոքա, որոնք մեղաւոր կը ճանաչուեն:

իրենց բանութիւններով, կը յանձնուեն ուղղակի դատիք: XI. րդ յօդուածը աւելացնում է, որ «վալինսին տեղեկութիւն է տրւում նրանց ենթակայ պաշտօնեանիրի վերաբերմամբ կայացած վճիռների մասին» կենտրոնական կառավարութեան նշանակման դէպքերի մասին տեղեկութիւն է տալիս համապատասխան դէպարտամենտը:

ԱՅ. Դուար նագատակայարմար է գտնում սահմանել մի նոր կանոն, որի որժով սեկառի պետը իրաւունք ունի արձակելու իր շրջանի պաշտօնեաններին նախածրագիրը կարծում է, թէ արամաբանական կը լինէր տարու նահանգի ընդհանուր նահանգապետին ոչ թէ միայն այս իրաւունքը, այլև ազատ նշանակման իրաւունքը:

Եկօնքերլ.—Հարցնում է Մանդէլտամին՝ նարաւոր է գտնում նա արգեք ընդհանուր նահանգապետի (վարիումում) նոմար նախատեսնուած իրաւունքները յատկացնել վարիներին այն գէպըւում, երբ ընդհ. նահանգապետի պաշտօնի սահմանումը չիրագործուի:

Մանդիլը ասմ. —Պատասխանում է, որ այդ հարցը աչքի առաջ չէ ունեցել Սակայն նա պնդում է, որ ընդհանուր նահանգապետի իրաւունքների մասին յարուցուած այժմեան վիճաբանութիւնները չեն ընդպրկում այդ հիմնարկութեան սկզբունքի վերջնական վճիռը Բայց եթէ յանձնաժողովի անդամները ընդունում են նախածրագրի առաջին երկու յօդուածները, այն ժամանակ նրանք կարող են՝ ասանց հարցազնդումների շարունակել իրենց քննադատութիւնները:

Պանթիլի. —Յայտարարում է, որ եթէ ընդհանուր նահանգապետի նշանակումը իրականանայ, այն ժամանակ նա ոչ մի խոչնդու չի տեսնում, որպէս զի Յ-րդ յօդուածի առաջին կէտի թւած իրաւունքները ընդունուեն:

Ֆիլմօրիս, Շաբէր և Սկն Քանտուկ միանում են այդ յայտարարութեանը: Եկօնքերլ, —Յայտնում է, որ ընդհանուր նահանգապետը կարող էր սառաւ մի որին է բացառութեան նշանակել և արձակել նահանգի բոլոր վարչական պլաշտօննենինինը, այն ինչ ընդհանուր վերատեսուչներին տրում է միմիբայն արձակման իրաւունք նա քննադատում է ընդհանուր նահանգապետին նշանակման իրաւունքի յատկացումը:

Պանթիլի և Սկն Քանտուկ նկատում են, որ արձակման իրաւունքը աւելի լուրջ է, քան նշանակմանը: Դրան տպացոյց են այն ապահովութիւնները, որոնք ծառայում են նրա իրավորմանը զանազան կանոնադրութիւններով: Եկօնքերլ. —Նշանակման իրաւունքը գտնում է վեհապետութեան համար էական և նրա ընդունումը համարում է ոչ այլ ինչ, բայց եթէ Սութանի իրաւունքների մի կրծատումն:

Սկն. Քանտուկ. —Պատասխանում է, որ այդ իրաւունքը չի գագարում պատկանել Սուլթանին և գործադրուելու է ընդհանուր նահանգապետի կողմէց, որպէս Կայսեր տւած յանձնարարութիւնը:

Եկօնքերլ.—Պնդում է, որ այդ յանձնարարութիւնը չէր իրագործուի լիակատար անկախութեամբ, որովհետև Սուլթանը ընդհանուր նահանգապետի ընտրման հարցում կապուած կը լինէր մեծ պետութիւնների համաձայնութեան հետ:

Մանդէլշտամ. —Յայտնում է այն միտքը, որ ընդհանուր նահանգապետի նշանակումը, չնայելով մեծ պետութիւնների միջամտութեանը, իրաւունքը տեսակէտից տեղի կանենար բացառապէս Սուլթանի կողմից:

Շեօնքերզ. — Նկատում է վերջապէս, որ պաշտօնեաների նշանակման և արձակման իրաւունքի վերացական իմաստի տեսակէտից ընդհանուր նահանգապետը պիտի ունենայ այն իրաւունքները, որ ներկայ վիլայէթների օրէնքը յատկացնում է վալիններին: Վերջինները իրօք, որ գործադիր իշխանութեան ներկայացուցիչներն են, իրենց ձեռքի տակ ունեն ոստիկանութիւնը և ժանդարմէներիան, կարող են պահանջել պատերազմական ոյժեր: Եւ ինչու այդ առաւելութիւնները խլել նրանցից և տալ աւելի բարձրաստիճան պաշտօնեային Ասդեօք դա չի նշանակում ստեղծել իրաւասութիւնների մէջ ընդհարում:

Մանդէլյոսմ. — Տալիս է բացասական պատասխան, որովհետև ոռուական նախածրագիրը հնթագրում է վալինների վերացումը:

Յանձնաժողովը բնոնում է III-րդ յօդուածի երկրորդ կէտը, որ ասում է հետևեալը.

### § 2.

«Ոստիկանութեան եւ ժանդարմէրիայի ոյժերը ենթարկում են ընդհանուր նահանգապետի անմիջական իշխանութեանը»:

### § 3.

«Համաձայն ընդհանուր նահանգապետի պահանջի, պատերազմական ոյժերը պէտք է դրուեն նրա կարգադրութեան տակ՝ նահանգում կարգ պաշտպանելու համար»:

Մանդէլյոսմ. — Մատնանշում է, որ 1913 թ. վիլայէթների վարչութեան մասին հրատարակուած օրէնքը վիլայէթների ոստիկանական և պատերազմական ոյժերը դնում է վալիի անմիջական իշխանութեան տակ: Նոյն օրէնքը 26. րդ յօդուածը վալիին իրաւունք է տալիս պահանջելու գորահրամատատարից պատերազմական ոյժեր այն դէպքում, երբ վալիի ձեռքի տակ եղած ոյժերը նրա իրաւունքների և պետութեան օրէնքների գործադրման ու հասարակական իրաւակարգի պաշտպանութեան համար անբաւարար են: Այս կարգադրութիւնների իմաստը նոյնն է, ինչ նախածրագրը III-րդ յօդուածի 2 րդ և 3-րդ ֆիզի:

Մանդէլյոսմը կարծում է, թէ վերջին III-րդ յօդ, հակածառութիւնների չի հանդիպելու:

Այս պարզաբանութիւնները ընդունում են առանց ընդդիմակառութիւնների:

Պանֆիլին քննադատութեան է առաջարկում նախածրագրի IV-րդ յօդուածը:

### Յօդուած IV.

«Ընդհանուր նահանգապետին կից լինելու է վարչական խորհուրդ խորհրդակցական ընոյթով՝ կազմուած»:

a) Նահանգի վարչութեան զանազան ղեպարտամենտների կառավարիչներից.

b) Զանազան կրօնական համայնքների ներկայացուցիչներից.

Ենթապահական տեխնիքական խորհրդականներից, որ գլուխուած են Կայսերական կառավարութեան ծառայութեան մէջ,

որպէս դեպարտամենտների վարչութեան ներկայացուցիչների օգնական.

Ճ Յորհնը կականներից (Յ մահմեդական եւ Յ քրիստոնեայ), ընտրուած նահանգական ժողովի կողմից նրա անդամների կազմից։

Մանդելշտամ. — Այս հարցի առթիւ տալիս է հետեւեալ բացատրութիւնները։

Նահանգի վարչական խորհրդի սահմանումը համապատասխանում է օսմանեան օրէնստութեանը, որը արդէն հիմնել է վիլայէթներում, սանջակներում և կաղաներում վարչական խորհրդներ, ինչ վերաբերում է նահանգական վարչական խորհրդին, սահմածրագիրը աշխատել է, ինչը որ հնարաւոր է, հետեւել ներկայ օրէնստութեանը։ Այդպիսով ուրիհն զանազան կրօնական համայնքների պետութիւնը ներկայութիւնը խորհրդում համաձայն է 13 մարտի 1913 օրէնքի 62-րդ յօդուածի հետ։ Իսկ խորհրդի մէջ եւրոպական տեխնիքական խորհրդականների ներժուծութեանը համապատասխանում է Բ. Դուան վերջին հաղորդագրութիւններին, ուր յիշուում են եւրոպական մասնագէտներ՝ ժամանակակիցի, դատարանի, հասարակական աշխատանքների և հողագործութեան համար, Նախածրագիրը սակայն տարբերում է օսմանեան ներկայ օրէնստութիւնից խորհրդի ընտրովի անդամների գումարման ձեռփա Պոյութիւն ունեցող սիստեմը, ինչպէս որ նա սահմանուած էր 1864 թւի վիլայէթների օրէնքով, իրօր, որ շատ խառն է (վիլայէթի խորհրդի թեկնածուների թիւը երեք անգում աւել պիտի լինէր նշանակուելիք անդամների քանակից) (12), իսկ սանջակների թեկնածուների թիւը որոշուում է պակաս մի երրորդով։ Վալին ընտրում է խորհրդի անդամներից չորսին, որոնց հաստատում է Դուուր Բ. Դուուր ինքը ճանաչել է այդ հանգամանքը, որովհետեւ 1913 թ. օրէնքին աւելացրած ժամանակաւոր յօդուածը որոշում է գործադրել գոյութիւն ունեցող օրէնքների մինչեւ վարչական խորհրդների անդամների ընտրութեան համար առանձին կարգադրութիւնների հրատարակելու։ Նախածրագիրը սակայն բարեօր է համարում ղեկավարուել 1880 թ. եւրոպական Տաճկատանի վիլայէթների օրէնքի ծրագրով (49 յօդ.) և առաջարկում է վիլայէթի վարչական խորհրդի անդամների ընտրութեան իրաւունքը յատկացնել նահանգական ժողովին, պահպանելով ի հարկէ նախկին սկզբունքը, որով տեղերը բաժանուում են մահմեդականների և քրիստոնեանների մէջ։

Ֆիլցօրին. — Առաջարկում է ի համապատասխանութեան սովորական տաճկական ավագանութիւնը։ Կոխսել Ը կէտում «Քրիստոնեայ» խօսքը «ոչ-մահմեդական» ով։

Այդ առաջարկութիւնը յանձնաժողովը ընդունում է։

Շեօնքերը. — Կարծում է, թէ առաջին երեք կէտերը ոչ մի դժուարութիւնների չեն հանդիպի և Բ. Դուուր չի մերժի եւրոպական տեխնիքական խորհրդականների ընդունումը վարչական խորհրդներում։ Բայց նոյն բանը չի կարելի ասել վերջին կէտի մասին, որը սահմանում է մահմեդականների և քրիստոնեանների մէջ կատարեալ հաւասարութեան սկզբունք։

Մանդելշտամ. — Կը կնում է, որ այդ սկզբունքը նոր չէ, այլ վաղուց է ընդունուած գոյութիւն ունեցող առաջական օրէնսդրութեան կողմից։

Շեօնիքը.—Նկատում է, որ համեմատական ազգրունքը միակ իրաւացի սկզբունքն է; Բարենորոգությունների հիմնական պայմաններից մէկն այն է, որ խստիւ պէտք է խուսափիլ այս կամ այն ազգի ու կրօնի օգտին առաւելութիւններ հաստատելուց բնակչութեան իւրաքանչիւր տարրը պիտի ներկայանայ զանտղան ժողովներում համեմատ իր թւաքանակին Այդ կանոնը հարկաւոր է զործադրել նաև վարչական խորհրդի վերաբերմամբ: Անկառակած, այն գէպքամ, երբ նահանակի քրիստոնեաց և մահմեղական ազգաբնակչութիւնը իրենց թւով մտաւորապէս հաւասար: Կը լինեն, այն ժամանակ տեղիրի զասաւորումը կը մնայ այնպէս, ինչպէս ենթադրում է նտխածրագիրը Բայց լիսկասար հաւասարութեան սկզբունքի յայտարարումը կը լինէ նէր վասնզաւոր եթէ տարիիրց մէկը իսկապէս կերակշառոց է: Կամ այդպիսին զանուում է մի ըիչ ուշ—օրինակ՝ կարելի է ենթադրել զաղթած հայերի մասսայական վիրազարձը—նա կը զար իրեն ճնշուած և կաշխատէր կործանել այդ սկզբունքը: այսուհից առաջ և զային ընդհարութիւնը, որով հասարակական հանգստութիւնը կը խանգարուէր:

Մանկիլուամ.—Յայտնում է, որ այդ հարցը կրննուի այն ժամանակ, երբ խօսը կը լինի նահանգակաման ժողովի մասին: Այժմն նա ցանկանում է իւմանալ, թէ բնչ հականառութիւններ են մնակու նահանգական ժողովի ընտրած վարչական խորհրդականների որոշ քանակի գէմ:

Շեօնիքը.—Ծիծեցնում է, որ վիւայէթների օքէնքը ընդունում է վարչական խորհրդների մէջ ոչ պաշտօնեայ անդամներ, որոց նշանակման ձեւ նա որոշում է նախօրօք: Աւելի լաւ կը լինէր փորձել առաջ այս սիստեմի գործարումը և վասփառութեան չենթարկի նըան, այլ սպասել այն առաջարկութիւններին, որ ընդհանուր վիրատեսութիւնը կը մտցնին, երբ կը համոզուի նրանց անհրաժեշտութեան մէջ:

Պանիլիլ.—Յայտնում է, որ ենթարկելով ոռուսական նախածրագրի վարչական խորհրդը կազմուած, նա նահանգական ժողովի խորհրդականների ուղղակի ընդուրմը գտնում է աւելի նպատակայարմաք, քան վիւայէթի խօսն օրէնքը: Ամեն մի ընթացիկ հարցում պարզութիւնը նա համարում է ամենաառաջին յատկութիւն:

Շաբէք:—Համաձայն է իր Աւատրունգաբարական կօլէգի կարծիքի հետ Շեօնիքը:—Քննադատելով վարչական խորհրդի իրաւասութիւնը գրանում է, որ ոռուսական նախածրագութեան տալիս է այդ ժողովին խորհրդականացական բնոյթ: Սակայն վիւայէթների օրէնքը իր 66—68 յօդուածներում ընդունում է վարչական խորհրդների վճռուղական իշխանութիւնը բաւականին շատ հարցերում: Կրնատելով նրանց իրաւասութիւնը, նախածրագրիը, սակայն, մտցնում է մի նորութիւն, որի պատճառը պիտի որոնել այն ցանկութեան մէջ, որով նա կամենում է ուժեղացնել ընդհանուր նահանգական տի դործադրի իշխանութիւնը:

Մանկիլուամ.—Նոյնպէս կողմանակից է ուժեղ գործադիր իշխանութեան, որը նա համարում է բարենորոգութիւնների իրագործման համար անհրաժեշտ: Ընդհանուր նահանգապետի կամքը ի միջի այլոց, ասում է նա, ենթարկուած կը լինի նահանգական ժողովին, բայց ենթարկելու որ նա կապուած պիտի լինի վարչական խորհրդի հետ, նշանակում է ոչ թէ միմիայն վասնգաւոր կերպով վասնել նրա հեղինակութեանը, այլ գրգռել այդ երկու ժողովներին՝ մէկին ընդդէմ միւսի և յարուցելնրանց մէջ նոյն իսկ պայքար:

ի միջի այլոց պէտք է համաձայնուել այն բանում, որ յայտնի դէպէ քերում վարչական խորհրդի կարծիքը, որը թէև առհսարակ խորհրդակցական է, կունենայ անհրաժեշտ վճռողական նշանակութիւն: Ընդհանուր նահանգապետը, բնաւ չխոնարհուելով այդ կարծիքի առաջ ուղղակի յարկադրուած կը լինի դիմու նրան նոյնպիսի դրութեան մէջ է ֆանսիայում պրեֆեկտը, որը որոշ դէպէքերում ստիպուած է ընդունելու պրեֆեկտուրայի խորհրդի կարծիքը, առանց զիկավարուելու նրա ցոյցմունքով:

Շեօնիքը.—Հաստատում է, որ ընդհանուր նահանգապետը ազատ է գործազրելու այնպիսի միջոց, որին հակակարծիք կլինի վարչական խորհուրդը և այդ պատճառով նա դատապարտում է գործադիր իշխանութեան լիակատար կենտրոնացումը մի պաշտօնեայի ձեռքում:

Մանդիլյան:—Երկիւր է կրում, որ թիւրիմացութիւն առաջ չգայ: Խօսելով այն օգնութեան մասին, որ վարչական խորհուրդը կանի ընդ նահանգապետին, ուստական նախաձեռագիրը ուշադրութեան է առնում խորհրդի վարչական իրաւունքները՝ առանց նախարարնելու նրա վիճելի իրաւունքները:

Շեօնիքը.—Ցիշեցնում է, որ վիլայէթների օրէնքը գէմ է այն բանին, որ վարչական խորհրդին զատավարութիւնից ի բաց ուրիշ վարչական իրաւունքներ արուեն, որպիսիք են զատավճոր՝ հաստատումը, աճուրդը և այլն: Այս պատճառով նա հարցնում է, կմտնեն մղղոր լիշեալ իրաւունքները հայկական նահանգի վարչական խորհրդի իրաւութեան մէջ, թէ ոչ:

Մանդիլյան:—Պատասխանում է, որ նրանցից մի բանիսը վերաբերում են նահանգական ժողովին, որի մասին մտքերի փոխանակութիւն կլինի այն ժամանակ, եթե յանձնաժողովը կըննի համապատասխան կէտերը: Շեօնիքը.—Այժմեանից ցաւ է յայտնում, որ նախաձեռագիրը անչափ նուազեցնում է վարչական խորհրդի նշանակութիւնը: Սի մեծ նահանգի ընդհանուր նահանգապետ անձամբ չի կարող ծանօթանալ բոլոր մանրամասնութիւնների հետ և հաճախ ստիպուած է դիմելու է համապատասխան իրաւուառ պաշտօնեաներին և նրանց երազական տեխնիքական խորհրդական նկարաժեշտ է, որ այդ պաշտօնեաները և երուսական տեխնիքական խորհրդականները ունենան վարչական խորհրդում խորհրդակցական ձայնի իրաւունք և վարչական միջացների ձեռնարկման համար պատասխանատու համարուեն: Շեօնիքը զանում է ուստական նախաձեռագիրը թէրի նրանով, որ նա մերժում է տալ վճռողական ձայնի իրաւունք նահանգի վարչական խորհրդին, այն ինչ այլպիսի իրաւունք պատօրէն նա յատկացնում է սանջակների և կազմակերի վարչական խորհրդներին:

Եղրափակելով, նա գերազանում է վարչական խորհրդների հարցում յենուել վիլայէթների օրէնքի գրութիւնների վլայ և տալ ընդհանուր վերատեսուչներին իրաւունք առաջարկելու այնպիսի բարենորդումներ, որոնք փորձով անհրաժեշտ կհամարուեն:

Մանդիլյան:—Նորից պնդում է, որ կարիք չկայ ընդհանուր նահանգապետի պահանջանք գործունէութիւնը ձանրարեններ վարչական խորհրդի կարծիքներով: Իսկ Շեօնիքը այն նախառողութեանը, որ փերաբերում է սանջակների և կազմակերի խորհրդներին, նա խոստանում է պատասխաննել նախաձեռագիրի VIII-րդ յօդուածը բննուղանունը ժամանակ:

Ցանձնաժողովը սկսում է քննել V-րդ յօդուածը որի բնագիրը հետեւալն է:

Նահանգական ժողովը կազմում է մանմեղականներից և բրիստոնիաներից հասասար թւով:

§ 2.

Նահ. ժողովի անդամները ընտրում են գաղափի քուէարկութեամբ կազմներում այն ընտրողական ժողովներով, որ կազմում են այն նպատակի համար:

§ 3.

Տեղերի բանակը, որ յատկացուելու են նահանգի գանձական մանեղական եւ բրիստոնիայ ազգութիւններին, իւրաքանչիւր կազմի համար որոշուելու է առանձին: Այդ բանակը պիտի համեմատական լինի իւրաքանչիւր կազմի ընսկզբեան հետ, ինչքան որ դա չէր հակասի այն յօրուածի առաջնին պարագագինու:

Մանդիլուամ.—պարզում է հետևեալը.

«Մի ընտրողական նահանգական ժողովի սահմանումը համապատասխանում է օսմանեան օրէնստուութեան սուուն: Վիլայէթների ընդհանուր խոր հրդների հիմարկութիւնը արդէն նախատեսնուած է 1867 թ. օրէնքով: Նմանապէս 1913 թ. օրէնքը 103-րդ յօդուածը որոշում է, որ իւրաքանչիւր վիլայէթ ունի իր ընդհանուր խորհուրդը:

Ըստհանուր խորհրդի անդամները ընտրում են կազմայում, իւրաքանչիւր 12500 բնակիչ ընտրում է մէկին (յօդ. 103): Կազմայի ընտրողական ժողովը կազմում է այն անձնաւորութիւններից, որոնք վերջին օրինական ընտրութիւնների ժամանակից համարւում են Պարլամենտի երկրորդ կարգի ընտրողներ, ինչպէս նաև կազմայի գլխաւոր քաղաքի մունիցիիպալ խորհրդի անդամները (յօդ. 104): Նախածրագիրը ընդունում է կազման նոյնապէս ընտրողական շրջան: Սակայն, նա բարուք է գտնում չխառնել Պարլամենտի ընտրութիւնները նահանգական ժողովի ընտրութիւնների հետ նահանգի ընսկզութիւնը չփափի գրկուի իր իւրաւունքից նշանակելու զանազան անձնաւորութիւններ Պարլամենտի և նահանգական ժողովի մէջ:

Նախածրագիրը, ի միջի այլոց, համաձայն XI Ա-դ յօդուածի, տալիս է հիմարկիք կանոնագրութեանը իւրաւունք որոշելու, թէ ինչ կարգի են լինելու նահանգական ժողովի ընտրութիւնները,—մէկ կամ թէ երկու կարգի նա այս պատճառով անհրաժեշտ է գտնում փոխելու 1913 թւի օրէնքի 104 բդ յօդուածի կարգադրութիւնը այս իմաստով, որ նահանգական ժողովի անդամները ընտրուեն կազմայում այս նպատակի համար գումարած ընտրողական ժողովներով:

Ինչ վերաբերում է նահանգի ընսկզութեան զանազան տարրերի մէջ բաժանուելիք տեղերի բանակին, այդ առթիւ նախածրագիրը՝ առաջարկում է, որ ժողովը կազմուի հասասար թւով մահմեղականներից և քրիստոնեաներից: Թէւ 1913 թ. օրէնքը այդ մասին չի խօսում, բայց 1867 թ. հին օրէնքը (յօդ. 25) ասում է: «վիլայէթներում կազմում է մի ընդհանուր խորհրդ, բազկացած և ընտրուածներից իւրաքանչիւր սահմանակում, -համաձայն V-րդ

զլիսի կանոնադրութիւնների, այսինքն երկու մահմեղականներից և երկու ոչ-մահմեղականներից»:

Այս հիման վրայ ես կարծում եմ, թէ յիշեալ հին օսմանեան սկզբ-րունը, որ խօսում է վարչական խորհրդների ընտրովի անդամների գու-մարման մասին, պէտք է համարել իմաստալից և ընդունել ժողովը չպիտի ունենայ մահմեղական կամ ըրիստոնեայ մեծամասնութիւն։ Կողմերը չպէտք է հիմունքն կրօնական զանազանութեան վրայ, այլ զեկավարուեն ուրիշ կշռադատութիւններով։ Իսկ այդ նպատակը կիրափորձուի, եթէ մահմեղա-կանների և քրիստոնեանների թիւը ընտրողական սխտեմում լինի հաւասար, որովհետև այն ժամանակ զանազան խմբերը և մեծամասնութիւնը անհրա-ժեշտորեն կենուեն նահանգի շահերի ընդհանրութեան վրայ, իսկ այս վերջին հանգամանքը ի մի կկատի քրիստոնեաններին և մահմեղականներին միևնույն հասարակական և քաղաքական մասերում։ Ծնորհիւ այդպիսի զրու-թեան, հայ և քուրդ զիւկացիները հեշտութեամբ կկազմեն մի խումբ, որը կմաքասի բուրդ բէյերի ագրեցութեան դէմ։

Միւս կողմից նախածրագիրը անհրաժեշտ է գտնում միացնել կրօնա-կան ներկայացչութեան հաւասարութեան սկզբունքը համեմատական ազգա-յին ներկայացչական սկզբունքի հետ իւրաքանչիւր կրօնում։ Աւելի քան ար-դարացի կլինէր, որ տաճիկը, քուրդը և չեռքչզը մի կողմից, հայերը, քաղ-դէացիք և նեստորականները միւս կողմից, ներկայացուած լինեն համեմատա-կան չափով՝ համաձայն կազայի մէջ եղած իրենց թւաքանակի։ Նահանգի զանազան մահմեղական և քրիստոնեան ազգութիւնների մէջ բաժանուելիք տեղերի քանակը իւրաքանչիւր կազայի համար պիտի որոշուի առանձին։ Այդ զասաւորման ընդհանուր արդիւնքը փոփոխութեան կենթարկուի միմի-այն այն դէպեքերում, երբ այս կամ այն կրօնակիցների համար նա թւական առաւելութիւն կներկայացնի։ Նահանգի ընտրողական յանձնաժողովը իրա-ւունք է ստանալու փոխելու մի կազային յատկացուած տեղերի քանակը առաջի զասաւորման ձևով, որպէսզի իրագործել ժողովում կրօնական ներ-կայացչութեան հաւասարութիւնը»։

Պանթիլի։—Յայտնում է, որ եթէ նահանգի կազմակերպումը ընդունուի, այն ժամանակ նահանգական ժողովի սկզբունքը ոչ մի վիճաբանութեան տեղի չի տայ. Այդ հարցում յանձնաժողովի անդամները համամիտ են։

Մանդիլշտամ.՝ Դանում է անհրաժեշտ կազմել առանձին ընտրողական ժողովների ի հաստատումն նահանգական ժողովների ընտրութեան։

Շեօնիքը.՝ Ընդհակառակ, անօգուտ է գտնում սահմանել մի նոր ըն-տրողական հիմնարկութիւն, երբ այդպիսին արդէն դոյցութիւն ունի։

Մանդիլշտամ.՝ Հակաճառում է նրան. մտցնելով սովորութեան մէջ վերջին օրինական ընտրութիւնների ձևով գումարած ժողովները, առում է նա, մենք փանագի կենթարկենք ընտրութեան գործը, որը չի համապատաս-խանի ընակչութեան ցանկութիւններին։ Վերջիններս կարող են փոփոխու-թեան ենթարկուել։ Սակայն հանգամանքների շնորհիւ առաջ եկած շահերը և հետեւքարը ընտրութեան գումարածան պահանջները կլինեն տարրեր։ մէկը կարող է լաւ ներկայացուցի լինել նահանգական ժողովում և վատ—Պարլա-մենտում և ընդհակառակ։

Պանթիլի.՝ Վտանգաւոր է համարում երկու զանազան ընտրողական սխտեմների համագոյութիւնը. նա գտնում է, որ հայեցակէտերի մեծ տար-

բերութիւն կատեգորիէր տեղական ժողովներում ընտրուածների և նրանց մէջ, որոնք այդ ընտրուածների պատգամաւորները կհամարուէին Պարլամենտում:

Սեն-Ֆանտին—Նկատում է, որ այդ ընտրական դուալիզմը գոյութիւն ունի նաև ուրիշ երկրներում, օրինակ Պրուսիայում և Աւստրիայում:

Շեօնիքը՝ Կարծում է, թէ նմանօրինակ դուալիզմ հնարաւոր է միայն առաջընթաց բարաքակիրթ երկրներում:

Սեն-Ֆանտին.—Պնդում է ընդհակառակը, որ մի երկիր, ինչքան աւելի է քաղաքակրթուած, այնքան աւելի է նրա ընտրողական սէժիմի միատեսակութիւնը և այնքան աւելի հետո է հիմնել նրան համաշխարհային ընտրողական սիստեմի վրայ: Սակայն նաև ընդդէմ չէ այն բանին, որ հին սիստեմի փոխարէն սահմանուի մի նոր ընտրողական սիստեմ, եթէ միմիայն այդ վերջինս համարուած է աւելի լաւ: Բայց, ընդհանրապէս վեցըտած, ընթացիկ սիստեմի առաւելութիւնները վերջին օրինական ընտրութիւնների գործունէութեան օրից ցոյց չտեսն իրենց այնպէս, որ Բ. Դուռը ի դէպ հաճանգական ժողովի գլմէր որոշ կատարելագործութիւնների ձևուարկման:

Շեօնիքը—Պնդում է, որ վիլայէթների օրէնքով հաստատուած ընտրողական ժողովները նման չեն այն ժողովներին, ուր ընտրուում են պատգամաւորները Պարլամենտական երկրորդ կարգի ընտրողներին միանուած են կազմայի վերաբեր քաղաքի վարչական խորհրդականները:

Մանդիլյամ.—Յայտնում է, որ ընտրողական ժողովի այդ ընդարձակումը բաւական չէ:

Շեօնիքը.—Արտայտում է այն մտքով, որ հարկաւոր է պահպանել status-զու պայմանով՝ բարեփախութիւններ մտցնել այն ժամանակ երբ ընդհանումը վերատեսուչները անհրաժեշտ կը գտնեն այդ բանը:

Անցնելով Վ. բդ. յօդուածի 1 և 3 կէտերի քննադատութեանը,

Պանթիի,—Հաստատում է մասմեդականների և ոչ մասմեդականների թւական հաւասարութեան սկզբունքը նմանգագական ժողովում: Այդ սկզբունքը իրօք, որ ընդունուած է զոյութիւն ունեցող օրէնսդրութեան կազմից ոչ-մանմեծականների համար ներկայ օրէնքը լուելով այդ մասին, սակայն չի վերացնուած նրան:

Բայց նա քննութեան է առնուած այն խառն ձևը, որի մասին յիշում է 3-րդ յօդուածը: Յանձնաժողովի նպատակը, որ կոչուած է պակասեցնել աւելացած պատգամաւորների թիւը, նրան թւում է անիբագրութիւն: Եւ բնչպէս առաջ զնալ հանդէպ այդ հանգամանքի, առանց աշքի առնջ չտնենալով առնալուրք վահանգի:

Մանդիլյամ.—Կարծում է, թէ նրան չին հասկացել պարզօքէն Նրա սիստեմի շրջանագծերը հիմւում են կազմային վերաբերող տեղերի ցացակագրի վրայ, ցուցակագրի, որ կազմուած է համաժայն ազգային համեմատական ներկայացչական սկզբունքի: Օրինակ, եթէ տեղերի ցեղական դասաւորութիւնը յետոյ, մահմեդական պատգամաւորների ընդհանութիւնը մինի 110, իսկ ոչ-մանմեծականներինը 90, այն ժամանակ կրօնական հաւասարութեան հասնելու համար հարկաւոր է մահմեդականների թիւը պակասեցնել տասով, իսկ քրիստոնեաններին աւելացնել 10-ով: Այդ տասը տեղերը պէտք էր վերցնել քրդերից և տանիկներից այնպիսի համաշխափութեամբ, որ պատշաճ լինէր նըանց թւաքանակին:

Պանթիլի. — Կարծում է համոզուած, որ այդպիսի կազայի ընտրողները, զրկուելով իրենց պատգամաւորներից, կզզան վիրաւորուած և ժամանակն կբողոքին:

Մանդիլյամ. — Կարծում է, թէ կազայի բնակիչները, ունենալով ամենապակաս մի ներկայացուցիչ, պէտք է բաւականանան նրանց համար սահմանուած սխստեմի ընդհանուր արդիւնքով, որը հնար եղածին չափ ապահովում է ընդհանուր ժողովում նրանց ազգային ներկայացչութիւնը:

Մանդէլյամը զտնում է անհրաժեշտ սահմանել հաւասարութեան սկզբը ըստնքը կրօնների մէջ, Բոլոր անկարգութիւնները և կոտորածները կատարւում են որոշ կրօնի անուամբ, նպատակ ունենալով հաստատելու կամ իրադրութելու նրա առաւելութեան զաղափարը: Մինչ այժմ նկատելի է, որ առաջիկները և քրիերը միանում են ընդդէմ քրիստոնեաների, իսկ Քերինի դաշնագիրը ստորագրող պետութիւնները, ի կատարումն այդ դաշնագիրը, ցանկութիւն են յայտնել պաշտպանել քրիստոնեաներին ընդդէմ մահմեդականների հարստահարութիւնների: Բայց ցանկալի չէ և այն, որ հայերը նեղութիւն տան մահմեդականներին:

Ենօնբերգ. — Չի կարող ենթադրել, որ Արևելքում կրօնը երբ և իցէ արտաքուի քաղաքական կեանքից: բոլոր գաւանութիւնների հոգնորականութիւնը միշտ ձգտում է իր ազդեցութեան զարգացմանը. միւս կողմէց ընտրութիւնները կատարում են կրօնական հողի վրայ: Այս հանդամանքը պէտք է աչքի առաջ ունենալ և համեմատալին սկզբունքի գործադրուածն ժամանակ հասկացնել իւրաքանչիւր զաւանութեան ներկայացուցիչներին այն իրաւունքների իմաստը, որ նրանց արևում են:

Մանդիլյամ. — Հայկանառում է, որ այդ ձևով կհաստատուէին կրօնական ընդհարումներ, և առաջ կզար քրիստոնեայ փոքրամանութեան ճշնշումը մահմեդական մեծամասնութեան կողմից:

Ենօնբերգ. — Կարծում է, թէ վիլայէթների օրէնքը, պահանջելով կարեւոր վճիռների համար մեծամասնութիւն, իրապէս պաշտպանում է փոքրամասնութեան իրաւունքները:

Մանդիլյամ. — Պատասխանում է, որ յայտնի որոշումներ, որոնք յիշեալ կարգի մէջ չեն մտնում և վճռում են ձայնների հասարակ մեծամասնութեամբ, կարող են ուժգին վնասել փրամասնութեան շահերին:

Ենօնբերգ. — Յայտնում է, որ հայկական վիլայէթների մէջ եղած անկարգութիւնները և կոտորածները պէտք է վերացրել այն անհամեմատութեղից ազգեցութեանը, որով երկար ժամանակ օգտում են մահմեդականները: Հաստատելով սակայն համեմատական սկզբունքը, մենք հասած կլինենք համապատասխան նպատակին: Մահմեդականները և ոչ-մահմեդականները, համաձայն հաւաքած տեղեկութիւնների, կոնհնան ժօտառորապէս հաւասար թուվ ներկայացուցիչներ: Սակայն երկու տարրերի մէջ ստեղծուած մի քանի տեղերի տարրերութիւնը, համեմատաբար երկրորդական հարց է, կարեւոր է, որ իւրաքանչիւրը ձգտի ստանալու այն, ինչ իրեն պատկանում է համաձայն իւրառնքի: Յայտարարելով լիակատար հաւասարութեան սկզբքունքը, մենք տեղիք կտայինք անսրդարութեան, որով խորապէս կվիրաւուէք գիտակից տարրը. գծոնութիւնների և անկարգութիւնների շանսերը կբազմանալին ամբողջ Արևելեան Անատօլիայում,

Ծեօնքերդ հաստատում է, որ պիտութեան այդ մասը չունի ճշգրիտ գիծակազրուկան տեղեկութիւններ: Ըստ կառավարութեան տեղեկութիւնների հայերը կազմում են այստեղ 30 մինչև 35°/o հանուր բնակչութեան: Պատրիարքարանի թւերը, ընդհակառակ, քրիստոնեաների քանակը հասցնում է 45, 2°/o, մասնդականներին 45 1°/o, իսկ ուրիշ դաւանութիւնների հատեւողների թիւը 9, 7°/o: Այդ անորոշութիւնը մեզ համար աւելի մեծ է իմ քանդուներու համամատական սկզբունքը, որը հնարաւոր կդարձնի զանազան ազգային մասերի ճշգրիտ գնահատումը:

Սէն-Քանտին: — Զի հրապուրում համեմատական սկզբունքով, որը Մակեդոնիայում առւեց ամենազրարիթ արդինք: Հազիւ մեծ պետութիւնները յայտարարեցին նրա ընդունումը, երբ զանազան ազգութիւններ վայրենի եռանդով և վատագոյն միջոցներով սկսեցին յօգուս իրենց փոխել գոյութիւն ունեցող համաշխափութիւնը:

Ծեօնքերդ: — Զի ժխտում Ռումելիայի փորձի արդինքը, բայց կարծում է, թէ նրա մէջ կատարուած բռնութիւնները սկզբունքապէս ձգտում էին հաւատակից ազգութիւնների անորոշ բաժանմանը: Զանազան ազգեր սպասանալիքներով աշխատում էին սուստարացնել իրենց շարքերը: Այդ վտանգը Հայաստանում գոյութիւն չունի, որովհետև այստեղ յաճախ մէկ մէկու հակառակում են այնպիսի ազգութիւններ և զաւանութիւններ, որոնց բաժանող սահմանները վերին աստիճանի պարզ են:

Պանֆիլի: — Կանգ է առնում մահմետականների և ոչ-մահմետականների լիակատար հաւասարութեան սկզբունքի վրայ: Նա գտնում է մի համամանութիւն նահանգական ժողովի, ոռուսական նախածրագրի և վիլայէթների ընդհանուր խորհրդների մէջ, ներկայացչական հաւասարութիւնը ժողովներում հաստատուած է նախկին վիլայէթների օրէնքով: Քրիստոնեայ բնակչութեան համար նա համարում է որպէս ձեռք բրատած իրաւունք: Ոչ մի հիմք չկայ կարծելու, թէ նոր վիլայէթի օրէնքը իր լուսթեամբ ցանկացել է վերացնել այդ կարգադրութիւնը: Սակայն, նոյն բանը գոյութիւն կուննայ և այն ժամանակ, երբ դեսպանատները կներկայութեն Դուանը իրենց նկատումները և խորհրդները բարենորոգիչ օրէնստութեան առթիւ, որպէս զի նախկին վիլայէթների օրէնքը, վերաբերմամբ մահմետական և ոչ-մահմետական հաւասար ներկայացչութեան սկզբունքի, նայ իր ոյժի մէջ:

Սէն-Քանտին: — Միանում է Պանֆիլիի կարծիքին նա գտնում է, որ ոչ-մահմետականների թւական նւազութիւնը հաւասարակշռութ է նրանց առն տեսական առաւելութեամբ:

Ծեօնքերդ: — Նկատում է, որ լիովանար հաւասարութեան սկզբունքը, լինելով ներկայումս նպաստաւոր ոչ-մահմետականների համար, սպազայում կարող է վտանգաւոր լինել քրիստոնեանների համար օրինակ, եթէ զաղթած հայերը ցանկութիւն յայտնէին նորից վերադառնալ իրենց բարենորոգուած վիլայէթները:

Տաքեր: — Նոյնպէս երկիր է կրում այդ վտանգից:

Ծեօնքերդ: — Ցաւտնում է սակայն, որ չպէտք է աչքի առաջ ունենալ միմիայն քրիստոնեանների շահերը, այլ նաև ուրիշ աղջութիւններինը, որպէսզի հնարաւոր լինի անկարգութիւնների առաջն առնել իւրաքանչիւր ազգ կարող է արդարացնի կերպով ստանալ տեղերի այնպիսի մի թիւ, որ համապատասխանում է նրա քանակին:

Պանթիլի. — Ամենուրեք ձգտում է պահպանել փոքրամասութեան իրաւունքները, ով էլ որ նա լինի Սակայն այդ իրաւունքները ապահովուած չեն լինի, եթէ ներկայ երկու տարրերին հաւասար ներկայացչական իրաւունք չտրուի. Հակառակ զէպում կարելի է համոզուած լինել, որ շնորհիւ առաջ եկած կրօնական մաքառութերի լարման, մեծամասութիւնը ճընշում գործ կդնի փոքրամասութեան վրայ:

Մանդելյան. — Գտնում է, որ անհրաժեշտ է խուսափել բռնապիտութեան համար մի այնպիսի գործիք պատրաստելուց, որից հետզիետէ կըօգտուէին բարոր տարրերը:

Նաքեր եւ Ֆիզ Յօրիս. — Ցայտում են նայնպէս իրենց լիակատար համաձայնութիւնը Պանֆիլիի հայեցակէտի հետ:

Շեօնիքը. — Մնում է հաւատարիմ համեն բառական սկզբունքնեւ նա պընդում է սակայն, որ այդ սկզբունքը իրագործուեց արդի օսմանիեան օրէնսդրութեան մէջ և այդ պատճառով պէտք էր փորձել նրան նաև ընդհանուր վերատիսունների օրօք, իսկ կարիք եղած զէպում ենթարկել համապատասխան փոփոխութիւնների:

Յանձնաժողովը որոշում է հաւարուել չորեշարթի, 16 յուլիսի 10 ժ. առաջօտեան:

Նիստը փակւում է կէս օրին:

Հայկական Բարենորոգումների Յանձնաժողով:

#### Նիստ V.

Չորեշարթի, 16 յուլիսի 1913 թ.

Ներկայ են,

Շեօնիքը, ներկ. Քերմանիայի դեսպանատան,

Պանթիլի. Ա. Աւատր Ունգարական դեսպանատան,

Սլ.Բ.-Քանտեն, Ա. Ֆանսիայի դեսպանատան,

Ֆիզօրիս, ներկ. Անգղիական դեսպանատան,

Շաբեր, ներկ. Իտալիայի դեսպանատան,

Մանդելյան, ներկ. Ռուսաստանի դեսպանատան:

Նիստը բացւում է քառորդ տասին առաջօտեան:

Անցեալ նիստի բանացի վիճաբանութիւնները, որ կարգում է Սլ.Բ.-Քանտեն, բնդունում են:

Պանթիլի. — սկսում է վիճաբանութիւնները: Կարդալով նախածրագրի VI-րդ յօդուածը:

» § 1. Նահանգական ժողովը ընտրում է նինգամհայ ժամանակով և գրմարում է տարին մի անգամ երկամսեայ ստիրական նիստերի: Այլ նիստերը կարող են երկարել մնդանուր նահանգապետի հրամանով:

» § 2. Ժողովը կարող է գումարուել արտակարգ նիստերի համար ընդհանուր նահանգապետի կողմէից որևէ սեփական նախաձեռնութեամբ, կամ ժողովի անդամների 2/3-ի պահանջով:

» § 3. Ըստհանուր նահանգապետը իրաւուց ունի արժակելու նահանգական ժողովը: Այս զէպում, ըստողները պիտի հրափրուեն երկու առ-

սուայ ընթացքում եւ նոր ժողովը պիտի գումարով շրմ ամսուայ ժամանակամիջոցում, և վասած արձակման հրովարտակի յայտարարման օրից.

» § 4. Ժողովի գումարման եւ արձակման հրովարտակները հրատարակում են նորին Կայսերական Մեծութեան Սուլթանի ամսուալը:

Պանթիլի. — Նկատում է, որ սուսական նախածրագիրը, տարով մի անգամ ընդմիշտ ընդհանուր նահանգապետին (Վալի Ռեմումի) նահանգական ժողովի գումարման և արձակման իրաւունքը, որոշում է, որ համապատասխան հրովարտակը հրատարակի նորին Կայսերական Մեծութիւն Սուլթանը: Ընդհանուր նահանգապետը, կարծում է Պանֆիլին, չնորհիւ իր որոշ իրաւունքների, կարող է նոյնպէս գումարել և արձակել ժողովը առանց զիմերու Սուլթանին, կամ նրա հրատարակման իրաւունքին: Սակայն, բոլոր երկրներում, ինչպէս օրինակ Աւստրիայում, պաշտօնեան, որ գումարում և արձակում է նահանգական ժողովը վեհապետի անուամբ, պէտք է ունենայ մի առանձին և արտակարգ իշխանութիւն:

Մանթէլշտամ. — Հրաժարում է այս մարքից, որ առաջարկում է իր Աւստրիա Ունգարական կոլեցիոն: Նա ընդունում է, որ ընդհանուր նահանգապետը պէտք է իրաբանչիւր գումարման և արձակման համար ստանայ Սուլթանի առանձին համաձայնութիւնը: Ընդունելով սակայն, հրատարակման սկզբունքը յիշեալ իմաստով, նա ցանկացաւ խուսափել մի ուրիշ հարցի նախաբններուց, որի մասին խօսք կլինի քիչ ուշ և որի լրջութեան վրայ կարելի է այժմեանից մատնանշել: Դա այն նոյնդոտոնների հարցն է, որ կենտրոնական կառավարութիւնը դնելու է ընդդէմ նահանգական հաստատութիւնների աղաս զարգացման, երկիւղ կայ, մի գուցէ Բ. Դուռը, որի ներշնչութերին հետեւելու է Սուլթանը, այս կամ այն քաղաքական կշռուդատութիւններից զրդուած, պատնշներ ստեղծի յիշեալ համաձայնութեան ստանալու համար: Երբ յանձնաժողովը քննութեան կառնի վերահսկողութեան հարցը, որի անհրաժեշտութիւնը գիտակցել է միահամուռ կերպով, պէտք է միջոցների դիմի, որպէսզի կենտրոնական իշխանութիւնը ի չարք գործ չդնի իրեն պատկանեալ գումարման և արձակման իրաւունքները:

Պանթիլի. — Համաձայնում է, որ իրաբանչիւր պետութեան մէջ կենտրոնական իշխանութիւնը ձգտում է ի չարք գործ դնել իր իրաւունքները: Բայց նա գումարման և արձակման իրաւունքները համարում է միապատի էական իրաւունքը, որը նրանից ոչ առնել կարելի է և ոչ քննադատելու նոյնպէս և դեսպանատները, ինչքան էլ որ աշխատեն սախազգուշացման միջոցների դիմել դրադեալ չեն կարող ապահովութիւններ սահմանել ընդհանուր ժողովի անարդել գումարման և արձակման համար:

Մանթէլշտամ. — Նկատում է սակայն, որ հէնց զրա համար էլ օգտաւէտ կլինի վերահսկողութիւնը:

Պանթիլի. — Դանում է, որ վերահսկողութիւնը իրազեկ կանի միծ պետութիւնների ներկայացուցիչներին զեղծութերի մասին ներկայացուցիչները կինդրեն Բ. Դոնից կարենոր բարեփոխութեր և միջոցների ձեռնարկութել Բայց նա այժմեանից հրաժարում է վերահսկողութիւնը համարել ապավուրթիւն:

Մանթէլշտամ. — Պատասխանում է, որ ապահովութիւնների հաստատման նպաստաւոր կամ անպատճ հիմունքների մասին խօսք է լինելու նախա-

ծրագրի 22-րդ յօդուածի ընդհուռ ժամանակ, երբ մաքերի փոխանակութիւն տեղի կունենայ վերահսկողութեան սկզբունքի և հանգպամանքների մասին:

Եხօնքերգ.—Գտնում է, որ ոռւսական նախածրագիրը սահմանում է ընդհանուր ժողովի ընտրումը 5 տարով, այն ինչ վիլայէթների վարչական օրէնքը ի 108-րդ յօդուածը վիլայէթի ընդհանուր խորհրդականների պատգամների ժամանակամիջոցը որոշում է միայն 4 տարով:

Մանեկլյտամ.—Պատասխանում է, որ նա 5 տարուայ ժամանակամիջոցը ընդունէլ է որպէս այն, որ 11-րդ յօդուածը որոշում է ընդհանուր նահանգապետի համար:

Եხօնքերգ.—Երկիւր է յայտնում, մի դուցէ ընդհանուր նահանգապետի պաշտօնի և ընդհանուր ժողովի նիստերի միանման յարատեռութեան հարձիւ նըանց իշխանութեան վերահստառումը խանգարէր նահանգի ներքին դրութիւնը:

Մանեկլյտամ.—Այդպիսի երկիւր չի տեսնում, որովհետեւ նա կապ և համապատասխանութեան է գտնում ոչ թէ միայն երկու ընտրութիւնների այլ և մէկ ընտրութեան և մէկ նշանակման մէջ:

Պանծիլի.—Ըստ իր կարգի ընդութեան է առնում այդ երկու պատգամների յարմարացումը, այդ յարմարացման հետեանքը կինէր այն, որ ընտրութիւնները կկատարուէին ընդհանուր նահանգապետի բացակայութեան ժամանակ:

Տաքեր.—Միանում է իր Աւստրօ-Ունգարական կոլեգի կարծիքին:

Մանեկլյտամ.—Գտնում է, որ նահանգի գլխաւոր հիմնարկութիւնների դործունէութեան յարատեռութեան համար կարիլի է նշանակել միատեսակ ժամանակ:

Եხօնքերգ.—Նկատում է, որ ըստ նախածրագրի ընդհանուր ժողովի սովորական նիստերի ժամանակամիջոցը մի տարուայ մէջ որոշուած է 2 ամիս, իսկ վիլայէթների օրէնքի 112-րդ յօդուածը ընդհանուր խորհրդական համար որոշում է 40 օրուայ ժամանակ:

Սէն-Բանտէնի.—Պարզում է, որ ընդհանուր ժողովի գործունէութեան և լայն իրաւասութեան համար նիստերի աւելի երկար ժամանակամիջոց որոշ չելք ներկիլ է:

Եხօնքերգ.—Յայտնում է, որ ոռւսական նախածրագիրը և վիլայէթների օրէնքը հաւասարօրէն նախատեսնում են՝ առաջինը նահանգական ժողովի և երկրորդը ընդհանուր խորհրդների համար արտակարգ նիստի գումարումը կինտրօնական իշխանութեան ներկայացչին կողմից, եթէ սա գտնում է այդ բանը օգտաւէտ, կամ եթէ նըանց գիտում են անդամների 2/3-ը, բայց նախածրագիրը պարտաւորում է ընդհանուր նահանգապետին գումարել արտակարգ նիստ այն ժամանակ, երբ անդամների 2/3 պահանջման վիլայէթների օրէնքի 115-րդ յօդուածը միմիայն ասում է, որ վալին, միացնելով այդ պահանջմին իր անձնական կարծիքը, յանձնում է նըանց գործոց նախարարի հայեցղողութեանը, Եხօնքերգը գերադասում է նախածրագրի սիստեմը, չորհիւ նըանց գումարան դէպի պապակինութեանցում և կարծում է, թէ յարմար կինէր առաջարկել Բ. Դուան, որ ընդունի այդ սիստեմը:

Մանեկլյտամ.—Կարծում է, թէ Բ. Դուար չի հակառակի այդ առաջարկ կութեանը:

Շեօնբերդ. — Յիշեցնում է վերջապէս, որ նախածրագիրը և վիլայէթների օրէնքը համամիտա են այն բանում, որ ժողովի արձակման դէպօռմ անմիջապէս կազմուի նոր ժողով։ Սակայն նախածրագիրը պահանջում է այդ նոր գումարման համար և ամսուայ ժամանակամիջոց, իսկ վիլայէթների օրէնքի 125-րդ յօդուածը — միմիայն 3 ամիս Սայդ զանազանութիւնը անկասկած բացարձում է նահանգի տարածութիւն մեծութեամբ և ընտրողական գործողութիւնների ձգգմամբ։

Մանդիլուամ. — Հաստատում է այդ բացարձութիւնը, որին համակարծիք են նաև Պանֆիլին և Շարերը։ Յանձնաժողովը սկսում է նախածրագրի VIII-րդ յօդուածի բննոտառութիւնը, որը հետևեան է։

» § 1. Նահանգական ժողովը օրէնսդրական է նամարում նահանգի շահերին վերաբերուան հարցերում։

» § 2. Նահանգական ժողովի օրէնսդրական եւ բիոլմէտուային իրաւասութիւնը ոչ մի դէպօռմ պակաս չի մնելու այն իրաւասութիւնից, որ նախատեսնուած էր 1880 թ. երրուական յանձնաժողովի ծրագրի 82-րդ յօդ։

» § 3. Ընդունուած օրէնքները ներկայացումն նորին Կայսերական Մեծութեան Սովորանի նաստատմանը։ Այս նաստատումը պէտք է տրուի կամ մերժուի երկու ամսուայ ընթացքում։ Թիշեալ ժամանակամիջոցի անց ներուց յետոյ կառավարութեան ըստթիւնը կը նոր նորի որպէս նաստատումն։

Մանդէլուամ տալիս է հետևեալ բացարձութիւնները։

«Նահանգական ժողովի իրաւասութիւնը որոշելու համար նախածրագիրը յենում է 1880 թ. Երրուական Յանձնաժողովի ծրագրի վրայ, ընդունելով նրան որպէս մինիմում։ Ի դէպս ևս պիտի յիշեցնեմ, որ 1880 թ. ծրագիրը մշակել է մի յանձնաժողով, ուր մասնակցում էին վեց միծ պետութիւնների և Տաճկաստանի ներկայացուցիչներու, հիմն ունենալով այն ծրագիրը, որ կազմել էր իսքը թ. Դուռը (Տիո Շովշլ. Բարենորութիւններ և քրիստոնեանների հովանաւորութիւնը Տաճկաստանում, երես 464)։ Այդ ծրագիրը մշակուած էր ոչ թէ մի նաև մագի համար, այլ բոլոր երրուական Տաճկաստանի վիլայէթների համար։ Ուստի ևս կարծում եմ, թէ արդարացի կը լինէր տալ ապագայ Հայկական նահանգի փառովին այն իրաւունքները, որ Դուռը գետ ևս 1880 թւին տեսց վիլայէթների խորհրդին եթէ քննութեան առնել 1880 թ. Յանձնաժողովի ծրագրի 82-րդ յօդուածը, որ խօսում է վիլայէթի ընդհանուր խորհրդի իրաւասութեան մասին, այնտեղ, իմ կարծիքով, չէր գտնի այնպիսի մի բան, որ կայսրութեան շահերին հակառակ լինէր և ոչ էլ այնպիսի մի կէտ, որ գուրս լինէր նահանգական շահերից։ Օրէնքն ասում է։

«Վիլայէթի ընդհանուր խորհրդի իրաւասութեանն հն պատկանում։

1<sup>o</sup> օրէնքներ, որ վերաբերում են նորակաղը իրաւակարգի վարչական, դատավարական և Փինանսական կողմերին։

2<sup>o</sup> օրէնքներ հարկերի և տողբերի սահմանման, դասաւորման, չափի և փոփոխման մասին, առանց, սակայն, հիմնական չափի պակասեցման՝ բացառութեամբ այն օրէնքների, որ խօսում են ոկտոսութեանը պատկանեալ եկամուտների, սակերի և մենագաճառութեան մասին։

3<sup>o</sup> օրէնքներ, որ նահանգակառած են վերաբերմամբ կալուածների յուն

յակագրման, գնահատման, հողերի և եկամուռների հարկանութեան:

4<sup>0</sup> օրէնքներ բիւդէտի առթիւ և հարկանութեան հաւանութեան մասին,

5<sup>0</sup> օրէնքներ վիլայէթի պատասխանաւուութեան մասին,

6<sup>0</sup> օրէնքներ հարկանաւաքման մասին,

7<sup>0</sup> օրէնքներ ժողովրդական լուսաւորութեան մասին,

8<sup>0</sup> օրէնքներ մաքսի, հանքերի, ջրերի և անտառների մասին,

9<sup>0</sup> օրէնքներ, որ վերաբերում էն ճանապարհների հաղորդակցութեան, արագման և երկաթուղային զծերին, որ կանուեն նահանգի մէջ, նաև հասարակական այն աշխատանքներին, որ պետութեան վրայ ծախք չեն դնում,

10<sup>0</sup> օրէնքներ հողագործութեան, առեւրի, արդինալերութեան և վիլայէթի ընդհանուր տնտեսական շահերին վերաբերող,

11<sup>0</sup> օրէնքներ վարչի բարգաւաճման մասին,

12<sup>0</sup> օրէնքներ վիլայէթի սեփականութեան խնամատարութեան մասին,

13<sup>0</sup> օրէնքներ հրանգանոցների, որբանոցների, բարեգործական և հասարակութեան օժնութակի հիմնարկութիւնների մասին,

14<sup>0</sup> օրէնքներ տասանորդի մասին,

15<sup>0</sup> օրէնքներ բանտերի մասին,

16<sup>0</sup> օրէնքներ, որ վերաբերում էն վիլայէթում գտնուող հողային սեփականութեան ցուցակագրման, կարուածների գրափն և պետական բռնագրաւութերի սիստեմին, տեղի է ունենում հասարակութեան շահերի համար:

17<sup>0</sup> օրէնքներ ժանդարմէրիայի և ոստիկանութեան մասին, որոնք հիմնում են ներկայ օրէնքի վրայ:

18<sup>0</sup> օրէնքներ շրջող զօրքերի բնակրանների դասաւորման մասին:

19<sup>0</sup> օրէնքներ բուրբութեան մասին:

Եթէ 1880 թ. ծրագրի 82-րդ յօդուածը, ինչպէս նաև նոյն ծրագրի

83—93-րդ ֆինանսներին վերսերող յօդուածները համեմատենք 1913 թւի օրէնքի 78—85, 123, 128—134 յօդուածների հետ, մնաք երկուսի մէջ ընդհանուր խորհրդի իրաւասութեան վերաբերմամբ մեծ տարրերութիւն չենք դանի, Պէտք է նրանց մեջցներ, որպէսզի նահանգուկան ժողովին ըստ հնարաւորութեան լայն իրաւունքներ տրուեն: Այդ ընդիւանումը անջատման ոչ մի վտանգ չի ներկայացնում, որովհետո նախածրադրի VII-րդ յօդուածի 3 ըդ կէտի ոյժով ժողովի ընդունուած բոլոր օրէնքները տրուում են նորին կայսերական Մեծութեան հաստատմանը:

1913 թւի օրէնքը դասավիետման արժանի է նրանով, որ մոցնում է ֆինանսական չափաղման կենտրոնացման սիստեմը Օրէնքը (յօդ. 80—94) մի առ մի թուում է վիլայէթի սովորական և արտակարգ բիւդէտի ելք և մուտքը: Վիլայէթի բրուր եկամուռները յանձնուում են զանձարանին, բացառութեամբ այն եկամուռների, որոնք նշանակուած են վիլայէթի պիտոյքների համար: Ընդհականական, 1880 թ. ծրագրի վիլայէթի եկամուռների մեծ մասը սահմանում է իր սեփական բիւդէտի օդտին, բացառութեամբ նոցա, որ կազմում են նրա մասը պիտութեամբ ընդհանուր ծախսերի մէջ: Այս սիստեմը հիմնում է 1880 թ. ծրագրի 84-րդ յօդուածի վրայ:

(Յուուած 84. 1<sup>0</sup>. վիլայէթների բիւդէտին չեն պատկանում այն ծախսերը, որ վերաբերում են հետևակ զօրքին, հեծելազօրին, ծովային վարչու-

թեանը, Սուլթանի պիտոյքներին, գեսպահներին, պետական պարտքին: Բոլոր մացած ծախսերը բնականաբար մանում են Կայսերական Կառավարութեան ընդհանուր ծախսերի մէջ:

Վիլայէթի բիւղժէտից դուրս են նմանապէս մաքսային եկամուտները, ծխախոտի մենավաճառութիւնը և տուրքը, աղի, ողելից խմիչների, նամակադրոշների, արբեշումի, ձկնեղին, փոստ և հեռագրատան ծախսերը:

2º Վիլայէթի մացած բոլոր եկամուտները վերաբերում են վիլայէթի բիւղժէտին:

3º Տեղական վարչութեան բոլոր ճիւղերի ծախսերը դուրս զատով վիլայէթի մուտքից, մացած զումարի 15º/ο-ը պէտք է յատկացնել վիլայէթի առանձին ծախսերին, որոնք են հասարակական աշխատանքները և ժողովրդական լուսաւորութիւնը: Այս ծախսերը սահմանում է ընդհանուր խորհուրդը բիւղժէտի մի առանձին յօդուածով, իսկ մացած զումարը յանձնում է պետական գանձարանին:

Ինձ թում է, որ 1880 թ. ծրագրի սիստեմը աւելի է համապատասխանում առողջ կենտրոնացման կանոններին, քան 1913 թւի օրէնքի սիստեմին: Բացի այդ, պէտք է նկատել, որ համաձայն 1880 թ. ծրագրի 83-րդ յօդուածի, նիստերի սկզբում վալին բիւղժէտը ներկայացնում է ընդհանուր խորհրդին: աս բիւղժէտը քննելուց և հաստատելուց յետոյ, ներկայացնում է Փինանսների Նախարարին վերջնական հաստատութեան համար: Աչքի առաջ ունենալով այս պայմանները, նահանգական ժողովների կարելի է իրաւադոր ճանաչել կազմիլու իր բիւղժէտը ամենասակաւը 1880 թ. օրէնքով սահմանուած շըջաններում:

Շեօնքնրգ:—Միանում է ոռւսական նախածրագրին այն բանում, որ վերաբերում է ընդհանուր ժողովի իրաւասութեանը: Ուսումնասիրելով վիլայէթի օրէնքի համապատասխան կանոնադրութիւնները, նա համոզում է, որ այդ ակտը յայնապէս ճանաչել է ընդհանուր խորհրդների հետեւալ իրաւունքները սահմանել նախանդի բիւղժէտը (յօդ. 129), վերաստուգման հնաթարկել ծախսերը, որոշել սոլյորական և արտակարգ յաւելեալ սանթիմոնի քանակը (յօդ. 130), հասարական աշխատանքների պիտոյքների և ժողորդական լուսաւորութեան և առողջութեան համար փոխառութիւններ որոշելը (յօդ. 131), քննել վիլայէթի բիւղժէտի կողմից ընդունուած հիմնարկութիւնների նախագիծը և նկարագիրը (132 յօդ.), կատարուած աշխատանքների հաշիւնները (յօդ. 133), արտայայտել ցանկութիւններ այնպիսի ձեռնարկութիւնների համար, որ ազգային ծառայութիւնից դուրս են և զիմելու ուր որ հարկն է անհրաժեշտ ուղղութեան մացնելու ինչպէս հարկերի հաւաքման և դասաւորման մէջ, նոյնապէս և այն միջոցների, որ նա գտնում է օրէնքներին և կանոնադրութիւններին հակառակ (յօդ. 134):

Ընդհանակառակ օրէնքը պարզ չի արտայայտում, արդեօք ընդհանուր խորհրդները ունեն օրէնսդրական իրաւունք այնպիսի հարցերում, որ չեն վերաբերում նահանդի շահերին, որոնք են օրինակ, 1880 թ. օրէնքի 82-րդ յօդուածութեանները: Կասկած չկայ, որ նրա 123-րդ յօդուածը պնդում է՝ իրարանչիւր վիլայէթին հետաքրքրող հարց, համաձայն անդամների որոշ քանակի առաջարկութեան և վակատար մեծամասնութեան համաձայնութեան, կարելի է մացնել նիստերի օրակարգի մէջ: Բայց նա հաստատապէս չի ասում, ունեն մերկեօք ընդհանուր խորհրդները օրէնս-

դրական իրաւունք, թէ ոչ Սակայն պիտի սպասել, որ գործնական կեանքը պարզի այդ կանոնադրութիւնները եթէ կառավարութիւնը ընդհանուր խորհրդներին տար օրէնսդրական իրաւունք վիւայէթին նետաքրքրող բոլոր հարցերի համար, այն ժամանակ նրանց իրաւութիւնը կլինէր նոյնչափ ընդարձակ, ինչչափ նախածրագիրը սահմանում է նաև անգական ժողովի համար Հակառակ դէպրում պէտք է Բ. Դուռ առաջարկել ընդարձակելու ընդհանուր խորհրդների իրաւութիւնը. Այդպիսի ընդարձակում չէր վասար Կայսրութեան ընդհանուր շահերին, որոնց համար ապահովութիւն է կազմում Սուլթանի անհրաժեշտ հաստատումը:

Մասնդիլուամ.—Նկատում է, որ նախածրագիրը, պահանջելով 7-րդ յօդուածի 3-րդ կէտի հիման վրայ Կայսերական հաստատումը ընդհանուր ժողովի ընդունած օրէնքների համար, կենտրոնական իշխանութեան իրաւունքները աւելի է աչքի առաջ ունեցել, քան վիւայէթների օրէնքը. վերջինս այդ հանգամանքը աշխաթող է արել, իր 135-րդ յօդուածում այդ օրէնքը ասում է. «Վիւայէթի ընդհանուր խորհրդի որոշումները համարում են վերջնական՝ վալիի հաստատումից յետոյց»:

Ենօնիքը.—Նկատում է, որ համաձայն սահմանադրութեան՝ Սուլթանի հաստատումը անհրաժեշտ է միշտ, որովհետև միայն նորին Կայսերական Մեծութեան է պատկանում բոլոր օրէնքների հրատարակումը, առանց բացառութեան ինչպէս նաև անգական, նոյնպէս և ընդհանուր օրէնքների. Այդ բարձր սկզբունքը մի լուս ակնարկ է 135-րդ յօդուածի լաւ հասկանալու համար; Ինչ վերաբերում է այդ հաստատման դործադրմանը, Ենօնիքը կարծում է, թէ Կայսերական որոշումներին վերաբերող պատճառների ընդհատութիւնը պիտի պատկանի ոչ թէ միայն Սուլթանի քարտուղարութեանը, այլ և Բ. Դուռնը, ուրիշ խօսքով ասած—ժողովների կամ ընդհանուր խորհրդների ընդունած օրէնքները պիտի անցնեն կենտրոնական իշխանութեան ձեռքով:

Մանդիլուամ.—Ենթագրում է, որ Սուլթանը նախօրօք կխորհրդակցի իր ներկայացուցիչ ընդհանուր նահանգապետի հետ Այս բանը նման կինէր Աւստրիայի գոյութիւն ունեցող սովորութեան, ուր Կայսրը հաստատում է օրէնքները նախապէս խորհրդակցելով Statthalter-ի հետ:

Պանդիլի.—Կարծում է, թէ վիւայէթի օրէնքի 135-րդ յօդուածի մեկնարանութեան համար հարկաւոր է ըմբռնել նրա իսկական ընդիմութիւն հասկանալ, որ եթէ վալին սկզբունքապէս հաստատի ընդհանուր խորհրդի որոշումները, վերջիններս կունենան վճռական նշանակութիւն: 131-րդ յօդուածը հաստատում է այդ կանոնը, բացառութիւն անելով մի առանձին դէպրի համար, այսինքն փոխառութիւնների, որոնք անպայման պիտի հրատարակուեն Կայսերական հրաժարականի պատճենութեան վարչութեան պահապան:

Շաբէք.—Միանում է Գերմանիայի և Աւստրի-Անգարեիայի նկրկայացուցիչների կարծիքին:

Պանդիլի.—Առաջարկում է ըննադատել նախագարական ՎՊԱ—յօդուածը:

Տ. Սանչակների վարչական խորհրդներին նախազանում են մութասարիքները: Խորհրդները կազմուում են կազայի վարչութեան պահապան մասերի պետերից, կրօնական համայնքների ներկայացուցիչներից եւ

վեց անդամներից (3 մանմեղական և 3 օքստոննեայ), որոնց ընտրում  
են հազարի վարչական խորհուրդները:

§ 2. Կազմաների վարչական խորհրդներում նախագահում են ղայ-  
մարդական խորհրդները, Այդ խորհրդները կազմուած են կազարի վարչութեան զա-  
նազան մասերի պետերից, կրօնական համայնքների ներկայացուցիչներից  
և շորո անդամներից (2 մանմեղական և 2 օքստոննեայ), որոնք ընտր  
ում են նահիեր խորհրդներից:

§ 3. Այդ խորհրդականների իրաւասութիւնը որոշում՝ է համաձայն  
Եւրոպական Յանձնաժողովի մշակուած ծրագրի 115—116 և 139 և 140 յող-  
ուածների:

Սանդելլուամ, —Կարծում է, թէ հարաւոր է կազարի և սանջակների  
վարչական խորհրդներին տալ աւելի լայն իրաւասութիւն, քան նահանգի  
վարչական խորհրդին Այս վերջինը գործում է ընդհանուր նահանգապետի և  
նահանգական ժողովի հետ միասին, Նահիերկայացչական և խորհրդակցական  
մի մարմին է, որպիսին մութասարիֆների և ղայմազամների մօտ գոյութիւն  
չունի:

Պատասխաներով Շեօնքերգին, որը 4-րդ յօդուածի առթիւ համարում է  
Մանդէլշտամին Նահանգական վարչական խորհրդի իրաւասութեան հարցում  
պահաս աղատամիտ, քան տաճկական արգի օրէնքը վիլայէթների վարչական  
խորհրդի վերաբերմամբ, Մանդէլշտամը հարցում է իր գերմանական կօլլէզին,  
մրգիոք գտնում է նա տաճկական օրէնքի մէջ մի կանոնադրութիւն, որ կը ա-  
տէր վալիի իրաւասնքները յօդուա վարչական խորհրդին:

Շեօնքերգ. —Պատասխանում է, որ վիլայէթների օրէնքը ճանաչում է  
վարչական խորհրդի իրաւասութիւնը նախօրօք որոշած դէպքերում և այդ  
պատճառով վալին նոյն դէպքերում իրաւասու չի կարող լինել. Ուրիշ բանէ,  
եթէ միայն հակաւակութեամբ նա ցանկանայ ձեռք բերել այդ իրաւա-  
սութիւնը,

Պանթիլի. —Նկատում է ի միջի այլոց, որ վիլայէթների օրէնքի 72-րդ  
յօդուածը վարչական խորհրդի անդամներին «պատասխանատու է համարում  
իրենց որոշումների համար»: Պատասխանատութիւնը ենթալիքում է վերջնա-  
կան որոշում և ոչ թէ մի հասարակ կարծիք, որպիսին յայտնում է վալին  
զուա խորհրդական իմաստով, Սահմանելով, որ «վարչական խորհրդի որո-  
շումները վաւերացրած պատճեներով սահմանական կարող է ամեն մի համա-  
րեքուող անձ, համաձայն իր խորհրդի առանց մի որևէ ծախսի», 73-րդ  
յօդուածը աւելի է պարզում իրերի դրութիւնը, որովհետեւ նա վարչական  
խորհրդներին ենթարկում է հետաքրքրուող անձնաւորութիւնների հսկողու-  
թեանը:

Մանդէլշտամ. —Առաջ է բերում քաղաքական բնոյթ ունեցող կշառա-  
տութիւններ, որոնց արժէքը արդէն յայտնի է և որոնք հակառակ են նրա  
կարծիքով այն բանին, որ ընդհանուր նահանգապետը կապուած լինի վար-  
չական խորհրդի որոշումներով: Ուժեղ գործադիր իշխանութիւնը հարկա-  
ւոր է բարենորդումների գործադրման համար, իսկ ընդհանուր նահանգա-  
պետը կամայականնին սահմանադրուած կլինի այն անկա-  
խութեամբ, որով օգտուում է նահանգական ժողովը:

Վիճաքանութիւնները կենտրօնանում են յետոյ կազանիրի և սանջակ-  
ների վարչական խորհրդների կազմակերպման հարցի վրայ:

Մանդկլուամ.—Նկատում է, որ դոքա նման հն նահանգի վարչական խորհրդներին:

Շեօնքըրդ.—Նկատում է, որ այդ կազմակերպումը համապատասխան է վիլայէթի օրէնքի 63 և 64-րդ յօդուածների կանոնադրութեանը. նա պահանջում է կազմների և սանջակների մահմեղական և ոչ-մահմեղական անդամների նշանակման հարցում համեմատական սկզբունքը գերադասել թւական հաւասարութեան սկզբունքին:

Պանֆիլի.—Յայտարարում է, որ կողմանկից լինելով լիակատար հաւասարութեան սկզբունքին նահանգական ժողովում, նա վարչական խորհրդների հարցում ձայն պիտի տայ համեմատական սկզբունքին. նա գտնում է, որ բաղաբական և կրօնական պայքարների հետևանքը հրկիւղ է ստեղծում ընտրութեան ժողովներում, ուր առաջ է գալիս փոքրամասնութեան ճշշումը, այն ինչ այդ վտանգը գոյութիւն չի ունենայ այնպիսի խորհրդներում, որոնք բաղացած կլինեն կառավարիչներից և պաշտօնեաներից. Լիակատար հաւասարութիւնը անհրաժեշտ լինելով փոքրամասնութեան շահերի պահպանման համար նահանգական ժողովում, ոչ մի հիմք չէր ունենայ պահպանելու իր դոյութիւնը վարչական խորհրդներում:

Ան-Քանտեն.—Կարծում է ընդհակառակը, եթէ լիակատար հաւասարութեան սկզբունքի ընդունելը համարում է մի ժողովում, որ ամբողջապէս ընտրութիւն է, ապա որեմն այդ սկզբունքը աւելի հեշտ կերպով պիտի ընդունել և մտցնել այնպիսի մի նշանակութիւնում, որը իր մեծամասնութեամբ աւելի շուտ պատկերացնում է կառավարութիւնը, քան ժողովուրդը: Արդեօք այդպիսի հանգամանք առիթ չէր տայ բոլորների, որոնք կծագէին սոյն հաւասարութեան սկզբունքի շուրջը այն պատճառով, որ կբացակայէր նրա ընդհանուր գործադրումը: Եւ ըստեղ հաւասարութեան սկզբունքը, առաջառութեան այդ գրաւականը, կդտնէր իր տեղը, եթէ ոչ մի ատեանում..., որի բնոյթի հետ լաւ է ծանօթացել պ. Պանֆիլին:

Պանֆիլի.—Նկատում է, որ համաձայն նախաձրագրի առաջի յօդուածի 3-րդ կէտին վարչական բաժնաւումները պիտի կատարուեն այնպիսի ձևով, որ բնակչութեան համազգի ցեղերը հնար եղածին չափ, դասաւորուած լինեն համազգի խմբերով: Համաձայն այդ սիստեմի, մենք կունենայինք սանջակներ և կազմներ, որոնք բնակուած կլինեին կամ ամբողջապէս մահմեղականներով, կամ ամբողջապէս քրիստոնեաներով: Արդեօք դա չէր լինի աննօրմալ կամ նոյնիսկ անցանկալի մի բան, որ վարչական խորհրդի ընտրութիւնը անդամների մի կէսը գումարուէր քրիստոնեաներից, իսկ միւս կէսը ոչ-քրիստոնեաներից:

Ան-Քանտեն.—Գտնում է, որ համազգի սահմանների կազմակերպումը աւելի հեշտորեն կլինէր հահիէներում, բայց շատ դժուար կազմաներում և միանգամայն անհարին սանջակներում: Առաջարկած հիմունքը, սակայն չի թւում համոզեցուցիչ կազմների վարչական խորհրդների համար: Նա աւելի պական համոզեցուցիչ է սանջակների և ապա ուրեմն նամանաւանդ նահանգի:

Մանդկլուամ.—Յայտնում է, որ փոքրամասնութեան համար առաւելութիւն պիտի համարել այն բանը, որ նա սանջակներում կամ կազմաներում ունենացու է վարչական խորհրդի կազմում ընտրուած ներկայացուցիչների նոյն թւա-

քանակը, ինչ մեծամասնութիւնը: Յարգել ըստ ասածնոյն փոքրամասնութեան շահերը, դա նախածրազրի էական սկզբունքն է:

Շեօնբերգ.—Հաստատում է, որ նախածրազրի **VIII**-րդ յօդուածը ընդհանրապէս ներդաշնակ է վիլայէթների նոր օրէնքի 69—71 յօդուածների հետ Սակայն, այդ օրէնքը բաց է թողնում կազաների և սանջակների վարչական խորհրդների իրաւասութեանը վերաբերող մի շարք հարցեր: Անա այս տեղ են հարկաւոր սահմանադիր որոշումներ և թերութիւնները վերացնող բացարութիւնները: Ինչ վերաբերում է այն հարցին, կարող են արդիօք 1880 թ. ծրագրի կանոնադրութիւնները անհետացնել այդ թերութիւնները և գոհացուցիչ համարուել ոոյն նպատակի իրագործման համար, որա պատասխանը կտայ միմիայն կեանքը: Լաւագոյն միջոցը նա է, որ համարաւորութիւն տրուի ընդհանուր վերատեսուչներին գործազրելու գոյութիւն ունեցող օրէնսդրութիւնը և առաջարկել մտցնել նրա մէջ այսպիսի փոփոխութիւններ և բարենորոգումներ, որոնք նորա անհրաժեշտ կամարեն:

Մէն. Քանտէն.—Նկատում է, որ համեմատական սկզբունքը, եթէ միայն կարիք լինէր նրան որոնելու, ինչպէս պ. Շեօնբերգը ցանկացաւ որոնել ներկայ օսմանական օրէնստութեան մէջ, միանգամայն անոյժ կլինէր ապահով գարձնելու զանազան տարրերի համաշափներկայացչութիւնը ժողովներում կամը ընտրողական ժողովների ֆրակցիաներում: Եւ իրօք վիլայէթների օրէնքը յայտնում է (103 յօդ.), որ ներկայացուցիչների թիւը լինելու է համեմատ բնակչութեան բանակի: Բայց նա ոչ մի կերպով չի ապահովում փոքրամասնութեան ներկայացչութիւնը այսպէս, որ իրաբանչիւր կազայում ընտրութիւնները կատարուեն քուէրկութեամբ և նոյն ձևով, ինչ ձևով կատարում են մեծամասնութեան համար: Մի շարք բաղադրների փորձը, որին նոյն իսկ տաճկական օրէնստութեան վերջին ընտրութիւնները չեն հակասում, ապացուցում է, որ նմանօրինակ սիստեմ սահմանում է խոչըր առաւելութիւն միմիայն մեծամասնութեան համար ամեն անգամ, երբ քաղաքական հանգամանքները բարդուած են աննպաստ Սակայն շատ հաւանական է, որ եթէ նահանգի ազգերից մէկը, մահմետական կամ՝ ոչ-մահմեդական, իրականապէս կազմում է բնակչութեան  $55^{\circ}/\text{o}$ , նա կտայ նահանգական ժողովի ներկայացչութեան  $75^{\circ}/\text{o}$ : Միմիայն լիակատար հաւասարութիւնը կարող է նախազգուշացնել փոքրամասնութեան ճնշումը:

Շեօնբերգ.—Զի պնդում, որ թուրքիայում ներկայումս գոյութիւն ունեցող ընտրողական բէժիմը կարու չէ ոչ մի բարեփոխման. անշուշտ ցանկալի է, որ ընտրողական սահմանների զասաւորումը տեղի ունենայ կրկին անգամ, որպիսի նպատակի համար ընդհանուր վերատեսուչներին տրուած է ամեն տեսակ իշխանութիւն: Միւս կողմէց, արդարացի կլինէր ապահովել փոքրամասնութեան ներկայացչութիւնը:

Պանթիլի.—Կարդում է նախածրազրի **IX**-րդ յօդուածը, որ ասում է հետեւալլ.

«§ 1. Իւրաքանչիւր նահիէի նամայնքի սահմանները նար եղածին շափ կորչուեն այսպէս, որ մի ազգին պատկանեալ գլուխը միաման մի նահիէում:

§ 2. Իւրաքանչիւր նահիէ կատավարում է մուկիրվ, որին կից կմինչ ժողովրդի կողմէց ընտրուած խորհուրդ, կազմուած ոչ պակաս 4 և ոչ աւել 8 անդամներից: Այդ խորհուրդը իր կազմից ընտրում է մուկիրին

եւ նրա օգնականին, Մուսկիրը պատշաճում է այն էտնիքական խմբին, որ կազմում է ընակցութեան մեծամասնութիւնը, իսկ նրա օգնականը — միևնու խմբին:

§ 3. Այն նահիւում, որք ընակցութիւնը իսառն է, փոքրամալութիւնը ունենալու է խորհրդում ներկայացուցիչ, նաևածայն իր բանակի եւ այն պայմանով, որ նահիւն ամենասակաւը բաղկացած լինի 25 տնից:

§ 4. Նահիւի խորհրդի իրաւասութիւնը որոշում է Համաձայն 1880 թ. Եւրոպական Յանձնաժողովի մշակած ծրագրի 162—168 յօդուած-ների իմաստիք:

Ենօնիքով, — Յայտնում է, որ այդ յօդուածը աւելի ևս պակաս հակածառ-ռութեանների աեզի է տալիս, քան նահիւների մասին հրատարակուած ա-ռանձին օրէնքը: Վերջինիս վերաբերմաքը խօսում է վլրայէթի օրէնքի 3-րդ յօդուածը, որ մօտ է հրատարակման: Այն ծրագրը, որի մշակումը շուտով պիտի վերջանայ, պարունակում է իր մէջ ուռաւական նախածրագրի կանո-նադրութիւնների մեծ մասերը:

Ենօնքերգը, սակայն, բաւականութեամբ գտնում է, որ նահիւների նոր դասաւորումը պատկանելու է ընդհանուր վերասեսուներին:

Յանձնաժողովը անցնում է նախածրագրի X-ը ք յօդուածի ընութեանը:

» § 1. Իրաւանչիւր նահիւն ունի ընդհանուր նահանգապետի նշա-նակած հաշտարար դաստառը, որ ընտրում է նահիւի ընակցութեան մեծամասնութեան դասանութիւնից: Բացի այդ, իրաւանչիւր կազմի պլաստր բաղադրութիւնը կայ հաշտարար դաստառը:

§ 2. Հաշտարար դաստառի իրաւասութեանը պատկանում էն.

1° Քրէական մասում, առանց ապակելացիայի, այն յանցանքները, որոնց համար որոշում են տափանական պատիմներ, իսկ նաևներծ ապ-պեկացիայի այն յանցանքները որոնց համար որոշուած է պրամակու տուգանքը ոչ աւել քան 500 պիտաստը, կամ քանտա ոչ աւել 3 ամսից:

2° Քաղաքական մասում, առանց ապակելացիայի բոլոր անձնական պահանջները — բաղադրական կամ առեւտրական, բանակութեամբ ոչ աւել 1000 պիտաստից և նաևներծ ապակելացիայի նոյն պահանջները՝ բանակութեամբ 5000 պիտաստից ոչ աւել:

§ 3. Հաշտարար դաստառին իրաւաներ է տրուած համոզել կողմե-րին հաշտուելու նաև կողմերի ցանկութեամբ կարող է նշանակել միջնորդ դաստարուներ այնպիսի գործերի վճռման համար, որոնց քանակը 5000 պիտաստից էլ թէկուզ աւել լինի եթէ գործը վճռելու է միջնորդ դա-տարանուի, կողմերը հրաժարում են ապակելացիայի մի որեւէ իրաւա-քից:

§ 4. Սանջակի դաստարանները բաղկանալու են միմիայն քաղաք-կան բաժնից, կազմուած նախագահց և ընդհանուր նահանգապետի կող-մից նշանակուած երկու գլազումատը դաստառըներից (որոնցից մէկը մահ-մեղական է, իսկ միար ըջիսոննեայ): Սանջակի դաստարանները առաջին ինսպալիցիայու ընուած են 5000 պիտաստից աւել արժողութիւն ունեցող բաղադրական կամ առեւտրական ինսպիրներ, իսկ ապակելացիայով նա-յում են հաշտարար դաստառուների վճիռները վերաբերմաքը քաղաքական կամ առեւտրական գործերի:

§ 5. Սանջակի դաստարանների բրէական բաժանմունքները փոխա-

ըինսում են քրէական շրջիկ դատարաններով։ Սոյն քրէական դատարանները բաղկացած են նախագահով դատասորից, որ ընտրուած է ապահելեացին պալատից, որին ենթարկուած է ասնջակի դատարանը և պալատի կողմից ասնջակի հաշտուար դատաւորներից նշանակուած երկու անդամներից։ Արանցից մէկը կլինի ժամանեական, իսկ միար ըրիստոնեայ։

§ 6. Քրէական դատարանը ունենարու է իր նիստեր ներթով բոլոր կազմներում, որ նրա ներկայութիւնը կհաւաքուի անհրաժեշտ։

§ 7. Իրարամշիր կազմայի մէջ կլինի դատաստանական ընթիչ։ Ժամանելով կազմ, քրէական դատարանի նախագահով դատաստանական բընկից պահանջուած է ներկայացնել իրեն այն գործերը, որ պահանջուած են շուտափոյթ ընտրութիւն, նաև այն գործերը, որոնց առթիւ հնտուազուում դեռ են կատարուած է։ Եթէ վերջիններին ատթիւ նանկասում է մի որեւէ ասարդինութիւն կամ ճգճիռներ, այն ժամանակ նա պարտասոր է այդ ժամանին գելուցել ապավելացին պալատի նախագահին։

§ 8. Քրէական դատարանը ընտում է ապավելացին կարգով հաշտուար դատաւորների յանցավճիռների վրայ տրուած բողոքները։ Առաջին են վերջին ինտուանցիայու նաև ընտում է այն ոճագործութիւնները և յանցագործութիւնները, որոնց համար որոշած է դրամական տուգանը աւել քան 500 պիսատոր կամ բանու աւել քան 3 ամսով։

§ 9 Ապավելացին դատարանների թիւը պիտի լինի ոչ պակաս քան 6, իրարամշիր ապավելացին դատարան բաղկացած է ընդհանուր նանկապեսի կողմից նշանակուած դիմումատր նախագահից և պալատների այնպիսի բանակից, որը համարում է բանական ինչպէս բաղարական գործերի վճռուան համար, որոնց առթիւ տրուած են ապավելացին բողոքներ, նոյնպէս և քրէական դատարանների նախագահ նշանակելու համար։ Ապավելացին դատարանի ատեսանը բաղկացած է երկու անդամներից և նախագահից։ Բայց այդ նրա կազմու կամ ընդհանուր դատախազներ և դատախազների օգնականներ։

§ 10. Առեստրական դատարանները հիմնուելու են այլտեղ, որ նրանց կարիք կլինի։ Այն վայրերում, որ նրանք կգործեն։ բաղարական դատարանները առեստրական գործերի ընտութեամբ չեն գրադուելու։

§ 11. Շերիի (նոգեւոր) դատարաններն, իրաւասութիւնը որոշվելու է պարզուեն և ընդհանուր նահանգապետը նսկելու է որ, նրանք նոյն շըրջանի ուրիշ դատարանների գործերին միշամուխ շինեն։ Շերիի դատաւորներին արգելուու է միաժամանակ լինել նախագահ կամ անդամ նահագի ուրիշ դատարանների։

Ենօբերգ. —Կանգնելով ընդհանուր հայեցակէտի վրայ, նկատում է, որ դատավարական բարենսորուումը պիտի համարուի ներմուծումների հիմնաքարը ոչ թէ միմիայն Հայաստանի, այլ ամբողջ Կայսրութեան համար։ Բ. Դուռը իր բարենսորոգչական նպատակում յենուում է այս կշռադատութեան վրայ, մշակելով հաշտարար դատաւորների օրէնքը և ընդունելով շրջիկ դատարանների սկզբունքը։ Նախըան խօսել յատկութիւնների մասին, պիտի սպասել, որ Դուռը գործադրի մտցնուելիք բարենսորոգները, որոնք կլինեն ընդհանուր վերատեսուցների վերանսկողութեան տակ։ Բոլոր դատաստանական և վարչական գործերում օրէնքների մանրամասնութիւնները Տաճկաս-

տանում աւելի պակաս նշանակութիւն ունեն, քան նրանց արդարացի գործադրումը և այդ գործադրումը գրեթէ միշտ կախուած է անձնաւորութիւնից: Աչա հչուց այդ պատճառով շատ բան պիտի սպասել ընդհանուր վերատեսուչներից, որոնք լիազօրուած են ընդարձակ իրաւունքներով և թուժ է ժամանաւորապէս նշանակուած են արդարակառութեան բարեփոխման համար: Դիտելով արդի հրատարակուած կանոնների հետևանքները, նրանք ի նկատի կառնեն աշխի ընկնող պակասութիւնները և աւելի մեծ իրաւասութեամբ, քան ուրիշ մի որսիցէ անձնաւորութիւն, կառաջարկեն համապատասխան բարեփոխումներ:

Ի պատասխան Պանֆիլիի մի հարցի Մանդէլտամը յայտնում է, որ նա ամենուրեք Հ-րդ յօդուածի խմբագրութեան մէջ զեկավարուել է այն նախածրագրով, որ 1895 թ. Անգղիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի զեսպանատները ներկայացրին Բ. Դուանը:

Հ-րդ յօդուածում եղած կանոնադրութիւնները առանձին հականառութիւնների տեղիք չեն տալիս:

Յանձնաժողովը որոշում է հաւաքուել նորից ուրբաթ, 18 յուլիսի առաջնութեան,  $9\frac{1}{4}$  ժամին:

Նիստը փակւում է  $\frac{1}{2}$  կէսօրուայ:

Հայկական Բարենորոգմների Յանձնաժողով.

#### Ն ի ս տ VI.

Ուրբաթ, 18 յուլիսի 1913 թ.

Ներկայ են.

Ենօնիքերգ, Գերմանիայի դեսպ. ներկայացուցիչ.

Պանֆիլի, Աւստրօ-Ռւսագրեայի դեսպ. ներկայացուցիչ.

Սիե Քանտեն ներկ. Ֆրանսիայի դեսպ. ներկայացուցիչ.

Ֆիցմորիս, Մեծն-Բրիտանիայի դ. ներկեայացուցիչ,

Շաբեր, Իտալիայի դես. ներկայացուցիչ.

Մանդէլտամ, Ռուսաստանի դեսպ. ներկայացուցիչ.

Նիստը բացւում է ժամի 10-ին

Աչն-Քանտեն.—Կարգում է նախընթաց նիստի բանացի վիճաբանութիւնների արձանագրութիւնը, որը ընդունուում է:

Յանձնաժողովը քննում է ուսական նախաժըռագրի Հ-րդ յօդուածը:

#### XI

» § 1. Հիմնում են նախազական ուստիկանական եւ ժանդարմերիայի մարմիններ: Սրանց կէս մասը կազմում են նահանգի ընակայութեան մահմեղական ներկայացուցիչները, կէս մասը քրիստոնեայ ներկայացուցիչները:

§ 2. Սոյն մարմինների կազմակերպումը եւ նրանց բարձր զեկավարութիւնը յատկացում է տաճկական ծառայութեան մէջ մտնող ներպացի սպաներին:

§ 3. Նահիէում ներմուծում է գիլապահակների պաշտօնը:

Պահակները նշանակում են նահիէի խորհրդների կողմից և և ննթակայ են մուղիրին:

Մանդերսամ.—Տալիս է հետևեալ բացառութիւնները.

» 1895 թւի դեսպանների ծրագրի 18-րդ յօդուածը ասում է. «Ուսափկանուան պաշտօնեաները գումարուում են, առանց կրօնի խարութեաննահիէի բնակչութիւնից համայնական ակումբի խորհրդի կողմից այսպիսիք քանակով, որը բաւարարէր տեղական պահանջներին և վիլայէջի ժանդարմերիայի ծառայութեանը մասնակցելուն։ Միւս կողմից, 21-րդ յօդուածը ասում էր. «Իւրաքանչիւր նահանգում կկազմակերպուի, համաձայն առանձին կանոնադրութեան, նահանգական ժանդարմերիայի մի, մարմին, որի սպանները և զինուորները կըստրութեան կայսրութեան հապատակների բոլոր խաւերից ժանդարմերիայի գումարուում կ վիլայէթում ծառայութեան համար բոլոր ընդունակ բնակիչներից և առանց ցեղի կամ կըօնի խարութեանն նրա կազմի՝ աշ-ը բաղկացած է նահիէի սոստիկանութեան պաշտօնեաններից, որից կէսը մահենդական զործավարներից, կէսը-ոչ—մահենդական համայնքներից։ Միւս երրորդը կազմում են չափուշները և բաշ-չափուշները, որոնք գումարուում են կանոնաւոր զօրքի ամենաընդունակ անձնաւորութիւններից։»

Հայկական Բարենորոգվանների հրովարտակը՝ տրուած 1895 թ. հոկտեմբերի 20-ին, վճռական կերպով յայտարարում է համեմատական սկզբունքը՝ 20-րդ յօդուածը իրօք կարգադրում է, որ «ոստիկանութեան պաշտօնեաները գումարուում են կայսրութեան մահենդական և ոչ-մահենդական ազգաբնակութիւնից՝ համաձայն վիլայէթի բնակչութեան մահենդական և ոչ-մահենդականից քանակից» 22 րդ յօդուածը ասում է. «Ժանդարմերիայի սպանները ենթասպանները և զինուորները գումարուում են կայսրութեան մահենդական և ոչ-մահենդական բնակչութիւնից՝ համաձայն իւրաքանչիւր վիլայէթի մահենդական և ոչ-մահենդական աղդերի թւաքանակից։»

Նախածրագիրը հաւատարիմ մնալով իր հաւասարութեան սկզբունքին, ցանկանում է գործադրել այդ սկզբունքը նաև հասարակական պաշտօնների դասաւորման մէջ. Առա թէ ինչու նա բարուզ է համարում ընդունել այստեղ դեսպանների 1895 թ. ծրագրի 21-րդ յօդուածը, որ արդէն ճանաչուած է ժանդարմերիայի աշ-ը համար։

Ես կանգ չեմ առնի երկրորդ կէտի վրայ, որի սկզբունքը արդէն ընդունել են թ. Դուան հաղորդագրութիւնները. Նոյնպէս աւելորդ եմ գտնուում կանգ առնել երրորդ կէտի վրայ, որ համապատասխան է 1895 թ. 20 հոկտեմբերի հրովարտակի 24-րդ յօդուածին։

Եթէօթեք.՝ Հաստատում է սոստիկանութեան և ժանդարմերիայի մարմինների սահմանուումը հայկական Վիլայէթներում, բայց զնկավարուելով իր յայտնած կշռադատութիւններով, նա պահանջում է, որ մահենդականների և ոչ—մահենդականների ընտրութիւնները կատարուեն համեմատական սկզբունքով և ոչ թէ թւական հաւասարութեան սկզբունքով։

Նա սկատում է 2-րդ կէտի աթիւ, որ թ. Դուանը արդէն հաղորդել է մեծ պետութիւններին «Եւրոպական և տեղական մասնագէտներ» հրամիրելու իր մտադրութեան մասին ժանդարմերիայի համար. Անկասկած, նա կզերտուակի արևելիան վիլայէթներում նշանակել եւբովացները, որովհետև այնտեղ բարեկարգման գործը թւում է տառանձնապէս շտապովի Յամենայն գէպստ օգտաւէտ կինէր, որ գեսապահատները պնդեն թ. Դուան առաջ այդ անհրաժեշտութեան վրայ։

Հեծութերդ հաստատում է վերջապէս, որ գիւղապահակների հիմնարկութիւնը, որի մասին խօսում է 3-րդ կէտը, նախատեսել է նահիէի օրէնքի ծրագիրը:

Պանթիլի եւ Շաբէր.—Միանում են իրենց գերմանական կոլեգի կարծիքներ:

Ֆիզմօրիս եւ Սկն.Քանտէն.—Գտնում են անհրաժեշտ, որ մահմեղականների և ոչ մահմեղականների մէջ վերաբերմամբ նահանգի ժանդարմերիայի և ստիկանութեան հաստատուի թւական հաւասարութեան սկզբունքը:

Պանթիլի.—Առաջարկում է քննել XII-րդ յօդուածը.

» § 1. Նահանդում բնակուող օօրբերը խաղաղ ժամանակ զինուորական ծառայողութիւնները կատարում են իրենց բնակավայրում:

§ 2. Քրդական թեթեւ հծելազօրը (Նախկին համիլիէն) պիտի արձակուի:

Մասդիլտամ.—Յայտնում է, որ պնդելով տեղական զինուորական ծառայութեան վրայ խաղաղ ժամանակ, նախածրագիրը ղեկավարում է այնպիսի կլոպաղատութիւններով, որոնք դուրս են որևէ քաղաքականութիւնից, ելակէտ ունենալով հասարակ մարդասիրութիւնը: Անարդարացի կլինէր պարտաւորել նահանգի օօրբերին կատարել խաղաղ ժամանակ իրենց զինուորական ծառայողութիւնները բնակավայրից դուրս՝ օրինակ, եմենում, նամանաւանդ, որ պատերազմի վէպքում նրանք զնալու են այստեղ, ուր կառավարութիւնը կուղարկի:

Շեօնբէրգ.—Հաստատում է, որ ոռւսական նախածրագրի այդ առաջարկութիւնը մէկն է այն կանոնազրութիւններից, որոնք ուղղակի կերպով ձգտում են մի ինքնավար նահանգի կազմակերպմանը: Ի միջի այլոց, այդպիսի մի նախապայման մենք դառնում ենք բոլոր ինքնավար երկրների հիմնադիր կանոնագրերի մէջ: Այս միակ հիմունքը բաւական է, որպէս զի մենք հրաժարուենք նրան ընդունելուց:

Բացի այդ, նշանակուած լինելով այնպիսի մի մեծ տերըիտորիայի համար, ինչպիսին է Հայաստանը, յիշեալ միջոցը զգալի կերպով արգելում է պաշտպանել երկիրը ընդէմ արտաքին և ներքին թշնամինների, խախտելով նրա ապահովութիւնը, որը անհրաժեշտ է ինչպէս հայերի, նոյնպէս և ուրիշ ազգութիւնների համար: Զօրահրամանատարը, փոխանակ երկրի անդորրութեան համար համապատասխան միջոցներ ձեռք առնելու, կլինէր անգործ և ազատ:

Վերջապէս ընդունել այդպիսի մի պայման՝ դա նշանակում է վասել Սուլթանի իշխանութիւնը՝ որպէս Դիրագոյն Զօրահրամանատարի, ինչպէս պատերազմի, նոյնպէս և խաղաղ ժամանակ. իսկ այդ իշխանութիւնը կազմում է Կայսերական վեհապետութեան հական իրաւունքների մի մասը:

Պանթիլի.—Միանգամայն համաձայն է Շեօնբէրգի սրտայայտած գրութիւնների հետ: Նա աւելացնում է, որ տեղական զինուորական ծառայութեան մասնաւոր գործադրումը վտանգաւոր կլինէր օսմանեան պիտութեան համար, ուր խաղաղ ժամանակ յաճախ տեղի են ունենում ապստամբութիւններ, որոնց ճնշումը տեղական օօրբերով անհնարին կլինէր: Որպէս օրինակ կարելի է մատնացոյց Եմենի ապստամբութիւնների վրայ: Կառա-

վարութիւնը ապստամբուած զբջանում միխանգամայն անդէն կմնար, եթէ իրաւունք չունենար ուրիշ շրջաններից այնտեղ զօրք փոխազրելու

Մանեկիլուամ.—Զի ժխտում Օսմանիան Կայյորութեան զօրքերի տեղափոխութեան այն իրաւունքը, որի շնորհիւ պիտի ճնշուի ամեն մի ապստամբութիւն: Բայց նաև կարծում է, թէ կառավարութեան սեփական շահերի տեսակէտից զինուորական ծառայութիւնը պիտի կատարուի զօրահաւատքի բուն վայրերում: Ա՞րդիօք փորձը չապացուցեց մեզ այն ակնյայտնի զժուարութիւնները, որին պատահում են նմեն ուղարկուած զօրքերը, որոնք այնտեղ չեն կատարել իրենց զինուորական ծառայութիւնը:

Շեօնբերգ.—Նկատում է, որ Օսմանիան Կայյորութիւնը ըստ հնարաւորութեան արդէն աչքի առաջ ունի այդ դժուարութիւնը, բայց փոխադրութեան անագին ծախսելը ստիպում էն նրան խուսափել այն բանից, որ զօրքերը միմեանցից չափազանց հեռու դասաւորուած լինեն: Այնուամենայնիւ Շեօնբերգը հրաժարում է սկզբունքով պարտաւորացնել Կայսերական Կառավարութիւնը այդ հարցում:

Սին-Քանսին:—Կարծում է, թէ տեղական զօրահաւատքի սկզբունքը, եթէ միմեայն նաև ընդունուէր, կնուուղեցնէր այն ահաբեկութիւնները, որ ներշնչում է ժողովրդին զինուորական ծառայութիւնը: Վերջինից պատուելու համար, նաև դիմում է գաղթին:

Շեօնբերգ.—Դանում է, որ յս նձնաժողովը չգէտք է զբաղաւի զինուորական ծառայութիւնից խուսափողների համար զիւրութիւններ ստեղծելու հարցով:

Սին-Քանտին:—Պատասխանում է, որ յանձնաժողովը օրինական ճանապարհով կարող է վերջ տալ այդպիսի վասակար դրութեան, որ անպատճ ոչ թէ միայն կառավարութեան շահերին, այլ և օտարերկրացիների ձեռնարկութիւններին:

Մանեկիլուամ.—Յիշեցնում է, որ 1895 թ. հոկտեմբեր 20 հրովարտակի 28-րդ յօդուածը համիլդական հեծելազօրի մասին տնօրինում է հետևեալը: Զինակրութիւնը և համազգեստը համիլդական հեծելազօրի համար զինավարժութեան ժամանակամիջոցից դուրս արգելում է:

» Եթեալ ժամանակամիջոցից դուրս համիլդական հեծելազօրը ենթարկում է սովորական դատավարութեան:

«Մրանց ծառայութեան մանրամասնութիւնների առթիւ առանց յետաձկման մշակուելու է մի զինուորական կանոնադրութիւն:»

Թւում է աւելորդ մի անգամ ևս պնդելու ինչպէս այս կարգադրութիւնների լիակատար ապարդիւնութեան նոյնական և այն չարեքների վրայ, որ շարունակում են յիշալ օրուանից համիլդականները:

Շեօնբերգ.—Միանում է Մանդէլտամին համիլդականների արձակման հարցում: Նա յայտնում է, որ այդ միջոցը չէր թուլացնի Կայսրութեան զինուորական ոյժը, որովհետև կառավարութիւնը միշտ կարող է ենթարկել ըրդերին ընդհանուր օրէնքին:

Վիճաբանութիւնները վերսկսում են XIII-րդ յօդուածով, որ ասում է հետևեալը:

» § 1. Սահանգի վարչութեան եւ դատարանների պաշտօնեանները հատակար թուվ ընտրում են մահմելականներից եւ ըրմանաներից:

» § 2. Սահանգների ժամանակի վարչութիւնների ու կազաների (դայմա-

դամների) կառավարի ների պաշտօնների գասաւորման ժամանակ պէտք է աչքի առաջ ունենալով ինչպէս զանազան էտնիքական խմբերի քանակը, նոյնպէս եւ նրանց տնտեսական շահերի նշանակութիւնը:

Մանեկիլասմ.—Յիշեցնում է, որ 1895 թ. 20 հոկտեմբերի հրովարտակի ծ-րդ յօդուածը ասում է հետևեալը.

«Ղարչական պաշտօնները պիտի տալ տաճկահպատակ մահմեղական-ներին և ոչ-մահմեղականներին համապատասխան մահմեղական և ոչ-մահմեղական բնակչութեան քանաքի-էրզըումի, վասի, Բիթլիսի, Դիարբէքիրի, Մամուրէթ-ու-Ազիզի և Սիվազի վիայէթներում։»

Ռատիկանութեան և ժանդարմերիայի վարչութեան ոչ-մահմեղական պաշտօննեաների թիւը որոշում է վերահսկողութեան մշտական յանձնաժողովը։

Լիովին հիմունելով այս կանոնադրութիւնների վրայ, նախածրագիրը առ ընդմիշտ առաջարկում է հաւասարութեան սկզբունքը մահմեղականների և ոչ-մահմեղականների համար։

Եხոնբերգ.—Ընդհակառակի, յենուում է համեմատական սկզբունքի վրայ, Պանթիլի և Շաբէր.—Միանում են իրենց գերմանական կօլլէզի կարծիքին։

Սին-Քանտէն.—Հարցնում, է թէ ինչու Պանթիլին նահանգական ժողովի ընտրութեան հարցում ընդունեց հաւասարութեան սկզբունքը, իսկ նացած բոլոր կէտերում հրաժարուեց այդ սկզբունքից։ Պանթիլին պատասխանումէ, որ այս գէպքում նա գերադասում է յենուել նախածրագրի առաջին յօդուածի երրորդ կէտի վրայ, որ ասում է, «Ղարչական բաժանութների սահմանումը կարարուելու է այնպէս, որ նրանց մէջ եղած միատեսակ ազգերը խմբուած լինեն ըստ հնարաւորութեան ի մի։» Սոյն միատեսակ ազգերը նոյնպէս պիտի հնարաւորութիւն ունենան ընտրելու իրենց միջից պաշտօնեաների։

Մանեկիլասմ.—Պարզում է XIII-րդ յօդուածի երկրորդ կէտը, «Ակնյայտնի է, ասում է նա, որ ընդունելով մի անգամ պաշտօնների կիսովի բաժանումը ըրիստոննեանների և մահմեղականների մէջ, նպատակայարմար կլինէր նշանակիլ վարչական զլուխ մութասարի ֆներին և զայմադամներին։ Սրանք պիտի պատկանեն կրօնական, իսկ ըստ հնարաւորութեան և ազգային մեծամասնութիւն կազմող ընակչութեանը, յատկացնելով մուավինի պաշտօնը փոքրամասնութեան ներկայացչին։ Այլպէս է ի միջի այլոց 1895 թ. հոկտեմբեր 20-ի հրովարտակի և Ա-րդ յօդուածների իմաստը, հրովարտակի հիման վրայ մենք ևս ենթազրում ենք՝ որովհետև մահմեղականները վիւլայէթներում և սանջակներում կազմում են մեծամասնութիւն, ուստի վալիները և մութասարի ֆները միշտ մահմեղական պիտի լինեն, իսկ մուավինները ըրիստոննեայ։»

Եხոնբերգ.—Նոյնպէս յայտնում է այն կարծիքը, թէ զլսաւոր պաշտօնը պիտի պատկանի բնակչութեան մեծամասնութեանը, իսկ մուավինը փոքրամասնութեանը։

Պանթիլի.—Նմանապէս միանում է այս մտքին՝ մատնանշելով, որ ուռւական նախածրագիրը ունի մի թերութիւն, նա մոռացել է որոշակի կերպով թւել փոքրամասնութեան իրաւունքները, որ պատկանում են մուավինին։

Եხոնբերգ.—Գտնում է վոտնդաւոր 2-րդ կէտի վերջում մտցրած հետևեալ խօսքերը, «տնտեսական շահերի նշանակութիւնը»։ Թւական կեր-

պով անհնարին է գնահատել այդ նշանակութիւնը, իսկ ամեն մի այլ գնահատման միջոց՝ լինելով կամայական, կնպաստէր միմիայն բողոքների և խռովութիւնների ծագմանը:

Մանդկլտամ.—XII-րդ յօդուածի միենոյն խօսքերով պարզում է, որ տնտեսական շահերի նշանակութիւնը ուրիշ ոչ այլ ինչ է, բայց եթէ մի օժանդակիչ միջոց երկու թւականապէս հաւասար ազգերին միմիանցից զանգանելու:

Պանթիլիլ.—Երկիւզ է յայտնում, մի գուցէ տնտեսական գերակշռութեան այդ միտքը միշտ վասակար լինի մահմեղական բնակչութեան համար, որովհետեւ իրօք երկրի տէրը քուրդ բէկերն են:

Մանդկլտամ.—Պատախանում է, որ քրդերը իշխում են նողերին բռնի գրաւմամբ, ուրեմն պարտաւոր են վերադարձնելու: Պէտք է պաշտպանել իսկական սեփականատէրերի պատեսական շահերը և ոչ թէ յափշտակիչների: Պանֆիլիի արած նկատումը ի միջի այլոց արդարացի կերպով ընդգծում է այն միտքը, որ ամենից առաջ անհրաժեշտ է կարգաւորել հողային հարցը:

Յանձնաժողովը անցնում է նախածրագրի ՏՎ-րդ յօդուածի քննութեանը:

«Միմիայն նստակեաց ընակցութիւնը ունի իրաւունք ընտրելու եւ ընտրութելու:

Մանդկլտամ.—Տալիս է հետեւալ բացատրութիւնը.

Դեսպանների ծրագրի 24-րդ յօդուածի 8-րդ կէտը ասում էր.

«Ընտրելու և ընտրութելու իրաւունքը նահիէների խորհրդում չի պատկանում այն անձնաւորութիւններին, որոնք չեն վարում նստակեաց կեանք, կամ որոնք որոշ և մշտական կերպով հստատուած չեն մի որևէ նահիէի շրջանում:»

1895 թ. 20 հոկտեմբերի հրովարտակը չընդունեց դեսպանների այդ առաջարկութիւնը: Նրա 27-րդ յօդուածը պարտևնակում է իր մէջ մի ինչ որ խոստում քրդերի պէտականկողութիւնը անուամբ: Այս թէ ինչ է ասում այդ խոստումը.

Պէտք է վագորօք որոշել քրդերի չուի տեղը, որպէսզի խուսափել աշխեքների կողմից սպասելիք վասներից: Մի սպայ, որի տրամադրութեան տակ զրուած կլինի բաւականի զօրք և ժանդարմոներ, ուղեկցելու է չուի ժամանակ իւրաքանչիւր ցեղին: Նրան միանալու է մի սոսիկանական պաշտօնեայ:

Քրդերը ենթարկուում են իրենց միջից ընտրած մի իշխանութեան, որպէս զի մինչև ձմեռային վերադարձը նրանց խաղաղ յարաբերութիւնները և դրութիւնը ապահով մնայ:

Ճանապարհների և զինակըութեան առթիւ գոյութիւն ունեցող օրէնքները գործադրուում են նաև քրդերի վերաբերմամբ:

Թափառական և շրջիկ ցեղերը պիտի հստատուեն կառավարութեան նշանակած հողերի վրայ:

Այդ խոստումները չիրագործուեցին, իսկ Շթափառական, շրջիկ ցեղերը հստարաբութիւն չունեցան օգտուելու ակտիվ և պասսիվ ընտրողական իրաւունքից:

Շեօնիքրդ.—Թայտում է, որ գործնական կեանքի կշռադատութիւնները պահանջում են զրկել թափառականներին ընտրելու և ընտրուելու իրաւունքը:

Պանթիլի. —Գոտում է, որ յանձնաժողովը այդ կէտում համամիտ է:

Նա յետոյ կարգում է նախածրագրի XV-րդ յօդուածը.

» § 1. Նահանգուած հրատարակուող օրենքները, հրովարտակները, հրամանները, շրջաբերականները եւ պաշտօնական կարծիքները խմբագրում են նահանգի երեք զիսաւոր լիզուններով՝ թուրք, նայ եւ բուրդ:

§ 2. Խոնդիքները, պետիցեանները եւ բոլոր գրութիւնները, որ ներկայացւում են վարչական կամ դատավարական իշխանութեանը, գրում են նա մածայն ինդրաստոփ ցանկութեան, մի որեւ է լիզուով երեխից:

§ 3. Վէճերը դատարանում տեղի են ունենաւ համաձայն կողմերի ցանկութեան, նրանց սեփական լիզուով:

§ 4. Դատարանների վճիռները արձանագրում են տաճկերէն թարգմանութեամբ կողմերի լիզուով:»

Մանեկլուսամ. —Տալիս է հետեւեալ բացատրութիւնները.

1895 թ. Դեսպանների ծրագրի 40-րդ յօդուածը պարունակում էր իր մէջ մի կարգադրութիւն վերաբերմար հայ լիզուով գործածման:

«Հաշտարար դատարանների և զանազան դատավարական ատեանների վճիռները արձանագրում են տաճկերէն լիզուով։ Տաճկական բնագիրը համաձայն տեղի և կողմերի, կունենայ իր թարգմանութիւնը հայերէն լիզուով։ Դուռը այդ կէտը չաւելացրեց իր հրովարտակին։ Մինչ այդ, նա մասնակցեց 1880 թ. Եւրոպական Յանձնաժողովի ծրագրի 22-րդ յօդուածի մշակմանը, որը արտայատուեց հետեւեալու։

«Դատախազ և կառավարիչներ ամենից առաջ ընտրւում են նորքա, որ գիտեն տեղական լիզուններ, իսկ նախաբաննիչ (Moustantik) դատարաններ կընտրուեն միմիայն նրանք, որ գիտեն այդ լիզունները։

Խոսդիքներ, պետիցեաններ և բոլոր այն գրութիւնները, որ պիտի ներակայացնել վարչական և դատավարական իշխանութիւններին, գրում են՝ ըստ ինդրաստուել ցանկութեան, որևէ գիտասոր լիզուով։

Համաձայն կողմերի ցանկութեան, վիճաբանութիւնները դատարանի մէջ տեղի են ունենալու կողմերի լիզուով։

Վիլայէթում հրատարակուող օրէնքները, հրովարտակները, շրջաբերականները և պաշտօնական յայտարարութիւնները պիտի արձանագրել պաշտօնական տաճկական և տեղական գլխաւոր լիզուններով։

Վերջին ժամանակներու Դուռը ընդունեց տեղական լիզուի գործածումը արարական վիլայէթների համար։ Ապրիլի 6-ին 1329—1913 թ. ներքին գործոց նախարարի շրջաբերականը՝ ուղղուած Բէյրութի, Սուրբայի, Հալեպի, Բաղդատի Մօսուլի վիլայէթներին և Երուսաղեմի մութասարիֆաթիւն, ասում է հետեւեալը։

«Աչքի առաջ ունենալով վիլայէթների վարչութեան մասին հրատարակուած օրէնքը, Նախարարութիւնը ձեռնարկեց մի շարք ուսումնասիրութիւններ և արդինքը ներկայացրեց Նախարարների Խորհրդին, Վերջինին վճիռը, տրուած լինելով Նորին Մեծութեան հայեցողութեանը, հաստատուեց Կայսերական իրադէով։ Համաձայն այդ վճիռի, այն տեղերում, ուր մեծամասութիւնը կառում է արաբերէն, թոյլատրում է արարական լիզուով խնդիրներ ընդունել և

շարունակել ինչպէս անցեալում, յայտաբարի արարերէն լեզուով վարչութեան անուանը հաստարակած հաջորդագրութիւնները: Այն տեղերում, ուր հարցաւ քննութիւնները և վիճաբանութիւնները կատարում են արամերէն լեզուով և ուր գատարանը վճիռ է կայացնում նոյն լեզուով, յիշեալ ձևականութիւնները մուռմ են իրենց ոյժի մէջ ինչպէս և անցեալում: Այն տեղերում, ուր արաբերէնը չէր գործածւում, բայց կարիք կար, այժմեանից նա թոյլատրում է: Տարրական և երկրորդական ուսումնարաններում, սահնջակի 5 ամեայ ոչ-զիշերօթիկ գիմնազիաններում (idem), գտնարուեստի, արհնասի և հոգագործութեան ուսումնարաններում, որոնք համաձայն վիլայէթի ընդհանուր վարչութեան օրէնքի մտնում են մեր սեղական ծառայութեան կարգի մէջ ուսումը պիտի աւանդներ արաբերէն լեզուով: Տաճկական լեզուի աւանդումը, որպէս պետական լեզուի, պարտադիր է զասատութեան բալոր աստիճաններում: Նոյն ուսումնարաններում որոշ առարկաներ, ինչպէս պատմութիւնը և աշխարհագրութիւնը, պէտք է անցնել տաճկերէն լեզուով, որպէս զի աշակերտները տաճկական իւրացնեն լիակատար կերպով—մի բան, որ այնքան անհրաժեշտ է աշակերտների յաջորդութեան համար իրենց սպազայ պաշտօններում: Ինչ վերաբերում է վիլայէթների ոչ-զիշերօթիկ գիմնազիաններին և սուլթանական ուսումնարաններին, որոնց վարչութիւնը համարուում է պետական ծառայութեան մէջ, այդտեղ զասատութիւնը պիտի կատարուի տաճկերէն լեզուով: Սակայն, ինկատի ունենալով, որ այս ուսումնարաններում ընդունուող աշակերտները պէտք է կատարելագործուեն և իրենց մայրենի լեզուում, որը նրանք մինչ այդ չեն իւրացնել բաւականին չափով, որոշ առարկաներ, ինչպէս արաբական գրականութիւնը, իսլամի պատմութիւնը և ուրիշ անհրաժեշտ համարուող առարկաներ պէտք է աւանդի արաբերէն լեզուով: Որովհետու տարրական և երկրորդական ուսումնարաններ աւարտող աշակերտները ուսումնասիրում են տաճկական և արաբական լեզուները, այդ պատճառով յիշեալ ուսումնարանների զասաւանդութեան ծրագիրը պիտի կազմել այնպէս, որ երկու լեզուները աւանդուեն լիակատար ձևով:

Այս հաջորդագրութիւնները յայտնուած են արգարադատութեան և ժողովրդական լուսաւորութեան նախարարութիւններին:

Մանդիլուամ.—Կարծում է, թէ արդարացի կլինէր տալ հայերին և քրդերին նոյն արտօնութիւնները և թիթեալութիւնները, որ յիշեալ գրութեամբ պատկանում է արաբներին:

Շեօնքերկ.—Միանում է այս առաջարկութեանը՝ առանց հակածառութեան: Այդ առթի յայտարարուած սկզբունքը, որ վերաբերում է համահաւասար կերպով եւ եք գիսաւոր ազգութիւններին, ամենալաւն է և կարող է զարկ տալ հայկական բարենորոգումների յառաջննթացմանը:

Մենք-Քանակնեն.—Գտնում է, որ կայսերական կառավարութիւնը ինքը շահագրգոռուած է համբերատար լինել այն բանում, որ պետութեան մէջ ընդունուի զանազան լեզուների գործածումը:

Պանթիլի.—Բաւականութեամբ հաստատում է, որ 1օ-րդ յօդուածի 4-րդ կէտը, պահանջիլով գատարանների վճիռների արձանագրումը տաճկերէն լեզուով, վերջինին ընդունում է որպէս պետական լեզու:

Յանձնաժողովը քննում է նախարարի ԽVI-րդ յօդուածը.

» § 1. Իրավանմչիր ազգ, որ ընակում է նահանգում, իրատուր ու ի իմաներու և կատավարելու բանակարգութեան մասին:

§ 2. Սոյն ուսումնարամների կարիքներին բաւարարութիւն տալու համար իւրաքանչիւր ազգ կարող է սահմանել իր հաևազգիների մէջ ստանձին սուրբ:

§ 3. Դասասանդրութիւնը այդ ուսումնարամներում կատարուելու է մայրենի լեզուով:

§ 4. Թիշեալ ուսումնարամների բարձրագոյն հսկումը պատկանում է ընդհանուր նախանդագիտութիւն որը ղեկավարուելու է այս նարցում նախանդի սահմանադրի կանոնագրի սուածարկած հիմունքներով:

§ 5. Տաճկերէնի աւանդումը մասնաւոր ուսումնարամներում՝ պարտադիր չէ:

Մանկէլլուան.—Տալիս է հետեւալ պարզաբանութիւնները.

«Ուշադրութեան արժանի է այն հանդամանը, որ նախկին տաճկական ոէժմիմի ժամանակ կառավարութեան հսկումը ոչ-մահմեղական համայնքների ուսումնարանների վերաբերմամբ բաւականի թոյլ էր Նոյնիսկ պատրիարքարանները չէին ճանաչում հսկման սկզբունքը, Սակայն գործնական կեանքում նրանք ընդունում էին այդ սկզբունքը, որովհետեւ ոսվորաբար վերահսկիչները ի չարը գործ չէին դնում իրենց իրաւունքը: Միւս կողմից կառավարութիւնը պատնէշ չէր դնում այն բազմութիւն ուսումնարաններին, որ բացում էին առանց նրա հաստատմանը իրերի դրութիւնը փոխուեց սահմանադրութեան հետ միասին: 1910 թիւ յունիսի 19-ի կանոնադիրը ենթարկում է բոլոր ապահոված մասնաւոր ուսումնարանները լուսաւորութեան և նախարարի հսկողութեանը: Սկսած այն օրուանից կառավարութեան և պատրիարքարանի մէջ առաջ եկան մի շարք վէճեր, որ մնում են գաղտնի գործեան մէջ: Այսպէս, օրինակ, Հայոց Պատրիարքը ընդունում է, որ կառավարութեան վերահսկիչները այցելեն ին հայ ուսումնարանները, բայց պահանջում է, որ նրանք երկու օր առաջ նախազգուշացնեն այդ մասին պատրիարքարանին կամ նրա տեղական ներկայացուցիչներին և պահանջնեն իրենց յարաբերութիւնները ոչ թէ ուղղակի տեղական վարչութեան հետ, այլ միշտ պատրիարքարանի միջոցով:

Կառավարութիւնը միւս կողմից գործ է դնում ճնշումներ. նա մերժում է տալ այն գումարները, որ նախկին 1869 թ. օրէնքով որոշուած են վիլայէթի զանազան համայնքների ուսումնարանների համար և յայտարարում է, որ համարում է անոյժ այդ ուսումնարանների կողմից տրուած վկայականները, որովհետեւ ուսումնարանները բացուած են առանց նրա հաստատման: Բացի այդ, այդպիսի ուսումնարաններ աւարտողներին նա ղինուորական ծառայութեան է կոչում:

1880 թ. օրէնքի ծրագիրը յատկացնում է տարրական և երկրորդական ուսումնարանների կառավարումը համապատասխան համայնքներին (յօդ. 268), ենթարկելով նրանց վիլայէթի ժողովրդական լուսաւորութեան տեսչի բարձր հսկողութեանը, (յօդ. 264): Տեսուչը կատարում է իր պարագանութիւնները համայնքների ընտրած ներկայացուցիչների միջոցով (յօդ. 272):

Նախածագիրը, ամենուրեք ղեկավարուելով 1880 թ. ծրագրով, աշխատում է ապահովել իւրաքանչիւր ազգութեան համար, որ պարում է Հայուկական նահանգում, լիակատար իրաւունք—հիմնել ու կառավարել իր ծախսով բոլոր կարգի ազգային վարժարաններ: Միւս կողմից նա ձգտում է միացնել յիշեալ իրաւունքը այն հսկողութեան իրաւունքի հետ, որ կառա

վարութիւնը կիրագործի ընդհանուր նահանգապետի միջոցով; Ոչ ոք չի ժխտի, որ վեց վլիսյէթները զգում են ժողովրդական լուսաւորութեան ամենամեծ կարիք; Կառավարութեան ձեռնարկած միջոցները այդ բանի համար բաւական չեն, իսկ իւրաքանչիւր ազգութեան մասնաւոր նախաճենութիւնը պիտի խրախուսել ամեն մի նարաւոր միջոցով:

Շեօնքերգ.—Ոչ մի ընդդիմախօսութիւն չունի XVII-րդ յօդուածի կանոն նաղըութեան գէմ Սակայն, ընդդիմ ինեւով մի Հայկական նահանգի կազմակերպմանը, նա չի կորոր ընդունել 4-րդ կէտի հետևեալ խօսքերը. «Նահանգի սահմանադրի կանոնագրի առաջարկած հիմունքներով»:

Պանթիլի.՝Միանում է այդ յայտարարութեանը: Նա ի միջի այլոց գոտնում է, որ 4-րդ կէտը, սահմանափակուելով ընդհանուր նահանգապետի ուսումնարանային բարձր հսկողութեան իրաւունքով, չափազանց լայն է: Աւստրիայում, ուր որոշ շրջաններում խմբուած կան զանազան ազգութիւններ, Statthalter-ը ունի օգնական պաշտօնեաններ - ուսումնարանների վերահսկիչներ: Ռուսական նախածրագրի ընդունման դէպում, նոյնպիսի օգնականներ պիտի տալ ընդգանուը նահանգապետին: Հակառակ դէպում նոյնպիսի վերահսկիչ-օգնականներ պիտի հաստատել վարինների համար: Այդ վերահսկիչ-օգնականները որոշուում են հայերից, տաճիկներից և քրդերից: Իւրաքանչիւր ազգութիւն կունենայ իր համազգիններից ընտրած ուսումնարանային վերահսկիչը:

Մանեկլյուս.՝Հիմք չի գտնում զրկելու ընդհանուր նահանգապետին ուսումնարանների անմիջական վերահսկողութեան իրաւունքից:

Պանթիլի.՝Պատասխանում է, որ իր առաջարկած օգնական-վերահսկիչները կենթարկուեն ընդհանուր նահանգապետին, եթէ վերջինս նշանակուի, իսկ հակառակ գէպում վալիին:

Մեն-Քանտեն.՝Գտնում է Պանթիլիի առաջարկութիւնը անտեղի: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ընդհանուր նահանգապետը չի կարող անձամբ իրագործել ուսումնարանների վերահսկողութեան գործը, ինչպէս և իրեն պատկանող բազմաքանակ ուրիշ իրաւունքները: Այդ իրաւունքները նա պիտի յանձնի առանձին մասնագէտներին:

Պանթիլի.՝Տեղի է համարում պնդել յիշեալ առանձնացման վրայ, որովհետու վիլայէթի վարչութիւնը յաճախ մոռացութեան է մատնում նրան:

Պանթիլի.՝Առաջարկում է քննադատաել XVII-րդ յօդուածը.

» Մի առանձին մասնաժողով նախագահութեամբ ընկանուր նահանգապետի որոշելու է այն պայմանները, որով հայերը, որոնց հողերը յափշտակուած են, յիտ են ստանալու կամ հողերս, կամ նրանց փոխանակը, կամ համապ ստասիան արժէքը:

Մանեկլյուս.՝Զի կարծում, թէ այս յօդուածը տեղի տայ երկար պարզաբանութիւնների.

» Հայերի կրած ամենամեծ դժբախտութիւններից մէկը, առում է նա, անկասկած նրանց հողերի մշտական յափշտակութեան է քրդերի ձեռքով: Առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, ես պիտի յիշեցնեմ ձեզ, որ 1895 թ. դեսպանների ծրագրի 26-րդ յօդուածը առաջարկեց կազմակերպել առանձին մասնաժողով, բաղկացած նախագահից և չորս անդամներից, որոնցից երկուուր լինեն քրիստոնեայ, իսկ երկուը մահմեղական: Այդ մասնաժողովը պիտի քննէր սեփականութեան ցուցակագրերը ու իրաւունքը և վերջ տար իր նկա-

տած ապօրինութիւններին: 1895 թ. հոկտեմբեր 20-ի հրովարտակը (յօդ 29) ընդունեց այդ սկզբունքը՝ աւելացնելով, որ մասնաժողովները գործելու են վիլայէթի և սանջակների գլխաւոր քաղաքներում, իսկ նրանց վճիռները պիտի ենթարկուեն վարչութեան խորհրդներին: Ինչպէս մենք ըուրու գիտենք, այդ յօդուածը մնաց առանց որևէ հետեւանքի: Հայկական կոտորածների և գաղթի օրից սկսած հողային բռնագրաւութեները ոչ թէ միայն չգաղաքին, այլ ընդհականական մահմելական տարրը մինչ օրս էլ շարունակում է իր յափշտակութիւնները: Օսմանեան կայսրութիւնը մի քանի անգամ, նոյնիսկ վերջին օրերս յայտարարեց, որ նա արդարագաւառութիւն կահամանի հայերի իրաւացի բողոքների համար: Իսկ նախածրագիրը կողմնակից է այն մոտքին, որ մի առանձին մասնաժողով նախագահութեամբ ընդհանուր նահանգապետի որոշի, թէ ինչ պայմաններով հայերը կարող են յետ ստանալ իրենց հողերը, կամ նրանց համապատասխան արժեքը: Սակայն պարզ է, որ փոխանակումը կասամանափակուի մի քանի բացառիկ դէպքերով և այս պատճառով պէտք է ձգտել յափշտակուած հողերի վերադարձմանը:

Շեօնքերը.—Հարցնում է, միթէ դոյցութիւն ունեցող օրէնստութեան համապատասխան կանոնների տեսակէտից սուսական նախածրագիրի XVII-րդ յօդուածը չպիտի համարել աւելորդ: Պէտք է նկատել, որ 1331-ի բարիուլէվիլ Ա-ի ժամանակաւոր օրէնքը (5 փետրվ. 1328) անշարժ սեփականութեան ցուցակագրման և հողերի սահմանների որոշման վերաբերմամբ „կազմում է մասնաժողովներ, որոնք, ցուցակագրելով անշարժ կալուածները, լիազօր են ստուգելու նրանց փաստաթղթերի օրինական վաւերացումը կամ արդարացի իշխումը, որպէսզի այն ձևով վերջ տրուի անշարժ կալուածների առթիւ ծագած է իշխումն՝ ինչպէս միջնորդ դատարանի, նոյնպէս և արքունական դատարանի միջոցով” (Յօդուածներ 21, 22, 23, 26): Այդ ցուցակագրող մասնաժողովները բնականորէն կը բաղուն Հայաստանում վիճելի հողերի հարցով: Սկզ-Բանտէն:—Զի ժխտում, որ ցուցակագրող մասնաժողովները մեծ ծառայողութիւն կմատուցաննեն խաղաղ շրջաններին և ընթացիկ դատավարութեան գործին: Սակայն, նա չի կարծում, թէ նրանք բաւարար կլինեն վճռելու հողային հարցը Հայաստանում, ուր նա գտնում է վերին աստիճանի գծուար և բարե դրութեան մէջ: Հայերից խլած և քրդերից յետ պահանջուող հողերը կազմում են մի շատ մեծ տարածութիւն: Զինուորական ոյժի գործադրումը յաճախ կարևոր է, որպէս զի հսարաւոր լինի յետ խլել յափշտականութեան մէջ, իսկ յետոյ հողերի ապօրինի տիրապետողներին, որովհետեւ նրանց տհաճութիւնը ցանկալի է որևէ կերպով թուլացնել այն ժամանակ, եթե նրանցից յետ կինրադարձուեն գրաւած հողերը: Բարձր Դուռը գիտակցեց այդ տեղական պահանջները և մի քանի անգամ անցեալ աշնան ընթացքում խոստացաւ ուղարկել առանձին մասնաժողովներ, կազմուած բարձր պաշտօնեաներից, որոնք պէտք է քննէին հողային հարցը կանոնագիրքը զինուորական իշխանութեան հետ միավին: Ցուցակագրման յանձնաժողովներով, նայիրներով, երկրաչափերով և անդաշափերով բաւականին անշուք են, որ կարուղանան կատարել նմանօրինակ մի պարտականութիւն:

Շեօնքերգ.—Պատասխանում է, որ նրա կարծիքով ցուցակաշրման մաս-նաժողովների աշխատանքը կատարուելու է ընդհանուր վերատեսուչների հըսկողութեան տակ:

Ինչ վերաբերում է ֆլամենկի հատուցմանը, զա լոկ իրաւագրանական մի հարց է: Օսմանեան կառավարութիւնը պարտաւոր չէ հոդային կամ դրամական հատուցումն տալ հողազուրկ հայերին՝ բացառութեամբ այն առան ձին բնոյթ կրող դէպեհի, եթի նրա անձնական պատասխանատեսութիւնը պարզորէն կհաստատուի Ընդհանուր վերատեսուչները արդարութեան հարցի դատաւորներ են և այդ պատճառով կարող են քննութեան առնել, թէ ինչպիսի միջոցներով և ինչպիսի պայմաններում Կայսերական կառավարութիւնը կարող է (իր իրաւական պարտականութիւններից գուրս և զեկավարուելով ժողովրդի անդորրութեան շահերով) օգնութեան գալ հողազուրկ հայերին կամ դրամով, կամ կառավարութեան սեփական հոգերով:

Մանդիլյաման.—Պնդում է առանձին կարգադրութիւնների անհրաժեշտութեան վրայ: Եթէ ցանկալի է յաղթել այն արտակարգ գուռարութիւնները, որ նկրայացնում է հողային հարցը Հայաստանում, պէտք է զիմել մատնանշած ձևին Նոր օրէնքները առաջարկում են վերին աստիճանի խոհեմ միջոցներ սեփականութիւնների մատենագրի ստուգման և ուղղման համար, բայց անհրաժեշտ է սահմանել մի մարմին, որ ընդունակ լինէր նրանց իրագործելու:

Շեօնքերգ.—Պնդում է, որ ցուցակագրման մասնաժողովները համապատասխանում են այդ պահանջին:

Մանդիլյաման.—Գտնում է նրանց անբաւարար նա առաջարկում է հիմնել մի առանձին մարմին, որ հնթարկուէր ընդհանուր նահանգապետի անմիջական իշխանութեանը և լիազօր լինէր լայն իրաւունքով և ամենաանաչառ կերպով կանոնաւորէր հոդային վէճերը՝ զեկավարուելով արդարութեան և նպատակայարմարութեան կշռագատութիւններով: Որոշ դէպեքերում հմուտ քաղաքականութիւնը կարող է համոզել յափշտակիչ քրդին հատուցել իր հասցրած վնասները, իսկ դրա փոխարէն ստանալ համապատասխան վարձատութիւն:

Շեօնքերգ.—Կարծում է, թէ ցուցակագրման յանձնաժողովները կղարդանան շնորհի հանգամանքների, իսկ տեղական պահանջներին բաւարարելու համար նրանք կունեան այնպիսի ընդարձակ իրաւունքներ, որոնք պատկանում են յանձնաժողովներին:

Պանթիլի.—Նկատում է, որ ոռւսական նախածրապրի առաջարկած յանձնաժողովները գուռարութեամբ կիրագործի իր պարտականութիւնները Համաձայն գոյութիւն ունեցող օրէնսդրութեան, այդ յանձնաժողովը կրամանուի տունում վեց ցուցակագրութեան մասնաժողովների՝ իւրաքանչիւր վիլայէքթում մի մասնաժողով:

Մանդիլյաման.—Պատասխանում է, որ ընդհանուր նահանգապետի նախագահութեամբ կազմուած յանձնաժողովը կարող է ունենալ իր տրամադրութեան տակ այնպան ենթայանձնաժողովներ, ինչքան որ օգտակած է զըստնում: Նա կղեկավարի և կղանոնաւորի նրանց պարապմունքները:

Պանթիլի.—Գտնում է, որ հոդային հարցի կանոնաւորումը առաջին տեղն է ըստնելու ընդհանուր վերատեսուչների պարապմունքների մէջ, որոնցից կախում են ուսկնալու հայկական վելայէքթնէրը:

Սեն-Քանտեն.—Թէկ վստամ է զեպի այդ բարձր պաշտօնեաները, բայց գտնում է նրանց իրաւունքները այնքան ընդարձակ և բազմազան, որ անօգուտ չէր լինի հրաւիրել նրանց առանձին ուշադրութիւնը այս կամ այն հանգամանքի վրայ ։ Նմանապէս գեսպանատները կարող էին առաջարկել Դումը շտապեցնել հայկական վիլայէթների հողային հարցի լուծումը՝ Շեօնքերով։ —Այս վերջին կէտում համամիտ է իր Փռանսիական կօշէդի հետ։

Պանֆիլիի. —Կարգում է XVIII-րդ յօդուածը։

Զեսականօրէն հաստատում է իրաւունքների եւ արտօնութիւնների անձեռնմխելիութիւնը, որոնք ապստոված են 1863 թ. Սահմանադրութեամբ (Sahmanatrouitoum) եւ Սուլթանի կողմից շնորհուած ըերատներով։

Շեօնքերով. —Ոչ մի արգելք չի գտնում նրանում, որ Բ. Դուռը մի աւելորդ անգամ ճանաչի այն կրօնագործութիւնը, որով զեկավարում է հայ ժողովուրդը և նրա կրօնական համայնքը։

Մանկելյուամ. —Պարզում է, որ այս յօդուածը բխում է 1895 թ. ապրիլ ամսի Բ. Դուն ներկայացրած յիշատակազրի ԽI-րդ յօդուածից։ Այդ յիշատակադիրը ներկայացրին Ֆուանսիայի, Մեծն-Բրիտանիայի, Ռուսաստանի դեսպանները և Բարձր Դուռը, առում է այդ դօկումենտը, կտայ իշխանութեամբ մանրամասն հասնանգներ, որով հայ հոգևորականութեան և համայնքի համար 1863 թ. սահմանադրութեամբ որոշուած իրաւունքը և արտօնութիւնները անխախտ կիսան։

Ցանձնաժողովը բննուում է նախածրագրի XIX-րդ յօդուածը։

«Արգելում է ընակիցնել նախանձի տերը տորեայի վրայ մունաջիրներին։»

Մանկելյուամ. —Նկատում է, որ մունաջիրները, որոնց մէջ վրէժինդրութեան զգացմունքը առաջ է զալիս կրօնական փանառիզմից, կկազմեն խռովագրար տարը մի նահանգում, ուր բնակչութիւնը խառն է և ուր առանց այն էլ մահմեղական և ոչ —մահմեղական ժողովուրդը վատ են տրամադրուած միմեանց դէմ։

Պանֆիլիի. —Գտնում է, որ յիշեալ արգելքը կը ճատում է Սուլթանի իրաւունքը և հակասում Պայսերական վեհապետութեանը։

Մանկելյուամ. —Պատասխանում է, որ այդպիսի հակածառութիւն կարելի է արտայայտել ընդդէմ բոլոր այն բարենորոգուների, որ Դեսպանատաները առաջարկում են Բ. Դուն։

Սեն-Քանտեն. —Չի կարողանում ըմբանել, թէ ինչու մունաջիրներին այս նահանգում հաստատելլ կլինէր աւելի էական Սուլթանի վեհապետութեան համար, քան նրանից մի զինուորական ոյժ սահեծելը։ Զէ՞ որ համիզիական հեծեազօրի մասին խօսելու ժամանակ յանձնաժողովի անդամներից ոչ մէկը չպնդեց նրա պահպանման անհրաժեշտութեան վրայ։

Շեօնքերով. —Յայտնում է, որ Մանդէլյուամը խուսափում է մահմեղական և ոչ մահմեղականների մէջ եղած թւական յարաբերութիւնը վիխել յօդուած մահմեղականների։ Բայ արգարապատութիւնը պահանջում է հաւասար վերաբերմունք դէպի բոլորը և թիէ սահմանուի օրէնք, պէտք է այդ օրէնքը գործադրել առանց կրօնի խարութեան և խոյս տալ ոչ թէ միայն մահմեղական մունաջիրների հաստատումից, այլ և քրիստոնեայ փախստականների վերաբերձից, սրանք

այն բազմաբանակ կովկասում և Ամերիկայում ապաստանուած հայերն են, որոնք, չորրին բարենորոգութեակիներուծման, կվերագառնան իրենց հայրենի երկիրը, Մանդէշտամը թէկ կմուսափի այդպիսի տրամաբանական հետևանքից, բայց վերջինս բխում է նրա առաջարկութիւնից, Աւելի լաւ է յայտարարել ազատ ապրելու ոկտոբենքը՝ առանց կրճատութեակի և բացառութիւնների թացի այդ, մուհաջիրները կազմում են մի գործունեայ, աշխատասէր տարր, որպիսին հմուտ է փորձառութեամբ և կունենայ միմիայն նպաստաւոր ազգացութեան այն բնակչութեան զարգացման վրայ, որին նա միանալու է, Ենօնիքը. — Համամելին է Պանֆիլիի հետ այն բանում, որ ՏԻԿ-ը յօդուածի առաջարկութիւնը ձգտում է Կայսերական վեհապետութեան կրճատմանը, որը թոյլատրելի չէ, Բացի այդ, պէտք է նկատել որ այս կարգադրութիւնը իրենց առանձնապէս Հայկական նահանգի համար, կունենայ բացառիկ բնութ և կստեղծի պետական մի բացառիկ մաս—մի բան, որից պէտք է խուսափել:

Ա. Բանտէն. — Կարծում է, թէ հողային հարցը հայկական վիլայէթներում արդէն կրում է սուր ընաւորութիւն և այդ պատճառով անզգոյցութիւն կլինէր նրան աւելի ծանրաբեռնել, տաէսվ նորեկներին իրաւունք մասնակցելու վիճելի հողերի բաժանմանը:

Ենօնիքը. — Պատասխանում է, որ Արևելիան Անաստօլիայում ազատ տեղեր շատ կան: Այն հողերը, որ պետութիւնը կրածանի մուհաջիրներին, կազմում են արբունական սեփականութիւն, իսկ սրանց առթիւ ոչ հայերը և ոչ էլ քրդերը իրաւունք չունեն որին գատողութիւն անելու:

Ա. Բանտէն. — Կոկերազամէր, որ պետութիւնը իր հողերը պահէր սեփականութիւնից զրկուած հողատէրերի հաստուցման համար, պետութիւնը մի կողմից սահպուած է վերադարձնի իսկական սեփականատէրերի հողերը, իսկ միւն կողմից վարձատրել ապօքինի սեփականատէրերին, որնցից նայեալու է վերցնելու յափշտակուած հողերը:

Պանֆիլի. — Գտնում է, որ մուհաջիրների հաստատելը Հայաստանում մի որեէ վտանգ կարող էր ներկալացնել մինչև վերջին ժամանակները, բայց այդ վտանգը կորչում է բարենորոգութեակի ներմուծումից յետոյ, որոնց իրագործումը ընդհանուր վերատեսութեակի հակողութեամբ վերջնականապէս կապահովի ժողովրդի իրաւունքը և անզորութիւնը: Հայաստանի առթիւ կարելի է գուշակել այն, ինչ որ մենք նկատում ենք Բօսնիա-Հերցեգորիինայում: Մուհաջիրների հաստատութիւը այս նահանգում տեղի տուեց իստութիւնների միայն տաճկական ոչժիմի ժամանակ, իսկ ներկայումս այնտեղ տիրում է լիակատար խաղաղութիւն:

Ա. Բանտէն. — Նկատում է, որ ոչ բարենորոգութեակի և ոչ էլ նրանց յայտարարումը պաշտօնական օրաթիւրթում չեն կարող անմիջապէս ցոյց տալ իրենց արդիւնքը: Տամ գոյցի քան տարի անցնի, մինչև որ իրերի դրութիւնը Հայաստանում կդառնայ նօրմալ եթէ մուհաջիրների հաստատութիւնը, ինչպէս այդ բանը շեշտեց Պանֆիլին, վտանգ էր ներկայացնում նախքան բարենորոգութեակի ներմուծումը, պէտք է ընդունել նաև այն, որ յիշեալ վտանգը կարունակի մնալ, մինչև որ բարեփխութեակի վերջնականապէս չեն ամրապնդուիլ:

Մանդէշտամ. — Հաճոյքով է ընդունում Ենօնիքը յայտնած այն միտքը, որ նա ձգտում է պաշտօնակի քրիստոնեաներին, վարուելով այդպէս,

նա իր խղճի առաջ հաւատաբիմ է մնում Բերլինի դաշնագրի 61-րդ յօդ-ուածին:

Ֆիցմորիս.—Անհրաժեշտ է զտնում պարզելու ՏԻՀ-ըդ յօդուածի խկա-կան սահմանը, որպէս զի հարաւոր լինի վերջ տալ թիւրիմացութիւննե-րի մեկնարանութեանը:

Մուհաջինները հայրենիք վերադարձող գաղթականներ չեն, որոնց աշ-խատանքը և հմտութիւնը զովում է Շենքրեզը, այլ մարդիկը որ առաջին անգամն են գալիս մի երկիր, որի հետ ոչնչով կապուած չեն,—մի խօսքով խկական գաղթականները Նրանք հաստատում են ոչ թէ իրենց սփական կամքով և ազատ տեղափոխման օրէնքի նպաստմամբ, այլ լոկ կառավարու-թեան ոյժով: Վերջապէս Նրանք հաստատում են ոչ թէ եզակի խմբերով, այլ մասսաներով: Ներկայ դէպքում խօսքը Խուռմէլիայի մահմեղականների մասին է, որոնք փախել են բայկանեան զօրքերի յարձակումներից առաջ:

Պանթիլի. — Դանում է, որ ՏԻՀ-ըդ յօդուածը ի բնէ վիրաւորում է մահ-մեղական կառավարութեան գիւրադզայնութիւնը. նա կազմուած է այնպիսի մի ոճով, որ թոյլատրում է անցնելու ըրիստոնեաններին և պատնէշներ ստեղ-ծում մահմեղականների համար: Նրանց կողմանկիցները անկասկած խստիւ վշտացած կլինէին, եթէ նախկին քրիստոնեայ տաճկանպատակներից նրանք, որ գտնուում են մի այլ բրիստոնեայ ազգութեան գերիշանութեան տակ, օրինակ յոյները՝ ցանկանալով ազատուել բուլղարական լծից, գիմէին Բ. Դանը, ինզրելով նրանից հողեր, Արգե՞օք սրանց կընդունէին Հայաստա-նում, թէ ոչ:

Ֆիցմորիս.—Առանց տատանուելու տախիս է բացասական պատասխան, որովհետև ՏԻՀ-ըդ յօդուածը, ընդհանրապէս, վերցրած դէմ է մասսայական բնակեցման. յիշեալ յօդուածը հակառակ է այն բանին, որ կառավարութիւնը բնակեցնի նահանգում օտարերկրացիններին, օտար նահանգի բնակիչներին:

Մանդիլրամ. — Հաստատում է այդ մեկնարանութեան ճշուութիւնը:

Ֆիցմորիս.—Կարծում է, թէ փոխարուած լինելով մի երկիր, որի կլի-ման տարբեր է և ցուրտ, Ռումելիայի մուհաջինները ցոյց կտան ջնշին տօ-կունութիւն, իսկ միւս կողմէց հասնդիպէն մեծ տառապանքների, եւ որովհ հետև Նրանց հաստատմամբ հողային վէճը աւելի և կարգանայ, ուստի նա եզրափակում է, որ մուհաջինների ընտիկցումը նահանգում կլինէր հակառակ կառավարութեան շահերին, տեղական պահանջների և նոյն իսկ նրանց սե-փական շահերին:

Շեօնեբերգ.—Սկզբունքով դէմ է ամեն մի բացարիկ օրէնքի Մանդէլ-շամը ակնարկում է Բերլինի դաշնագրի վրայ, այն ինչ Շեօնեբերզ համոզ-ուած է, որ հայերի շահերը միմիայն այն ժամանակ կարելի է համարել ապահով, երբ ընդունուի խիստ արդարութեան սկզբունքը և վերցացուի ամէն մի առաւելութիւն կամ բացառութիւն, որոնք միմիայն անբաւականութիւն-ներ են առաջ բերում:

Մանդիլրամ. — Նկատում է, որ ՏԻՀ-ըդ յօդուածը հետեւում է իիստ արդարութեան և ծգտում է խուսափել իրաքանչիւր օրուայ վտանգաւոր ընդհարումներից:

Շեօնեբերգ. — Գանում է, որ արդարապատութեան տեսակէտից ամեն մի բացարիկ կարգադրութիւն, ընդունուած յօդուած կամ ի վաս այս կամ այն կրօնի, պէտք է անուշադրութեան մատնուի Նա թշնամի է ՏԻՀ-ըդ յօդուածին,

աչքի առաջ սանենալով, որ այդ յօդուածը բացառապէս նպաստաւոր է ոչ—  
—մահմեղականների համար:

Մանդեղտամ, — Յայտնում է, որ նա չի կարող ոչինչ փոխիլ այս հար-  
ցում, եթե պարզ է, որ երկար տարիների ընթացքում մահմեղականներն էին  
ճնշում քրիստոնեաններին, հետևաբար այս վերջիններին է հարկաւոր հոգա-  
նաւորել:

Շեօնքերգ.— Հաւատում է, որ բարենորոգութեանների շնորհիւ ամեն մի  
ճնշում կվերանայ:

Մանդեղտամ, — Ընդհակառակ պնդում է, որ ոչ մի հանգամանք չի կա-  
րող վերջ տալ մուհաջիրներում բուն զրած վրէժինզրութեան զգացմունքին,  
որով նոքա լցուած են զէպի քրիստոնեանները:

Ֆիցմօրիս.— Կարծում է, թէ ՏԼՀ-ըդ յօդուածը վեր է որևէ նախատին-  
քից. Նրան չի կարելի համարել բացառիկ օրէնք, նամանաւանդ եթէ վերց-  
նենք կրօնական տեսակէտից: Աւելի ճիշտ կլինէր ասել, որ նա սահմանում  
է մի առանձին միջոց՝ համաձայն որոշ շըանների մէջ գոյութիւն ունեցող  
առանձին դրութեան Այդ առանձին դրութիւնը՝ երկու թշնամի տարրերի,  
ըրդի ու հայի համագոյութիւնը, պէտք է ձգտի հեռացնել ամեն մի նիւթա-  
կան և բարոյական խոչնորո, որպիսին անշուշտ կարող է լինել ոռումէլիա-  
կան մուհաջիրների հաստատուիլը: Նոյնիսկ բրդերի շահը պահանջում է  
որ մուհաջիրները մուտք չունենան նահանգում:

Շեօնքերգ.— Հետեւելով Ֆիցմօրիսի գործնական տեսակէտին, չի գտնում,  
որ մուհաջիրների հաստատումը կարող է գդուսրութիւնների պատահել.  
կենտրօնական կառավարութիւնը հարցապնդում կանի վալիին, թէ նահան-  
գում թրտեղ ազատ հոգիր և բնչպիսի յարմարութիւններ կան մուհա-  
ջիրներին այնտեղ բնակեցնելու համար: Վալիին, կամ ընդհանուր վերատե-  
սուչը պատճառաբանուած պատասխան կտայ և կտեղեկացնի նաև հարաւոր  
ընդհարութեանը ու վտանգի մասին: Իսկ կենտրօնական կառավարութիւնը  
անշուշտ աչքի առաջ կունենայ նրանց կազծիքը: Ի միջի այլոց եւրոպական  
վերահսկողութիւնը նոյնպէս կարող է նպաստել այդ նպատակի իրագործ-  
մանը:

Սեն-Քանտեն.— Նկատում է, թէ այս հանգամանքը, որ Դուռը զգում և զի-  
տակցում է բարենորոգութեարի անհրաժեշտութիւնը, փայլուն պայպայոյց է  
օսմանական կառավարութեան յետամնացութեան, հետևաբար խօսք չի կա-  
րող լինել այն իդէալական կատարելագործման մասին, որ նրան վերագրում  
է Շեօնքերգը:

Ֆիցմօրիս.— Գտնում է իր կողմից, որ զեխառատանելը կարող են տաճ-  
կական ներքին գործոց նախարարին մատնացոյց անել պիտութեան իսկա-  
կան շահերի վրայ, իսկ վերջիններս թելադրում են նրան՝ մուհաջիրներին  
թոյլ չտալ հաստատուելու հայտատանում:

Շեօնքերգ.— Կրկնում է, որ մուհաջիրների հաստատումից առաջ եկած  
վտանգը այնքան մեծ չէ, որ սահմանուի մի առանձին միջոց այն բացառիկ  
նշանակութեամբ, որպիսին նախատեսնում է ՏԼՀ-ըդ յօդ: Նոյնիսկ եթէ այդ  
վտանգը լինէր լուրջ, նրա առաջն առնելու համար միջոցներ չէին պակա-  
սիլ: Վալիինէր և ընդհանուր վերատեսուչների հեղինակութիւնը և եւրոպա-  
կան վերահսկողութիւնը կարող են համարել բաւականի մեծ պահովութիւն  
հնարաւոր վտանգի առաջն առնելու համար:

Սին. Թանտեն.—Կտսկած է յայտնում վերաբերմամբ այն յոյսերի, որ  
իր պատուելի զերմանական կօլեցը զնում է ապագայ վերահսկողութեան  
մարմինների վրայ, որոնց յանձնուելու է բարենորոգումների գործը և մաս-  
նաւորապէս ընդհանուր վերատեսաւչների վրայ, Նա չի ժխտում, որ վերջիններս,  
չնորդի իրենց զարգացողութեան և եռանդի, երեան կհանեն բոլոր չարա-  
զործութիւնները և կտուաջարկեն համապատասխան միջոցների Բայց նա  
կարծում է, թէ աւելի լաւ է նախատեսնել, քան յետոյ ստիպուած լինել  
սանձարել, նախազգուշացնել չարագործութիւնները, քան պատրաստել:  
Այս պատճառով նա պնդում է, որ մուշաշիրներին արգելուինանգ մտնելու

Ֆիցմօրիս.—Արտայայտում է նոյն մտքով:

Շեօնիքրգ.—Հրաժարում է ընդունել մի առաջարկութիւն, որը, ըստ նրա  
կարծիքի, սահմանում է Եւրոպայի չափազանց միջամտութիւնը Կայսրու-  
թեան ներքին գործերում:

Պանթիլի.—Զի ժխտում այն գժուարութիւնները, որին հանդիպելու է  
մունաշիրների մասսայական հաստատումը հայկական վիլայէթներում: Բայց  
նա պնդում է, որ ընդհանուր նահանգապատեր, կամ հակառակ դէպրում, ընդ-  
հանուր վերատեսուչը կարող են նրանց դէմ միջոցներ ձեռք առնել, եթէ  
վտանգաւոր են գտնում նա մերժում է, սակայն, ընդունել մի անօգուտ կար-  
գագրութիւն, որ կվասէր Սուլթանի վեհապետական իրաւունքներին և  
կվիրաւորէր մահմենդական կառավարութեան դիւրագրգուռութիւնը:

Ցանձնաժողովը անցնում է նախածրագրի ՀՀ-րդ յօդուածին:  
«Նահանգի շրջանից դուրս, մասնաւրապէս Կիլիկիայում ապօռ հայերի  
դրութիւնը բարեկաւելու համար, կմշակուեն առանձին կանոններ՝ համաձայն  
վերոյիշեալ սկզբունքների իմաստի»:

Շեօնիքրգ.—Ցայտնում է, որ նա չի ընդունում 20 և 21-րդ յօդուած-  
ները, որոնց նպաստակն է ստեղծել մի առանձին հայկական նահանգ:

Պանթիլի.—Ցիշցնում է, որ համաձայն Բ. Դուան կողմից գենոպանա-  
տներին յայտնած բարենորոգումների ծրագրի, վեց հայկական վիլայէթները  
մտնում են ընդհանուր վերատեսչութեան 3-րդ և 5-րդ սեկտորների մէջ,  
իսկ այդ երկուուր իրենց գրուս կունենան օտար ընդհանուր վերատեսուչ-  
ներ: Առաջարկած ապահովութիւնները չի կարելի բաւական համարել պե-  
տութեան ուրիշ հայաբնակ շրջանների համար: Այս պատճառով անհրաժեշտ  
է ձեռք առնել բարեկաւման միջոցներ յիշեալ երկու սեկտորներից դուրս  
ապրոյ հայերի համար:

Ֆիցմօրիս.—Ցայտնում է, որ նա ընդունում է առանձին կանոնադրու-  
թեան սահմանման զաղափարը Կիլիկիայում խմբուած հայերի համար: Նա ի  
նկատ ունի 1895 թ. երեք գեսապանների յիշատակագրի հետևեալ խօսքերը:  
«որոյինեան Ձէյթունի (Հալէպի վիլայէթ) և Հաջինի (Աղանայի վիլայէթ)  
հայերը կազմում են ընակչութեան մեծամասնութիւնը, ուստի պէտք է նրանց  
համար կազմել մի ազգային վարչական սահման», իսկ ինչ վերաբերում է  
զանազան բաղաքներում բնակուող հայերին ընդհանրապէս, նրանց քանակը  
մեծամասնութիւն չի կազմում:

Պանթիլի.—Նկատում է, որ առանձնացած հայերի համար կարելի է  
հաստատել ընդհանուր իրաւակարգի այնպիսի վստահելի ապահովութիւն,  
ինչպիսի ապահովութիւններ ուստական նախածրագրիը նախատեսնում է

հևումնարանների համար, սահմանադրութեան զեկալարման համար և այլն:

Մանեկելիտամ. — Համաձայն է այս վերջին նկատման հետո

Պանթիլի, — Կարդում է նախածրագրի XXI-րդ յօդուածը.

«Մի առանձին մտնաժողով, կազմուած տաճկական կառավարութեան եւ մեծ պետութիւնների ներկայացուցիչներից, կմշակի նահանգի նիմ-նական օրէնքները, ինչպէս նաև ՀՀ-րդ յօդուածում՝ իշխանականուակրութիւնը, ղեկավարութիւնը այս նախածրագրի արտայայտած սկզբունքներով»:

Նա գոնում է, որ այս յօդուածը, առանձին վիճարանութիւնների տեղի չի կարող տալ, բացի այն ընդդիմախօսութիւնները, որ յայտնել են մի նահանգի սուսպենսը հակառակ ներկայացուցիչները:

Նիստը վերջանում է կէսօրուայ 12½ ժամին:

Հայկական Բարենորոգումների Յանձնաժողով,

Նիստ VII.

Զորեքարթի, 23 յուլիսի 1913 թ.

Ներկայ են,

Նեօնիքի, ներկ. Գերմանիայի դեսպանատան,

Պանթիլի, ներկ. Աւստրո-Ունգարական դեսպանատան,

Սին-Քանտոն, ներկ. Ֆունսիայի դեսպանատան,

Ֆիզմօրիս, ներկ. Մեծն-Բրիտանիայի դեսպանատան,

Շաբի, ներկ. Իտալիայի դեսպանատան,

Մանդիլիտամ, ներկ. Ռուսաստանի դեսպանատան,

Նիստը բացւում է ժամի 10-ին:

Վերջին նիստի բանացի վիճարանութիւնները, որ կարդում է Սին-Քան-տոն, ընդունուում են:

Պանֆիլին բնութեան է գնուում նախածրագրի վերջին 22-րդ յօդ.

«Մեծ պետութիւնները հոգ կունեն սոյն կանոնադրութիւնների կատարման համար»

Մալիկլիտամ. — Տալիս է հետևեալ բացատրութիւնը.

